



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Urb 55n G Quelle und Karte

20628

Zweckesammlung
Gutschrift Apotheken

F. - Sauer



4. Maihe
1890

2003

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՍԱԶԵԱՆ

(329)

821.99(082)

Գ-133 Արաքածու Յ

Ը Տիր Գրուեան Ո Յ

Ազգային Եկ ՕՏԱՐ ՄԱՏԵՆԱԳԲԱՅ

— ։ ։ ։ —

Արցակ Եր Ռանակառ

Ա Յ Խ Ե Ր Հ Ի Կ Լ Ե Զ Ա Ւ Ւ Ի

Հ Ա Ն Դ Ե Ր Զ

Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն , Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Դ Ե Ւ Ա Ց Լ Կ Ա Ր Ե Ւ Ո Ր Մ Ա Ն Ո Թ Ե Ա Մ Բ Ք

Մ Ա Ս Ն Բ .

Կ . Պ Ո Լ Ի Ս
Տ Ո Ս Գ Ր . Ն Ե Ա Ն Կ . Պ Ե Ր Ո Ւ Բ Ե Ա Ն

4390

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Ի՞նչ խողը է շրջիլ պարտիզի մը մէջ , հեռի խաղա-
խին յոյզերէ , ազա՞ կենաց յեղաշրջումներէ ու փորո-
րիկներէ կամ նսիլ դալարեալ բազմոցի մը վրայ եւ
կալ ի զին բազմերանգ ծաղկանց , եւ այդ խնկարոյր
մքնուրտին մէջ անցունել երանուրեան ժամեր : Քանի՛
բերկուրիւն եւ խանի՛ սրբազան հանոյ :

Մենք եւս այժմ կանգ առած սոյն հրատարակութեան
սեմին վերայ կը համարձակիմք պարզել աչաց առջեւ
զեղեցիկ պարտէզի մը տեսարանն , պարտէզ լի ծաղկե-
ներով՝ որոց վերայ կը փառիին ժիր պարտիզպաննե-
րու հրանց կալակներն , խառնուած առաւօսու ցողով
եւ արփույն ռողով , եւ որք ոչ միայն խաղուած են հայ
գրականուրեան դարաստանէն , այլ յօսար աշխարհաց
իսկ , զի զեղեցիկն չ'ունի նարենիք , նաշակն չ'ունի
ազգուրիւն : Այսպէս է մանաւանդ գրականուրեան նը-
կատամբ :

Եւ ուրիշ ի՞նչ պատշաճ կը լինէր մեզ նուխել դրպ-
րոցի մանկանց , բայ այս գրական ծաղկեներ , նոցա՞
որք են ծաղկումք ապագայի : Կրել ըստ կարի մանկանց



ԶԱՅՐ-61

✓

նաւակն , ընտիր հասուածոց վերծանութեամբ ազնուացընել նոցա մածումներու ու զգացումներն , ցուցնել թէ ո՞րպէս աշխատող միտքն բազմաբեղուն ըրած է որեւէ նիւք , ընդլայնելով անոր զանազան մասերն , եւ ամենը ան կարծուած պարագայներն իսկ հարուս երեւակայութեամբ նկարել , եւ այսու հետզինետէ մանկանց շարագրութեանց նպատամատոյց լինել : Ահա յայսմ է , ներուի մեզ ասել , գործոյս օգտակարութիւնն ու նպասակն :

« Ըերեցումն , կ'ըսէ Լանտն իւր Մկրունի՛ Շարադրութեան եւ Ոռոյ ընտիր մատենին մէջ , մտաց աղ- բատութեան միակ դարմանն է . անոր միջոցաւ կը բաց- ուի այն եւ կը զարգանայ : . . . Մանաւանդ շարագրել ուսանելու համար , պէտք է կարդալ : Այս կերպով զա- զափարեներն կը հաւաքուին , ի հարկին զանոնք արտա- յայտելու համար » :

Ուրախ ես յայսնել թէ յաջողեցամբ սոյն հրատա- րակութիւն ըստ մեծի մասին անտիպ գրութիւններէ յօ- րինել , եւ այս՝ շնորհիւ այն բարեյօժարութեան , որով Ազգ . Հեղինակի ուսանվ սիրով ընդունեցան մեր հրա- ւերն , եւ նորագոյն նիւքեր պատրաստեցին , շնորհապար- քողով զմեզ :

Այս ամէն նիւքերն աւելի նպատակայարմար գործե- լու համար գրագիտութեան կանոններ եւս դրիմ , բա- զում հատուածոց ներքեւ : Մեր նպատակն չէր գրագի- տութեան դասագիրք յօրինել , զի այդօրինակ օգտա-

կար դասագրեիր (*) չեն պակսիր յԱզգիս : Գործոյս ամբողջ ընթացին մէջ այդ կանոններ սփռելով՝ ու- զեցինք մերովսանն սիրելի ընծայել գրագիտութիւնն՝ զոր անհրաժեշտ է մանկան ուսանիլ եւ պատրաստել կանչաւ նորա միտքն յարուես ուղիլ գրելոյ :

Ոչ նուազ իրենց օգտակարութիւնն կ'ունենան ան- տուես այն Առածներ , Ընտիր ասացուածներ , Գեղեցիկ մտածութիւններ , որք գետեղուած են իւրաքանչիւր հա- սուածի ներքեւ թէ՝ յուսումն եւ թէ՝ ի խրաս :

Հաւաքածոյիս միջոցաւ նաև փափաթեցանի մի քա- նի տողերով ծանօթացնել մանկանց՝ ազգային գրագի- տաց համառօսագիծ կեանին , ոյց զրուածներն ամփո- փած ենք ի մատենկանս : Թող դպրոցաց աշակերտք եւ աշակերտուինիք վաղ իսկ հանաչեն հայ գրականութեան այն արի մշակեներն՝ որք իրենց սրտից գոհունակութիւն մի միայն ընդհանուրին բարւոյն մէջ կը փնտուն , եւ առաւել կամ նուազ եռանդեամբ կը ծառայեն յառաջ- դիմութեան գործոյն :

Ուպէս գրագիտութեան մասին , նոյնպէս եւ յայս շ'ունիկնին նպատակ հայ մատենագրութեան պատմութիւնն

(*) Մինրան Պ. Ասբանագեանի Գրագիտութիւն տեսական եւ գործնական , Մատն Ա. Ան , Հասոր Ա. . եւ Բ. . — Տպագրութիւն Պաղտատեան , Կ. Պոլիս 1884 , — Եղիազար Մուրատեանի Առ- ձեռն Գրագիտութիւն , Կ. Պոլիս , Տպագր. Գամամեան , 1882 . — Հ. Սամուել Վ. Գաներաւեանի Տարեր Հուեռական Լեզուի , Վենետիկ , Եւալլին :

յօրինել, զի յայնժամ իրաւացի պիտի լինէր պահանջել ի մենք ոչ մի հեղինակ դուրս քողով մեր գործէն, եւ անյիշաւակ չառնել որեւէ Ազգ. իրաւարակութիւն:

Ի վերջ բան կը խոսովանիմք քէ հակառակ մեր զանից սպն գործ չ'կրեր կատարելութեան կնիք, սակայն վասահ ենք քէ Ազգ. դպրոցաց Պատուարժուն Վարչութիւնի պիտի հաճին ընդունիլ զոյն այս համեստ աշխատութիւն եւս (¹) ի պէտք մանկանց՝ ոյց օգտակար լինել Հաւաքածոյին երատարակութեան միա՛կ շարժառիքն է :

1890

Եւսիսար

U. S.

(4) Հաւաքածոյիս Ա. մասն իրաւակուած է 1888 ին:



ՀԱԽԱԳԱԾՈՅՑ

ԸՆՏՐԻ ԳՐՈՒԱԾՈՑ

ԱՐԳԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

Ա Ր Ե Տ Ա Ր Ա Ն

խարհի ու գնաց . Սուրբ Հոգին յիշեցուց , Աւել
րանիչներն գրեցին :

Աւետարան Յիսուսի շունչն է , որով չեթէ մի-
այն Բարիլնի դաշտին մէջ ցրուած հրէական ազգին
չորցած ոսկորներ կենդանացոյց այլ համատարած
աշխարհիս երես սփռուած կենդանոյն մեռած ընդ-
հանուր մարդկութեան հոգիներն ի նոր կեանս վե-
րանորդեց :

Ինչ որ Աւետարան գործեց , կարող չեղան գոր-
ծել հին և արդի աշխարհին մէջ՝ ոչ իշխանութեանց
զէնք , ոչ իմաստափրաց գիւտք : Աւետարանին փառք
բարձրացաւ տիրեց աշխարհիս վրայ քանի մը տկար
ձկնորսներու ձեռքով . Աւետարանին փառաւոր գահ
Բեթէհէմի մաուր և աղքատներու խրճիթներ եղան :

Զկայ բնաւ գիւղք մի կամ մարդկային հանձար և
իմաստութիւն , որ կարողանայ մարդոց ստահակ հո-
գին ուղղել , դաստիարակել և բարւոքել միշտ ի
չարն արձանացած՝ ի բարին վերածել , բայց միայն
Աւետարանն : Այս փոքրիկ հրաշագիր մատեան աշ-
խարհ կարդաց ու հասկցաւ . այս մանրիկ մանանեխին
սերմէն ծառ մի բուսաւ , որուն ապաստանարար ճիւ-
զերուն վրայ աշխարհիս վաստակեալ մարդիկ թռչունի
պէս նստան ու հանդիսատ առին :

Յիսուս իւր Աւետարանին պատուական մարդարիտ
Հրէաստանի հրապարակին մէջ՝ ի վաճառ հանեց ,
աղքատն և հարուստն վաղեցին՝ ի գնել . մարդարտին
տէր ձրի կը բաշխէր , ոչինչ չէր պահանջեր , այլ մի-
այն հաւատք , ո՛վ որ կը հաւատար , նա միայն կ'ստա-
նար մարդարիտն :

Աւետարանին մարդարիտ յիմարներու սրտին մէջ
հաւատք է , իմաստոց մտքին մէջ անհերքելի ճը-

մարտութիւն , մէկն առանց քննելոյ կը հաւատայ ,
միւսն Տեքարթի պէս քննել ուզելով՝ կ'ափշի և կըս-
քանչանայ :

Աւետարանին կերակուր անմահարար է , կաթէն
աւելի սնուցիչ , մեղրէն աւելի քաղցր է . Դաւիթ ճա-
շակեց զայն հոգւով և անուշութենէն զմայլելով կ'ա-
սէր .

« Որպէս զի քաղցր են՝ ի քիմս իմ բանք քո , քան
զմեղը բերանոյ իմոյ » : Այս ամենահամ սիրոյ ճա-
շակ Յիսուս բերաւ երկնքէն , Գողգոթայի խաչի
փեթակին մէջ նորածաշակ մանանայ մի կազմեց , Ա-
ւետարանին սուրբ օրէնքներն կարմիր արիւնով դը-
րոշեց , զոր չ'կարացին եղծել և ոչ նշանախեց մի
աշխարհիս բռնաւորութեանց ձեռք : Ի՞նչ կարողա-
ցան շինել Պղատոն , Արիստոտէլ , Սոկրատ իւրեանց
իմաստափրութեան փեթակին մէջ : Յիսուս միայն
շինեց կրօնի սուրբ մեղր , որով քաղցրացաւ հանուր
մարդկութեան բերան , որ գառնացած էր Աղամայ
ճաշակած պտղով : Աւետարան Աստուածորդւոյն ե-
րեսաց արտափայլող լցոն է . Եկեղեցին մութ է ,
եթէ սորա լուսով չի լուսաւորի , Եկեղեցին կը խո-
տորի , եթէ սորա լցոյս չ'առաջնորդէ , Եկեղեցին հաս-
տատ չէ . Եթէ սորա սուրբ քարերով չը հիմնուի :

Հայ Եկեղեցւոյ մեր երանելի նախնիք ո՞րչափ եր-
կիւղածութեամբ պաշտեր են Աւետարան , յորոց ո-
մանք մեկնութեանց պարապելով՝ Աւետարանին գի-
տութիւն ժողովրդոց ընտելացուցեր են : Եթէ ապա-
ցոյց կ'ուղես՝ գնա շըջիր Ասիոյ վանօրէից , քաղաքաց
և գիւղերու մէջ , ուր կը տեսնես բիւրաւոր գրչա-
գիր Աւետարաններ և նոցա մեկնութիւնք մագաղաթ-
ներու վրայ վայելուչ ծաղկենկարներով գրուած : Եւ

այսօր իսկ եկեղեցւոյն մէջ ամէն ընթերցուածներէն առաւել Աւետարան կը պաշտուի . վասն զի ժողովը դուրդոց խնկելի գիրք Աւետարանն է , զոր կը համբուրէ յաճախ ամենայն ջերմեռանդութեամբ , թէ հիւանդանայ , Աւետարանին կը դիմէ , թէ գլուխ ցաւի , նորա տակ կը դնէ , թէ հաւատայ , կատարելապէս իւր ցաւեր կը փարատին : Աւետարանին հըռաշալիք մեծ է , միայն մարմնոյ ախտեր չը բժշկէր , այլ առաւել ևս հոգւոյն ախտեր կ'ասպաքինէ :

Առէք ընդունեցէք ուրեմն , ո'վ եկեղեցւոյ մօր հոգեծին մանկունք , Յիսուսէն աւանդեալ արքայութեան սոյն մարգարիտ , զոր իբրեւ փոքրիկ մանեակ մի ընելով ձեզ կը նուիրեմ :

Սողոմոնի ձայն կը յորդորէ զձեզ , որ այս մանեակ ձեր պարանոցէն կախէք . որպէս իմաստուն վաճառական ամէն բան վաճառելով , միայն Յիսուսի մարգարիտն ստացէք , որուն հետ բնաւ հաւասարութիւն չունին բոլոր աշխարհիս թագաւորութեան գանձեր : Ի՞նչ գին կը խնդրէ հապա այս մարգարտին տէր , ուրիշ ոչինչ , սիրտ միայն : Տուր ուրեմն քո սիրտ , որդեակ , ինչպէս կը խրատէ իմաստունն և ահա կ'ստանաս մարգարիտն :

ԽՐԻՄԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Աւետարանն յԱսուծոյ առ մարդիկ ընծայուած պարզեւաց գեղեցկագոյնն է :

ՄՈՒԹԵՍՔԻԵ



ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ . — Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս Խրիմեան , բաձրասինան եկեղեցականն , որոյ փառաց տիտղոսն է բոլոր ազգէն կոչուիլ Հայրիկ , ծնած է 1820ին , Վանայ Այգեստաններն , Յանկուսներու բաղի , ուր կայ ցայսօր հայրենի տունն « Կրթցոնց տուն » :

Բանասէնդ ոզի մի կը կրէ Հայրիկ , հաննար մի որ օսար մատենագրութեան ազգեցութիւնն չունի . սակայն բաձր է իմաստ գրուածոց եւ բարողութեանց մէջ . իւր ոճն Աւետարանի ուղով համակեալ է , եւ սուրբ են իւր մասմունք . Մշակած է նա հայ լեզու եւ գրականութիւն . իւր ենրուածէն են Հրայրակ Արարատեան , Հրայրակ Երկրին Աւետարան . իսկ յարական զործերն են . Դրահսի Ընտանիք , Միւրավ և Սամուել , Մարգարիս Արայուրեան Երկենից , Խաչի ձառ :

ՍՈԿՐԱՏ , հօմանաւոր յոյն իմաստակը , ուսոյց բարոյականն եւ իւր վարդապետութեանց համար դատապարտեցաւ ի մահ , մեռաւ մնչեմինդ ըմպէլով . (470—400 նախ խն զբա.) : — ՏԵՐԱՅԻ հոչականոր իմաստակը Գալիացի , բնագէտ եւ Երկրաշափ : Հեղինակ ձառ զՄերոնէ գրին եւ այլ զիտական մատենից . — ՊՂԱՏՈՆ , Աւակեց Սոլյեատայ , որոյ վարդապետութեան հետեւելով՝ յօրինեց բազմարի գերազանց զործեր , որպիսի են , Փետոն , Տրամախօսութիւնն , Եւայլն . (430—448 Ն. Ք. զբ.) : — ԱՐԻՍՏՈՏԵԼ , Երեւեկի Յոյն իմաստակը , առակեց Պղատոնի : Թողած է բազմարի զործեր , Արուես Քերորդական , Տրամախօսութիւնն , Բնազունցականի , Եւայլն . (384—322 Ն. Ք. զբ.) :

ԳՐԱՋԻԽՈՒԹԻՒՆ . — Մեր զգացումներն եւ մածումները բացատրելու կերպին կ'ըստի Ոն : Երկու տեսակ է . լաւ եւ յորի Ոնն երկու յատկութիւն ունի . բնիդանուր եւ մասնաւոր : Ընդհանուր յատկութիւնն ուր են . Մակրութիւն , Յսակութիւն , Ճրդութիւն , Ազնուութիւն , Բնականութիւն , Զանազանութիւն , Պատշաճութիւն :

Պատաստաւոր յատկութիւնն երեք են . Պարզ Ոն , Միջակ Ոն և Վահեմ Ոն :

Վերոյգրեալն պարզ ոնոյ օրինակ է :

Ա Պ Օ Թ Վ Բ

Ճերմակ պատերով գերեզմանատան
Մէջ, ուր ոչ ոք կայ թաղուած տակաւին,
Քշած են ցորենի հասկը հողմատաւան
Որոնք աղքատաց համար հընձուին :

Օր մըն ալ, ո՛վ Տէր, մէջ այս պատերուն
Հշտեմարանացդ համար պիտ' հնձեն,
Մեր մեռեալք պիտի լինին հասկըն հասուն
Հնձողք ալ՝ հրեշտակըդ, հողաբեւ, հրեղէն :

Քո կապոյտ կամար երկնից խորերէն
Գալով, մարդկային հունձքն ընեն պիտի,
Առ քեզ բերելով ինչ որ կայ ցորեն,
Նետելով հասկերն տըհաս, սընոտի :

Ճերմակ պատերով գերեզմանատան
Մէջ, հաճէ՛, Տէ՛ր, երբ լինմ խոտին տակ,
Որ՝ իւր որային համար բաւական
Հասո՛ն գտնէ զիս մի բարի հրեշտակլ . . . :

Բ. ՊԱՆՉԵՍԻՆ

Թարգմ.

ԱՂԵՔՍ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԱՌ ԱԳԱՀՆ

Մահու իրեւսակն ոչ դիւրաւ
Հոգին արկղէն դուրս առաւ,
Կոռույ սերմը հոս բողուց
Ունանութիւն հետ տարաւ :

Յ. ՈՍԿԱՆ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենսագրութիւն. — Աղեքս. Գ. Փանոսեան, նախկին աւակեց Նուպար-Շահնազարեան վարժարանի, առաջնակարգ բանասեղծ, բազմաթիւ են նորս եերուածք, հրատակեալ ի զանազան հանդէս եւ ի լրագիր. այդ եերուածք ունին իրաւամբ տաղաչափութեան կանոնաց հաւատարմութիւն, յանգաց նորութիւն, ոնոյ փափկութիւն եւ ներդաշնակութիւն : Երիտասարդ բանասեղծն հրատարակած է բանասեղծութեանց հասոր մի Շողեր ու Յօդեր :

Գրագիտութիւն. — Վարդապետական եերութիւնն. Վարդապետական եերութիւնն է իւրա կամ ուսմունք, բանասեղծօրէն աւանդուած, որով օքանկար է բան զամէն տեսակս եերութեանց : Նորս հիւրեն զաղափարաց ամէն կարգերուն կրքութեանց : Կատարեալ եւ բացուձակ զասաւորութիւն մի անվերաբերին : Կատարեալ եւ նորս եերուածն իրեա ըլլալ միանկարելի է, բայ որում մի եւ նորս եերուածն իրեա ըլլալ միանգամայն իմաստարական, բարյական, կրօնական եւայլն : Իւ զանազան ձեւերն են ։ Առակ կամ Առասպել : 2. Վեպ : 3. Թուղր : 4. Երգիծաբանութիւն : 5. Վերառութիւն : 6. Արձագագիր : 7. Տապանագիր :

Բառեմ. — Հողմատաւան, Հովե շարժած : — Հողաբեւ, թեւեր մերկ :

ԺԱՆՈՑ ԵՒ ԳՈԼԷՆ

Բազում արժանահաւատ անձինք տեսած են զժանոյ և զգոլէն Օվէրնեայ իսոսար քաղաքին մէջ : Ժանոյ ջորեաց համբաւաւոր վաճառականի մը որդի էր, և Գոլէն զաւակ էր շրջակայ վայրաց ժիր հողագործի մը, որ չորս ջորիներով կը վարէր երկիրը, և որ իր հարկերը վճարելէն յետոյ ի վերջ տարւոյն ոչինչ կու-

նենար : Ժանոյ և Գոլէն յոյժ կը սիրէին զիրար : Իրենց ուսմանց ընթացքը աւարտելու մօտ էր , և ահա դերձակ մը Ժանոյի բերաւ կերպասէ եռագոյն զգեստ մը , Լիոնի բարեձեւ բաճկոնակաւ մի , և ասոնց հետ Լաժանողիէռի ուղղեալ նամակ մի : Գոլէն սքանչացաւ զգեստին վրայ և չնախանձեցաւ . այլ Ժանոյ մեծութեան կերպարանք մի ցցուց՝ որոյ մասին վշտացաւ Գոլէն : Այն վայրկենէն , Ժանոյ չէր ուսաներ , այլ միշտ հայելին կը նայէր , և կ'արհամարհէր զամէնքն : Քիչ մը Ժամանակէն , սենեկապան մը կը հասնի փութով , և ուրիշ նամակ մը կը բերէ առ իշխանն Լաժանողիէռ , յորում անոր իշխանազն հայրը կը պատուիրէր իւր որդին Փարիզ բերել : Ժանոյ ելաւ թեթև կառքը , Գոլէնի ճեռք կարկառելով և ազնուական պերձութեան ժպիտով մը : Այն ատեն Գոլէն հասկցաւ իւր նուաստութիւնը , և լացաւ , Ժանոյ մեկնեցաւ մեծաւ զբով :

Ընթերցողք որ կը փափաքին տեղեկանալ . պարտին գիտնալ թէ հայրն Ժանոյ շուտով ստացաւ առեւտուրի մէջ մեծ հարսաւութիւն . Եւ իսկոյն կոչուեցաւ Լաժանողիէռ , և վեց ամսէն գնելով պատուոյ անուն մը , իւր իշխանիկ որդին դպրոցէն հանեց եւ մտցուց զանի Փարիզու ազնուականաց մէջ :

Գոլէն միշտ սիրով խանդակաթ , յարգական նամակ մը գրեց վաղեմի ընկերակիցին , իւր խնդակութիւնն յայտնելով : Իշխանիկը չպատասխանեց , և Գոլէն վշտէն հիւանդացաւ :

Մանուկ իշխանին ծնողքը կարգեցին նախ դաստիարակ մի տգէտ , որ և չկրցաւ իւր աշակերտին բան մը սորվեցնել : Պատանւոյն միտքը շուտով խանդարեցաւ , և կատարելապէս ամէն բանի անպիտան

եղաւ : Մեծամեծ ծախքեր ըրաւ , մինչ անոր ծնողքը՝ անկէ աւելի չար՝ ինչքերը կ'սպառէին , մեծ իշխանաց հետ կեանք վարելով :

(Ինչ որ պիտի ըլլար եղաւ , առաւօտ մը եկան իմացնել անոր թէ իւր ծնողքը բոլորովին փճացած էին , և թէ պարտատէները գրաւեցին ամէն բան : Այս լուրին վրայ վազեց անոնց քով , հայրը արդէն բանտարկուած էր . բոլոր սպասաւորները փախած էին , անոր մայրը մինակ էր հոն , անօդնական , անմիթար , և արտասուօք ողողեալ . միայն մեծութեան , սխալանաց և անմիտ շռայլութեան յիշատակը կը մնար անոր քով . թշուառ պատանին անտարբերութեամբ և ծանրութեամբ ընդունելութիւն ակարեալ իւր կենաց բոլոր ժամանակներէն և իւր կենաց բոլոր ժամանակներէն աւելի լաւ ևս կէս օրուան մէջ ճանչցաւ մարդիկը :)

Երբ այս անյուսութեան մէջ ընկղմած էր , տեսաւ որ կը մօտենար երկանիւ դեսպակ մի , հին ոճով , շուրջանակի ծած կեալ տեսակ մի սայլ , հանդերձ մաշկէն վարագուրաւ : Դեսպակին մէջ կար գեղջուկ հանդերձներով երիտասարդ մի , այլ դիմօք առոյդ և կայտառ , և անդ քաղցրութիւն և զուարթութիւն նկարեալ . իւր թխամորթ փոքրահասակ կինը անոր քով էր : Դեսպակը չէր երթար պճասիրաց կառքին պէս : Ճանապարհորդք մոտագրութեամբ դիմեց վիշխանն անշարժ կեցած և վշտաց մէջ խորասոյզ : «Ո՛վ Տէր , աղաղակեց , կարծեմ թէ դա Ժանոյ է » : Այդ անունէն իշխանը աշքերը վեր կառնու և կառքը կը դադրի . « Դա Ժանոյ է , ինքն իսկ Ժանոյ » : Իսկոյն փոքրահասակ մարդը կառքէն վար կիջնէ , կը վազէ գրկել իւր վաղեմի ընկերակիցը : Ժանոյ ճանչցաւ

Գոլէնը, ամօթ և արտասուք երեսը ծածկեցին . «Դու լքիր թողուցիր զիս, կըսէ Գոլէն . բայց ո՞րչափ մեծ իշխան մը լինիս, միշտ զքեզ պիտի սիրեմ» : Ժանոյ ամօթապարտ և գորովեալ, պատմեց հառաջանօք մասսամբ իւր անցքերը : Եւ կըսէ Գոլէն . «Եկուր իմ տունս ուր կը բնակիմ, և հոն պատմէ մնացածը, և երթանք ի միասին ճաշել» : Ամենքն ալ հետի կերթան, իրենց պայուսակները ետեւնուն . «Եւ ի՞նչ է այդ բոլոր կարասին, միթէ քո՞ւկդէ» : — Այո՛, իմ և իմ կնոջն են, կուգամք մեր երկրէն և ես տէր եմ պղնձի և դրուագեալ երկաթի գործարանի մը : Ինձ կին առի մեծանց և փոքրունց համար կարեւոր կարասեաց հարուստ վաճառականի մը աղջիկը : Շատ կ'աշխատինք, և Աստուած զմեզ կօրհնէ, մենք մեր վիճակը երբէք չփոխեցինք, երջանիկ եմք, պիտի օդնեմք մեր ժանոյ բարեկամին : Զգէ՛ մարգիզութիւնը, աշխարհի բոլոր մեծութիւնք չեն արժեր բարի բարեկամ մը : Ինձ հետ պիտի գաս մեր երկիրը, և քեզ պիտի սորվեցնեմ իմ արուեստն, որ չէ դըժուարին . առանձին տեղ մը պիտի դնեմ զքեզ և պիտի ապրինք զուարթութեամբ աշխարհիս այն մասին մէջ ուր ծնած ենք :

Ժանոյ այլայլած, կ'զգար ինքնին ցաւ խառն ընդուրախութեան, գորովանաց և ամօթոյ . և կըսէր իւր մտքէն . «Բոլոր իմ առ երեսս պերան բարեկամներն մատնեցին զիս, իսկ Գոլէն՝ զոր արհամարհեցի, կուգայ ինձ օգնութեան կը հասնի . ի՞նչ խրատ : Գոլէնի որդւոյն լաւութիւնը ժանոյի սրտին մէջ զարգացուց լնիղաբոյս բարւոյ բողբոցն զոր տակաւին աշխարհ խեղդած չէր : Եւ իւր սրտին մէջ հասկցաւ թէ կարելի չէր որ նա լքանէր իւր հայրը և մայրը . Եւ կը-

սէ Գոլէն . «Խնամենք քու մայրդ, իսկ քու պարզամիտ հօրդ համար, որ բանտն է, քիչ մը տեղեակ եմ կենցաղական իրաց . տեսնելով պարտատէրներն թէ նա բան մը չունի, կը զիջանին քիչով գոհանալ, իմ վրայ կառնում այդ ամէն հոգը» : Եւ այնչափ բան ըրաւ Գոլէն մինչև յաջողեցաւ բանտէն հանել հայրը :

Ժանոյ գարձեալ գարձաւ իւր երկիրը ծնողաց հետ որք վերստին իրենց նախկին արուեստին ձեռնարկեցին : Եւ նա կին առաւ Գոլէնի քոյրը, որ եղրօղը նըման բարք ունենալով զանի շատ երջանիկ ըրաւ : Եւ հայրն ժանոյ, և մայրն և որդին տեսան թէ երջանկութիւնը սնուտի պերձութեան մէջ չկայանար :

ՎՈԼԴԵՌ

Ա Ռ Ա Ծ

Ցուշափ բախսը կ'ըլլայ մեզի բարեկամ, բարեկամներ ուր բոլորտիեդ ման կուգան . Զուարը օրերդ տիուր ամպե՞ր պատեցին, Աշ ձախ նայէ, մնացեր ես առանձին :

(ՏՕՄԱՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ . — ՎԻՒՆԱ)

— 38 —

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՎՊՐՈՒԹԻՄ . — Վոլդէր նշանաւոր գաղիացի մասեազիր, որ գրականութեան գրերէ բոլոր նիւղերն մշակեց, եւ անքիւ զործեր բողուց : Ունի դիւցազներգութիւն մի Հեղիական , նշանաւոր են իւր ողբերգութիւներն, Մերոպէ, Ալզիր, Եւայլն : (1694—1778).

Գրագիտուրիւն. — հմաստայրական վեպն ի հանդէս կը քերէ այնպիսի անձնաւորութիւններ՝որ նպատակ ունին յայտնել հմարտուրիւն մի, հերեւ մոլորութիւն եւ կռուիլ նախապատմանց դէմ։ Վերոգրեալ մասն օրինակ է հմաստայրական վեպի։

Առածն այն ձեւն է՝ որով ժողովրդական կամ առևնին ասացուածներ յերեւան կը քերեմ։

Բառե. — եռագոյն, Երեք գունով. — Պերճ, Հարուս. — Ընդարտու, Բնական. — Բողոքոց, Միլ։

———— ՀՕԹՈՅ —————

Վ Ո Ս Փ Ո Ր

Ալեաց մէջէն կանգնած վեր՝
Զոյգ հրաշալի աշխարհներ,
Ապլած դիտէք միշտ զիրար
Իբրեւ երկու սիրահար։
Եւ Տէր ժպտի ձեր վերայ
Սիրուն ափունք Վոսփորայ։

Խարտեաշ վարսիւք՝ աչք նուազ
Դու եւրոպա հարս չքնաղ,
Եւ թաւ մօրուօք՝ յօնի նևել,
Ասիան քո նստի դէմ։
Ո՞վ հեշտ ափունք Վոսփորայ,
Տէրն իսկ ժպտի ձեր վերայ։

Ընդ երկնքով ձեր պայծառ
Չկայ ձմեռ ոչ ամառ։

Այլ առաւօտն է գարուն,
Երեկոյին ալ աշուն.
Զուարթ ափունք Վոսփորայ
Տէրն իսկ ժպտի ձեր վերայ։

Դարէ ի դար դուք երկու
Իշխէք հզօր ծովերու,
Որ աշխարհիս ծայրերէն
Երկրպագուս ձեզ բերեն։
Եւ Տէր ժպտի ձեր վերայ,
Կապոյտ ծովեր Վոսփորայ։

Երբոր հովեր մեղմաշունչ
Ծաղիկներու չարժեն փունջ,
Այնպէս անոյշ հոտ բուրեն
Որ հրեշտակներ հրապուրեն.
Եւ Տէր ժպտի ձեր վերայ
Ծաղկեալ ափունք Վոսփորայ։

Ծածկեն թփեր թռչունք բիւր
Եւ հովիտներ զով ազրիւր
Սովակին հետ վարդենիք
Տօնեն ամեն օր հարսնիք.
Եւ Տէր ժպտի ձեր վերայ
Զքնալ ափունք Վոսփորայ։

Կէս գիշերին՝ սիրահար
Կուսանք երբոր թիավար
Սակին ի ջուրս կապուտակ
Եւ նուագեն անուշակ.
Տէրն իսկ՝ ափունք Վոսփորայ,
Ժպտի իրենց ալ վերայ։

Ոչ Հելուետիա , Նարօլի ,
Ոչ են քան ձեզ սիրալի .
Թագաւորներ են անբախտ
Որ տեսած չեն զայս դրախտ ,
Եւ Տէր ժպտի ձեր վերայ
Անմահ ափունք Վոսփորայ :

Տրտում հոգիք նաև դուք
Որ փնտոէք ծառոց շուք .
Կամ ուրանաք դուք՝ յամառք ,
Արարջութեան հրաշքն ու փառք ,
Եկէք յափունս Վոսփորայ
Եւ Տէր գթայ ձեր վերայ :

ՄԿՐՏԻՉ ԱՃԵՄԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Կատարեալ վիլիստիայութեան մ'առջեւ գեղեցկութիւնն ոչ թէ տինծու առաւելութիւն մի , վտանգ մի , անպատճութիւն մ'է , այլ առաջինութեան պէս երկնային պարզեւ մի :

ՈՒՅԱՆ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՎՊՈՒԹԻՒՆ . — Մկրտիչ Աճեմեան , առաջնակարգ բանասեղ , ծնած է ի Կ. Պօլիս , նախկին առաջեր Մուրատեան վարժարանի : Նորա լերբուած ոնոյ պարզութեան գեղեցիկ օրինակներ են : Հրատարակած է Ժայիս և Արտաստի , Վահագն ,

Լոյս և Սոսուկր : Աճեմեան զիտէ պայծառ կերպիւ բացատրել իմաստներն :

Գրագիտուրիւն . — Տեղագրութիւնն է նկարագրութիւն տեղոյ , տեսարանի , տանարի , պալատի , դաշտի , եւայլն :

Թառք . — Խարտեաշ , Գեղին . — Թաւ , Խիս , Մազոն . Յօնիք . Ընենուի . — Նսեմ , Մուր :



Ո Ս Պ Է Բ Ֆ Ի Լ Թ Բ Ն

Ուոպէր Ֆիւլթըն Ամերիկացին շոգին գործածեց ալիքները նուաճելոյ : Մի նշանաւոր օր էր մարդկութեան համար 1803 տարւոյն վերջին օրերէն այն ուր առաջին անգամ Սէնի վերայ շոգենաւու առաջին յաջող փորձն եղաւ : Գաղղիոյ գիտութեանց ճեմարանն յիմարութիւն հոչակեց ֆիւլթընի գիւտոն . բայց այսօր այդ յիմարութեան շնորհիւ մարդիկ անդունդները կը ծաղրեն , կը դիմագրաւեն մրրկաշունչ հողմոց և ովկէանու անկոխ ու անհետ ուղիներէն կ'ընթանան անկասկած ու սրբնթաց . ո՛չ եւս պաղատելով Եւողոսի որ փշէ և ուռուցանէ իւրեանց առագաստներն : Այսպէս ամէն նոր գաղափար յերեւելն՝ ծաղրուած է զառաջինն ամենէն իմաստուն մարդերէ . մարդիկ այնքան յարած են հնոյն աւանդութեան , որ գժուարաւ կը խզենք անցելոյն հետ կապող հանգոյցներէ . ճշմարտութիւնը բիւր խոչընդուներու մէջէն կը հորդի իւրեան ուղի : Բայց այս օրուան յիմարութիւնն վաղուի իմաստութիւնն է . ո՞չ

ապաքէն Խաչին յիմարութիւնն այլ յաղթեց աշխարհի իմաստնոց, դահճաց սուրերուն և ողիմպեան աստուածոց. ու թագակալ գլուխներն իսկ բերաւ խոնարհեցոյց իւր ոտից առջեւ: Ո՞վ կը տարակուսի այսօր կալիկոսի յայտնած ճշմարտութեան վերայ. իւր առաջին գրքին մէջ կրուսանի զայն այսօր մանուկն. սակայն հէքն կալիչոս, եօթանասնամեայ, ծունր կը դնէր հաւատաքննութեան ատենին առջեւ, և կըստիպուէր ուրանալ իւր գիտական վարդապեառութիւնքն, որ Աստուածաշունչի տիեզերական սկըզբունքները սրբագրել կը յանդգնէին: Բայց ճշմարտին սիրահար ոգւոյն դժպհի է հրաժարիլ անտի, յոտն կ'ելնէր կալիչ և ոտքը գետին կը զարնէր ու կը գոչէր. Եւ սակայն կը շարժի՛ ևա:

(Մասիս)

Դ. Յ. Պէրոքրեան

Ա. Ռ. Ա. Ծ

Երկիրը չար խորհրդական մ'է:

ՀՅ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենսագրութիւն. — Իերէոս Յովիաննէս Պէրպէրեան, ծնած է ի Խասգիւղ եւ Տեղլոյն Ներսիսան վարժարանին մէջ առած է իւր առաջին ուսումն: Անուանի գրագէտ եւ հիմնադիր Տեօրէն համանուն վարժարանին, զոր կը վարէ 15 տարիներէ ի վեր: Իւր աշխատակէր ոգւոյն ընորհիւ Պէրպէրեան՝ բազմակողմանի հմտութիւն ունի: Ուսած է լեզուներ, հայերէն, բուրբերէն, զաղիերէն, անգլիերէն, գերմաններէն, յանաւէն եւ լատիններէն: Աշխարհիկ մատենագրութեան կարեւոր ծառայութիւնն են նորա

հրատարակութիւնն: Առաջին Տերեւի, Գեղեցիկն եւ Գեղարուեսի, թշուառութիւնն եւ Գուր, Ժողովրդեան Զրոսամենին, Հերման եւ Գորորքա (քարգմ.): Բահի Հաւատացելոյ Ուրու (քարգմանութիւն):

Բառե. — Եւողոս, Գիլ նորմաց: — Հորդել ուղի, Ճամբայ բանալ: — Կաղիկոս, Եւեւելի բնագէտ եւ ասեղագէտ իսալացի (1564—1642): Գ.Տ.Ա. Եւերիս օրական բաւարումն:

— 23 —

ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆՔ

ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱԻԹԻ

Ա.

Երնէ՛կ մարդուն՝ որ չերթար

Ամպարըշտաց խորհրդպին,

Մեզուորաց ճանապարհն

Նա՝ կանգ չառնուր կամովին:

Ժանէ՝ խառնակեաց մարդկանց քով

Նա չի երթար կամովկար:

Մեզուորաց խորչելով

Կը փախէ իւր ճանապարհ:

Ասուուծացին օրէնքներ

Նա կ'ընդունի մլուադիր

Կը մըտածէ զօր գիշեր:


Նոցա վերայ անձանձիր:

Նա նըւման է այն ծառին

Որ աղնկած է ջըրաշատ

Ճամբու վերայ ատենին

Ճալով պըտուզ յոյժ առատ:



Նորա տերեւք դալար միշտ՝
Զըմեռ ատեն չեն թափիր,
Ինչ բանի որ գընէ միտ
Կը յաջողի ժիրաժիր
Ամբարըշտաց ոչ ոյսպէս,
Յաջողութիւն չիք իսկի.
Նոցա գործեր փոշւոյ պէս
Հովք ցիր ցան կը տանի:
Ամբարիշտ մարդն յատենի
Կը լինի միշտ դատապարտ.
Եւ յարդարոց ժողովի
Խըտիւ դատուի մեղապարտ:
Տիրոց առջեւ բաց յայտնի
Է արդարոց ձանապարհ.
Ամբարըշտացն կը տանի
Դէպ ի կորուստ ու խաւար:

բ.

Ինչու ազգեր շըփոթած
Տակն ու վերայ կը լինին.
Ժողովուրդներ այլայլած
Փուճ խորհուրդներ կը խորհին
Սրբայք ելան ի յատեան
Աստուծոյ դէմ կըռուելու.
Նոցա իշխանք ժողվեցան
Բնդդէմ Տիրոջն օծելոյ:
« Կըտրենք, ասին, ու ձըդենք
« Մէկդի կրօնից կապանքներ
« Աստուծոյ լուծն թօթափենք.
« Ազատ վարենք մեր օրեր:

Խընդաց Աստուծած երկնքէն
Գոյա չար կամք տեսնելով.
Արհամարհեց նա մըտքէն
Թագաւորաց վատ ժողով:

Եւ խօսեցաւ սըրդողած,
Շըփոթելով վեր ի վայր
Անըգգամներն գումարուած
Զարաժողով ի մի վայր:
Ես թագաւոր նորամէ
Ընտրուեցայ Սիօնի.
Լըսեցէք դուք իմ բերնէ
Ինչ որ ասաց նա ինձի:
« Տէր ասաց ինձ, Որդիս ես,
« Այսօր ծընայ ես ըզքեզ
« Խընդրէ ինձմէ ի՞նչ կուզես.
« Ես ամեն բան կուտամ քեզ:
« Բոլոր երկրիս ազգերուն
« Քեզ Տէր կարգեմ բացարձակ
« Թող հասնի քո տէրութիւն
« Երկրիս վերայ ծագէ ի ծագ:
« Հովուէ նոցա տիրաբար
« Գաւազանաւ երկաթի,
« Զախէ փըշրէ ազգն յիմար,
« Իբրեւ անօթ բըրուտի »:
« Թագաւորներ լըսեցէք,
« Այս է Տիրոջս հըրաման,
« Դուք որ աշխարհ կը դատէք,
« Խըրատուեցէք միաբան:
« Մըտ երկիւղիւ Աստուծոյ
« Պաշտօն պատիւ մատուցէք

« Եւ դողալով մըսախոհ
 « Նորա առջեւ ցնծացէք :
 « Էնդունեցէք իմ խըրատ ,
 « Զը լինի Տէրն բարկանայ ,
 « Կը կորսուիք դատապարտ
 « Երբոր արդար դատի նա :
 « Թէ 'ի զայրոյթ նա բըրդի
 « Արդարանալ ո՞վ կարէ .
 « Այլ նոցա բիւր երանի
 « Որոց յոյաը Աստուած է : »

Հ. ՔԵՐՈՎԲԻ Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Կրօնը միւս լրւշ անմեղութեան մէջ է , երբէք չի ծերանար . իսկ զիսուրիւնն՝ արդէն բարին ու չարը նանչած ալեւոր մի է :

— 308 —

ՏԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Կենսագրութիւն . — Հ. ՔԵՐՈՎԲԻ Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ , անդամ Վենետիկոյ Միիթարեան միարանութեան . Գրական մեծ անուն մի շահած է իւր յօրինած առակենով , որոց նիւրեւն արդէն ծանօթ են մեզ Փեղրոսի , Լամենքէնի , Քոփլօվի Եւայլն միջոցաւ . Բաց ասի այժմ Հ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ կարեւոր ծառայութիւն մի կը մատուցանէ հայ գրականութեան Մաղմուն վերածելով յաւ-

խարհիկ լեզու տաղաչափեալ . Այդ նոր զործոյն մի ժանի յարասութիւնն կը ցուցնեն հմուտ վարդապետին կատարեալ յաջողութիւնն :

Գրագիտութիւն . — Առասպեկլ կամ Առակլ են անոնք յոր ներողն անունի իրաց եւ կենանեաց միջոցաւ կը նրանանգէ զմարդիկ . Առակաց նիւրեւն կը լինին այլաբանական . Առակաց ոնք պէտք է ըլլայ պարզ , բնանի , զուարք , սնորհալի , բնական :

Մրազան գեղօնիք կերգէ զԱսուածութիւն , դրօյինակ՝ Մովսէսի գրեւեն , Դաւթի Սաղմոսիք :

Վերոգրեալն է Մրազան Գեղօն :

Բառք . — Ժանէ , Գէւ . — Խառնակեաց , Անարգ վարուք . — Մաղիր , Ուսաղիր — Անձանձիր , Անձանձոյր . — Խսի , (ումի) . Բնուլ . — Զայսի , Փշրել :

Պ Ա Ր Ո Յ Ց Դ

Այս' , սիրելի Հենրիկոս , « Աւսումն քեզ ծանր կուգայ » , ինչպէս որ մայրդ քեզ կ'ըսէ . ուզածիս պէս դեռ չեմ տեսներ հաստատամութեամբ և խընտում երեսով քու գպրոց երթալդ : Դեռ կը դժկամակիս , մտածէ քիչ մը թէ առանց դպրատան անցուցած օրդ ինչպիսի թշուառ և խուսն պիտի համարուի . շարթուան մը միջ ձեռնամած վերստին երթալ պիտի խնդրես . ձանձրացած և ամօթալից , զլուած քու զուարձութիւններէդ և էութենէդ : Ամէնքն , ամէնքն ալ կ'ուսանին արդ , Հենրիկոսդ իմ : Մտածէ՝ աշխատաւորքն , որք զօրն ողջոյն վաստակելէ յետոյ՝ երեկոյեան դպրոց կ'երթան . հանայքն , ժողովրդեան տղայքն , որք ամիողջ շաբաթը կ'աշ-

խատին և կիրակի օրեւն դպրոց կ'երթան . զինուռ-
ռականքն՝ որք կրթութենէ յոգնած դառնալնէն յե-
տոյ՝ իսկոյն ձեռքերնին գրեանք և տետրակը կ'առ-
նուն . մտածէ մունջ և կոյր աղայքն , որք դարձեալ
կը սորվին , և մինչեւ իսկ բանտարկեալքն որ անոնք
ևս կարդալ և գրել կ'ուստնին . Առաւոտեան դուրս
ելած ատենդ մտածէ՝ որ մի և նոյն վայրկեան նոյն
քաղքիդ մէջ՝ ուրիշ երեսուն հազար տղայք կ'երթան
և երեք ժամ սենեկի մը մէջ կը փակուին ուսանելու
համար : Ի՞նչ կ'ըսեմ , մանաւանդ թէ մտածէ այն
անթիւ տղայքն որք գրեթէ նոյն ժամուն՝ ամէն աշ-
խարհաց մէջ դպրոց կ'երթան , տես զանոնք երեւա-
կայութեամբ՝ որք կ'երթան , կ'երթան , հանդարտ
գիւղօրէից նրափողցներէն , շառաչալից քաղաքաց
պողոտաներէն , ծովերու և լճերու երկայն եղերքնե-
րէն , կիզիչ արեգական մը տակ , մշուշի մէջ . նաւա-
կօք՝ ջրանցիւք հատեալ երկրաց մէջ , ձիով՝ ընդար-
ձակ մարգագետիններէն , բայխրիւ՝ ձեանց վրայէն .
ձորերէն և բրակներէն , անտառներ , և հեղեղներ
կտրելով . լերանց վրայ ամայի համբաներէն , առան-
ձին , բազմութեամբ խմբովին երկայնութեամբ շար-
ուած . ամենուն թեւոց տակ գրեանք , հազարաւոր
տեսակ հագուստներով , հազարաւոր լեզուներ խօսե-
լով : Ըուսաստանի՝ գրեթէ սառոյցներու մէջ կոր-
սուած՝ յետին դպրոցէն սկսեալ՝ արմաւենեօք հովա-
նաւորեալ մինչեւ յյետին դպրոցս Արարիոյ , բիւրք
բիւրուց կ'ընթանան ամենքն ալ ուսանելու բիւրա-
ւոր եղանակօք՝ միեւնոյն բաներն . Երեւակայէ այս
հարիւրաւոր ազգաց տղայոց մրջնոց պէս ամեն ըն-
դարձակ արագութիւնն , այս անընդհատ շարժումն՝
որոյ մէջ և դու մասն ունիս , և մտածէ : Եթէ այս

շարժումն դադրելու ըլլար , մարգկութիւնն վերստին
բարբարոսութեան վիճակին մէջ կ'իյնար . այս շար-
ժումն է՝ յառաջադիմութիւնն , յոյսն և աշխարհիս
փառքն :

Հայր Բ

(ԲԱԶՄԱՎԵՄ)

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Նորածագ տուրնօքեան պահուն , դեռածիլ տերեւներն ,
ունին շողեր , որ ապա կը ջնջուին . — Հոգիներն ,
մասդաւ տիոց մէջ ունին նշոյներ , որ ապա կը կո-
րընչին կ'անիեւանան :

3. ՍԵԹԵԱՆ

ՎԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գրագիտաւրիւն . — Թուուլն մասսեց կը յայտնի որ եւ է
նիւրոյ բոլոր յատկութիւնքը , իրողութեան մի պարագայք , զա-
լափարի մի բոլոր մասերն :

Բառե . — Խուսեն , Անպիտան . — Շառաչալից , Աղմկալից . —
Բալիխր , (Գրզագ) :

— ՀՅԱՅՑՈՅՑ —

ՊԵՏԱԿ

Արծաթաճաճանչ ու վըճիտ գետակ ,
Սահիս անդադար կարկաչով շիտակ . . .
Խորհիմ ու խորհիմ , յեղերդ նստած լուռ ,
Ուստի գաս արդեօք , և կ'երթաս դէպ ո՞ւր :

« Ժայռերուն կուգամ գոգէն ես՝ մըթին,
Քալեմ վըրայէն ծաղկին ու մամախին,
Երեսիս վերայ ճեմի անդադար
Երկնից կապուտակ զուարթագոյն նըկար :

« Եմ զուարթագին, տղայամիտ դեռ
Մըգէ զիս յառաջ, ո՞ւր՝ զոյն չեմ գիտեր :
Զիս վախուտ ու ցից կոչողն ի քարէ
Նա է որ կարծեմ զիս հեշտիւ վարէ : »

Կէօթէ

Թարգմ.

(Հանդես ամսօրեայ)

3 S.

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ԴՄԱՍՑՔ

Կենաց իրիկունն իւր հետ կը տանի իր լսադտերը :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Կենացգրուրիւն. — Կէօթէ, միմ ի մեծանանաւ մատենագրաց Գերմանիոյ, ծնաւ 1749 ի Յբրամիմօրս Մայն զետին վրայ. մեռաւ 1832 ին ։ իւր զիսաւոր երկի են, Վերքեր, Հերման և Դորոքա (վիպասանուրիւն), Ֆաուտ, Իփիզինի ի Տաւրիք (բատերզուրիւն), ունի նաև այլ բազմաքի զործեր, բորակցուրիւն, լիւատականներ ։ Եռաւ ոնն է յանուանիլ :

Բառք. — Վախուտ, բարձր (ուշուրում). ցից, ցցուած, (shf.)



ԱՐԴԱՌԱՐՏԱՆ

Սթենոկարդ վաճառական մ'է . ահա վաղելով կերթայ առանց բարեւելու նոյն խակ մուերիմ բարեկամներն զի մի գուցէ, անոնց հետ խօսքի բռնուելով, ետ մնայ գործէն որ խիստ ստիպողական է . և գիտէք, ի՞նչ է ստիպողական գործն . նամակ մը ընդունած է որուն մէջ կը ծանուցուի իրեն Ք. ի վաճառատունն գտնուիլ հետեւեալ օրն, երեկոյեան ժամը տասն և մէկին . Ջերիշ ատեն սկսէ իրեն պզտիկ վէպ մը պատմել . վայրիկան մը մտիկ ընելէն յետոյ կըսէ քեզի . « Դուն շարտունակէ խօսքդ ես հիմայ կուգամ » , և փափաք կ'զգոյ նարու խաղացողներուն քովը նըստելու, ուր վայրիւան մը միայն կը մնայ : Երեսփոխանական ժողովյո մէջ երբ ատենարան մը բեմն ելնէ իւր ատենախօսութիւնն սկսի « Տեարք երեսփոխանք » ովլ . Սթենոկարդն անմիջապէս աթոռէն կ'ելնէ « Պարոն ատենաբան », եզրակացութիւնդ ըսէ, ժամավաճառ ըլլալու ժամանակ չունինք » կը պոռայ և կը մեկնի ժողովին զոր շատախօսներու հատընեիր բաղուածի կը կոչէ : Լրագրի մէջ երկար յօդուած չ'կարդար բնաւ, երկու առջովլ տրոււած լուրերն ախորժանոք կը կարդայ զորս ամենակարեւոր կը գտնէ : Աքաղաղներն գեռ չեն սկսած խօսիլ . Սթենոկարդ կարթընայ, անկողինէն վար կը ցատկէ, աճապարանօք հագուի, վարի սրահը կ'իջնայ, ձեռքովն սեղանին կը զագուի, վարի սրահը կ'իջնայ, ձեռքովն սեղանին վար զարնելով կ'աղաղակէ մեծ ձայնով . « Ո՞ւր է նախաճաշ, ո՞ւր է խահուէս և ո՞ւր է կաթս, ո՞ւր կօչիներս, ո՞ւր պաքսիմաթս, հովանոցս և կարագս . . . զիտէք որ առաւօտուն նախաճաշ ընելուս պէս կօգիտէք »

շիկներս կը հագնիմ, հովանոցս կառնեմ և կը կորսուիմ կ'երթամ. ինչո՞ւ չէք տեսներ գործս . . . թորո՞ս, կը քնանա՞ս դեռ, անպիտան, իցիւ թէ բնաւ չ'արթնայիր . . . կէս օր եղաւ, ծոյլ, գիշերները գար մ'են . . . » ոչ ոք կը ներկայանայ: Սթենոկարդ ձայն աւելի կը բարձրացնէ և ձեռքի գաւազանով սեղանին վրայ զարնելով այնպիսի աղաղակ մը կը փրցունէ որ տան մէջ ամէնքն ալ կ'արթնան — դրացիներն ալ —: Սպասաւորն կէս քուն կէս արթուն կը հասնի: Սթենոկարդ մեծ ձայնով կը շարունակէ իւր բարկութիւնը:

— Դուրս, դուրս, դէմս ելնելու երե՞ս ունիս տակաւին, եթէ ես քու տեղդ ըլլայի՝ ամօթէս ծակ մը պիտի մտնէի և չպիտի երեւէի րնաւ: Հորս ժամէ հետէ շարունակ զեկզ կանչելով թոքերս փճացան, շունչս սպառեցաւ, ձայնս մարեցաւ, հատայ, լմնցայ. այսուհետեւ ա'լ պէտք չունիմ քեզի, գնա՛ քեզի համար ուրիշ տէր մը փնտուելու, ուրիշ տուն մը գըտնելու . . . ինչո՞ւ ցցուեր կայներ ես դէմս, գնա՛ կը սեմ, գնա՛ . . . : Սպասաւորն դուրս կ'ելնէ:

— Ո՞ւր կերթաս, աներես, ո՞վ ըսաւ քեզի որ երթաս . . . :

— Դարձեալ չ'բերի՞ր նախաճաշս, կօշիկներս և հովանոցս, դուրս կորսուէ՛ անպիտան:

Սպասաւորն դուրս կ'ելնէ,

— Հոս եկուր:

Սպասաւորն կը մտնէ քթին տակէն խնդալով:

— Ինչո՞ւ կը խնդաս:

— Ոչինչ, խնդալս եկաւ:

— Ինչո՞ւ համար խնդալդ եկաւ:

— Միտքս բան մ'ինկաւ, անոր համար խնդացի:

— Ես ալ կուզեմ այն բանն իմանալ որ միտքդ ինկաւ և անոր համար խնդացիր,

— Մոռցայ:

— Մոռցա՞ր . . . հիմա, հիմա, շուտ, անմիջապէս, անպատճառ, ժողվէ լաթերդ և տունէս դուրս ելիր — կը հրէ սպասաւորն:

— Ի՞նչ պատահեցաւ նորէն, կը պոռայ տիկինն վերի սանդուղէն իջնելով, ի՞նչ աղաղակէ աս, ի՞նչ գոռում գոչում, ի՞նչ իրարանցում, ամէն օր է աս կուիր, թոյլ չէք տար որ օր մը առաւօտեան քուն քնանամ . . . :

— Կուզէ՞ք իմանալ թէ ի՞նչ պատահեցաւ նորէն, թէ ի՞նչ աղաղակէ աս, թէ ի՞նչ գոռում գոչում է, թէ ի՞նչ իրարանցում է, թէ ինչո՞ւ թոյլ չենք տար քեզի որ լարեհաճիք առաւօտեան քուն մը քնանալով ձեր փափուկ մարմինն ինամել ըսեմ ձեզ, տիկին, երեսի վրայ ձգուած մարդ մ'եմ ես այս տանը մէջ, ստակի մը պատիւ չունիմ. նոյն իսկ սպասաւորն, այդ անմօթն, այդ լիրը կը ծաղրէ զիս ու կը խնդայ վրաս: Անօթի եմ տակաւին, չըերին ինձ ոչ նախաճաշս, ոչ կօշիկներս և ոչ հովանոցս, մինչդեռ աշխարհ գործին գլուխը գնաց և ահագին գումարներ վաստկեցաւ, հասկցա՞ք հիմա թէ ի՞նչ պատահած է նորէն, թէ ի՞նչ աղաղակէ աս, թէ ի՞նչ գոռում գոչում է, թէ ի՞նչ իրարանցում է, թէ ինչո՞ւ ամէն օր է աս կուիր, թէ ինչո՞ւ թոյլ չենք տար ձեզի առաւօտեան քուն քնանալ . . . :

— Իրաւունք ունիք . . . իրաւունք ունիք . . . արդարութիւնն ձեր կողմն է, անիրաւ է թորսաը, ծոյլ

է , լիրք է , աներես է , ինչ որ կըսէք ճշմարիտ է , կախելու է թորոսը , այդ անպիտանը :

— (Պոռալով) ինչո՞ւ իրաւունք ունենամ , ինչո՞ւ արդարութիւնն իմ կողմն ըլլայ , ինչո՞ւ անիրաւ ըլլայ թորոսն , ինչո՞ւ կախելու ըլլայ թորոսը . . . զիս բարկացնել կուզէք , տիկին :

— ի՞նչ ըսեմհապա , թորոսն իրաւո՞ւնք ունի ըսեմ :
— Ան ալ մի՛ ըսեր :

— ի՞նչ զրուցեմ ուրեմն :

— ինչ որ կը զրուցէ մէկն ասանկ պարագայներու մէջ , ճշմարտութիւնն :

— Եթէ ճշմարտութիւնն զրուցել հարկ ըլլայ՝ պիտի ստիպուիմ ըսելու թէ դուք էք պատճառ որ . . .

— Ե՞ս եմ պատճառ , ե՞ս եմ պատճառ . . . մնաք բարով :

— Ամէն օր պատճառ մը կը գտնես բարկանալու :

— Երեք չորս ժամ սպասեցի որ կօշիկներս փայլեցընէ , առջի օրն կաթս առնուած չէր , անցեալ շարթու կէս օրին . գնացի գրասենեակս՝ որովհետեւ սպասեցի որ հովանոցս գտնուի , ո՞ր մէկն ըսեմ , ամէն օր պակաս չեն պատճառներ զիս բարկացնելու համար , այս բարկութիւնն գերեզման պիտի իջեցնէ զիս . . .

— Նախաճաշդ պատճառտ է ահա , նստէ կե՛ր :

— Ախորժակ մնա՞ց որ ուտեմ , գետնին տակն անցնի նախաճաշն ալ . . . մազ մնաց որ ծանր խօսք մը պիտի փախցնէի բերնէս . . . դուք կերէք այդ նախաճաշն , վեաս չունի , ևս անօթի մնամ (բարկութեամբ վար կիջնայ սանդուղին որուն երեք աստիճաներն մէկ քայլով կը չափէ :)

— Կօշիկներդ չ'ագնի՞ս :

— Չեմ ուզեր , դուք հագէք . . . (մուճակներով

փողոցը կը նետէ ինքզինքն և քանի մը քայլ առնելէն ետքը կը դառնայ դուռը կը զարնէ , դուռը կը բացուի , կը մտնէ) : Կօշիկներս ինչո՞ւ չէք բերեր , ամէն բան ե՞ս զրուցելու եմ . . . նախաճաշը պատրաստ է կըսէք , ո՞ւր է :

— Վերն է , թող բերէ թորոսը :

— Վե՞րն է . . . օ՛հ . . . թորոսն սանդուղին վեր պիտի ելնէ , սրահին դուռը պիտի բանայ , ներս պիտի մտնէ , նախաճաշը պիտի առնէ , սանդուղին վար պիտի իջնայ , հոս պիտի բերէ , սեղանի վրայ պիտի դնէ , յետոյ աթոռ մը պիտի բերէ , ես պիտի նստիմ , պիտի ուտեմ պիտի կշտանամ ու ետքը գործի պիտի երթամ ու ստակ պիտի վաստկիմ . . . տարուան մը գործ բացուցաւ մեզի . . . թո՛ղ մնայ տիկին , թող մնայ : Դուռն ուժգնակի զարնելով կը գոցէ և կըսկի արագաքայլ դէպի վաճառատունն երթալ , փողոցին մէջ ինքնիրեն մրմուալով « Դանդաղ մարդոց հետ գործ ունենալն ի՞նչ սիրտ — հատնում է եղեր , Տէր Աստուած » :

(Խիկար հանդէս)

3. 3. ՊԱՐՈՒԵԱՆ

Ա. Ռ. Ա. Ծ

Որչափ որ մէկը սակաւուց կարօտ լինի , այնչափ աւելի Աստուծոյ կը նմանի :

ԽՈԿԲԱՏ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ԿԵԲԱՋՐԱՄԱՐԻՍ. — Յակոբ Յ. Պարոնեան, ծնեալ յԱնդրիանուպոլիս, ազգային հոչականոր երգիծաբան՝ որ հաւաք գրիչով կը հարուածէ մոլորութիւններ, մոլորիւններ եւ նախապատճմունք։ Եղական հանճար մ' է Պարոնեան, եւ առ մեզ ոչ ոք բան զեա լու մշակած է գրականութեան այս նիւղն։ Բազում են նորա գրուածներ, հրատակեալ Մեղուի, Թատրոնի, Լոյսի եւ այլ օրագրաց մէջ։

Առանձին հրատարակած հատուններն են Խիկար հանդէս, Եիծաղ, Պտոյս մը Պոլոյ բաղերում մէջ, Մեծապատի մուրացկաններ, Ազգային ընջեր, Նորա առաջին զործն է Արեւելեան ատամնաբոյժ։

ԳՐԱԳԻՄՈՒԹԻՒՆ. — Երգիծաբանութիւնն է մեր ծաղրելի զործոց եւ քերութեանց նկարագրութիւնն եւ բնիադատութիւնն ։ Նորա նախական է ուղղել բարենքն։

ԿԱՐԻԼ ՄԻ ԶՈՒՐ

Անգայտացեալ օդը պայթեց,
Մի պահ խաղաղ ծովակն յուզեց.
Որոտալով մըրըրկաւունչ
Հընչեցին սկզ ալեաց մըսունչ։

Որք բարձրացան սուր՝ վիրփրահեր,
Դողացնելով ըզծովեզերք,
Սպառնալից և կատաղի,
Փոշիացած սպիտակ՝ աղի։

Ծովը յետ յառաջ գնայր ու խաղայր,
Բախէր և ինքն հեծէր գողայր
Ահեղ ջրեղէն կարծես բարան,
Անառիկ փակ քաղքին ի գրան։

Փոթորիկն երբ միմւէր զերդ կինձ
Երկնից կաթիւ մի ջրոյ սկարզ ջինջ
Ովկիանուն անկաւ ի ծոց
Խափանուեցաւ իւր ողբն ու կոծ։

Ի ծովուց այդ յանբաւութիւն՝
ի՞նչ էր ինքը . . . : Ոչնչութիւն . . .
Միւչ երկնելում՝ տունն էր ամսիկ,
Զով անձրեւաց կազմէր մասնիկ։

Յայնժամ լուծուած՝ անհետացած
Խոր անդընդում գոռող ալեաց,
Խառնուեցան իւր հեղ արտառունք . . .
... Բայց գըթացին յերկնից զուարքունք։

Թերահաւատ կաթլին գրացի
Բերանարաց կար մի խեցի,
Որ զոյն կաթիւ յանկարծ կուլ տուեց,
Ու իւր ձոյում սընոյց պահեց։

Անցան օրեր, տարիներ շատ,
Երբ մի ձկնորս խեղճ ու ազքատ
Խըլեց խեցին այն ժայռապինդ . . .
Բացաւ տեսաւ սըրտիւըն խինդ։

Ի գիրկ խեցւոյն այն մամսապատ
Կայր մարգարիտ զինչ ջինջ արծաթ ,
Ծախելով նա դարձաւ հարուստ
Ապահովեց կեանքն ու ապրուստ .

Այսպէս չընչին ջրբի հատիկ ,
Երջանկացուց խեղճ ընտանիք .
Թագաւորաց յետոյ թագին
Զարդ մի եղաւ՝ գանձ թանկագին :

(Հանդես Ամսօրեալ)

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴՎԱՅԵԱՆ

Ա. Ռ. Ա. Ծ

Արարածոց բնութիւն
Կ'ոչընշանա՞յ կարծես դուն .
Զէ՞ո՞ որ այսօր կը մեռնի՞
Վաղին ա'լ կենաց կը փոխուի :
Փըստած դիէն կ'ելնէ որդ ,
Որդին ուրիշ մ'է յաջորդ ,
Հին առակն ալ աս կ'ըսէ ,
Թէ « բուկին մահդ իմ կեանքս է » :

(Տօսար հաւանեան)


ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենապրուրիւն . — Պետրոս Հերոնիմոս Ադամեան , հրո-
շակաւոր Ալբերգու , ծնած է ի Պալաբիս կ. Գոլոսյ , 1849ին .

Խոսումնասիրած է երկու հարիւր դերեր , յորս հօանաւոր են Շե-
քսպիրի Համելը , Օքելլոյ , Արբայ Լիր , Շիլեռի Աւազակներ ող-
բերգուրեան մէջ Ֆրանցի դերը , Կուտսկովի Ռուիկէ Ալուսա եւլն .
Ասոնց մէջ Ադամեան գերազանց կը նկատուի հան զմռոսի եւ
Սալին . Ադամեան մկարէ եւ ժիրոյ է միանգամայն .

Թրագիֆատուրիւն . — Կենդանի մկարազիրն է այն ձեւն՝ ո-
րով կը բացատրեմ գործողուրիւն մի , դէպէ մի , երեւոյք մի :

Բառէ . — Անզայտացեալ , Նօսրացած . — Սէգ , Ամբարտա-
ւան . — Փրիւակեր , Փրիւալից . — Բարան , (ապիսն) — Կիճճա ,
Վայրի խոզ . — Երկընում , Երկնելի մէջ . — Զուարում , Հր-
րեւսակ . — Զինէ , իբրեւ .



ՇՆՈՐՀԱԼԻՈՅ ՅԻՇԱՏԱԿՆ

Հասպա՛ և մեք , ո՞վ սիրելի ազգակիցք Ներսիսի ,
որք 44 դարէ ի վեր հին նահապեափ մը անուն կրեմք ,
և աւելի սասոց հոգեւոր որդիքը եմք այնպիսի հայ-
րապետաց՝ որք ի միջի հայրապետաց ամենայն ազգաց
և աթոռոց՝ միայն կանուանին կուսուորիչ և Շնոր-
հալի . մենք՝ որ այնքան պեղութեամբ կը պահեմք
անոնց անունը , աւանդը և սէրը , նորոգենք և զօ-
րացնենք այն սէրն ու երախափքը՝ որոց պարտական
ենք և պիտի ըլլան մեր յետին թռուունքն ալ . Եթէ
այս ինչ կամ այն ձիրք կամ չնորհք ունող անձանց այն-
պէս շքեղ տարեդարձի և գարադարձի յիշատակք կը
կատարուին ստէպ յազգաց , և փոքրիկ հին յիշատա-
կըն ալ՝ նորանոր կրկնութեամբ կը մեծացնեն , ո՞ր-
քան աւելի արժան է մեզ՝ թէ ոչ անկարելի շքեղու-
թեամբ՝ գոնէ կարելի երախափաց և սիրոյ եռան-

գեամբ հռչակել յիշատակ մը՝ որ միշտ մեծ է, և
Անձ մը՝ զոր հարք մեր գերոսկի կնքով կնքեցին Շը-
Առհաջի, և երկինք վաւերացւցին:

Եիշենք և տօնենք ուրեմն այն անհման անձը,
զոր թէ հնար էր՝ ամէն բարենախանձ ազգ պիտի փա-
փաքէր գնել և իրեն սեփականել: — Այն՝ որ ի ման-
կութենէ իրեւ խոհական, և չափահաս այր երեւե-
ցաւ, և ի ծերութեան որպէս մանուկ հեղ և անմեղ.
Այն՝ որ երբէք հեշտութեամբ չծիծալեցաւ և ոչ վայ-
րապար խօսք մը ըրաւ և միշտ զուարթադէմ էր և
քաղցրազրոյց. Այն՝ որ երբէք ըստ քմաց և կամաց
րան մը չգրեց, և միշտ յօժար և յարդոր էր գրե-
լու՝ ըստ կամաց և պիտոյից այլոյ. Այն՝ որ միշտ
յանապատս և ի քարանձաւու բնակէր, և իրեւ յա-
պարանս բնակնու մարդավար էր և մարդասէր, որ
ընտրէր զմիայնութիւն ընդ Աստուծոյ, և փութայր
ի ժողով՝ յօդուտ ընկերութեան մարդկան. — Որ
յիսուն տարի Հայաստանեայց եկեղեցւոյ սրատգամ,
վարիչ՝ ամող, լուսատու և վարդապետ եղաւ, և յե-
տագայից ալ բացաւ թողաւց լուսաւոր ճամբայ, յի-
սուն տարի ինչպէս իր եկեղեցւոյն այնպէս և ապդին
դպրութեան դաստիլուխ եղաւ, և յետնոյ մինչև ի
մեղ և մինչեւ ի սպառ օրինակ հայկաբանութեան
յարձակ և ի չափական գրուած: Այն ինքն՝ որ մեր
գեղեցիկ ժամերգութեանց և պաշտամանց՝ գրեթէ
ամրող երրորդ մասին հեղինակ և աւանդող է, և
տեսակ տեսակ բանաւոր արուեստից մէջ՝ առաջին
կամ ընդ առաջինու եղած է յազգային գրականու-
թեան: Այն որ ի վեր քան զամենայն ճարտարս մեր
եղաւ և կոչեցաւ երգեցողի, և աւելի քան յերկրա-
չորացո՝ անշուշտ այնպէս ճանաչուի արդ յերկինաւո-

րաց. վասն զի իր մաքուր սիրտն աւելի վսեմական
և զմայլական քնար մ'ալ ունէր, քնար կուսական,
որով ընդ բիւրաւոր զարմանալի քնարահարացն զորս
տեսաւ և լոեց Յայտնութեան տեսողն՝ շուրջ զաթո-
ռով երկնայինն Սիօնի, որք « Երգէին երգս . . . և ոչ
ոք կարէ գիտել զերգս նոցա » . այլ և դեռ հիմայ ալ
որպէս հաւ զուարթուն փափուկ վանկերով և անոյշ
նուազներով, կարթնցնէ մեր հոգեսէրները, ի մէջ
գիշերի յարուցեալ առ Աստուած թնդացնել սրտեր-
նին: Նա ինքն է որ ի գարնան ժամանակի կենաց՝ մեր
նորահաս հարս ու փեսայից սիրախայծ սրտերը՝ իր
« Սիօնի որդինք, զարթիք » երգովը կուզարկէ յու-
րախութենէ յուրախութիւն. և նա ինքն յաշնայնի
ժամանակաց՝ ամէն հասակէ հնձեալ հասակաց վրայ՝
իր հանդուեան շարականները հնչեցնելով զիջանի
ցաւագնի և մերթ հեղիկ ննջելով մաղթէ, մերթ հա-
մարձակի արդարութեան սոսկալի սուրն ալ գագրե-
ցընել: Ո՞վ նիշուշ քնար որորանաց, սրբիչ սրսկապա-
նաց և հոկող հովանի գերեզմանաց Հայոց :

Ընծայենք արժանաւոր պատկ մը մեր ամենարժ-
եայ հայրապետին, աւելի քան զոսկեցէնն և զականա-
կապ. ընծայենք նման չնորհակալ և չնորհափայշ սըր-
տեր: Նմանութիւնն է ձմարիտ յարգ և սէր որդ-
ւոց առ ծնօղս. . . : Այլ սօն համարձակի և մանիլ ան-
նմանն ներսէսի: — Յուստմ թէ իւրաքս մնչիւր անձն
ջանալով իր չափուն և վիճակին յարմարագոյն չնորհ-
քը ստանալ, կընանք ամենքս միտրացն և միաջան յի-
րար բոլորեալ ազգովիմը՝ ըլլալ իրբեւ ի զանազան
ծաղկանց համախուռն պսակ մը չնորհազարդ, և նը-
ուիրիլ գեղի՝ նախօրինակիդ մերոյ, ո՞վ հրաշազարդ
և անուշակ հայր մեր նամազութիւն:

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Հանճարը կ'սեղծէ, ուամիկը կը նուխրազործէ:

ՍԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆՍԱՎՐՈՒԹԻՒՆ . — ՆԵՐՍԻ ՇՆՈՐՀԱՎԻ , կրտսեր եղբայր ԳՐԻԳՈՐԻ Պահլաւունելոյ , ԺԲ. դարու հայ ՄԱՏԵՆԱՎՐՈՒԹԵԱՆ գրլ. խաւոր պարձանեն . ունի թէ՝ արձակ եւ թէ ուսանուր բազմաքիւ գրուածներ , նեանաւոր են Ընդհանուրական բուղը , ՄԵԼԱՆՈՒՐԻԱՆ Մատրէի , Ողք Եղեսչոյ , Յիսուս Որդի , Եւայլն , Եւայլն . Շարականին մէջ իրենն են Այսօր Ամձառ , Ասունած Անեղ , Առաւու Լուսոյ , Աշխարհ Ամենալի , Եւայլն . (1402—1472) .

Հ. ԳԵԼԵՆԻ Մ. ԱԼԻԵԱՆ , արդիւնաւուս միաբան Միխարեանց վենետիկոյ , որ իւր պատմական , աշխարհագրական . հնագիտական բանկազին ծառայութեամբք բարձրագոյն տեղին կը գրաւէ հայ գրագիտաց մէջ : Ալիեան իւր տապանրով , անվիճելի արժանիօք Եւրոպական համբաւ ունի , եւ բազում ուսումնական բնկերութեանց անդամ է : Նորա նուազենեն մեծ ներքող մի կը ներկայացնեն զինք : Բաց այսի յօրինած է Յուշիկի , Շիրակ , Սիսուան , Շնորհազի և Պարագայ իւր , Տեղագրութիւն Հայոց մեծաց , Եւայլն :

ԳՐԱԳԻԹՈՒԹԻՒՆ . — Դիմառնութիւնն է այն ձեւն՝ որով կեամբ եւ զգացում կուտամք անկենդան առարկայից , բացակայից , նոյն խնկ մեռելոց . Վերյագրելոյն վերջաբանն է դիմառնութիւն :

ԲԱռք . — Ամոլ , Օգնական , զրյա , փոխարեւութեամբ գործածուած . — Քնիուշ , Փափուկ . — Մրսկապան , Առազասի սենակ . — Ազգովիմք , Ցոլոր ազգովը :



Ն Ա Յ Ի Ն Ի Պ Ա Տ Ա Ն Ի Ն

Յուղարկաւորք՝ սիրաք ի հեծմունս ուսուցիկ՝
Հետեւէին սրգազգեցիկ գագաղին՝
Բւր կը հանգչէր խարսնեալ գիմօք գեղեցիկ
Քըսանամեայ հէք միամօր պատանին :

Տըրտմահաղորդ այդ . ամրտին մէջ , եղուկ ,
Քան ըզիողարսն առաւել ձայն մի ուժգին
Եւ քան զզ ջոկ եղերամացըն ցատուկ
Ճիչ կը բառնայր մայրն արտասուօք լալագին :

Փետէր մազերն , կը կոծէր կուրծըն տըկար ,
Հող ըզգըլսով կ'ընկնէր ցաւոց բեռին տակ .
Կ'անիծէր օրն յորում ծընած էր յաշխարհ ,
Հարսանեկան կ'անիծէր քօղն ու մանեակ :

Անհուն էր սէրն որով սիրած էր զորդին ,
Յոյսն իւր սըրտին՝ նըսեմ իւր տան վառ ճըրագ ,
Եւ վիշտն անհուն էր , զի ընդ հուպ ցուրտ որդին
Գերեզմանաց սիրտի լինէր նա ճարակ :

Այրին անոք կը նայէր մերթ անդը յերկին .
Որ ճառագայթ մ'անգամ զլացաւ իւր ծոցէն .
Շող կաթելու համար գեղնած իւր ճակարին ,
Եւ վէրքերուն՝ որ զինքն այնքան կը խոցեն :

Հեկեկանօք յետայ յածէր զիւր հայեաց
Անոնց վերայ՝ որք աչք յերկիր ի խոնարհ
Զէին իշխեր հանգիսլիւ մութ իւր աչաց ,
Եւ լուռ՝ գողցես կը ձայնէին Զի՞ հընար :

Իսկ անխըռով քահանայն յերգ սաղմոսէր .
« Մարդոյ որպէս խոտոյ աւուրք ցամաքին .
« Իբր ըզծաղիկ ծաղկետլ և սա ոչ ևս էր
Երբ ի նըմա կը շընչէր հովմ խորշակին : »

Մահաշըռուկ մըտածութեանց մըրմունջն այն՝
Փողոցըն շոխեն՝ լալականաց ձիչն ու ջայլ՝
Հառաչքն այրուցն՝ ամբոխին խուլ ստնածայն
Կ'երթան կոծել գըժուոց վիհըն մըռայլ :

Հազիւ ելած նայինի գրանն արտաքոյ՝
Ապառաժուտ գամբաններէ ոչ հեռուն
Յուզարկաւորք աեսնեն զիտարբին Գալիխոյ
Ճաճանչ ի գէմսն և բոյ ի մէջ աշերուն :

Բարեբաստիկ չչի հանդիպումն այն արգեօք ,
Նըշանաւոր էր իւր հրաշիւք այն Շարբին .
— կըսէր ընդ ինքն ի յամբոխին անձնիւր ոք —
Թերեւս սըրբէ այս արցունքներն ոք թափին :

Յառաջ կուգար նա հաստատուն քայլերով ,
Մահկանացուի չունէր վարնեքն ու բախիծ ,
Մօր մը արցունքն եեթ չարժէր զիւր գորով .
Ի՞նչ գասնագոյն քան որդեպուրէ մօր կըսիծ :

Կը լըուն ձայնք սրբնդաց , լալիք կը դադրին ,
Լուց քահանայն , ամբոխին խօսին զիայ եառ ,
Ահա Յիսուս մօտենալով առ այրին՝
« Մի՛ լար » կըսէ նըմա յուշիկ ի բարբառ :

Յետոյ հրալի մատամբըն՝ պիզծ դադաղին ,
Եւ կը բըռնէ զձեռնըն մահուն աւարի ,
— Սաղուկեցւոց շըրթունքն ընդ այն ծիծաղին —
« Պատանի՛ դու , գոչէ առ նա , օն արի՛ : »

Ի լուր ձայնին՝ յորմէ թընդայ շիրմին գուր՝
Յարեւուն լոյս բանայ մեռեալն իւր աչեր ,
Սառած արիւնն սուրայ յերական հուպ ընդ հուպ ,
Ել կանգնեցաւ . — ո՞վ էր որ զինք կը կանչէր :

Ո՛ սքանչելիք , ո՞վ հիացումն անդատում ,
Խելայեղեալ առ խընդին՝ մայրն անշըռունչ
Մերթ Յիսուսին փարէր զոտիւք , մերթ որդւյն
Դրումէր ճակտին անհուն համբոյր կարձ ի ըունչ :

Իսկ բազմութեան տիրէ սոսկումն և սարսափ
Դողան ոսկերք իր ի սարսուռ երկնային ,
Այլք աւխւնով հարկանէին ծափ ի ծափ .
Սուզըն սուզաւ , և ցընծալից էր նային :

« Մե՛ծ մարգարէ , կ'աղաղակէր ամբոխն այն ,
« Իսրայելի ժողովրդեան Աստուծոյն
« Զըքնաղ պարգեւն ես դու սիրոյ անսահման ,
« Մե՛ծ մարգարէ , օրհնեալ ըլլայ քոյդ անուն : »

Սակայն Յիսուս էր անտարբեր այդ գոչաննց՝
Գըթոս նայուածն յառած ի մայրն անըլրիք՝
Աւմ զիւր միակ կը պարգեւէր յերկրի զգանձ՝
Ինքն ալ յաշացն հոսեցոյց զոյդ մ'աղի շիր :

Գիտէր անշուշտ թէ՛ իրր որդի միամօր՝
Կառափելոյ տելու ոյն բարձանցը վերայ՝
Օր մի խաչին վէրքեր առած բիւրաւոր՝
Մօրն արտասուաց լինէր երբ ինքըն վըկայ :

Այն ամբոխին ոչ ոք խաչին առ երի
Պիտի ըսէր ցաւագին մօրըն . « Մի՛ լար » ,
Եւ մարգարէն մեծ՝ իրր անարգ մի գերի
Պիտի մեռնէր այդ չոր փայտին ի կատար :

ԵՂԻՇԵ ՎՐԴ. ԴՈՒՐԵԱՆ

Ա. Ռ Ա. Ծ

Ամէն ապրանք մէկ մէկ գին,
Միայն հոգին է անզին.
Ով մարդ, նայէ որ հոգաս
Նախ հոգին, յետոյ մարմին:

Գ. ԵՊԽՍ. ԱՅՎԱԶՅԱՆԻ

ԾԱՆՉԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՎՐՈՒՐԻՒՆ. — Եղիշէ. վարդապէտ Դուրեան, եղբայր վաղանեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրեանի, ծնած յիւսկիւսաւ Ա. Փօլսոյ, նախկին աւակերտ Ճեմարան վարժարանի. Դեռ Երիտասարդ, այլ ինքնաշխատ յառաջիմուրեամբ յաջողած է մեծ հրաժարին սանալ գրական, գիտական, իմաստափական, ասուածաբանական: Ուսած է լեզուներ հին եւ նոր հայերէնն, ճրանսերէնն, անցդիերէնն եւ հին յունատէնն: Հատարակած է ցարդ բանի մը դասագրեց, ընթացի ի գրոց բարրան և. եւ Բ. Տաւրի, Պատմուրին Հայ Մատենագրուրեան, Ընդիր Ասացուածի, Բառագիտուրին:

Դուրեան վարդապէտ մեծ ապագայի մը կոչուած է:

ԳՐԱՎԻԼՈՒՐԻՒՆ. — Ակնարկուրին. — Երեմն գրող կահեարկէ այնպիսի իրի կամ պարագայի՝ որ առնչուրին ունի իւր հիւրին հետ: Այս է ակնարկուրինն: Վերյգրեալ տաղին վերջին երեք տուներն ակնարկուրեան օրինակ էն:

ՇՐԱՐԱՆՈՒՐԻՒՆ. — Շրարանուրինն է անուղղակի ցշան մի, որով մէկը չուզեց իւր բանիին յայտնել պարզուրեամբ, այլ իւր բացաւրած զաղափարին կամ իրին մի յատկուրինն կը նրանամէ: Գալիլոյ Մարքին, փոխ Յիուսու:

Խելամուրինն է բառից համակուրինն առաւելու կամ նուզեցնել: Կորա զանազան ձեւերն են:

1. Սեռը տեսակին տեղ. մահացուք փոխանակ մարդոց:
2. Մասն ամբողջին տեղ. վերոգրեալ մասին մէջ Սարուկեցոց ցըռունք, փոխանակ Սաղուկեցիք:

3. Որոշեալ թիւ մի անորոշ բույզ տեղ. Տան անգամ բան անգամ ըստ մեզ, փոխանակ տաս անզամներ:

4. Եղակին յոթնակի տեղ. արդարն պիտի ծառանիզէ զերկինս:

5. Նիւրը՝ յորմէ իր մի շինուած է, նոյն իսկ իրին տեղ. երկար փոխանակ սրց:

Բառե. Հեծունեմ, Հեծեծանեմ. — Սգազգեցիկ, Սգալից. — Փողար, Փող զարնող. — Զոկ, Խումբ. — Եղերամարտ, Լալկան կիներ (ի հնում). — Զատուկ, Կախարդ. — Մանեակ, Վզի զարդ. — Շոյնիդ, Աղմուկ. — Զայլ, Ողբ. — Թախիծ, Տրսմուրին. — Զկայ առ նուշ, Կանգ առ նուշ. — Խելայեղեալ, Ցնորած. — Աւիւն, Եռանդ. — Անցրիք, Անցարծ. — Շիք, Կարիլ. — Կառափենել, Գլուխը կտրել:



ԹԱՆԳԱՐԱՆ ՑՆՈՒԹԵԱՆՑ

Քաղաքակրթեալ ագինք և եթ զիտեն պատկառ կաշ աղգային հնութեանց. մէն մի նշանար հայրենի մի լուսաւոր էջ կարէ յուելուլ պատմութեան և կը իւրնամէ սերտիւ աղնուագոյն ձկուումներ: Յունաստան գեռ ևս աղայ մանուկ ի քաղաքակրթութեան, կիրթէ արդէն ընծայելոյ արժանաւոր յարգանս իւր պատուական հնութեանց, որ հետզհետէ կուգան ի գուրս աստի անտի: Հինն և նորն հաւասար յարգ ունին յաչս Հելլենաց, մին ի պարծանս և միւսն ի պէտս, և երկոքին իսկ անշուշտ ի շինութիւն հայրենեաց:

Բազմաթիւ և բազմազան են թանգարանք ի Յունաստան, և ճոխագոյնք յԱթէնս: Ազգային հնութիւնք թանկագին հաւաքածոյքն են հնախօսութեան կեդրոնական թանգարանին, որ հաստատեալ է ի սկզբան թագաւորութեանն Հելլենաց. հոյակապ և գեղեցիկ է այս չէնքն համակ մարմարեաց, յոր իրը

Երեսուն հազար օսմանեան ոսկւոյ գումար մի ծախք եղած է ի չնորհս ազնիւ առատաձեռնութեան վեհաճածն քաղաքացւոց։ Աստ կը բովանդակին արձանք, կիսանդրիք և այլ վիմափոր պատկերք ևեթ դից և դիւցազանց։ ամենեքին ատարիկեցի ճարտարաց սքանչելարուեստ կերտուածք, ընդ որս անհնար է ումեք չզմայլիլ խորին հիացմամբ, աստուածոց պատկուելի ակումի մի կը տեսանես անդ յարձակ սրահի ուրեք, որք կը յօրինեն մի կանառ երկնային՝ ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս զգօնամի ո դիմօք։ մարդկեզն հանձարոյ մանրածնունդ նրբութիւն մի յինքեանս կը չողացնեն այդ ճշգրտագործ անդրիք անմահից, անմահք արդարեւ ո՛չ ի խորհուրդու՝ այլ ի կերտուածս գործոց, որ ճարտարախօս լեզուաւ կը պատմեն մարդոյ զիառաց Հնոյն Սթենայ, Հնոյն Սթենայ փառացըն ի հանդէս անդ ի նախն կանգնած է արձանն Սթենասայ, որ գեռ նոր, — իրը երեք ամիս յառաջ, ելած է ի գուրս, ի ձեռն գործաւորի ուրսւք, ի վարձ անշուշտ աշխարհաշինութեան Սթենացւոց։ ի Սթհինա. զի այսպէս կոչեն զւտ Յոյնք — գործ թերեւ Փիդիասայ հրաշակերտ մատանցն, գեղեցկագոյն և չքնաղ անդրին է յամենայնի որ են յԱթէնս և այլուր և գուցէ ընդ բնաւ աշխարհ, որպէս աեղեակք կը հաստատեն։ Ութամենայ մանկան հասակին ունի այդ արձանն. տեղ ի ձեռին և կորդակ ի գլուխ կը կանգնի ուղղորդ մի սրբատաշ փոքրիկ պատուանդանի վերայ. ի ձախմէ կայ ասպար մի բոլորչի մանրագործ քանդակօք զարդարուն, յոյր վերայ կը յենու լուսածզի բազուկնյոյժ բնական վայելչութեամբ. գեղ, չնորհք և փափկութիւն սպիտակափայլ դիմացն ի հիացումն կը կրթեն զմարդ, որ պահ մի կերկրայի

թէ արդեօք Աթենաս քա՞ր ծնած էր, թէ մի կոչտ քարի կտոր Սթենաս էր եղած մարդոյ ուրուք ճարտարութեամբ։ Բարեբախտաբար ժամանակն խնայած է դմա առաւել քան այլըց. յոտից ցգլուխ անեղծ է գրեթէ արձանն և իմաստութեան դիցուհին ա'րդ ևս իմաստութիւն կը բուրէ գոզես զիւրեաւ յանկուցիչ չնորհօք։

Բազմաթիւ արտուեստաւորք կը յաճախեն յեւրոպից ի աւես Սթենասայ արձանին, և ընդ բնաւ կ'ընթանայ համբաւուն՝ իրեւեւ լրումն մարդ կային ճարտարութեան, իրեւեւ գլուխ գործոց գեղեցիկ արտուեստին։

«Ո գեղեցիկ արտուեստք, Ուր համու լինել ձեր չեն իրաւունք արդար։» (1)

Յ. ԳՈՒՐԳԵՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ուեւը հորիզոն մը եւ կեանքը գերեզման մը, աստ պանկում մը եւ բախտը անիւ մ'ունի...։ Ծաղիկն ըլլ անկում մը եւ բախտը անիւ մ'ունի...։ Ծաղիկն ծոցը արցունե, Տերեւին մէջ հառաչ, կոհակին մէջ ման, խոնի մը մէջ բոյն եւ ափ մը հողին մէջ զանկ մը կամ բազ մը կայ...։ Մի՛ վսանիր ուրեմն փառիդ եւ զօրութեանդ վրայ։

Պ. ԳՈՒՐԳԵՆ

(1) ՏԵՂԵԼ, ՄՀԱԿ, Դաշտ Թարդմ. Ու. Գարագաշեանի։



ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆՍԱԳՐՈՎԵՐԻՆ. — Յակոբ Գուրգէն, արժանաւոր գրագէտ, ուսուցիչ եւ հիմնադիր տօրէն Հայկական կրթարանի, լՕրբագիտ, զոր կը վարէ 15 տարինեւէ ի վեր։ Ռոկեղարու հայերէնին վերակեդանուրեան անկեղծ աշխատող մ' է. իսկ աշխարհիկ մատենագրութեան ընծայած է ցարդ մատենիկ մի « Ուղեւորութիւն յԱրքն եւ ի Զմիւռին » . . Յ. Գուրգէն թնկերակցութեամբ Ա. Մ. Գարգաւեանի հրատարակած է ի զրոց բարբառ ձաշակ Ոսկեղէն Դպրութեան երեք հատորներն։

ԱԹԵՆԱՍ, դիմ իմաստութեան . ԳԻՏԻԱՍ, ԵՐԵՎԵԼԻ արձանագործ Ցոյն։

ԳՐԱԳԻՒԹՈՒԹԻՆ. — Բարեխառն ոճն պարզին եւ փսեմին մէջ տեղ աստիճան մի է , եւ կը պատշաճի հանելի նիւրոց .

Բառ. — Պատկան կազ, Պատուլ ուս դնել . — Նշխար, մնացորդ . — Զիտում, Յօմարութին. — Կամառ, Ժողով . — Կրտուած, Շինուած . — Անդրի, Արձան . — Տէզ, Նիզակ . — Կորդակ. Սաղաւարտ. — Լուսածիկ, Լուսարեւ . — Անեղծ, Անկրուս . — Յանկուցիչ, Հապուրիչ .

————— ՀՅԱՅՅ —————

ՓԱՌԱՏԷԿՆՁ ԱՆՌԻՐՁ

(ՃՈԶԵՖԵՆ ՍՈՒԼԱՐԻ)

Մին եզվար ունենայի՝ դիւր ըլլար, դար կամ թէ
ծործոր, Վազուկ ջրուկ՝ թէւ քըչիկ՝ վըտակ ըլլար, ակ կամ
հեղեղ. Մէջը մին ծառ կը տընկէի՝ ծիրանի, ծոր կամ թէ
ինծոր. Մէջը մին հիւղ կը շինէի՝ աղիւս եղէգ և կամ բաղեղ:

Ծառիս վերև մին սիրուն բոյն՝ բըրտէ, վետրէ կամ
սիզահիւս, Հանգիստ կուտար մին երգեցկի՝ ճահրիկ, ճնճղուկ
կամ ծիծառնիկ. Հիւղիս ներսև հեշտ ընկողնիկ՝ առկախ, օրրան կամ
պրտուակիւս, Հանգիստ կուտար մին մանկուհւոյ՝ թուխ, կասկահեր
կամ խարտեշիկ։

Մին՝ Եղվարէն եւել չուզեմ. չափս ըլլան ճիշդ թող
լոյս եւ սէր. Ամենագեղ կուսին գողտրիկ՝ որ սիրտս ու աչս յինքն
գրաւէր. « Կանգուն կաց դու հոդ՝ կըսէի՝ ահա ծնաւ նոր
աշալուրջ : »

Որչափ հեռին տանէ զըստուերդ արեգն ընդ դաշտ
յոր և է կոյս
Նոյնչափ հեռին երթամ գծել հորիզոնիս ծիր սի-
րալոյս :
Տենչալին յո՞ր չը հասնի ձեռք՝ իցէ՞ այլ ինչ քան մին
անուրջ :

ՆԱՀԱՄԵՏ ՌՈՒՍԻՆԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Տան տիկինն մայր մեղուն է , ուր որ կը գտնուի նա,
ին կը գտնուի նաև վերակը , երէ հեռանայ , մեղու-
ներն կը ցրուին , բչիշներն կը խանգարին , մեղրն ան-
գամ իւր անուս համը կը կորուսանէ :

ՍՈԿՐԱՏ

ԹԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենսագրութիւն. — Կահապես Ռուսինեան բժիշկ, իմաստակը եւ հարարախոս, որ իւր ուսումնառաւ ի Բարիզ 1848ի յերափոխութեան՝ Ալիարինիկ լեզուի ազնուացման համար ջանալվ այդ նպատակու հրատարակեց Ռողակոսուրինն. Ռուսինեանի նեղինակութիւնն էն 1854 և 1872ի կրկին Տարեցոյց-Աերե, Տուրի վրայ խօսած հառն եւ Անենարանուրինն, Վիքիքու Հիւկօի Այլի Պրամ (քարգ.), յօրինած է նոյնակա Դասագիրք Փիլիփայուրինն. Մեռու 1876ին :

Բառե — Եզզար, հօսաղ, Եզներ Քող արտ. — Դար, Բարձր Տեղ. — Ծործոր, Չոր. — Ծոր, Հաղարջ. — Ճամրիկ, (բռչուն մի) Պրուսիկիս, Եղէգէ հիւսուած. — Կասկակը, Շագանակի զոյն մազով. — Անուրջ, Երազ :

Ն Ո Յ Ւ Տ Ա Պ Ա Ն

Նոյն հայտդիրն յափշաակելով զմեզ ՚ի հնութիւն Ժամանակաց, ներեկի կը է թողլու այսօր նորագոյն յիշատակները, և հնութենէ հնութիւն Ելնել ՚ի վեր քան զարեգն և Պակիրն հոյկական ամսոց, եւ կունշտնակէ այսօր յիշատակ մայլ, որ ոչ մեր հիմկու աշխարհիս դարուց մէջն է, և ոչ այլ անկէ առջինին այլ երկու աշխարհաց միջոցն կրնայ ըսուիլ, նախաջնէնեղեցեան և յետջրհեղեղեան աշխարհները միացը-նող կամրջոյն վրայ, որ է ծեր նաւողին՝ Նոյի՝ տապան. . . . Տապանին ՚ի Երինս Մասեաց նստելն ինչ-ուան Երանց գլուխներուն ջրէն դուրս երենալը եր-

կու ամիս անցաւ, յորմէ գուշակուի տապանին մեծութիւնն և բարձրութիւնն. յետ 40 առուրց բացուեցաւ անոր պատուհանն, վասն զի ջուրն անկէ այլ գայր իջեր էր, և իրը յետ ամսոյ այս եղանակաց նողայր իջեր էր, և իրը յետ ամսոյ այս եղանակաց նողայրութեան օրը՝ բացին արգելականքն տապանին վերնածածկութիւնը կամ գիտանոցին վրայ Ելնելով՝ տեսան «զի նուազեալ էր ջուրն յերեսաց Երկրի», նուազեալ էր այլ ոչ ցամաքեալ բոլորովին, վասն զի տարը համար դեռ երկու ամիս բոլորովին, ի՞նչ հիանալի և սրատառաչ տեսարան։ Այն Երանց կողն՝ որոց տափի մը վրայ նստեր էր տապանն, կ'արգիլէր համարձակ տեսութիւնը՝ ՚ի պատուհանէն, անոր համար նոյ կու սափալուէր թաշուններ արձըկելով անոնց դառնալ գալէն կամ չդառնալէն իմանալ ջրաց ցածութիւնը և Երկրին ցամքելուն չափը, իսկ հիմա իր 30 կանգնեայ նաւատան դիտանոցը, իսկ տեսնէ այն ամրակերտ ընդարձակ նաւը ծովային բերդի մը պէս ամենաբարձր լիսնատափից միջոց նստած, որոց ետեէն, գէպ յարեւելս, յարեւմնւաս և ՚ի հիւսիս դառնալով Սսիոյ աւելի կամ պակաս բարձր լիսներն կ'երեւին, ոմանք ամեննեւին Երկու ու մերկ նոր ջրէ դուրս ելուծի նման, ոմանք քանի մը ամսական արեւու ատաքութեամբ սկսած իրը ազուամազով մը ծածկուիլ աստեղատունէն, անոնց մէջ աւ կ'երեւին խորածորք և հովիտք, և քանի մի դաշտք, իրրե աշնան վերջին արօրած պատրաստած սերմանական և անրոյս սեւ արտեր, իսկ հարաւային կողմէն կ'երեւէին ծովածաւալ դաշտք և անապատք Միջագետաց և Ասորեստանի, որ յիրաւի դեռ թէ ոչ ծովու՝ գոնէ ճահճի պէս կու ծածանին, և տեղ տեղցամքած, տեղտեղ

ջրածածուկ, արեւուն զարնուածներէն իբրեւ փուած
հայելիներ կու ցոլանան, Երկու ամիս Նոյեան՝ ք տապա-
նին երդիվն կու դիտէին այս տեսարանը մանաւանդ
թէ միշտ փոփոխեալ տեսարան մը, ջրոյն օր ըստ օրէ
քաշուելով՝ և արեւուն օր ըստ օրէ տաքնալով այն
դաշտաց վրայ տեղ տեղ երեցած տիսրալի դէմքերը, պ-
ւերեալ աշխարհի և խեղդուած հասակաց և գեղեց-
կութեանց մնացորդները բոլորովին քայքայելով, ծած-
կելով, և թողլով միայն (տիսրագոյն մնացորդ) չոր ու
ճերմակ ուկորներ, այն հեշտամոլփափուկներուն, և այն
յանդուգն հսկայներուն, որք կարծեցին թէ միայն
երկրիս վրայ է մարդուս վիճակն. և անիծեալք յերկ-
նից՝ երկրէս այլ դուրս 'ի ծոց անդնդացեալ ծովուն
ծածկեցան, կերակուր կիտից և վիշապաց. հազիւ
թողլով սակաւ ինչ նշխարքնին ծովին փսխած՝ իրենց
հին բնակարանաց քով, որոց հիմունքն անգամ տակն-
ուվրայ եղած հողուն հետ խառնուած կորած են. եւ
երկիր երկրորդ անգամ կ'երեսի « աներեսոյթ և ան-
պատրաստ » անապատ մի ամսայի, անմարդաձայն,
անկենդանի. յորոյ վրայ հազիւ իբրև պլափ շարժուն,
գծեր կամ բծեր՝ տապանին պատուհանէն արհկուած
թռչուններն թափառելով կ'անցնին՝ դադար կ'ամրոյն
մը փնտուելու

Հ. ԴԵՒՌՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ

(ՑՈՒՀԻԿ)

Ա. Ռ. Ա. Ծ

Ոչ ոսկիին աղտը, ոչ արեան բիծը :

ՌԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Գրագիտուրիւն. — իմաստները զտնելեն եսքը պէտք է զա-
նոնք կարգաւ յառաջ բերել. Այս է հուեսորական արուեստի մէջ
Դասաւորութիւն բառածքը :

Բառք. — Տափ, Տափարակ տեղ. — Երդիք, (Պահա) :



Լ Ճ Ա Կ

Ինչո՞ւ ապշած են, լըհակ
Ու չ'են խացտար քու ալեակք,
Միթէ հայլ ոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ :

Եւ կամ միթէ կըզմայի՞ն
Ալեակք երկնի կապոյտին
Եւ այն ամպոց շուսավիրիք
Որք նըմանին փրփուրիդ :

Մելամաղձոտ լըհակ իմ
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ՝ լըսել ու խոկալ :

Որքան ունիս դու ալի՝
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի բիւր :

Այլ եթէ գողդ ալ թափին
 Բոյլին աստեղաց երկնքին ,
 Նըմանիլ չես կրնար գուն
 Հոգւոյս՝ որ է բոց անհուն :

 Հոդ ասաղերը չեն մեռնիր ,
 Ծաղիկներն հոդ չեն թոռմիր ,
 Ամպերը չեն թրջեր հոդ ,
 Երբ խաղաղ էք դու և օդ :

 Լըճակ , դու ես թագուհիս ,
 Զի թհովի մ'ալ խորշոմիս ,
 Դարձեալ խորքիդ մէջ խըռով
 Զիս կը պահես դողդզալով :

 Շատերը զիս մերժեցին
 « Քընար մ'ունի սոսկ , ըսին .
 Մին՝ « դողդոջ է , դոյն չունի » :
 Միւսն ալ ըստ — կը մեռնի : »

 Ոչ ոք ըստ — հէք տըղայ ,
 Արդեօք ինչո՞ւ կը միսայ
 Թերեւս ըլլայ գեղանի
 Թէ որ սիրեմ , չը մեռնի : »

 Ոչ ոք ըստ — սա տըղին
 Պատուենք սիրտը տրամագին ,
 Նայինք ինչե՛ր գրուած կան . . . »
 Հոն հրդեհ կայ , ոչ մատեան :

 Հոն կայ մոխի՛ր . . . յիշ ատա՛կ . . .

Ալեակբդ յուզուին թող , լըճակ ,
 Զի քու խորքիդ մէջ անձկաւ
 Յուսահատ մը նայեցաւ . . .

Պ. ԴՈՒՐԵԱՆ

Ա Ռ Ա Ռ

Մեծամեծ խորհուրդներն սրտեն կուգան :

Վ. Ա. Ա. Ր.



Ս Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Կենագրուրիմ: — Փետրո Գուրեան, Երիտասարդ վաղամենիկ բանաստեղծն ծնած էր 1851 մայիս ամսոյ մէջ յիւսիւսաց կ. Պոլսոյ . Վաղահաս հաննար մի է Գուրեան , որ պատահելան հասակին մէջ իսկ մեծ նեղինակի զնրծեր հրատարակեց , քատերական Երկասիրուրիւններ , եւ առաջ իրաւամբ թրցոր ազդեցուրիւն մի կրնեն սրտի եւ մտաց վերայ . Սուղ միջացի մէջ մողովրդական սիրելի համբաւ մի շահեցաւ : Նորա համբաւայ արդիւնքն է Վարդ և Շուշան քատերախաղն : Վ. սեմ են իւր սաղերն , մանաւանդ Ցուշին , Լճակն , Սիրելն , Դրժելն , Տրժելն , Տրժելն , իւր ցալը , իւր մահիր : Մեռաւ 1872 Ցունվար 21ին :

Քրագիսուրիմ: — Բացարձակուրիմն է խօսք ուղղել ներկայ կամ բացակայ անձի , Աստուծոյ եւ նոյն իսկ անընչ նիւրոց :

Բառեմ: — Լուսափիրիր , Լուսառոր ըողով ծաղկած . — Խոկալ , Մտածել . — Գող , ծոց . — Բոյլի , Խումբ ասեղաց :



Ա. ՐՈՒԽԵՍ ԳՐԵԼՈՅ

(առ Բ. Ք.)

Բարիզ Յ Ցուլիս 1882

Տիար խմբագիր

Խոստովանեցէք որ անկարելի ըրիք ինձ նորէն գրելը , ձեր գովեստները զիս կը յուսահատեցնեն : Ին-

չո՞ւ այնքան բուռն կը տեղաք վրաս . ի՞նչ գտաք այն կցկտուր գրութեանցս մէջ . ա՛հ , շունչ մը թերեւս և մէկ քանի շեշտ որ զօրաւորագոյն կրնային ըլլաւ եթէ նոյն թափով որով կը ալանան կուրծքէս կարենային անցնիլ ի գիր : Նիւթին՝ զոր կընտրեմ՝ ինքնական գեղն ու հրապոյրը յօժարակամ կ'ընծայէք , Զեր սիրովն որ առ իս , իմ գործածած լեզուիս ու գրութեանս եղանակին : Զէ՛ , մի՛ ըսէք թէ իմ թըլթակցութիւնս փայլ մըն է Մասիսի մէջ , մի՛ ըսէք մանաւանդ գուք որ ամեն օր ու ամեն նիւթի վրայ կը գրէք այն ճոխ ու բազմաբեզուն եղանակաւ որ հըրապարակախօս գրիչներու յատուկ է , լիաբուռն ցանելով իմաստները , ինչպէս անարգաւանդ հողին վրայ կը ցանէ ժիր ու փորձառու մշակը , երկիրն որչափ աւելի տպահ ինքն այնքան աւելի շոսյլ : Զեր գրչին ներքեւ իմաստները կը ծաւալին , բառերէն անկախ , ինչպէս յորդահոսան գետի մը ջուրերն ընդարձակ դաշտի մը մէջ . մինչդեռ անոնք որ մէկ կամ քանի դաշտի մը մէջ կը ճգնին իւսատ մը կոնել , չեն տեսներ որ շատ անգամ երբ իմաստը բառերէն դուրս չ'զեղուր , անիմանալի կը մնայ , է զի գրողին և բազում այն է որ ընթերցողին պակասութեամիլը . այս վերջին կարգի գրողք այն կարծիքն ունին որ ընթերցողը պէտք է գործակից ըլլայ իրենց մտքի աշխատութեան , երբ մէկ կողմէն հատու ճեւ մունին և իմաստները խատցնելով աւելի հզօրապէս ներգործել կը կարծեն , միւս կողմէն ալ կը սիրեն երբեմն լոյս — ստուերը , նուրբ ակնարկութիւնն ու յաճախ վերացեալ բառը խակ նիւթին բնութիւնը և իրենց մոտածութեանց տեսակը ու տպաւորութեանց աստիճանը կ'որոշէ իրենց սոճը որ թէեւ ընդհանուր կերպով իրենց անձնակառնը թէեւ ընդհանուր կը կրէ , այլ գիտէ նաեւ ձկիլ ու յարմարիլ իմաստից . մեղմ կամ դաշն , մերթ սահուն մերթ վառվուուն , կամ ճոխ , կամ ճախսրասլաց և բարձրաթուիչ , գեղն ու կորովը բնականաբար առ բերելով և ոչ բռնաբար ներմուծելով : Զեր եղանակն ուրիշ է , այլ թերեւս ամենէն աւելի օգտակարն է : Անձ մտտենագիր ու մեծ ատենաբան մը , ինչպէս նաև մեծ քաղաքագէտ ըսած է թէ իր բոլոր փառասիրութիւնն այն եղած է որ պայծառ հասկցնէ դիմացինին ինչ որ ինք պայծառ կ'ըմբռնէ և այնպէս ընել որ իր համոզմունքն ըլլայ . այս նպատակին հասնելու համար , ըսաւ , երկարաբանութիւնը չեմ խոտեր , պարզ բացատրութիւններ ու պարզ օրինակներ կը գործածեմ առանց վարանելու , մի և նոյն փաստը զանազան կերպերով նորէն կը յեղյեղեմ , նոյն խոկ մի և նոյն խօսքը մէկ քանի անգամ կը կըրկնեմ , մինչեւ որ ոչ թէ միայն լաւ հասկցուի այլ և լաւ տպաւորուի ունիոդրին մոքին մէջ : Այս ըսողը թիէռն է : Իսկ շատ վարպետներ ըսած են թէ ինչպէս կը խօսի մորդ այնպէս ալ պէտք է գրէ , անտարակոյս այն պայմանաւ որ նախ և առաջ աղէկ խօսի : Վերջապէս ո՛ր եղանակաւ ալ գրէ մարդ , պէտք է գիտնայ որ ամեն եղանակ ալ աղէկ է և միայն այն եղանակը գէշ է որ ձանձրացուցիչ է , ինչպէս կըոէ մատենագրութեան վարժապետ մը : Այսպէս ահա , ի բաց առեալ պուռուտախօս գրութիւնները որոնց խօսքն անգամ ընել ամօթ է , միշտ ուռուցիկ ու միշտ հանդիսաւոր ոճ մը , կամ խոկած իմաստներով մաւթ ու խրթին լեզու մը , ինքնահաւան ու մեծ արան գրութիւն մը որ գրողին յանձնապաստանութեան ու յաւակնութեան կնիքը կրէ , կամ ունայ-

նութեան կնիքը կը կրէ , այլ գիտէ նաեւ ձկիլ ու յարմարիլ իմաստից . մեղմ կամ դաշն , մերթ սահուն մերթ վառվուուն , կամ ճոխ , կամ ճախսրասլաց և բարձրաթուիչ , գեղն ու կորովը բնականաբար առ բերելով և ոչ բռնաբար ներմուծելով : Զեր եղանակն ուրիշ է , այլ թերեւս ամենէն աւելի օգտակարն է : Անձ մտտենագիր ու մեծ ատենաբան մը , ինչպէս նաև մեծ քաղաքագէտ ըսած է թէ իր բոլոր փառասիրութիւնն այն եղած է որ պայծառ հասկցնէ դիմացինին ինչ որ ինք պայծառ կ'ըմբռնէ և այնպէս ընել որ իր համոզմունքն ըլլայ . այս նպատակին հասնելու համար , ըսաւ , երկարաբանութիւնը չեմ խոտեր , պարզ բացատրութիւններ ու պարզ օրինակներ կը գործածեմ առանց վարանելու , մի և նոյն փաստը զանազան կերպերով նորէն կը յեղյեղեմ , նոյն խոկ մի և նոյն խօսքը մէկ քանի անգամ կը կըրկնեմ , մինչեւ որ ոչ թէ միայն լաւ հասկցուի այլ և լաւ տպաւորուի ունիոդրին մոքին մէջ : Այս ըսողը թիէռն է : Իսկ շատ վարպետներ ըսած են թէ ինչպէս կը խօսի մորդ այնպէս ալ պէտք է գրէ , անտարակոյս այն պայմանաւ որ նախ և առաջ աղէկ խօսի : Վերջապէս ո՛ր եղանակաւ ալ գրէ մարդ , պէտք է գիտնայ որ ամեն եղանակ ալ աղէկ է և միայն այն եղանակը գէշ է որ ձանձրացուցիչ է , ինչպէս կըոէ մատենագրութեան վարժապետ մը : Այսպէս ահա , ի բաց առեալ պուռուտախօս գրութիւնները որոնց խօսքն անգամ ընել ամօթ է , միշտ ուռուցիկ ու միշտ հանդիսաւոր ոճ մը , կամ խոկած իմաստներով մաւթ ու խրթին լեզու մը , ինքնահաւան ու մեծ արան գրութիւն մը որ գրողին յանձնապաստանութեան ու յաւակնութեան կնիքը կրէ , կամ ունայ-

Նարան գրութիւն մը սին խմաստներով ու խոռոչ պարբերութիւններով, գէշ են վասն զի ձանձրացուցիչ են:

Գրեցէք ուրեմն, գուք գրեցէք երիտասարդ ու գիտուն գրիշներ, Հայ օրագրութեան այն ծեր Պետին աչքին տակ որ դեռ ամենուս ալ հայկարանութեան դաս կրնայ տալ, գրեցէք այն ամեն խնդրոց վրայ որք ազգին օգտակար կրնան ըլլուլ, յուշ ածեղով որ ազնիւ գրչաց այն է արժանապատութիւնը որ իրենք իրենց գիտան սահմանափակել գրելու ազատութիւնը, և թէ կան այնպիսի խնդիրներ որոնց պէտք է միշտ հպիլ երկիւզած ձեռքով, գրեցէք և ձեր գրածներէն անկարելի է որ բարիք չը ծագի, երբ գուք չուզէք չարիք գործել կիրքով կամ ունայնամսութեամբ, գրեցէք և հրահանգեցէք զմարդիկ, ազնիւ ու գեղեցիկ բնագդներն արթնցնելով ի նոստ և յօյն ու հաւատքը միշտ վառ պահելով անոնց սրտին մէջ:

Իսկ ես, երբ մերթ ընդ մերթ սրտիս վրայէն մէկ դի ընել յաջողին ժամք կափարիչ քարը ու անցեալ կենդանութեանս վերածնանին յիս կայծք անօսրք ու պատահականք, ես ալ կուգամ խասնուիլ երեմն ձեր երամին, ուր գիտեմ առաջուց, ըստ Ռուսինեածեր բացատրութեան, թէ պիտի գտնամ ձայներ ձայնիս և սիրտեր սրտիս պատասխանելու:

Գ. Ս. ՕՏԵԱՆ

(Մասիս)

ԽՈՐՃՐԴԱՌՈՒԹԻՒՆ

Մեռեալ լեզու մը գործածութենի, ելած դրամ մի է, օրուան կիրառութեան չի գար. բայց ո՞րշափ վրան ժա-

մանակ կ'անցնի, այնչափ ալ ուրիշ հնութեանց պէս արժէքը կ'աւելնայ:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենսազրութիւն. — Գրիզոր Սիսակ Պօղոս Օտեան, ծրնեալ յիւսկիւտար, բանձրագոյն գրական անձնաւորութիւն իւր բոլոր իմաստափական յօդուածոց եւ գրութեանց մեջ։ Մին է ի ներկինակաց ազգային Սահմանադրութեան։ Վարած է պիտական պատճեն, եւ Օսմ. Աւագանույն սիրելի եղած։ Ափոն, զի Օտեան չէ բոլած մատեան մի։ Իցի՞ւ յապագային գէր հրաւարկուի նորա սպագրեալ եւ անձիալ գրուածոց ամբողջ հաւաքածոյն ի պատի հայ հանճարոյն։

Մեռաւ Օտեան ի Բար զ. 17 օգոստոս 1887 :

Գրագիտառութիւն. — Նմանութիւնն է բանասեղծութեան եւ պիտինախօսութեան ամենէն ընտիր ձեւն։ Կը մօսեցնէ իրեն, արպէս զի անոնց նմանութիւններն եւ երբեմն ներհակութիւններն ցուցնէ։ Ինչպէս վերոգեեալ մասին մէջ կամ օրինակներ։

Բառք. — Անարգաւանք, Անպտուղ. — Կոկի, Շիմել. — Հատու, Սուր. — Ճկիլ, Յարմարիլ. — Դաշն, Մեղմ. — Թրէտ, Երեւելի բալագակէ Գարդիացի եւ մեծ մատենագիր. — Գրած է Պատմութիւն Կայսրութեան (1797—1877)։ Կարազէ իրիւմեան, նախկին Խմբագրապէս Մասիսի. — Յուշ ածել, Միս բերել։

ՀԱՅ ՄԱՅՐ ՄԸ

Զմրան արխուր այն գիշեր
Եեփ սեւ մըթնած էր երկին

Ցուրտ մէկ քամի կը փըշէր
Եւ սառ պատեր էր գետին,
Ծառոց ճիւղեր մերկ ու չոր՝
Անպատճոպար դողալով.
Շառաչէին սըգաւոր
Սոսկումն ի սիրո ազդելով։

Ջըմրան տըխուր այն գիշեր
Երկնի ծագեալ էր արև .
Ջըմրան տըխուր այն գիշեր
Հրեշտակը՝ մարդիկ՝ թեւ ի թեւ
ԶՈ ստուածորդւոյն տօնէին
Վայրաբերիլն ի յաշիսարհ,
Փարեալ ի գիրկ սուրբ կուսին,
Իրր ըզմանուկ մի խոնարհ .

Հաւատացեալք այն գիշեր
Իբրու զաշխարհ մոռնալով,
Ամէն հասակ էր վազեր
Երկնից մանկան մըսրին քով .
Կէսք զըւարթնոց երգակից
Աղաղակեն ո'վսաննա .
Եւ այլք հովուաց դասակից
Սըրտե՛ր բերեր են յընձայ։

Այլ հրեշտակային երգոց զուզանես
Եւ եկեղեցւոյն օրհնից բերկրաւէտ՝
Նաև վըշտակից ձայն մը այն գիշեր
Ճիւղի մը մէջէն կը թըռչէր 'ի վեր .

Թըշուառ մէկ սըրտի մըրմունջն էր և այն
Մօր մը հառաչանք էր կողկողանայն,

Որ քըսան տարուան 'ի ծաղիկ հասակ
Այրի մընացած էր որդւով միակ ,

Արդ և այն մատաղ գեղաբոյս որդին՝
Մօրը բոլոր գանձ և յոյս սրտեկին ,
Գեռ հազիւ գարունն ըսկուեր կենաց՝
Ընկած էր զինչ վարդ ի շունչ փոթորկաց :

Մանկանն օրոցքին քով ծունկ ընկած մայր ,
Պաղեալ անդամոց նորա շունչ կուտայր .
Փափկիկ նորա թամի ի ծոցին ծածկէր ,
Զերմիկ արցունքովն ըզնա ողովէր . . .

Մէյ մ'ալ անդիէն մօր այն ցաւագին
Յականջ հասաւ թինդ ժամու զանգակին .
Կարծես հրեշտակին լըսէր ըգնրաւէր ,
Արթընցաւ . . . ցաւէն ըզտօն մոռցե՛ր էր :

Մածկեց ըզճակատն 'ի քօղ սըդապատ ,
Յանձնեց իւր մանկիկն Աջոյն երկնառատ ,
Եւ դողդով քայլիցն ոյժ տալով յետին՝
Հասաւ ու մտաւ սուրբ եկեղեցին :

Տեսաւ որ երկիր ու երկին բոլոր
Երանի՛ կուտան մօր մը երկնառոր ,
Ինքն ալ ցանկացաւ ասել բան մ'ուրախ
Խեղմ մայր ու սըրտէն թուաւ սուր մէկ ա՛խ . . .

« Մայր երկնառոր , քեզմէ զատ ո՞վ կընայ ո՞վ
Մօր մը սըրտին ըզգաւ ցաւեր ու խորով . . .
Թ՞վ քեզմէ զատ կարող է , մայր որդեսէր ,
Զորցընել մօր մ'արցունքներ . . . »

« Որ դու այլ նոյն վիշտ ու վէրքեր քաշեցիր .
Որ դու այլ նոյն լեզի արցունք թափեցիր . . .
Որ դու այլ քու Որդւոյդ տեսար մահն ի խաչ . . .
Մօր մը լըսէ դա՛ռն հառաչ :

« Եթէ անմահ Որդիդ վըճռած է յերկին՝
Որ հրեշտակաց հետ քովն առնու իմ որդին ,
Ո՞վ մայր , դու ալ ողորմէ՛ մօր մը վերայ ,
Զաւկիս հետ շունչս այլ երթայ :

* *

Այսպէս հառաչեց մայրն այն վշտակիր
Եւ արցունքներով ողողեց զերկիր .
Եւ երբ բաւական հեծեց ու լացաւ ,
Տըխուր էր եկած՝ ըստոփեալ դարձաւ :

* *

Չըմրան տըխուր այն գիշեր
Անցաւ , և նոր ծագեց օր .
Օրն այն ձըմրան տըխուր չէր ,
Սրեւ փայլու անսովոր :

Իրիկուան դէմ վառեցան
Մեռելոց մութ լապտերներ
Ու հանգըստեան լըսվեցան
Շարականներ , սալմոններ .

Եկեղեցւոյն առաջեւ
Սեւ մէկ գագաղ անցուցին ,
Երկու զուարթունք թե ի թեւ
Անուշ հոն քուն լինէին :

Մէկմէկու գիրկ պըլլըված
Ելեր էին դէմ մահուան ,
Մահ նոյն սըրով էր կըտրած
Վարդն ու կոկոն անբաժան :

Ո՞հ : անբաժան իրարմէ
Երկուքն 'ի նոյն հանգչին հող .
Զերկուսն այլ նոյն խոտ ծածկէ ,
Երկուքն ալ նոյն կըմակեն ցող :

ԽՈՐԷՆ ԱՐՔԵԹԻՍԿ. ՆԱՐ ՊԵՅ

(Սառուերք)

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Անձառանգներու կեանքը մըին եւ անել հովիս մ'է ,
ոյր ամենին անձուկ կողմն ունի միայն մի ելք , գերեզ-
մանի դուռը :

Յ. ՍԵԹԵԱՆ

Խ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԿԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ . — Խորէն Արքեպիսկոպոս Լուսինեան ,
հանճարեղ բանասէղծ ծնած է ի թերա կ . Պալայ 1837ին . Մը-
կրտուքեան անունն էր Զիւան , ի հօրէ հայ , խոկ ի մօրէ պա-
պական . Աւսունն առաւ ի Վենետիկ մեծ յաշողութեամբ . 1857ին
պական . Աւսունն առաւ ի Վենետիկ մեծ յաշողութեամբ . 1857ին
պական . Պատրիարքի օրով Ունի գրական արժանիք , ասուա-
կորու Պատրիարքի օրով Ունի գրական արժանիք , ասուա-
կորու Պատրիարքի օրով Ունի գրական արժանիք , ասուա-

Լատիներէն եւ Յունարէն : Նորո գեղեցիկ գործերն են Վարդենիք, Քնար Պալիսիք, Դաշնակի Լամարքինեայ (բարգմ.) ու յօրինած է դասագրեր եւս, Նախնական եւ Կրական Քրիստոնեական :

Գրագիտուրիւն. — Քնարական բանասէղծուրիւն . Գեղօն. Նախնի Յունաց ժամանակ գեղօնն կամ երգն կամ հնարական էւրուածն միւս կերպուէ հնարդ կամ այլ հուազներով : Այսօր գեղօնն պարզապէս եւրողական նիւթը մի է կորովի եւ խանդական գրուած . Վերոգրեալն գեղօն մ'է :

Փոխարեւորիւնն է նոյն այն ձեւը՝ որով կուտամք որեւէ իրի մի անուն ուրիշ այնախի իրի, որ կը համարի անոր եւ նորա յանկուրիւնները կը ներկայացնէ : Քաջ մարդու մը համար կրսեմք այս առիւծը : Ինչպէս վերեւ բոււած է փոխան մօր եւ որույ վարդ եւ կոկն :

Երբէմն միեւնոյն բան մի հանի անզամ կը կրկնուի գաղափար ասաւուրիւն տալու համար : Այս է կրկնուրիւնն :

Զօր. Վերոգրեալ եւրուածոյն վերջին տունն :

Ո՞ն անբաժան իրաւուէ
Երկուին ի նոյն հանգչին նոյն,
Զերկուուն ալ նոյն խոս ծածկէ,
Երկուին ալ նոյն կ'ըմպէն ցող :

Չափազանցուրիւնն կառաւելու զաւարութիւն չափեն աւ ու ելի լաւ եւս զայն բրոնել տալու համար : Զօր. ի վեր անդր յիշուած տողն . Եւ արցունիներով ողդից զերկիր : Հռովմ ամբող իւր որդոց արեան մէջ բարաւուչ (Գոռնէլ Կիննա) :

Բառք. — Վայրաքերել, Վար բերել . — Զուզամէս, Միասեղ . — Կողկողաճայն, Լալազին . — Խորով, Այրիլ . — Ողողել, Թրչել :

Բ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Յ

Ո՞չ, չպիտի դադարիս դու ինձ խօսելէ , ո՛ բը-նութիւն : Ո՞չ , հակառակ ամենայնի զոր համոզել ջանան մեզ, հակառակ ամենայնի որում մարդիկ կ'ա-

սեն ինձ հաւատալ, պիտի լինի միշտ ի քեզ մի բան որ քո շունչն յիս հնչեցնելու համար բաւական բարձըր պիտի խօսի ինձ, ո՛վ բնութիւն անվերջ անձիր երանգներով, ո՛վ բնութիւն, անսահման անեզր ձեերով : Ա՛յգ, պիտի զարթեցունես զիս և ինձ պիտի ժպտիս յար առաւել կամ նուազ աղեկիարշ, կամ զուարթ յիշատակներով : Գիշե՛րք ամարան, պիտի պատմէք ինձ աստեղաց անսահմանութիւնը և մարդուն ունայնութիւնը : Մթին ամպք անձրեւարեր, որ զահանցեալ հօտերու նման կ'ընթանաք, տխուր խորհուրդներով պիտի լնուք զիս, պիտի ողբալ տաք ինձ գարնան շնչով որորեալ վարդի թերթերը, վարդերն որ այլ ևս չկան և որ սըրտիս առաջին յուզեալ տրոփմունքն զգային : Երեկո՛յք աշնան, ոյց այնչափ սրտառուչ է տեսիլ, որ այնչափ նման էք վաղազրաւ գալկահար արարածներու, որոց տեսայ նուազին և թարշամին, ի տես ձեր պիտի երեւակայեմ գերեզմանին դանցիուն և անզգայութիւնն այնոցիկ՝ որոց համար գեռ կուլանք

Փորձեցի, ո՛ բնութիւն, լինել բազում այլոց նըման, և մտածել նոցա ալէս, կամեցայ զմեզ շուրջ պատող իրերու մէջ չտեսնել այլ ինչ՝ բայց ջերմութիւն և նիւթ, որ աղբիւր են կենաց : Անհունին տեսարանէն, արարչութեան անսահմանութեամբն յիւրուած հմայուած ականողիքս փակեցի այն նորանոր տեսիլներուն, այն նորանոր աշխարհներուն գէմ՝ որ կ'ստեղծուին երեւակայութեանս համար : Գրեթէ որոշեցի համակերպիլ, լուել և անտարբերութեամբ սպասել ամեն բանի վախճանին : Կամեցայ մոռանալ անցեալն, անկարեկիր տնզգայ տպրող մը լինել և ներկային, բնաւին չհոգալ ազգագայն : Կամեցայ լի-

ՆԵԼ նման մարդու մը՝ որ կը քայլէ խառարի մէջ և
չգիտէ թէ՝ ո՞ւր է իւր նպատակակէտն։ Կամեցայ ոչ
ինչ զիտել և մուտնալ քիչ մը բանը զոր ուսած էի։
Իմշուրջն եղածներուն անտարեր, խուլի մը նման՝ որ
աղմկայոյզ ժողափի մը ներկայ կը գտնուի։ Վայրկենա-
կան հանդիսատես անվախճան և անծայրածիր մի տե-
սարանի։ Կամեցայ անցնիլ որպէս կանցնին ստուեր և
հողմ։ Կը զգամ որ խաբուեր եմ, կը զգամ որ վայրա-
պատ կը փակեմ աչերս և ականջներս, քո ձայնն այն-
չափ զօրաւոր է որ չկարէ անլսելի լինել ինձ, քո
փայլն այնչափ սաստիկ է որ չկարէ վրիպիլ իմ տե-
սութենէն։ Ո՛չ ապաքէն քո արշալոյսն կ'ասէ ինձ։ «Ե-
րիտասարդէ ե՛կ ողջագուրել զիս։ Ես եմ նէ որ անյա-
պաղ անզրաւ հանապազօր կուգամ այցելել քեզ։ Եւ
սիրատոչոր աղջիկն եմ սպիտակազգեաց, որ անուշ
բառեր ունիմ անոնց համար որ զիս կը հասկնան, և
ես եմ նէ որ կողբայ մեռեալներն և թշուառներն։

Ո՛վ գիշեր, միթէ հեծեծանքներ չունի՞ս քո ծո-
ցին մէջ։ Լուսաւորք, չունի՞ք միթէ նշոյլներ որ կը
խորհին և ոչ միթէ աչեր էք որ անհունը կը դիտէք
և անքթիթ յաւիտենասէս։ Խորայատակ աղբերք,
ոչ ապաքէն յարաբերութիւններ ունիք նոցա հետ
զորս կողբանք, և ոչ միթէ մեր ոտներուն տակ կեր-
թաք համբուրել այն էակներ, որոց յաւիտենական
բացակայութեանց համար կը մորմոքինք։

8. ԱԵԹԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Յաւ միշ բան կորուսած է մարդ, երբ կը պահէ
պատիւն։

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՋՐԱԿՐԻՑ. Յովիաննէս Սերեան, հանհարեղ բանա-
տեղ եւ յաջողակ ուսուցիչ, հիուն է Եւրոպական լեզուաց։ Իւր
եւրուածոց մէջ խորին դիտող մ'է միւս։ Անն յստակ է, եւ եր-
կարագրական, բացատրութիւնն ինչո՞ւ եւ յանկուցիչ եւ առանց
զարդուց։ Հրատարակած է Դրակոսի, Յուզեման Ժամել։

Բառեմ. Անձիր, Անսահման։ — Երանգ, Գոյն։ — Աղեխարշ,
Արտառուչ։ — Դանդիռն, Մուր գերեզմանի։ — Զահանդեալ,
Խորչած։ — Դիւրուիլ, Յափէտակուիլ։ — Վրիպիլ, Սխալիլ, Մո-
ռովիլ։

————ՀՅՅՅՅ————

ԿԱՐՄԻՐ ԽՆՁՈՐԸ

Երկու ընկերք մի քաղաքի մէջ ձընած,
ի միասին մի գըլպրատուն կարգացած
Երբոր մեծցան՝ այլ և այլ կողմ գընացին,
Որ աշխատին եւ ապրուստի ճար նային։

Ճայոց արուեստ սովորական։

Եղան սոքա վաճառական։

Շատ չը քշեց՝ սոցամէ մին — բաղդն յաջող —

Վաստրկեցաւ կարձ միջոցի, թէ ոչ փոկ

Այլ մեծ անուն, համբաւ վարկ,

Ի'առաւ պարտքի շատ ապրանք

Խսկ միւսը ո՛ր կողմ գընաց,

Միշտ պատ գըտաւ իւր դիմաց։

Աստանդական պըտըտելով շատ քաղաք

Միշտ գընտուելով վաստակի դուռ կամ հընարք

Եկաւ հասաւ այն տեղ՝ ուր որ իւր ընկեր

իր մեծանուն վաճառական կը դարձնէր
 Մե՛ծ գործեր :
 Զարմացաւ նա ի սկզբան
 Այլ որպէս զի տեղեկանայ ամէն բան ,
 Եւ ըստուգէ գըրսէն լըսուածն ,
 Շիտակ այնոր տունը գնաց ,
 Տուն որ կ'ասեմ , դուն հասկըցիր մեծ պալատ ,
 Քովը խանութ , մէջըն ապրանք ի լիք , շատ : —
 Բարեւ ասաց բարեկամին .
 Նա՝ լըսելով ձայն ընկերին ,
 Թողլով հաշիւըն կիսկատար ,
 Բարով , կրկնեց , առաքեցար .
 Այս ի՞նչ գալուստ յանկարծակի
 Շատ մեծ պատիւ արիր ինձի :
 Հրամէ , երթանք տուն , հանգչէ ...
 Ճանապարհի պարկը ո՞ւր է : —
 Զերկընցնեմ , ի միասին
 Երր ներս մըտան , անբաղդ ընկերն շուարած
 Ազնիւ , կանչեց , ձշմարիտ է բոլոր լըսածս :
 Այլ տանուտէրն՝ բարեկամին
 Արմանք զարմանք ըլտեսնելու զարնելով ,
 Կերակուրի ժամանակ է ,
 Ասաց , պէտք է ձաշելու
 Նիստ հըրամմէ :
 Նըստան երկուք քովէ քով :
 Ծառայք պատրաստ ըսպասարկու ,
 Բիւր բարեօք լըցին
 Աեղան հարուստին :
 Երբոր ձաշին վերջն հասաւ
 Երկըննալով տանտէրն առաւ
 Բարձր ամանէն մի մեծ խընձոր

Գոյնը կարմիր , տեաքըն աղուոր .
 Զոր կըտրելով երկու բաժին
 Գըտաւ փըթթած բոլորովին ,
 Այն ժամանակը դարձած
 Բարեկամին զայս ասաց .
 Այս խընձորիս է շատ նըման
 Փայլուն վիճակը մարդկութեան .
 Դըրսէն նայողն կարծէ մի բան ,
 Զի գիտեր որ շատ որդեր մէջը կը վըխտան :
 Քանի մ' օրէն մեր խանութպան
 Կանչուեցաւ ի գատաստան
 Բողոք կար վըրան ,
 Պարաքերուն փոխան :
 Խանութ , տուն աճուրդով ,
 Ծախուեցան աժան գնով :

Եթէ որ վող վաստըկելու
 Համար՝ պէտք է ճարաարութիւն .
 Որ չի պակսիր մեր Հայերուն ,
 Այլ վաստըկածն չը ցրուելու ,
 Դըրամն շահով ման թերելու ,
 Պէտք է մեծ խելք և արթնութիւն
 Որ կը պակսի խիստ շատերուն :
 Մեր Հայ աղբարք եթէ որ
 Վաստըկածները բոլոր
 Խելքով 'ի շահ գործածէին ,
 Այժըմ նոքա շատ ազգերու
 Կը լինէին նախանձարկու :
 Այլ , աւա՛ղ , շըռայլութիւն
 Մուխեր մարեց մեզմէ շատին :

Թող տայ Աստուած մնացողներուն
Խընայութիւն, զգաստութիւն.
Որ չէն պահեն միշտ իրենց տուն:
Հ. ՔԵՐՈՎԻՔ Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

(Քազմավեպ)

Ա Ռ Ա Ծ

Ոչ սանձ ու զարդ ոսկեղին
Անպիտան ձին լաւ կ'ընեն.
Ո՛չ գեղեցիկ դէմք ու զգես
Անմիտ մարդուն են գովին:

(Տօսար)

Վ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ

Քառք. Աստանդական, Թափառական. — Ազնիւ, (Մշ.) Կեց-
ցես. — Ման բերել, Շահեցնել.

Կ Ո Հ Ա Կ Ե Ւ Ս Տ Ո Ւ Ե Ր

Ահա ծովն ինկած մարդ մը:
Բայց որո՞ւ հոգ: Նաւը չ'կենար: Հովը կը փչէ,
և տիսուր նաւը ճամբայ մ'ունի զոր ստիպուած է շա-
րունակելու, ուստի կանցնի կերթայ:

Մարդը ջուրին վրայէն կ'անհետի, նորէն կ'երեայ,
կընկղմի և վերստին ջուրին երեսը կելնէ, կը ձայնէ,
թեւերը կը տարածէ, բայց ոչ ոք կը լսէ իւր ձայնը:
Նաւը հողմայոյզ փոթորիկէն սարսռելով իւր ընթաց-
քը կը շարունակէ. Նաւաստիներն և ուղեւորներն ալ
չեն տեսներ ընկղմած մարդը, որուն ողորմելի գլու-
խըն ահազին կոհակներու մէջ իրը կէտ մը կերեւայ:
Ծովին անդունդներէն յուսահատական աղաղակներ
կարձակէ ան . ո՛հ, ի՛նչ ճիւաղէ այն նաւն որ կը հե-
ռանայ, կ'երթայ: Մարդը կը նայի, մոլորագին՝ կը
նայի նաւուն որ կը հեռանայ, կայլագունի և կը
փոքրի: Տակաւին քիչ մ'առաջ ինքն ալ անոր մէջն
էր. ինքն ալ նաւորդներէն մին էր, ինքն ալ ուրիշ-
ներուն հետ վերնայարկին վրայ կ'երթեւեկէր, ինքն
ալ կը չնչէր և արեւը կը վայելէր, վերջապէս ինքն
ալ կենդանի էակ մ'էր: Հիմակ ի՛նչ պատահեցաւ ու-
րեմն: Սպրդեցաւ, ծովն ինկաւ, և ահա իրեն հա-
մար ամէն բան վերջացաւ:

Ալ հիմակ անգութ ջուրին մէջն է: Ա'լ ոտիցը ներ-
քեւ ամէն բան խոյս կուտայ, ամէն բան կը վկի,
Հողմակոծ և պատառատուն ալիներն ամենաբար կը
շրջապատեն, իսկ անդունդին տատանումները կառ-
նուն կը տանին զինքը. ջուրին բոլոր պատառները
գլխուն բոլորտիքը կը տարուբերին, ալիներ երեսին
կը թքնեն. ջուրին խառնաշփոթ պատառումները կի-
սովին կը լափեն զինքը. ամէն անդամ որ կը խորա-
սուզի, խաւարամած դարաւանեներ կը նիշմարէ.
անձանօթ և սոսկալի տունկեր վրան կը փաթթուին,
ոտքերը կը կապեն և կը քաշեն. կղգայ թէ անդուն-
դին մէկ մասն ալ ինքն է, փրփուրներուն մէկ մասն
ալ իրմով կը կազմուի, կոհակներուն մէջ խաղալիկ մը

կըլլայ . մէկ կոհակէն դէպի միւս կոհակը կը նետուի .
գառնահամ ջուրը կը խմէ . փոքրոգի ովկիանոսը կա-
տաղբար կը չանայ խեզելը թշուառը , ահագին
զօրութիւնը անոր մահավտանգ ճգնութեան հետ կը
խաղայ : Կարծես թէ ջուրերու անբաւ տարածու-
թիւնը վրէժխնդիր ոխակալ մ'է :

Այլ սակայն մարդը կը կռուի տակաւին։ Կուզէ
ինքինքը պաշտպանել, կուզէ հաստատ մնալ, կը
ջանայ, կը լողայ։ Այն, չուտով սպառող այն փանա-
քի զօրութիւնն անսպառելի զօրութեան հետ կը մար-
քանչի։ Ո՞ւր է նաւը։ Հո՞ն, վա՞րն է։ հազիւ հազ
կերեւայ հորիզոնին տժգոյն մթութեան մէջ։

Սաստկաշունչ հովերը կը փշեն . բոլոր գրիբալի
ալիները կը ճնշեն զի՞նքը . Աշերը վեր կը վերցնէ , բայց
միայն արագերուն մութ կապոյտ գոյնն կը տեսնէ :
Հոգեվարքին մէջ ծովին անբաւ յիմարութեան հան-
դիսական կըլլայ , և անողորմաբար կը չարչարուի այս
յիմարութեանէ . Այնպիսի գլուխիւններ կը լոէ , զոր
մարդուն ականջը դեռ լսած չէ , և որք կարծես
թէ աշխարհիս անդիէն և չգիտեմ ո՛ր ահարկու կող-
մերէն կուգան :

Ամակերու մէջ թաշուններ կան ինչպէս մարդկային
թշուառութեանց վերեւն ալ հրեշտակներ . բայց ի՞նչ
օգնութիւն կրնան ընել անոր : Կը թուշին , կերգեն և
կրդարին անոնք , իսկ ինք կը խորդայ :

Ովկիանոսն և երկինքն երկու անեղութիւն և
Ովկիանոսը և երկինքն երկու անեղութիւն և
որոց մէջ թաղուած ըլլալը կզգայ. Ովկիանոսը գե-
րեզման մ'է, իսկ երկինքը պատան մը. Օրը կը տա-
րաժամկի, մութը կը տարածուի. Ժամեր կանցնին, և
բաժամկի, մութը կը լոգայ. ա'լ ոյժը կօպառի. իսկ նաևը, այն
ան գեռ կը լոգայ. ա'լ ոյժը կօպառի. իսկ նաևը, այն
հեռաւոր իրն որու մէջ մարդիկ կային՝ ա'լ անհե-

տացաւ, և ինք միակ մնացած է վերջալուսային ահագին անդունդին մէջ, կընկղմի, կը պրկի, կը գալուրի. իր ստիցը ներքեւ աներեւոյթ և անողորմ կոհակներ կզգայ և կը գոչէ.

ԱՌ մարդ չկայ, ուր է Աստուծած: Օգնութիւն,
օգնութիւն, կաղաղակէ, շորունակ կաղաղակէ:

Բայց ոչ հորիզոնին մէջ և ոչ ալ երկնից վրայ մարդ չկայ : Գթութիւն կը հայցէ տարածութենէն , կոհակէն , մամուռէն , ժայռէն , բայց ամենքն ալ խուլ են . կազերսէ մրրկին , բայց անխոռվ մրրկիը միայն անեղբառթեան կը հնազանդի :

իր բոլորտիքը ոչ այլ ինչ կայ բայց եթէ մթութիւնը, մառախուղը, մենուրիւնը, մրրկային և անգէտ դղրդիւնն և կատաղի ջուրերուն անհօւն փոթերը: Երկիւղն և յոդնութիւնը վրան կը տիրեն: Խսկ իր ներքեւն է անկում: Յենարան մը չունի: Անսահման մթութեան մէջ իր դիակին խաւարային արկածները կը մտաբերէ: Անվերջանալի ցուրտը կանգամալրւծէ զինքը, ձեռքը կը կարկամի, կը գոցուի և ափերուն բռնածն է ոչինչ: Հովերը, ամպերը, փոթորիկները, հովերուն փշումները, աստղերը, վերջապէս ամէնքն ալ անօգուտ և անեկանելիր են: Ի՞նչ ընելու է: Կը լքանի յուսաբեկ թշուառը: ա'լ յոգնած է, ուստի կորոշէ մեռնիլ: Կը թողու ինքզինքը որ ի՞նչ կուզէ ըլլայ և ո՛ւր որ ուզէ երթայ: ալ կը դադրի կուռելէ, և ահա մշտնջենաւորապէս կը գահապիժի դէպ անդունդներու սոսկալի յատակը:

Ո' անողոքելի ընթացք մարդկային ընկերութեան կորուստ մարդերու և հոգիներու ճամբռ վրայ : Ովկիանո՞ս ուր կը գլորին այն ամէն մարդիկ որոնց անկման կը հաւանի օրէնքը : Տխո՛ր աներեւութիւն օդ-

Նութեան : Ո՛ բարոյական մահ : Ավկիանոսն ընկերային անողոքելի խաւարն է , ուր պատժական օրէնքը կը գահափիժէ իր դատապարտեալները : Ավկիանոսն անբաւ թշուառութիւնն է :

Սիրտն այս անդունդէն դէպի վար միտելով կըր-նայ ըլլալ դիակ մը : Ո՞վ պիտի յարուցանէ զայն :

(Թշուառներ)

Վիքիոր Հիեկո

Թարգ . (Գ . Զիլինկինեան)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Այսպէս ահա վաղ թէ անագան վեցանայ կեանք ամենայն , զի պէտք է խրի նաւը , ու բոցն ալ շնչաս-պառ ըլլայ , ու երիքամած թօնի ծաղիկն ըստ բանաս-եղծին . եւ մարդու վայրկեան մը որ կայծ կ'ըլլայ , ա-պա մոխի՛ր յասիտեան . . . :

Գ . Ս . ՕՏԵԱՆ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենսագրութիւն . — Վիկորու Խւկո ներկայ դարու գաղ-դիացի մեծ բանասեղծն , զլուխ վիպակն դպրոցին . Բազմա-թիւ են եերբուածքն , վէպք ու բատերգութիւններ . ինչպէս , Լկ-մանէ Տէ Միկիլը , Թշուառներ , Նոր տամ ու Բառի , Էռնանի , Մա-նի Թիւտոր , Եւայլն , Եւայլն . (1802—1885) .

Գրագիտութիւն . — Այլարանութիւնն է երկարաձգեալ փո-

Խարերութիւն մի . Վերոգրեալն օրինակ է այլաբանութեան :

Թառք . — Ամենաբար , կատաղօրէն . — Դարաւանդ , (ոչու-րում) . — Ընկեղմարկ , Տեսնել . — Ոխակալ , Ոխ պահող . — Պրկել , Պինդ կապէլ . — Մենութիւն , Առանձնութիւն . — Յեւա-րան , Նեցուկ . — Կարկանդալ , Քառուիլ . — Անկարեկիր , Ան-գուր :

Զ Ա Ր Թ Ո Կ Փ

Իրրեւ մանկուհի որ կ'ելնէ ծովէն
Ծըզարչէ յօդիկն ըսպիտակաբոյր
Հողմէն ծուփի ծուփ . և ձիւն ուսերէն՝
Մարգրտակայլակ կ'երկննան վարոք իւր :

Այգն ալիքներէն երկինքն է ելեր
Եւ իւր կաթնաբուղին ճակատուն վերայ
Թարմ վարդի կոկոնք պլսակ են կապեր ,
Աստղ է թէ հրեշտակ որ հեռուն շողայ :

Եւ համսպարիփակ մըշուշին ծոցէն
Ծովն ու հեռաւոր կզզեակը՝ և նաւն այն ,
Եւ մահիկն ի հալս և նուրբ մինարէն
Երազի մէջէն կարծես կ'երեւան :

Իրրեւ ուրուական ինչ գոլորչաձեւ
Յերկրէ ի յերկին թեւերն ընդլայնած՝
Քունը կը փախչի , և ետին թեթեւ
Թռչըտին ցընորք ի բիր մահացուաց :

Եւ յանկողնոյն եղկ գիրկ քուն ընդ արթուն՝
Մէջէմէջ անթիւ աշխարհներու ծոց
Տարութերին միտք , մի գըթած զուարթուն
Պտըտցնէ զքեզ ի գունդ անրջոց .

Անօսր ամպերէն շողեր կայլակեն .
 կը լսես ժըպիտս . անտես արձագանդք
 Թդային երգեր կանդրագարձընեն .
 Քովէդ կը սահին ծալ ծալ պատմուճանք .
 կը ճեմես երբեմըն կաղնիներու
 Հովասուն և մութ անտառներու ծոց ,
 Եւ քովզդ թեւէդ կախուած է աղու
 Աղջիկ մը մազերն արձակած հողմոց .
 Մառի մը կոճղէն լըճին սուրբ ալեաց
 Վըրան ծռելով կը ժապի նա քեզ ,
 Դու չես խօսիր . — բայց ընդ տերեւս ի սլաց
 Թռչնիկը թարգմանեն զանձուկդ աղեկէզ .
 Երբեմն ահարկու գիշերոյ մ' իստուերս
 Երբ շանդն՝ օձ հրեղէն՝ կը զեռայ յալիս՝
 Թռչարաւնին ի ծուէն նաւու մը յեզերս
 Անսահման մրրկին հետ ի մթան կոռուիս .
 Դալկահար մարին աղջկունք կուսագեղք ,
 Գահավիժի նաւն անդնդէ անդունդ .
 Բայց դու՝ անվեհեր՝ ձեռն արկեալ ի զեկ
 Հերք ի հով վարես ըզնա յափն անքոյթ .
 Կամ թէ զհանճարոյ թեւըս լայնելով
 Սլանաս արծուէթոիչ ի խորս անդ գաղտնեաց
 Եւ լուսաւորես ըզիկն քո լուսով .
 Եւ ընդ քեզ յականոս կան աչք մահացուաց :
 Քայլափոխ մի եւս մարդկութիւնն ամբողջ
 Կ'առնու դէպ ի լոյս , դէպ յերջանկո թիւն .
 Ատելութեան բոցք կը մարին յոգ ոջ ,
 Ցրուին եղերունի առաջի լուսոյն :
 Երբեմն ուզեւոր շրջիս . — ոտքիդ տակ
 Էվկիանն անհուն թաւալի . — հեռուն
 Թռչնոյ մը թեւ կամ առագաստ ճերմակ

Ալեծփին . — երկուքն ալ խնդրեն զիւրեանց բոյն :
 Կամ Ասիոյ խորն յաւերակաց շուք
 Ցանցառ նոմիներ չորս դին՝ նստեր է
 Քարփին յեց Տերփի մը , գգուէ զմօրուք
 Եւ թանձր հաշիլին մուխով երազէ :
 Եւ այն մուխին հետ թեթեւ յօդ սլանան
 Վարդի մէյմէկ թերթ թեւ ունենալով
 Ճինք և հիւրիւներ ի սեւ արտեւան
 Եւ բերիք երկայն պատմուճանքն ի հով :
 Կամ ժայռակարկառ քարայրի մը ներս
 Մացառներու տակ և ջահ մ' ձեռին՝
 Առաջնորդուելով աստղէդ կը մտնես .
 Անսպառ գանձեր առջիդ կը թափուին :
 Դու՝ անհուն հարուստ՝ ծպտեալ և ըզգաստ՝
 Թշուառ արնանկին կը զարնես դըրան .
 Այլ եւս իրիկուան չը դառնար աղքատն
 Տուն՝ մտմտալով և ձեռքերն ունայն :
 Այսպէս ի զմայլանս երազք հոյլ ի հոյլ
 Թափուելով Այգուն պատմուճաններէն
 Իբրեւ գոլրչի հողմասփիւռ և թոյլ
 Կիսարթուն հոգւոյն շուրջը կը ճախրեն :
 Եւ մայրդ ոտն ի մատ շունչը բոնելով ,
 Քեզի ձայն տալու վըրադ է ծըռեր ,
 Այլ հեշտ անուրջներդ ցրուելու վախով
 Զեռնամած՝ անձայն յաղօթս է կայներ :

(Երկրագունա)

Թ. ԹէՌՁԵԱՆ

ԽՈՐՀՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Մարենի սէրն անհուն է :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՅ. — թռվմաս թերզեան, ազգային անուանի բանասեղ, ծնեալ ի Բերա, Նախկին աշակերտ Մուրատեան վարժարանի՝ ուր առաջ է բացձազոյն կրութիւն. Ունի բանասիրական հմտութիւն, ուսած է լեզուներ, Հայերէն, թուրքերէն, Գաղղերէն, Խամերէն, Լատիներէն, Յունարէն, Գեղեցիկ էն իւր զանազան բաւերգութիւններ, Ցովսարէն, Ցովսարէն, Սամբուլս, Ասոնցի զայ յօհնած է Ամոնի Սիրային (վէպ) եւ բազմարի ևերբուածներ. Թարգմանած է Անալրէնի Տառեն, եւ մի բանի դասագրեր հրատարակած է.

Գրափառութիւն. — Ցաւելուածն է զոյականներ իր վերադր գործածել, ինչպէս ի վեր անդր նեանակուած է, երբ սանդ օձ հրեշիկ կը զիւայ յալիս.

Բառ. — Լողիկ, Վերակրու, — Զիւճ ուս, փոխանակ ըստու. Սպիտակ ուս (փոխ.) — Ալի, Խորլ. — Թոյարանի, որ կրնայ բոցնել (առազաս). — Ցականու կալ, Զարմանալ, — Եղեռն, Եղերումի, Զարի, վնաս.

ՀԵՂՈՒԵՑԻՈՅ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Սպիտակ — Սարը (Mont Blanc): Օգոստոս ամսոյ արեւակէզ օրուան մը մէջ, առաւօտ ժամ եօթնին, կառնենք մեր լեռնային ճամբորդութեան անհրաժեշտ ընկերներ, ճանթիկ՝ փոքրիկ մախաղը, Ալբեանց գա-

ւազանն և Պէտջլմբը կերթանք բարձրանալ Սպիտակ լերան հանդէպ Մոն Պրեվանի կատարը, որ խոնարհ փոքրաւորի մը պէս իւր վեհափառ մեծաւորին առաջ ծունկ չոքած կարծես բնութեան հրաշալեաց վարդապէտութիւններ կը սերտէ :

Քսան վայրկեան Շամոնիի անձուկ հովտի լայնութենէ անցնելով, բարձրանալ կ'սկսինք: Եղեւնիներու խիտ ու լրին անտառաց մէջէն կանցնի մեր ուղին, և երբ յանկարծ երկու ձիւղի կը բաժնուի, պահ մը երերեալ ու տատամսեալ կը կենանք. Պէտջլմբը մեզ օգնութեան կը հասնի, ցոյց տալով մեզ մեր բռնելիք ճամբու ուղղութեան մանրամասնութիւնն և ըստ այնքամ կը շարունակենք:

Կէս ժամու չափ կանգ ու շունչ կառնունք հոն, ուր անտառն ու հովտնիք կ'սպառին, կարկաչահոս ազբերց վլուակի մը աջ ու ձախ եզերաց վրայ պառկելով տեսակ մը թումբ կը կազմենք, անյագաբար կը խմենք սառնածին ջուրը սպառելու սպառնալեօք, և ահա ի բարձանց խշրոտիւն մը, պակուցիչ ձայն մը կուգայ մեր հանգիստն խոռովցէլ. ապստամբ քարեր փրթած են լերանց կողերէն և թաւալգլոր ի վար կիջնեն: Խոյս կուտանք սպառնացող վլուանգէն և կը շարունակենք մեր վելելք, այս անգամ Պրէվանի շերի ու բոցաշունչ կուրծքին վրայ կոխելով կ'ընթանամք: Մէկ ու կէս ժամ միջօրէի արեգական խորովող ճառագայթները, առանձնութիւն, լուսութիւն, յոգնութիւն, լերան բարձրութիւն ու խորութիւն մեզ ընկեր և առարկայ ունենալով, վերջապէս կը հասնինք լերան ձախ ուսին վրայ, ուր ցրտաշունչ հով մը կուգայ դիմաւորել մեզ, և ձիւն, ճեան ծաղիկներով կը չնորհաւորէ մեր գալուստը:

Քրտինքէն ու ցրտէն հլանրրազի տոմիկ (auberg) կը մտնենք . Ես տաքութիւն տաքութեամբ վանելու օրէնքով խոչորկեկ ամանով մը թէյ կ'առնում, մինչ բարեկամն խնդարով իմ այս նորագիւտ մեթոտին վը-րայ, սառ ջուրով կը զովանոյ : Այժմ 2000 մետր բարձրութեան վրայ ենք :

Այս փոքրիկ իջեւանի փոքրիկ սրահը զարդարուած է պարզ ու երկայն տախտակէ մը, որ սեղանի պաշտօն կը վարէ, անտաշ փայտէ շինուած քանի մը նստարաններէ . մանկամարդ գեղջկուհի մը . որ թէ հիւրեր կընդունի և թէ լերանց յիշտակներու մասունք կը վաճառէ . իւր էրիկ՝ քսանամեայ թիկնուէտ երիտասարդ մը, որ մեծուու զանգակաւոր կավեր կարածէ, և թէ լերան արտեւան ելնողներու առաջնորդութեան պաշտօն ունի :

Մեր անսերեւեթ սեղանի շուրջ կան վեց կայտառ ու կորովի ուսանող երիտասարդներ . գերմանացիներ են, կարծես ամենքն ալ մէկ մօր զաւակ, այնչափ իրարու կը նմանին . Եռունկ ֆուայուէն՝ Պէռնեան Ալբերէն հոս եկած են բազմաթիւ լերանց և ձորերու անջրակետներէ անցնելով . ծաղիկներ գլխարկներու վրայ . ծաղիկներ ի ծոց ու գրաններուն մէջ, կարծես ծաղիկ փունջեր լինին . հարրած ու խենթ, թռելու չափ ուրախ են ու զուարթ, երեսնին ալ իրենց կօշիկներու չափ պատռած՝ կաթն ու գինին ի միասին կը պարպեն, կը պարեն կը պոռան և կոկորդ և աղիքներ պատռելու չափ կը խնդան բարձրագուչ :

Մէկ ժամ հոս հանգչիլ ու գիտելէն վերջ, Օպերմի կիտը ուղեցոյց կառնենք, և ուշիկ ուշիկ կը բարձրանանք գէպ ի լերան գագաթը :

Մեծ տեսարաններու մեծ հիացումներ բաղադրող

քերականական բառ մը չ'կայ տակաւին մարդկութեան բառարանի մէջ, ձայնարկութիւն մը միայն, «ա՛ ա ա՛», ուր բնութիւնն անբացատրելի զօրութեամբ կը մեծնայ ու կը բարձրանայ, ուր ամբարհաւան մարդն կը խոնարհի ու կը փոքրանայ . . . ա՛, կը բացագանցէ ընկերս, «ա՛» արձագանգ կընէ սրտիս և զգացմանց խորերէն . . . :

Պրէվան լերան բացատրութիւն չէր զմեզ հիացնող, որ 3000 մեդրէն պակաս է, այլ անոր տեսարանն : Ահա համայն Եւրոպից լերանց վեհապետ՝ Սպիտակ սարը, իւր փառաց բարձրութեան և մեծութեան մէջ մեր հանդէպ կեցած է վեհաշուք հալարառութեամբ . ձիւն կը ծածկէ իւր ոտքերը . տամկերը գգուանքով կը քօլարկեն իւր ծունդերը, մէջքը կապուած է արծաթափայլ սառոյցով, իւր լանջքն և թիկունք անդը-ծելի զրահով պատած և ականակուռ սաղաւարտ մի գլխուն վերայ, որոյ ական պատուականի փայլն ու մեծութիւն, ո՛չ չնդկաց Մահարաձաներու պատերն և ոչ կիւրոսի յաջորդներ իրենց երազի մէջ չեն տեսած . և երկնից բարձրութեան երկու մեծ ջահերը՝ մին ի գիշերի և միւսն ի տուընջեան կուգան անոր տաղաւարտի անհեթեթ ադամանդին լոյսը սփաել տարածել վարի մութ աշխարհին վերայ :

Հապա վեհափառին Սպիտակ լերան թիկնապահներու արդուզա՞րդին . հապա յաջմէ և յահեկէ, յետուստ և հանդիպակաց անպարփակ ընդարձակութեան մէջ խիտ առ խիտ վետեղուած լերանց բանակները, ամենքն ալ ձիւնապատ, ամենքն ալ սառնապատ . կռան - ժիւռաս, Տօմ տը կութէ էկիւլյուներ, իրենց դիմաւոր դիրքով, Եռունկ - Ֆրառուն, Մօն - Սէրվէն, Մօն Ռոզը մինչև Սէն Կօթարի չղթան, վե-

րին և ստորին Ալբեանց Երկնիւղ շարքերը մեր աչքին
առաջ , մեր աչքէն հեռու ազօտ հորիզոնի մը տակ կը
պարփակուին : Երկրագնդի այս մաս , նման է լուսոյ
աշխարհի այն մասին , ուր արեւն դեռ իւր ճառա-
գայթներ չէ թափանցած . ձիւնեղէն Լերինք անհալ
և անմաշ կը մնան կուսական վիճակի մը մէջ , ուր
մահկանացուաց մեզսամած գարշապարը տակաւին չէ
յաջողած անոր սպիտակութիւնն աղտոտելու և ուր
մարդն այդ մեծութեան մէջ միայն կը յաջողի բարձ-
րագոյն հաճոյք զգալ , որպէս թէ նորօրինակ աշխար-
հի մը մէջ կը գտնուի :

Մոն - Պլան և իւր հպատակ Ալբեաններն են որ
կեդրոնական Եւրոպիոյ մաքուր օդ և առատ ջուր կը
մատակարարեն . Ալբեանն է որ չափ ու սահման՝ կը
դնէ Երկրականերու բաղձանաց : Ապէրախտ Եւրո-
պան մինչեւ ցարդ պաշտօն մը չէ սահմանած այդ
սրբազն լերան :

Ժամանակն ու ցուրտը կ'ստիպեն զմեզ վերջ տալ
մեր անվերջ հիացման . ուստի կ'չտուպենք վար իջնալ ,
զգուշանալով որ մեր ոտքերը չը սայթաքին սահին .
Լերան ուղղաձիգ գահապէժի Երկիւղը պահ մը մոռ-
ցընել կուտայ մեզ զամէն : Զիւնեղէն ճանապարհի
կէսն հազիւ հասած , ահա յիջւան տեսնուած անգ-
դիացի օրիորդն իրեն հասակակից երփառարդ գիւ-
ղացւոյ մը առաջնորդութեամբ մեզ կը դիմաւորէ : Օ-
րիորդի մէջքը պարանով մը կապուած է կիսի մէջքէն ,
ընկերոջս հետ կը յիշենք « զշիկափոկ պարանն ձգեալ
ի մէջք փափուկ օրիորդին Սամենկան . . . » ու կը
խնդանք : Այլ անգլուհին տոտիկ տոտիկ , ճիշդ խօ-
սելով , մեզմէ աւելի անյոզդողդ քայլեր կ'առնէ ճեան
խորութեան մէջ , վայրկեան մը կանգ ու շունչ կառ-

նենք զիրար բարեւելով վերելքի մասին հարցումներ
կընէ . «Անապարեցէք ուշ կը մնանք» կըսենք . հոգ
չէ , կը պատասխանէ և «կուտ պայ» ով մը կը հեռա-
նանք իրարմէ : Տե՛ս , կըսեմ բարեկամիս , քաղաքա-
կըրթութեան , չարբաշութեան և վատահութեան օրի-
նակ . օրիորդը կարծես թէ Հայ փառքի մէջ կը չըջի :
Զիւնեղէն շղթայէն զերծ , այլ ևս արագ արագ
վար կիջնանք . Այսըլլոյսի ձեան ծաղկի և Ալբեան
մանուշակի առատ աւարներով Երեկոյեան ժամ վեց
ու կէսին հիւրանոց հասած կը հանգչինք :

Սպիտակ լերան տարեկան ուխտաւորաց թիւը 15-
20000 է , որոց քսանն հազիւ կը փորձէ մեծ լերանց
գլուխն ենել :

(Արեւելի)

Ս. ՏԵՎԿԱՆՑ

ԳԵՂԵՑԻԿ ԲՈՂԻՔ

Ընկերային ամէն վեհ փողիողումները գիտութենի ,
դպրութենի նարտարութենի և ուսումէ կ'արտադրին :

Վ. ՃԻՒԿՈ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Հելուելիա կամ Զուիցերիա կեդրոնական Եւրոպայի պէ-
տուքիւններէն մին է : Դիրքն շատ բարձր է , որովհետեւ անդ են

Ալպեանց զիսաւոր զագարում, Նշանաւոր է Երկիրն իւր զեղեց-
կութեամբ, Կիմայն ցուց եւ խոնա է, եւ հողն նուազ բերի,
Սպիտակ սարն Ալպեանց ամենէն բարձ սարն է.

Բառք: — Տատամեւալ, Վարանած · — Պակուցիչ, ահա-
ւոր. — Լերկ, Մերկ. — Մեծուու, Մեծ նիւդով. — Անսկրեւեր,
Վեռու. — Ամբարհաւած Ամբարտաւած. — Մահարամա, Բառ Հընդ-
կերէն, Մահա Մեծ, Բամայ, Արբայ. — Արդուզարդ, Զարդարամ. ·
Հայ Փառք, (Բռ. Անգղի.) զրօնալայր :



Ա Ր Մ Ի Շ Ա Խ

Աչեր պաղպաջուն, ճակատ սրբափայլ,
Մեղոյշ են ըրթունք, հասակ՝ նրբաւարտ .
Թէ դիտես ներա հայեաց գեղազմայլ,
Եւ արտում ես յոյժ, թըւին կեանք զըւարթ :
Զենք գիտեր դեռ թէ մարմի՞ն է
Աղաւնենմանն Արմինէ :

Երկինք խընամով իւր անձն են պձներ,
Վարդերով այտերն, ոսկւով՝ հերքն ու վարս,
Սուրբ մեղրամոմով՝ ներա կոսիմներ
Այսպէս պատրաստեր են իրու նոր հարս,
Ովկ հաստատէ թէ մարմին է
Սրտից մագնիսն Արմինէ :

Թէ մատչիս նըմա, ըզգաս առ ժամայն
Անհուն հրճուանաց հոսիւ ըզքեւ ուխ,
Եւ գոգցես երկնի հրեշտակներ համայն
Անցնին քո վերեւ շոյելով քո գլուխ :
Եւ չես ասեր թէ մարմին է
Զընաղագեղն Արմինէ :

Թէ երգէ՝ յայնժամ լզզիսիչ մի չունչ
Կարծես թէ յուզէ քոյին մթնոլորտ,
Կամ ըզքեւ ըզգաս համապայծառ փունջ
Որ բոյրեր սփոէ յայերն հոծ և յորդ :

Ոչ ոք ըսաւ թէ մարմին է
Գեղեցկաձայնն Արմինէ :
Թէ մի քիչ եղուկ բան նըմա պատմես
Առ ժամայն արցունք յիւր աչըս փայլին
Եւ ականողի իւր, յառեալ ի քեզ,
Փարատեն զիսաւար կենաց մըռայլին :
Եւ չասես դու թէ մարմին է
Առատագութըն Արմինէ :

Սուրբ են իւր նայուածք և ժընիտն է սուրբ
Որ իւր չուրթերէն զերդ մեկըր կաթի :
Յոյժ ընաանի են նմա զգացմունք նուրբ
Զոր, դողդոջ, յայտնէ իւր ձայնն արծաթի :
Տարակոյս կայ թէ մարմին է
Քաղցրահայեացն Արմինէ :
Թէ կարմիր ագնի, ճաճանչ մ'է պայծառ,
Թէ կապոյտ, իշխէ յամէն գեղուհին,
Թէ սեաւ, լուսինն է ընդ ամպս հողմավար
Թէ սպիտակ ագնի շանաս և խորհիս՝
Թէ հրեշտակ չչ և մարմի՞ն է
Շընորհափայլն Արմինէ :

Այլ երբ մեզ խօսի իւր իմաստութեամբ,
Որ մանկական է և աստուածային,
Գոգցես մեր հոգեւակն, յեց ի սպիտակ ամպ,
Դողալով մատչի համբոյր Անմահին :
Հոգի և ոչ թէ մարմին է
Պարկեշտասունն Արմինէ :

ԱՌ ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆ

Զարդ վարդին է պարզ Տերեւ,
Սիրե՞ա դու զպարզութիւն,
Եթէ վարդ ես արդարեւ :

6 • ՈՎԿԱՆ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Գրագիտուրիւն. — Դիմացրուրիւնն նկարագրէ մարդոյ կամ անասնոյ իերպարանն : Արմինին օրինակ է դիմացրուրեան :

Բառք. — Պաղպաջուն, փայլուն . — Մեղոյշ, անուշաչուի, (մեղուակն) . — Նրաւարտ, փափուկ ու վայելուշ կազմաւած . — Ներա, իրեւ իզական սեռական ևս դերանուան : Նախնեաց գրուածոց մէջ միայն Պիտոյից զիրքն եւ Փիլոն գործածքնեն սկ, դէ, նկ դերանուններ, բայց ի վերջոյ խախնեած են. բայց աշխարհիկ մատենագրութիւնն ընդունած է զայն : — Կուպիճներ, (աչք) . — Ջղլիիչ, Յափէտակիչ . — Այերք, Օդ . — Ականողի, Աչք . — Ցեց, Կրնած :

— ՀՅՈՒՅՈՒՑ —

ԲԱՆԱՍԵԼԾՆ

Բնութեան անձառ էութեան մէջ գիտութեան դաւանած ոյժերու կարգէն դուրս կայ զօրութիւն մի խորհրդաւոր համայն էից, զօրութիւն՝ ոյր խանձարուր միտք են մարդոյն, յոր կը կազմակերպի, ոյր

վառարան է սիրտ մարդոյն, յոր կոգեւորի և ոյր ձայնն է քնար մարդոյն, որով կը բարբառի :

Նա ինքն է առաքեալն նախախնամութեան և Սիրիլլայն մարդկութեան . ոգի՞ է նա թէ մարդ : Ոչ ոք գիտէ զայդ : Տիւուր է և ակնկոր, չունի հուժկու կազմ ոչ փառաւոր դիրք, այլ ներքին մեծութեան ճառագայթ մը կը շողայ իւր ճակտին վրայ գերապանծ, որ երկնից հետ դէմ առ դէմ գալ նկրտի գոգցես մրցելու համար նորա շողից հետ անբժութեամբ և փառօք :

Նուազկոտ է նա և կը հեւայ իրր հիւանդ, ձայնը մաշած լանջացը խորերէն կելնէ, այլ այնպիսի է նորա գեղ, զի կ'զգաս զայն առանց տեսնելու, և կը կրես ազդեցութիւնն առանց ըմբռնելու . գիտես թէ գեր ի վեր է մարդկային գասէն . այլ չես կարող սահման տալ իւր էութեան :

Էակ մի է նա՝ ոյր նշանարկին ներքեւ կը խոնարհին աչք որք զհոգին կը գիտեն, ոյր ձայնին առաջին շեշտերուն կը արտիէ սիրտն, որ անհունութիւն կը պարունակէ, ոյր մէն մի շարժմանց ի տես կը յուզուի հոգին, որ գիտէ զգալ, ոյր ներկայութեան կ'ամրանայ էակն որ անմահութեան կայծովն է օծեալ, ոյր ժպիտը տեսնելով կը հաւատայ նա երանութեան, ոյր հառաջանքը լսելով՝ կը տանջուի իւր սիրտ, որ գոգցես անըմբռնելի ելեքարականութեամբ կը կապուի ընդ նմա, որպէս զի իւր բաժնուելէն երկար ատեն յետոյ, տակաւին զգայ թէ յինքն ազդած է զօրութիւն իմ գերագոյն : Իւր խորհուրդներ և գալափարներ տոգորեալ են նորա արտայայտութեամբք . իւր կարծիք՝ նորա սկզբանց շուրջը կը պարբերին անգաղար : Այն բառեր որք նորա շրթներէն թուած են,

միշտ նիւթ կը փնտռեն յինքեանս ի յայտ գալու համար : Այն տողեր որք նորա գրչէն ելած են , զանոնք ինքն արտասանելով գոգցես վսեմացած կ'զգայ իւր անձը , անոնցմէ թռած հուրը զինքը կը ջեռուցանէ , կը վառէ , կը բորբոքէ Քորերի մորենւոյն նման անձախելի : Զոհողութեան պատրաստ ոգի մի կը ներշընչէ նմա , մարտիրոսանալու իդմ մը կը կայլակէ ի նա , և այդ հոգեկան ազդումն չնաշխարհիկ կը ճանչցընէ իրեն յինքն շարժող աստուածը :

Եւ կը ծնրադրէ երազող հոգին այդ երազին առջեւ վեհապանծ , կարծես այն սրբազն ազդեցութիւնը անձանօթ աշխարհէ մի կուգայ իրեն Խորհրդաւոր տեսիլ հոգւոյ՝ որ սրտառուչ է յոյժ և վսեմ քան զայն պատկեր որ աչաց կ'ընծայի : Ո՛վ , քանի չքնաղ է ընկղմիլ այդ ովկիանին մէջ արբշութեան , զգալ՝ որ այդ հիացումն , այդ պաշտումն հոգիդ ի վեր , գէպի վեր կը տանի , զգալ՝ որ րարձրանալու համար միայն կը խորասուզի և մտացդ այդ երեւակայութեան մէջ սրբութենէ զատ ոչինչ կայ :

Ա՛ն , ո՞ր հրաշքն է որ ի քէն բղիսած չըլլայ , ո՛ ցօղ սրբութեան , ո՛ ճառագայթ վսեմութեան , ո՛ հուր անմահութեան , ո՛ դու երկնային ոգիդ քերդողութեան . Դու որ մարդը վայրենի , մարդն անողոքելի նուաճեցիր , որ առ Պարսս Զէնտ-Ավէստա եղար և ամոքեցիր , առ Պրահմանս վէտա ձեւացար և կրթեցիր . առ Արաբացիս Անթար եղար և թեքեցիր , առ Թքանտինաւեանս ետոտա եղար ու բարտքեցիր առ Եբրայեցիս Աստուածաշունչ մարգարէից շրթամբ որոտացիր , իսկ Բէթլէհեմի մորոյն մէջ , նոյն ինքն մարդ եղար և փրկագործեցիր : Ո՛ շունչդ Աստուածային , ե՞րբ ծնար դու :

ԶԱՄԷԼ Կ ՏՕՆԵԼԵԱՆ

Ա Ռ Ա Ծ

Երգով կը հաւսուին դիմ , նոյնպէս եւ երգով՝ եւ ուրուականի :



Վ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Կենսագրուրիւն . — Զապէլ Տօնիւեան , ծնեալ Խաննեան , նախկին աւակերտուին չեմարան վարժարանի , դեռ դպրոցական գրասեղաններու վրայ , այլ հոչակ հանեց գրական ասպարհիզին վերայ : 1880 րուականին Անահիս սուրացրութեամբ լեզուապայտարի մէջ գրաբարի դասն պատվանեց : Նա է Ազգանուեր Հայունեաց ընկերութեան հիմնադրուինին : Տիկին Զապէլ կրական սեփին պատիւ է Ազգային գրականութեան համար ունեցած հաշիանձայուղութեամբ :

Գրագիտուրիւն . — Բանաստեղծուրիւն բառն կը յայն ստեղծման գաղափարն : Բայց ամէն երկ ենրուրիւն չէ : Բանաստեղծութեան յակուրիւնն են ներենչումն , Աւիւն , զգայնուրիւն :

Բառ . — Սիրիլայ , Հարցուկ . — Զեն Ավետար . Պարսից կրօնական մատեան , որոյ նեղինալին է Զօրօստր , կ'ապրէր Զ . դար յառաջ նախ բան զբր : — Անրատ , Բանաստեղծ եւ պատերազմիկ արար Զ . դարու : — Վետա , Հնիդաց սրբազն մատեան : — Եստա , Վէտ պիտօնական (Սկանէինաւեանց) :



(ՄԵՐՁԻ ՄԱՍ ԳՐՈՒԱԾ)

ՏՐՏՈՒՆԴ ՎՐ

ԵՇ, մընաք բարով, Աստուած և արեւ՝
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ . . .
Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելսւլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ՝ եթէ ոչ անբիծ
Եւ թշուառ հոգւոց անէծք ողբագին
Որք թըսին այրել ճակատն երկնքին,
Այլ այն Աստուածոյն՝ շանթերու արմատ՝
Յաւելուն զէնքերն ու վարդերն հըրատ . . .
Այլ, ո՞չ, ի՞նչ կըսեմ . . . շանթահարէ զիս,
Աստուած, խոկն հըսկայ փշրէ հիւլէիս՝
Որ ժալըրհի ձգտիլ սուզիլ խորն երկնի
Ելնել աստղերու սանդուխքն անալի . . .
Ողջոյն քեզ, Աստուած դողդոջ էակին՝
Շողին՝ վըթիթին՝ ալւոյն ու վանկին,
Դու որ ճակտիս վարդն և բոցն աչերուս
Խըլեցիր րրուումն շրթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամս արւիր աչացս, հեւք արւիր սրտիս,
Հոյիր մահուան գուռն ինձ պիտի ժպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը կազմած ես ետքի,
Կեանք մ'անհուն չողի բոյրի աղօթքի.
Իսկ թէ կորընչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մէջ համր՝ անշըշունչ.
Այժմէն թող որ շանթ մ'ըլլոմ դակահար՝
Պլուիս անուանդ մոընչեմ անդադար,
Թող անէծք մ'ըլլամ քու կողըդ խըրիմ,
Թող յորջորջեմ քեզ, Աստուած ոյսերիմ:

ՈՇ, կը դողդոջեմ, տժոյն եմ տժոյն
Փըրփըրի ներսը, դըժովսքի մ'հանգոյն . . .
Հառաչ մ'եմ հեծող նոճերու մէջ սեւ,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ . . .
ՈՇ, կայծ արւէք ինձ, կայծ արւէք, ապրիմ . . .
Ի՞նչ, երազէ վերջ գրկել ցուրտ չիրիմ . . .
Այս ճակատագիրն ի՞նչ սեւ է, Աստուած,
Արդեօք դամբանի մրուրով է գծուած . . .
ՈՇ, արւէք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրել կուզեմ գեռ ապրիլ ու ապրիլ՝
Երկնքի աստղեր, հոգւոյս մէջ ընկէք,
Կայծ արւէք՝ կեանք, ձեր սիրահարին հէք:
Գարունն ոչ մէկ վարդ ճակախ դակահար՝
ՈՇ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չեն տար,
Գիշերն միշտ դագաղս, աստղերը ջահեր,
Լուսինն յար կուլայ խուզարկէ վըհեր :
Կըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար նա դըրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կուզէ երկու բան,
Նախ կեանքը, վերջը՝ լացող մ'իր վըրան :
(Տաղէ)

Պ. ԴՈՒՐԵԱՆ

Ա. Բ. Ա. Ծ

Ընտելագոյն է բարի համբաւով մեռնիլ խան ապրիլ նախատանօֆ :

ՍՈԿՐՈՑ

ՇԱՆՈՉՈՒԹԻՒՆ

Գրագիտուրիւն. — Ո՞նչ ուժգնուրիւն, ոչ այնքան բառեր, որքան սիրս շարժող եւ արծարծող իմաստից ընթառութեամբ կըլլայ: Ո՞նչ ուժգնուրիւն կարեւոր մասերն են բացազնչուրիւն, բացադառուրիւն, վիշարեռուրիւն, եւայլն:

Հակադրուրիւնն է միմեանց հակառակ բառեր եւ իմաստեր գործածել խօսեն ազդու ընելու համար: Զորօդիմակ, Ասուած խովն հոկայ պերէ հիւլիս:

Բառէ. — Թրբուում, թրբուացում. — Ոխերիմ, թօնամի. — Տժգոյն, գունատ:

— ՅՈՅԸ —

Ի Պ Ո Պ Տ Ո Ս Կ Ա Մ Կ Ա Ս Ծ Ո Տ Ը Ն

Իպոպտոս մեծ գժուարութեամբ կը յաջողի վերջապէս սպասաւոր մը գտնել հարուստ անձի մը երաշխաւորութեան ներքեւ: Առաջին օրն սպասաւորին երկար քարոզ մը կը խօսի որուն մէջ մանրամասնօրէն կը բացատրէ թէ ի՞նչպէս կը պատժուի անհաւատարիմ սպասաւոր մը թէ այս աշխարհին մէջ և թէ հանդերձեալ կենաց մէջ. թէ ժամանակաւ սպասաւորի մը ձեռքերը գօսացեր են տիրոջը քսակէն լումայ մը գողցած ըլլալուն համար. թէ մատակարարի մը ականջներն խուլցեր են իւր տիրոջը բարի խրատները մտիկ չընելուն պահածառաւ, թէ սպասաւոր մ'ալ գժոխք գացած է օր մը աասը փարա աւելի անցունելով ծախուց մէջ: Իպոպտոս իւր բարոյախօսութիւն կը կնքէ յայտնելով, թէ ինք կատարեալ

վատահութիւն ունի իւր սպասաւորին վրայ և թէ հայրական պարտք կը համարի բարի խրատներ տալ իրեն: Սպասաւորն աշխարհիս առաջին հաւատարիմ անձն է և իւր պաշտօնն կը կատարէ խղճի մտօք: Սակայն իպոպտոս անհանգիստ է. սպասաւոր ունի՞ս, մտատանջութիւն ունիս կըսէ: Բնաւ վստահ չէ սպասաւորին և տան ծախօքն ինքն իւր ձեռքով կը կատարէ, միայն տունն աւլելու պաշտօնն կը թողու անոր: Դարձեալ գժուհ է և ամէն օր կ'աղաչէ ծանօթներուն որ գթան իւր վրայ և իրեն հաւատարիմ սպասաւոր մը գտնելու չնորհն ընեն. վասն զի, կըսէ, սպասաւորն իւր գողութիւններով և խարդախութիւններով սունը պիտի փլցունէ, մոխիրի վրայ պիտի նստեցնէ զինքն: Իպոպտոս որ ամուրի է, տունէն գուրս ելած ժամանակն մեծ ուշագլութեամբ կը քննէ սնտուկներն, պահարաններն և դարաններն, տեսնելու համար թէ աղէկ կղպուած են: Կը կղպէ, կը բանայ, նորէն կը կղպէ, գարձեալ կը բանայ փորձ մ'ալ կընէ. երկրորդ անգամ կը փորձէ. որովհետեւ կըսէ կրնայ ըլլալու որ անուշադրութեամբ բաց թողում սնտուկներն և կղպուած կարծելով երթամ: Բազում փորձերէն ետքը, սենեակներուն պարտիզին և խոհանոցին գուներն ալ մեծ զգուշութեամբ կը կղպէ և տունէն գուրս կելնէ խատիւ պատուիրելով սպասաւորին որ աչքը չորս բանայ և բան մը գողցնել չ'տայ: Քանի մը քայլ կ'առնէ, ետ կը գառնայ անգամ մը ալ ուշի ուշով կը զննէ կղպանքները: Զմոռնար նաև ըսպասաւորին կրկնել իւր պատուէրներն: Տանը գուռն կը գոցէ, և իրեն դրացուհի տիկին Անթառամին գուռը կը զարնէ, կղպաչէ դրացուհոյն որ հաճի հըսկել իւր սպասաւորին վրայ: Դարձեալ վստահ չէ, եր-

կու տուն վեր գրացուհին , տիկին թերեզայէն ալ կը
խնդրէ որ գործ չունեցած ժամանակն հսկէ սպասա-
ւորին և տիկին Անթառամին վրայ՝ որոց յանձնուած
է իւր տունն , իւր կեանքը : Այս յանձնարարութիւ-
նը ընելէն վերջը կը մեկնի ինքնիրեն հարցնելով « Ի՞նչ
վստահութիւն ունիմ որ այս երեքն միանալով տունս
չը պիտի թալլեն : » Միս գնելու համար մսավաճառին
խանութը կերթայ ուր կախուած է պատուական ոչ-
խար մը : Այս միսը , կըսէ , մորթուած պղտիկ իշու
կը նմանի քիչ մը : Մսավաճառն քրքիջ մը կ'արձակէ :
« Այդ կոշտ ձեւերովդ չես կրնար զիս խարեւ , ես
ձեր բոլոր վարպետութիւններն և խարդախութիւն-
ներն խիստ լաւ գիտեմ » կըսէ և արժանապատու-
ութիւնն վիրաւորուած նկատելով կը հեռանայ անկէց
և քանի մը ծանօթներու խորհրդակցութեամբ ուրիշ
խանութէ մը կը գնէ միսն մտքէն ըսելով « Տարակոյս
չունիմ որ այս տուած դրամէս մեր ծանօթներն ալ
իրենց համար մէյմէկ պղտիկ բաժին պիտի հանեն ,
որովհետեւ առանց շահու ոչ ոք կ'օգնէ ուրիշին ,
թող որ միսն շարժեր այնքան որքան վճարեցի : »
Միս ի ձեռին տուն կը վազէ , դուռը կը զարնէ , ըս-
պասաւորն անմիջապէս կը բանայ գուռն , իպոպասոս
կը սրդողի սպասաւորին և սպառնալեօք կը հարցնէ
անոր թէ ինչո՞ւ երկու ժամէն բացաւ դուռը , և թէ
ի՞նչ գողնալու զբաղած էր :

(Խիկար հանդէս)

3. 3. ՊԱՐՈՆԵԱՆ

ԲԱՐՈՅԵԱԿԱՆ ԻՄԱՍՏՔ

Թողումք այլոց հարսուրիւնքը , եւ մենք շատանանք
առաքինութեամբ :

ԳԵՂԵՑԻԿ , ԲԱՐԻ , ՃՇՄԱՐԻՏ

ՔԱՌԵԱԿ ԻՂՋՔ

Ն Ո Ւ Ա Գ

Ա .

Եթէ յերբող մ'ես ըլլայի
Սքանչացող գեղեցկութեան
Զայն՝ միայն զայն , նուագէի
Ի տաճարի բընութեան :
Վարդն և թիթեռ
Մանկութիւն և սէր ,
Տիւ և գիշեր
Ամպրոպի և շանթեր
Են գունակ գունակ
Քեզ պըսակ
Ցանկալիդ գեղեցկութիւն :

Բ .

Քերթող մ'եթէ ես ըլլայի ,
Միշտ առ սէր Մարդկութեան
Անձս ու քնարըս նուիրէի
Ես մի միայն բարութեան :

Աշխատութիւն՝
Քեղմով փառք մարդուն .
Ի' իմաստութիւն
Պառուէ զլահացուն .
Անմահին միակ
Պերճ պըսակ ,
Երկնայինըդ բարութիւն :

Գ.

Իսկ թէ քերթող մ'ես ըլլայի՝
Միշտ ի պատիւ մարդկութեան
Ոգիս սիրտըս նուիրէի
Մի միայն ձրշմարտութեան ,
Թըշուառութեան
Դու յոյս , յենարան .
Եղբայրութեան
Յաւէտ պահապան .
Բանին մեր միակ
Սուրբ պըսակ
Անըկուն ձրշմարտութիւն :

Դ.

Ո՛հ , թէ քերդող մ'ես ըլլայի՝
Եւ գեղեցիկն ու բարին
Ճրշմարտին հետ սերտ յօդէի
Նուէր Հայ Օրիորդին .
Փունջ մ'որ պահէր
Մինչեւ Տէր կամէր
Որ նուիրէւ

Զայն իւր որդեկին ,
Իբրեւ գերունակ
Սուրբ պըսակ
Փառք ընտանեացն և տոհմին :

ՅՈՒՐԿԱԾՈՒԹԻՒՆ

1889 Յունիս 2

ԽՈՐՀՈՎԱԾՈՒԹԻՒՆ

Իմաստափրի մը հարցուցին թէ աշխարհիս մէջ ամենադժուարին , ամենադիւրին եւ ամենաքաղցր իրեւն ո՞յն են . Առաջինն , ըստ , ինձգինն նանչել , Երկրորդ՝ խաւածել զայլս , եւ Երրորդ՝ իւր փափաթելին ընդունիլ :



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ . — Յակիոր Ոսկան , նախկին աշակերտ Միկրարեանց , բազմամեայ արդիւնաւոր ուսուցիչ : Յօրինած է խորիմաս տաղեր , ներդաշնակ ոնց օրինակ , որք հաւատակուած են պարբերաց . սիանցելի է նորա «Նժդեհ մ'եմ եւս տաղերգութիւն» : Ումի նուեւ մի ժամի բարգմանութիւններ :

Բառք . — Քերորդ , բանասենդ . — Ամպրոպ , Ամպեր . — Գունակ գունակ , Տեսակ տեսակ :



ԳՐԱԿԱՆ ԴԱՒԱՆԱՆՔ

Այլ ես , եւս քան զեւս կը յարիմ այն գրական գլորոցին որ մատենագրական բարեշրջութեան մէջ ի յայտ կուգայ իւր կարգին՝ երբ արդէն իրենց վերջին բառն ըստած են միւս դպրոցներն , այն իմաստափրա-

կան դպրոցին որ գիտութեան արդի վիճակին կը համաձյնեցնէ իւր վճիռներն՝ առանց նկատողութեան տեղոյ կամ պատեհութեան, այն բարոյական դըպրոցին որ կ'ըմբռնէ բնականին ու բարոյականին անձուկ վերաբերութիւնն և ըստ այնմ կը բանածեւէ իր պատուէրներն , համոզուած եմ խորապէս թէ յարաբերական է ամէն բան, յարաբերական է ճշմարտութիւնն . այլ յարաբերականին մէջ, այն որ այսօրուան կը վերաբերի, այն աւելի համակրանաց արժանի կը լինի, քանզի բացարձակին՝ եթէ կայ՝ այն աւելի կը մօտի : Բաց անտի, կը սիրեմ այսօրը կը սիրեմ նորը, այսօրը կամ նորն իր համապարփակ ամբողջութեամբ, կը սիրեմ այն նորը — գրականութեան վրայ խօսելով — որ կը պարունակէ միանգամայն Պալղագն ու Պատովի տ'օռվէյլին, ու Զօլան ու Հէլզն ու Հիւյզմանն, ու Լամառդինն ու Պոտրէխոն ու Վէռլինն, Ռիչբէնն, ամեն ձեւերն, ամեն գոյներն, ամեն խազերն, որովհետեւ ամէնքն ալ կան բնութեան մէջ : Կը սիրեմ այսօրը, կը սիրեմ նորը, քանզի ունի այն ինչ որ անցեալն ունի, ինչ որ հինն ունի, և բան մ'աւելի ունի — ինչ որ զայն անցելոյն եւ ապագային կը զօդէ : Զօլային առաջին երկասիրութեանց մին կը կրէ հետեւեալ անունը՝ Հեռֆին (mes haines) . Ես այդ բառն ոչ թէ միայն գրքի մը վրայ չեմ կարող դնել, այլև բառարանէս ալ ջնջած եմ իեռ անուն : Ես ամեն արտայայտութիւն կը հասկնամ, ամեն երեւոյթ կը բացատրեմ, ոչինչ կը տարամերժեմ : Իմ դաւանանքս լայն է որքան տիեզերքն : Այսպէս է դրական իմաստասիրութեան հետեւողի մը համար :

(Արեւելք)

Ե. ՏէՄԻՐՃԻԹԱՇԵԱՆ

ԽՈԲՀՅԴՐԱԾՈՒԹԻՒՆ

Արագաւարժ է նշմարիս յոյսը, կը քոչի նա ծիծուան թէներով, բազաւորները կը դարձնէ աստուածներ, սուրին մարդիկը բազաւորներ :

ՃԵՇՄԱՐԻ


ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆՍԱՎՐՈՒԹԻՒՆ. — Պալշոք, նշանաւոր գաղինացի վիպասան ծնած է 1799, եւ մեռած 1850 ի Բարիզ . Նորա գործն եւ անունն մէջ տեղ մի կը գրաւեն արդի գրականութեան մէջ, իւր գլխաւոր գործն է մարդկային կատակերգութիւն :

201. Գաղինացի մեծանուն վիպասան նոր ժամանակաց, պէս իրական կոչուած դպրոցին :

Եղիա Տէմիրճիպաշեան, տաղանդաւոր գրաքէս, ծնած է ի Խասզիլ, եւ տեղույթ Ներսիսին եւ Շահնազարեան վարժարանաց մէջ առած է իւր նախական ուսումն, հմտութ է Եւրոպական լեզուաց եւ իմաստափրական ուսմանց : Խիս կանուխէն գրականութեան նույրութրով սիրելի անուն մի ունի յաղթմ . Աշխատակցած է ազգային օրագրա, գլխաւորաւար Մասիս օրաբերքի . 5 տարիներ խմբարայեն եղած է Երկրագունք ամսաբերքի, բազմօրու նշանակութիւն Ասիական ընկերութեան խասզիլի : Առանձին իւր բնիքը գրչին արդիւնքն է Խրական և իմաստափրական շարժում հանդէսն, զոր 6 տարիներ անբնինաւ շարունակեց : Ասուցմէ զայ յօհինած է Շահնազարեանի մը Խըդախին պարզ մննութիւնն , նոր կեանի, Փիլիսոփայական բառարան եւալլի :

Բառեմ. — Հեռ, թէն, կոյիւ . — Զօդել, միացնել . — Խազ, նշան (երածւական) :



Ա Ն Գ Ե Ղ Ն Ե Ր Գ

Սիրէ սոխակ զոստախիտ դալարագեղ անտառակ .
Շուրջ ըզծաղկօք դեգերին խօշ թիթեռնիկն ու մե-
ղուն

Մարդ՝ խընկաբոյր սիրէ յարկն , ուր ճաճանչէ դաս-
տառակ ,
եւ կամ ըզգիրդ կընոջ ծոց՝ մելլով սիրոյն յար զե-
ղուն
— իսկ ես սիրեմ զամայի ծովափն , ուր կայ ցուրտ
դիակ . . .

Սիրելագոյն արարածն եմ համասեղծ Արարչին .
Մահն ինձ համար հաստատեց , ինձ համար նա ցա-
նեց ամբ
Յերկնից կապոյտ անհուն դաշտու՝ մերթ հանգունակ
կափարչին

Սեւ խութն ու բոց շանթն յաւէտ ինձ հայթայթեն
առատ ջամբ .
— Ո՛հ , սիրեմ ես զամայի ծովեզրն , ուր դիք ցուրտ
հանգչին . . .

Մութ գիշերին մէջ փայլակը երթևեկեն ինձ համար .
Անձնիւրն ինձ տայ ցոյց ծովափ մ'ուր ալեկոծ մարդ
անշունչ

Կայ տարածուած ժայռին ոտքն , իւր շուրջն աւազք
անհամար .

Եւ բարձրանայ մարմնոյն հոտն իթեւս հողմոց բըռ-
նաշունչ ,
— Ո՛հ , դիակաց սիրեմ բոյլրն , և մանաւանդ տօթ
յամառ . . .

Երբ յետին շունչն ի կըրծոց ելնէ յահե՛ղ ի գուպար ,
կինի մորմինն որպէս մեղր կամ դիցային համարամ .
Հովս յերեսաց դիակին սըրբէ քըրտինք , փոշի , շպար .
Յայնժամ մատչիմ այնմ , որպէս համեղ պողոյն՝ վեհն
Սոդամ .
— Ո՛հ , իմ դրախտն է մահատունն , և սիրեմ յոյժ
ըզկիպար . . .

« Դիակ , դիակ , » ես գոչեմ , հերձեալ զայերս ան-
սահման ,
Անիծեալ զմարդն՝ որ թաղէ զմեռեալսն ի փոս ի
խորին ,
Ս.յլ զի՞ փոյթ . Տէրն ինձ ետ լոյծ կապոյտ դաշտն ,
ուր մարդ գայ ման
Հողմոց ւալեաց խաղալիկ , ուր հուսկ ապա նուք
խըրին ,
եւ մըկանունք յերդ ի պար րերեն ինձ մարդն
ուրուսնանն . . .

Մերթ . . . արտասուք գան յիմ աչս՝ ի տես մատաղ
էակաց ,
Ոյք ոչ մորբեալ տակաւին սիրոյ հեշտին ըզբաժակն ,
Էզըուրն աղի ըմպեցին ցըյագ , ցըմահ , հրեշտակաց
ի զուր հայցեալ զօգնութիւն . . . Ա՛հ , դեռ յիշեմ
լզիսածակն
Աղջիկն . . . Այն օր տեսայ միայն թէ սեւ հա-
գուստ եմ հագած . . .

Հանդերձս ինձ յոյժ է վայել . մահացելոցն եմ թըռ-
Ոչ և կոհակը հեղձուցիչ թուխ են , անգեղն հան-
չ'ամառ . . .

Աւ է ժայռն ալ՝ որ տեսնէ վերադարձն ոչ միշտ,
այլ չո՛ւն .
Թերեւս Աստուած իսկ է սեա՛ւ, երկնից անտեսն այն
բընակ,
Որ իրը օրէնք եղ ըզմահ, և գիշակե՛ր ստեղծ
թռչուն . . . :

Թըրթուրն ընտրէ զթարմ տերեւ գեղադալար փող-
փողուն
Բունի սոխակն հրաշաճայն ի վարսադեղիտ անտառս,
ի համասպրամ ծաղկանց բի՛ւր քաղէ նեկտար նուրբ
մեղուն,
Շուրթք անձկայրեաց որոնեն վարդակարմիր այտս
վառվառս
— Ես ըզծովախն ամայի սիրեմ, և զդին՝ գոյն հո-
ղո՛ւն . . . :

(Շարժումն)

Ե. ՏէՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Հպարտութիւնն փոքրողի եւ լիմար մարդոց յատուկ է :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գրագիտութիւն . — Փոխաբերութեամբ բացարուած է
ի վեր անդր գրուած լոյժ կապոյն դաշտն փոխանակ բանու՝ ծով.
Բառք . — Դաստակ, Մաքուր կտա. . — Համասեղծ,

Բնական . — Հանգումակ, Նման . — Խուր, Ժայռ . — Զամբ,
Կերակուր . — Համարակ, Ընթիր կերակուր . — Շպար, Ներկ . —
Կիպար, Նոնի . — Ուրուանեան, Այսուերի նման . — Խածակն,
Կապուտաչուի . — Չու, Ճամբայ, Խամբու բաներ :

Գ Գ Բ Ա Ց Ա Զ Ի Ն Օ Բ Ն

Այսօր դպրոցի առաջին օրն է գիւղի մէջ իրուեւ
երա՛զ անցան այն հանգուտեան երեք ամիսներն : Մայ-
րսս առաւտօտ զիս Պոռէթթիի դպրոցն բերաւ որ-
պէս զի երրորդ տարւոյ տարւեկան ընթացից գրել
տայ . Ես տակաւին դեռ զգիւղ կը մտածէի և անցօ-
ժար կամօք իրեն կը հետեւէի : Փողոցաց մէջ տղայոց
խըլրատումն կը տիրապետէր, գրավաճառաց կրկին
խանութք հարրք և մարրք խոնած՝ պայուսակներ,
թղթեր և տետրներ կը գնէին . և դպրոցին առջեւ
այնքան խուռան բազմութիւն չեղջակուտուած էր, որ
սպասաւորն և տէրութեան պահապան զինուորք՝ զա-
նոնք հեռացնել կը ջանային, որպէս զի գրան մուտքն
չ'խափանին : Հոն կը զգամ որ մէկն ուսոցս կը դպչի .
Երկրորդ գասու վարժապետս էր . որոյ դէմքն միշտ
զուարթ, և հերքն շիկացոյն և զանգրագեղ . ըսաւ
ինծի — Ուրեմն Հենրիկոս, ասկից վերջ ա՛լ իրարմէ
բոլորովին բաժնուեցա՞նք . — Ես զայն քաջ գիտէի,
և սակայն այն խօսքերն զիս վշտացուցին : Հազիւ
կրցանք ներս մտնել, Տեարք, տիկնայք, հասարակ
կանայք, աշխատաւորք, պաշտօնեայք, պապք, ա-
ղախնայք, ամենքն ալ մէկ ձեռքերնին տղայ, միւս
ձեռքերնին դասական գրեանք, բզզալով կը լուռն

մտից սենեակն և զսանդուխս . կարծես ի թատրոն կը մտնես : ինգութեամբ սրաի կը նայիմ գետնայարկ մեծ սենեկին՝ յորում են եօթն դրունք ուսումնարանաց , ուր երեք տարի գրեթէ բոլըր օրերս անցուցի . խուռն է բազմութեամբ , կ'երթեւեկեն վարժապետուհիք , Բարձրագոյն առաջին դասու վարժապետուհիս դանէն ողջունեց զիս և ըստ — Հենրիկոս , այս տարի դու վերին յարկը կ'երթաս , քու ասկից անցնիդ ալ պիտի չ'տեսնա՛մ — և տիրութեամբ մը ինձի նայեցաւ : Վշտագնեալ կանայք զՃեսուչն շրջապատեր էին , վասն զի իրենց որդւոց տեղ չէր մնացած . և կարծես Տեսչին մօրուքն այս տարի անցեալ տարուընէ քիչ մ'աւելի սպիտակացեալ կ'երեւար . կը տեսնամ տղաքներ որք մեծցեր գիրացեր են : Ի գետնայարկն ուր դասատանց բայ անմունք կան , ստորին առաջին դասու տղայք կը գանուին . որք չեն ուղեր ի դասատուն մտնել , և փոքրիկ անբան գրաստուց նման ուիւք գետին կոխած կը կենան . պէտք է բռնութեամբ զանոնք ներս մղել . այլք գրասեղանաց առջեւէն կը փախչին . և կան եւս՝ որք տեսնելով թէ իրենց ազգականք կը հեռանան՝ կուլան . այսու հարկագրեալ առաջնոց՝ կը գառնան և զանոնք կը միմիթարեն և կամ յետս կ'առնուն . վարժապետուհիք կը յուսահատէին : Կրտսեր եզրայրս Տէլքա՛ղի վարժապետուհոյն դասատունն դրուեցաւ . ես՝ վերին յարկը՝ Բէռպօնի վարժապետին : Ժամը տասին ամենքնիս դասատունն էինք , յիսուն և չորս տղայք . Երկրորդ դասու ընկերակիցներէս հազիւ տասն և հինգ կամ տասն և վեց հոգիք կային . յորս էր միտնդամայն Տէռօսի սր միշտ առաջին մրցանակ առած է : Ինձ՝ իմստ փոքր և տիրուր երեւցաւ դասատունն

մտածելով այն անտառներն , Լեռներն , յորս ամառն անցուցի : կը յիշէի երկրորդ դասու վարժապետն , որ այնքան ազնիւ էր և միշտ հետերնիս կը ծիծաղէր . փոքրահասակ էր և կարծես մեր ընկերակիցներէ մին համարուէր , որոյ հերքն շիկագոյն էին և զանգրագեղ . կը ցաւէի թէ հոն ալ զինքն չեմ տեսներ : Այս վարժապետնիս բարձրահասակ է , անմօրուս գորշագոյն երկայնահեր , և ճակատն ուղղաձեւ խորշումեալ է . խոշորածայն , աչքերն սեւեռած կարգաւ կը զննէ գմեզ , և կարծես մեր ներսն կ'ընթեռնու . երբէք չի ծիծաղիր : Եւ ինքնիրենս կըսէի — Սհաւասիկ առաջն օրն . գեռ ինն ամփս կայ . ո՞րքան աշխատանք , քանի՛ ամսական քննութիւնք , ո՞րքան տառապանք . կը զգայի ներքուստ թէ դպրոցէն ելածիս պէս զմայրըս տեսնեմ , և ահա վազեցի ձեռքն համբուրելու . ըստ ինձի — քաջալերուէ Հենրիկոս , մէկտեղ պիտի ուսանինք : — Գոհութեամբ առն դարձայ : Սակայն այն զուարթ՝ և քաղցրաժպիտ վարժապետս ալ չունիմ : և դպրոցն ինձ առաջուան պէս գեղեցիկ չ'երեւար :

(Բազմապիտ)

Ա. Ռ. Ա. Ծ

Հին սուսեր , հին բարեկամ , հին զինի Մի՛ վախեր , եզ չեն իմնիր քընամի :

———— 838 —————

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Շիկագոյն, կարմրագոյն. — Գաևգրագեղ, գանգուրներով գեղեցկացած. — Սեւեռած, աչերն յառած :

ԵՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Անդունդք անսահման երկնից կապուտակ
Ո՞վ երբէք կրցաւ խուզել ձեր յատակ,
Եւ անհաս գաղտնեաց ձեր անթափանց քօղ
Պատռել՝ փարատել ո՞վ եղեւ կարող :

Թէ արեգերաց մէջ՝ արեւ մի թիծ,
Եւ զոդիակոս աննշան մի գիծ,
Թէ խուն կայծեր են Սայլ և Որիոն
Զորս հազիւ չափեց մեծ ճգամբ նեւտոն :

Թէ դարեր պէտք են թուելու համար
Երկնից մէջ ցանուած աստեղքն անհամար,
Ո՞րքան գծուծ է իմաստնոց երկրի
Դիտութիւն՝ որ լոկ չոր հաշուօք բերկրի :

* * *

Լուսեղէն կամարք՝ անեզր ասպարէզք
Ուր ամէն վայրկեան թեւօք բոցակէզ
Ալօթք՝ հառաչանք մեր րարձրանան չեշտ
Ուր հանգչի յուսով բիր կուսին պարկեշտ .

Ոսկեփունջ շողեր և վարդ արշալոյս
Զարթուցէ՛ք անցեալ երազներ հոգւոյս ,
Հոգւոյս՝ որ անձկայ տակաւին իբրեւ
Մանուկ հիացեալ չօշափել զարեւ :

Ո՛հ այս երկնագոյն կամարէն անդին
Ես դեռ նշմարեմ այլ չքնաղ երկին .
Բայց ի զուր խնդրեմ հորիզոնին ծայր ,
Այն հրեշտակ սիրուն որ ինձ ժպիտ տայր :

(Կոյս եւ ստուերք)

Մ. ԱՃԵՄԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Աշխարհս սոյիկեաններու համար մօսնջենական
Գետսկմանի մ'է , խոկ երփիւրեաններու համար Եղեմ
մը :

Գ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Խուզել, փնտուել . — Անձկալ , փափաթիլ . — Երփինագոյն , գոյնզգոյն :

* * *

ԱՀՄԵՏ ԵՒ ՐԱՇԻՏ

Երկար ատենէ ի վեր բոցատոչոր երաշտութիւն
մը կ'աւերէր զՀնդկաստան : Այն միջոցին երկու հո-

վիւ, Ահմէտ և Բաշիտ իրենց կալուածոց եզրն իրարու հանդիպեցան ծարաւածհիւծ և կը տեսնէին ոչխարները որ տկարացած իրենց շուրջն կը հւային . աչքերնին երկինք վերուցած կը խնդրէին որ շուտով այս յետին թշուտառութեանց գարման մ'ընէ : Եւ ահա օդին մէջ խոր լուսութիւն մը կը տիրէ . թռչունք կը լուեն ոչխարները մայելէն ու բառաչելէն կը դադրին , և երկու հոգիւները ձորին մէջ մարդու կերպարանքով էտի մը կը տեսնեն տւելի բարձրահասակ և վեհաշուք . սա երթալով մօտեցաւ առ նոսա և երբ մօտէն զինքը կը դիտեն , իսկոյն կը ճանչնան թէ բարիք և չարիք բարիք ոդին է . մէկ ձեռքը առատութեան խորձը բռնած . իսկ միւսն սուսեր սատակման : Յոյժ ահարեկ՝ կուզէին պահուըտիւ , բայց ոդին՝ Արաբիոյ ինկաւէտ անտառներուն մէջ ընդերեկս շնչող զեփիւսին նման քաղցր ձայնով մը զիրենք կոչելով կըսէ . Պօտ եկէք . ո՛վ հողտծինք , ձեր բարերարէն ինչո՞ւ կը փախչիք . այնպիսի շնորհք մը ձեզի ընելու կուգամ , որ ձեր անխոհեմութեամբը միայն կրնայ ձեզի անօգուտ և վիտասակար ըլլալ : Դուք ինձմէ ջուր կուզէք , ահա պատրաստ եմ ձեզի ջուր տալու . բայց ձեզիէ կուզեմ իմանալ թէ ի՞նչ կերպով կրնամ զձեզ գոհ ընել : Մի փութաք մէկին պատասխան տալու . լաւ մօտած եցէք որ մարդուս պիտոյից և վայելից վերաբերեալ բաներուն մէջ , ինչպէս խիստ քիչէն , նոյնպէս չափազանցին պէտք է զգուշանալ . Ի մի բան լաւ նայեցէք որ ծարուոյն տագնապը , ձեզի մոռցնել չտայ իմեզդուելու վտանգը : Բսէք ուրեմն ինչ որ կուզէք . և գուն Ահմէտ նախ խօսէ : — Ո՛վ , բարերար ոդիդ , պատասխանեց Ահմէտ , ներէ ինձ եթէ վեհ կերպարանացդ ի տես կը խռով

վիմ , փոքր առուակ մը կը խնդրեմ , որ ոչ ամառը ցամքի և ոչ ալ ձմեռը առատանց : — « Կունենաս » կըսէ ոդին և ձեռքի սուրը գետինը կը զարնէ , որ այն միջոցին բարերարութեան գործիքի մը կը փոխուի , և ահա նոցա առջեւ ազրիւր մը կը բղխի և խոխոջաձայն ընթացքով Ահմէտին դաշտերը կը ծածկէ . ծաղիկները նոր նոր անոյշ հոտեր կը բռւրեն , ծառերը կանաչագեղ տերեներով կը զարդարուին , եւ ամէն ազգի կենդանեաց դասակաները իրենց պասուքն կանցունեն : Այն ատեն ոդին միւս հոգուին դառնալով նշան ըրաւ որ խօսի . խնդիրքս աս է , ըսաւ Բաշիտ , որ հաճիս կալուածներուս մէջ հոսել տալ Գանդէս գետը իր ջրերովն ու ձկներով : Պարզամիտ Ահմէտը ընկերոջն ազնուական փառասիրութեան վրայ զարմանալով , ինքնիրեն կը վշաանար թէ ինչո՞ւ ինքն ալ այսպիսի փառաւոր խնդիրք մը չըրաւ . բայց ոդին Բաշիտին գառնալով « Փափաքներով չափաւորէ » , ըստու , ո՛վ մարդ տկար և անխոհեմ : Քեզի անօգուտ եղածին կուզիր , ինչո՞ւ քու ընկերէդ աւելի բան մը խնդրես . միթէ քան զայն կարօ՞տ ես : Այս իմաստուն ազգարարութիւնն լսելէն վերջն ալ Բաշիտ խնդիրքին վրայ հաստատուն կեցաւ , և մըտքէն կը խնդար՝ Ահմէտին պարզմութեան վրայ . ինքն որ Գանգէսի լշխան և տէր եղած էր , Այն ատեն ոդին սկսու դէպի գետը երթալ . իսկ իրենք անհամբեր իրաց ելքին կոպասէին : Նոյն միջոցին Բաշիտ արհամանուօք մը ընկերակցին երեսը կը նայէր , և ահա յանկարծ ալիքներու մոնշիւնը լսուեցաւ , և յորդագնաց հեղեղին թափ տալէն իմացուեցաւ թէ Գանգէսն էր որ իր գարաւոր պատասխաներն կը խորտակէր : Այն ահազին ջուրց հեղեղը սուղ միջոցի մէջ

Բաշիտի բոլոր դաշտերն աւերեց , ծառերն արմատախիլ ըրաւ , ոչխարներն յափշտակեց տարաւ , և այն որ Գանգիսի տէր ըլլաւ կը կարծէր , կոկորդիլոսի մը կերակուր եղաւ :

(Թարգմ.)

* * *

Ա Ռ Ա Ծ

Գետ մ' ուռուցեալ ջրերով
Թէ խափանուի յաղթ բումբով՝
Իր ընքացին հետ ճամբայ
Ժամանակով կը բանայ :

(ՏՕՄԱՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ)



Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Թառք . — Դասակ , դաս , խումբ . — Պատուար , պատ .



Ն Ի Ն Զ Մ Ա Ն Կ Ա Ն

— Բարեբասիկ մանուկ , հանգիր յորրանի .
Անմեղութիւն կուտայ քեզ միշտ նիրհ հանդարտ .
Եւ հեշտ ազդումըն համբուրին մայրենի
Զաղըլկեր նինջըդ զըւարթ :
— Ո՞վ Տէր , ի՞նչ չնորհ , ի՞նչ զիրգ հասակ՝ թար-
մութիւն ,

Նըման է սա պերձ կոկոնի վարդենւոյն՝
Ճակտին վերայ հետք չը թողած՝ վիշտն անդէն
Փախչի հեռի յորրանէն :

— Զերդ մի շուշան որ ի շընչել մեղմ հողմոյն
Սպիտակագեղ բանայ զբաժակն իւր իսկոյն ,
Այսպէս ժըպիտն այն հրեշտակին անխըլիրս
Զայլս մոգէ , գրաւէ զսիրտ :

— Կին մի առ նա կը մօտենայ սիզապանձ ,
Համբուրելով կըսէ . հրեշտակս իմ և գանձ ,
Քունէդ յետոյ մօրկանդ հանդէպ ժըպտելու
Պիտի բանաս աչքդ աղու :

— Դոյզն ինչ շարժում կը խոռվէ զիւր գորով՝
Շատ անգամներ որրանին շուրջ հայելով .
Եւ երբ զարթնու մանուկն՝ ինչպէ՛ս սեղմէ զնա

Տրովիոդ սըրտին իւր վերայ :

— Ո՞վ մայրենի անձնանըւէր գութ անբաւ ,
Ո՞վ դիեցիկ մանկան պատկեր սըրտագրաւ .
Ես չունեցայ այդ գըգուանքներն առաջին
Ես՝ գըթութեան հէք որդին :

Թարգմ.

Ե. Վ. Դ.

(Ոլպուլ)

Հ Ն Դ ԿԱԿԱՆ Ա Ռ Ա Ծ


Ամենուրեկ ուր կանայք ի պատուի են , դիք զոհ կը
ինին , բայց երբ նորա չեն պատուիր , ամենէն բա-
րեպատական արար իսկ անօգուտ են :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կհնազգութիւն. — ռըսուր, Գաղղիացի բանաստեղծ, հա-
ցագործ էր ի Նիմ (1796-1864)։

Գրագիտութիւն. — Բնական ոճն կը պահանջէ իմաստից
պարզութիւն։ Մարմնադէլ այսպէս կը սահմանէ զայն։ « Բնա-
կանութիւնն է տեսակ մի ախորժելի միամտութիւն, անզարդու-
թիւն եւ անկեղծութիւն »։

Բառ. — Բարեբասիկ, երջանիկ. — Դիրգ, Փափուկ —
Անիշիրդ, տեղին չշարժած. — Զայն մողէ, նայուածք յափրե-
սակէ. — Սիրապանձ, հպար. — Աղու, բաղց. — Տրոյնոց,
բարտիստ։



ՄՏԵՐՄԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Մտերիմդ իմ

Ահա անհուն մնաք բարովի առաջին թելը կը
զարնեմ։ Զքեզ տեսնել ուզեցի. ուզել ինձ համար
ծարաւիլ է. դոզդոջ քայլերս կարգի դրի ձեր տունը
գալու. զքեզ հարցուցի և հարցունելուն հետ ան-
միջապէս կօշիկնելու գ տեղը նետեցի ակնարկս. մայրդ
և դատարկութիւնը տիտուր պատասխան մը տուին
ինձ — հոս չէ — « Եղայրա, բաի իւրովի, հոս չէ »։

Դիմեմ կենաց դառն ներդաշնակութիւնը չ'նե-
րեց գալ տեսնել անդամ մը եղայրդ՝ դալկահար և
դոզդոջ հիւրն. սակայն այս ճակատագրին սեւու-
թեանը ի՞նչ պէտք է ըսել որ իմ տկար քայլերս չը
վարձատրեց և ստիպեց զիս դոզդոջ ոսնփոխներս
ներդաշնակելով մեկնիլ տիտուր ու ցաւած — ուր —
վինառել խորշ մը ուր արտասուաց բոցանու չիթերը
կը քողարկուին մարդոց աչերէն։

Իմ վիճակս յուսահատական է, եղբայր իմ, սա-
կայն ես հանդարտ եմ, և հարկաւ քիչ մը տխուր.
քօշնեցաւ ամէն մարդկային տենչ սրտիս մէջ, տենչ՝
աշխարհի այդ ոսկեզօծումը. ամէն յոյսերս մոխիր
գարձան. իբրեւ մեքենայ կ'ապրիմ գրեթէ, իմացա-
կան հրահրումս կորուսի, մտածումներս կարճ են և
մութ։

Սակայն մի՛ ցաւիր, բարեկամս, ստափս համոզուէ
որ քու եղբայրդ գերեզմանի տեղ Նոյեան Տապանը
կը մտնէ աշխարհի արիւնհեղեղէն փրկուելու հա-
մար . . . ո՛չ, այս սկ մտածումը չ'կըսեր երբէք ծա-
նրը հոգւցոյ վրայ, որչափ արցունք մը աշացս մէջ։

Ոհ, որչա՛փ հաճոյական է քեզ առընթերակաց լի-
նելով դալկահար վերջալուսի փողփոխումովն քանի մը
ժամեր ծծել . . . սակայն գիտեմ այս հիւանդութեա-
նըս մէջ փոքր ինչ նողկալի եմ . . . ինձ նայողին
ճակտին վրայ արգահատական ծալքերու պատկերումը
կը տեսնեմ ես։

Սակայն գու, սրտայօդ բարեկամ, գիտեմ որ զիս
միշտ ժպիտներուս, ցաւերուս, առողջութեանս և հի-
ւանդութեանս մէջ հաւասար սիրով կը սիրես. երբ
իմ վրայ գուրգուրալով կուզես ներքինս խառնել . . .
այսուհետեւ երբ տեսնուինք շատ չպիտի խօսիմ այլ
լոկ ակնարկներով պիտի գոհանամ։

Երբէք մի՛ մտաբերեր որ ես յուսահատ եմ. բը-
նա՛ւ, բանաստեղծ մը մահուանէ չ'սոսկար. այն ա-
տեն իրաւունք ունէի ցաւելու երբ ամէնքը անմահ
ըլլային և ես միայն մահկանացու։

Այսպէս համոզուէ՝

Ի քաղցր աեսութիւն։

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մարմնոյ երջանկութիւնն կը կայանայ յառողջութեան , իսկ հոգույն ի գիտութեան :



ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Գրագիտութիւն. — Նամակաց ոճը այն գրելու եղանակն է՝ որ կը պատճանի նամակաց, եւ ի մասնաւրի ընտանեկան կամ մերժական նամակաց : Իւր յանկութիւններն են բնական բլալ եւ նօցրաքան . Պէտք է մէկն ինչ որ կը մտածէ՝ պարզութեամբ ըստ առանց սենոի զարդուց եւ բնդայնմանց .

Բառեմ. — Բոցանուս, բոցի նման . — Թօշնեցաւ, թառամեցաւ . — Նոյենան սապան . փոխ . բաելու գերեզման (փոխ .) . — Առջներակաց , Առօ . — Փողիփողում , Փալիլում :



Ա Զ Օ Թ Ք Կ Ո Ւ Ս Ի Ն

Առաւոտ է . բա՛ց զիմ չըրթունս ,
Ո՛որ ունիս գրանալիս
Ոսկեղինիկ , որովք ըզդրունս
Բանաս զերկնից աստեղալիս :

Որպէս թըռչունն հըրաշաճայն
Ի թաքըստեան եղերերգէ
Նոյնպէս յիւր խուցն անշունչ , անձայն
Թըռչնիկ , ո՛ Տէր , քեզ օրհներգէ :

Ի քէն հայցեմ միայն , ո՛ Տէր ,
Զանմեղութիւնս յաւէժ պահել .
Լինիմ որպէս դաշտին խոտեր
Յորս երկնարոյր գան շունչք գահել :
Զշունչն աշխարհին հեռի յինչն
Արա՛ յաւէտ , ո՛ հայր բարի ,
Թակարդս — ասեն — ժանտք յօրինեն ,
Յարկանել անդ զկոյսն անարի :

Երբ զարթնուն ժանիք , չող արփենին
Գայ զցօղն յերկին դարձուցանել .
Եւ բոստրայն՝ ի տես չարին՝
Փութայ զիսաւար զիւրեւ ցանել :

Զիս անպաշտպան , անզօր կուսիկ ,
Պահպանեա՛ դու , հայր երկնաւոր . . .
— Եւ որբն ետին գեղալուսիկ
Տեսաւ էակ վեհ , թեւաւո՞ր :


(Շարժում)

Ե . ՏէՄԻԲՁՊԱՇԵԱՆ

ԸՆՏԻՐ ԱՍԱՑՈՒԱՆՔ

Մայուր խիղն մի հանգոյն է անամպ երկնից :

ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒԽԱԲ



ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Գրագիտութիւն. — Շնորհն յժուարին է սահմանել . Լամբեկն « Գեղեցիկ խան զգեղեցկութիւն » կը կոչէ զայն :

Բառեմ. — Դահել , իշնել . — Ժանս , Գէս . — Բոստրայ կամ Փոստուայ , կայծուիկ :



ԲԱՌԱ

Մարդիկ ընդհանրապէս կը սիրեն ճշմարտութիւնը և այս է մեծագոյն պարծանք մարդկային բանականութեան, այնպէս որ սուան անդամ չիշխէ սպրդել եթէ ոչ ի կերպարանո ճշմարտութեան: Նոյնչափ ճշմարիտ է սակայն թէ թիւ այնոցիկ որ կը խարսին և կամ կամին խարսիլ՝ եղած է միշտ և է խսկ տակաւին այնչափ, որ աւելի գիւրին է շատ անդամ ընդունիլ տալ մարդոց սուաը քան ճշմարտութիւնը: Ճշմարիտը պարտի կոռուել տգիտութեան, նախապաշտմանց, շատ անդամ նաև շահերու դէմ: Ո՞չչափ յաճախ ճշմարտութիւնը քարերու տակ մնացած տունկերու պէս, պարտի պատռել կարծրութիւններ ելանելու համար ի լցու: Իրք որ արդ խնդրոց կարգէն դուրս են, ինչպէս երկրիս գիրքն յարեգակնային դրութեան, ձեւը, հասակը կամ հնութիւնն՝ ի՞նչ հակառակութիւններ չկրեցին ոչ աւելի քոն երեք կամ չորս գար յաւած: Այս ճշմարտութեանց գէմ որ արդէն մեծամեծ գիւտերու հիմունք են՝ ի՞նչ սպասնալիք չ'եղան: Խարցիներ, խաչակրութիւններ, անտթեմաներ որ ցարդ կը տեղան մեր վրայ: Դժուարութիւն, պատերազմ, այսմ պարտի սպասել մարդկային իմացականութիւնն: Այս պատռական կարողութիւնը չունի ինչ յինքենէ: Բնածին գաղափարաց ջատագովք ցարդ չեղան կարող ցուցանելթէ ո՞յք են և ո՞ւր գրուած այն բնածին գաղափարք: Ինչ որ ըսուի իրեւ աւանդութիւն կամ հաւատք մարդկային ազգին ի մեկնութիւն այն զարմանալի երեւոյթին զոր կոչ մք իմացականութիւն, կը մնայ միշտ ճշմարիտ իր-

րեւ իր, թէ միաքն է ծնունդ արտաքին աշխարհի տպաւորութեանց զորս իմացական կարողութիւն մեր կընդունի անխտիր և կը պահէ, և թէ՝ դժբաղդութեամբ՝ տպաւորութեանց աւելի առաջինք են աւելի սխալականք, զորս ջնջել արդարեւ դժուարին է, եթէ ոչ անհնարին:

Սուտը ճշմարտէն զատելու համար պարտ է վառը բել բանիւ (raison) որ ոչ այլ ինչ է եթէ ոչ հուաքումն փորձառութեանց մարդոց, և չէ ամբովզ իմն արդէն եղած կատարուած, արարչութեան պէս, միշտ ի ինել, այսինքն միշտ շինուելու վրայ: Բոստ առաւել յաճախելոյ և զօրանալոյ բանին կամ փորձառութեան՝ լինի մարդ աւելի կարող ի գատել ի մէջ ճշմարտին և սաոյ: Ապա յայտ է թէ ճշմարիտը չ'կարէ լինել ամենազօր բայց միայն աստիճանու: Պահանջել որ կարգ ինչ գաղափարաց տիրէ, մինչ բանը, մարդկային փորձառութիւնն, հասած չէ յայն չափ է արդարեւ զանհնարինն պահանջել: Եերել զազդ մի ի հպատակութիւն նոր գաղափարներու չէ գործ միոյ աւուր: Ինչ որ եղած է ցարդ ի նպաստ յառաջդիմութեան եղած է գարերով: Կրնայ մենէ իւրաքանչիւրին ըսուիլ ինչ որ նաբոյնոն ըսու եգիպտոս իր զօրականին ցուցնելով բուրգերը: « Դարեր կը նային ձեր վրայ »: Բնութեան այն նշանաւոր օրէնքն է այս զոր արդէ գիտութիւնը սովոր է կոչել յեղութիւն (évolution): Երկրաբանական խաւերու պէս գաղափարաց կարգ մի կը տիրէ աւելի կամ նուազ երկայն ժամանակ յորոյ ընթաց գրեթէ յանզգայս կը գործուի նոր գաղափարաց կարգ որ նոյնպէս պիտի տիրէ անտարակոյս: Ի՞նչ են քաղաքակրթութեան այլ և այլ ձեւք որոց ծանօթ ենք՝ վասն զի եղած են ի պատ-

մական ժամանակի , եթէ ոչ նոր և աւելի մին քան զմիւսն կատարեալ և աւելի տոտատ հին մնացորդներով , և որոց հուսկ վերջինն է ծնունդ հուսկ առաջնոյն : Այսպէս գիտենք ի պատմութեան միմեանց յաջորդող եգիպտական , բարելական , փիւնիկական , ապա յոյն-հռովմէական . ապա արարական , հուսկ ապա արդի եւրոպական քաղաքակրթութիւն : Սոքա , իւրաքանչիւրն , որչուի գուռաւ և գրեթէ յանըզգաստո փոխուելով յաջորդեցին միմեանց , և ոչ ապաքէն միոյն մահն եղաւ ծնունդ միւսոյն , և իւրաքանչիւրն կը պահէ իւր նախորդին գծագրութիւնը : Փոփոխութիւններ կը գործուին նաև մեր արդի քաղաքակրթութեան մէջ : Ո՞վ կը տարսկուսի թէ անհաւատալի դիւրութիւնը զոր կը մատուցանեն առ մեօք հազորդակցութեան միջոցք . և զարմանալի զիւտք որովք կը մեծանանք՝ չեն ստոյգ կարապեաք մեծի իրիք փիլիսոփայական յեղափոխութեան , երբ իրք մարդկեղինք պիտի վարեն բանիւ : Այս պիտի կատարուի , առէ Ռընան , յորժամ ամբողջ մարդկութիւնն լիցի ուսեալ , և հասնի յաստիճան ինչ փիլիսոփայութեան : Իշխ որոյ յաճախելն ժամանակի միայն խնդիր է :

(Երկրագունու)

Ա. Մ. ԳԱՐԱԳԵԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Գիտութիւնն վառած ջահ կը բռնի , խոկ կրօնն Աստուծոյ փողը կը հնչեցընէ :



Շ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ

ԿԵՆԱՎԳՐՈՒԹԻՒՆ : — ուզառ երեւելի մատենագիր գտիացի , Ուսուցիչ ի Սորպին , գրած է բազմաթիւ բննադասական գործեր , որք իւր համարձակ տեսութեանց կնիքն կը կրեն . — Յիշենք մի բանին , Յիառափի կեանին , Առաքեալի , Սկզբունք Ազգաց եւ այլն եւայլն :

Մատարիա Գնարագաւեան , հանրածանօթ գրագէտ եւ պատմաբան , իւր ուսումն առած է Վիկեննայի Միիրարեան Միաբնութեան վանիք . բնդարձակ հմտութիւն ունի գրական եւ գիտական . ուսած է հին եւ նոր բազմւմ լեզուներ . Յօրինած է Նըկարագիր ուսմանց եւ Լուրդիմիկոս Ռապինի Երգի զերօնից , մինչ անդամ էր Վիկեննայի Միիրարեան Միաբնութեան : Իւր գիտաւոր գործն է Քննական պատմութիւն հայոց : Նոյնպէս հրատարակած է բազմաթիւ հասագրեն , դիւրուսոյ եղանակաւ պատրաստուած : Խմբագիր եղած է Սկր եւ ձաշակ ոսկեղին դպրութեան հանդիսից :

ԳՐԱԳԻՄՈՒԹԻՒՆ : — Փիլիսոփայական եւ Ուսումնական ոճն է իւր բացատրած նիւթոց պէս պարզ եւ անզարդ լինել . Մասնաւորապէս կը պահանջուի յատկութիւն , հօգիտ բացարութիւն , եւ իմաստից կապակցութիւն :

**Ա Շ Ն Ա Ն Հ Ո Վ Ե Ր**

Մարգագետինք են ամայի
Հազիւ ծաղիկ մը թարշամած
Կորագլուխ կեցեր նոյի
Հովտին մէջ մերկ տիրամած :

Մէգ մը պատեր է մըթագին
Մարդաթափուր ափանց վերան

Հողմունք ուժգին երբ յարձակին,
Ծառոց հիմունքն իսկ կ'երերան :

Ներքեւ ծառոց այն անտերեւ՝
Բըլուրն ի վեր լերկ առապար՝
Երբ գոռայ հովլ բըլեր վերեւ
Թռչի գիշերն երբ կուրաբար,
Կ'երթամ ցաւով տեսնել յետին
Տերեւն անգամ ինկեր գետին :

Եւ թախծութեան մը տիրամած
Հոն թաղուելով ի գոգս՝ անկամ
Այս կորուսեալ բարեկամաց
Յետս կը կոչեմ ստուերն անգամ:

Հոն՝ երբ սահին կենացս ժամեր
Զգածեալ սրտիւ խորհիմ զայն օր,
Երբ առոյդ տիքս ա'լ թառամեր
Պիտի չտեսնեմ զայդ նորանոր :


Թարգմ.
3. S.

(Հանդէս Ամսօրեայ)

Ա. Ռ. Ա. Ծ

Գըրեանքըդ սակաւ լինին,
Բայց լաւին լաւը լինին.
Բարեկամքդ սակաւ լինին,
Բայց լաւին լաւը լինին :

ԴԱՅԻՒԵԼ, ԱՐՔԵՊԻՍԿ. ՍՅԱ. Ա. ՋՈՎ. Մ. Ք.



Մ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն


Դրագիտուրիւնն է հին եւ նոր հեղինակուրեանց ուսումն եւ
նոցա բննական պատմուրիւնն . Երկու տեսակ է գրական սե-
ռերու եւ նոցա կանոնաց ուսումն , եւ գրական պատմուրիւն .

Գրական արտադրուրիւնն երկու մեծ զասերու կը բաժնուին .
բանասեղծական գրուածոց , եւ արձակ գրուածոց :

Մարդկուրեան ընդհանուր գործողուրեանց կարգին մէջ ար-
ձակն ուսանաւուէն առաջ է . Առաջին մարդկի խօսելու կամ զա-
ղափար մի յատենելու համար արձակն ի կիր առած են , բայց
յետոյ մտաց աւելի բոլիչ տալու կամ երեւակայուրիւնն բոցավա-
ռելու համար տարբեր ձեւ մի հնարած են . ասի ծնած է Բա-
նասեղծուրիւնն . Ուսանաւուն մարդկային մտաց գրական առա-
ջին ձեւն է :

Կ Ե Խ Ա Վ Ր Ո Ւ Ր Ի Ւ Ն . — Գարդիէլ Արքեպիս. Այլազովսի, ծնած
1812ին ի Թէոդորսիա, եւ վախճանած 1842ին, նշանաւոր պատմա-
քանի ու լեզուազէ : Ուսումն տուալ ի վենետիկ Միկրատեանց
բով , ուր միաբանուրեան անդամ եղաւ , եւ 1856 ին դարձաւ
յիւր մայրենի եկեղեցի . Քաջահմուս էր պատմական եւ իմաստա-
սիրական ուսմանց , նոյնպէս Հայերէն , Առուերէն , Տանիերէն ,
Մոլսաւերէն , Գերմաներէն , Իսալերէն , Եփրայեցերէն , Լեհերէն
լեզուաց . Իր բազմաքիլ երկասիրուրիւններն թէ գրաբար եւ թէ
աշխարհաբար իրաւամբ մեծ տեղ մի կուտան նմա նայ գրակա-
նուրեան մէջ . Իւր զիմաւոր գործերն են , Պատմուրիւն Ռուսաց ,
Պատմուրիւն Օւևներէն Պետրեան , Ուղղագրուրիւն լեզուիս հա-
յոց , Խանզարմունի հայկականուրեան , Հազար եւ մի առակաւոր
բանի , Քոյլովի առակերէն եւայլի եւայլի . Ինք հիմնած է վե-
նետիչն Բազմալկայ հանդէսն , որ ցարդ ամբոխնաս կը տարունավի :

Բ ա ռ գ . — Լերկ , Մերկ . — Այդ , Առաւոս .



Զ Ա Ն Գ Ա Կ

Կաւեղէն կաղապարն դեռ գետնին մէջ հաս-
տատուած է . այսօր զանգակն պիտի շինուի : Ի գո՞րծ

ընկերք, խրախոյս: Քիրտն պարտի հոսիլ հրակէզ ձակատէն. գործն պարտի պատուել զվարպետն, բայց պէտք է որ օրհնութիւնն ի բարձանց անտի գայ ...

Զանգակն՝ զոր կը շինեմք հրոյն օգնութեամբ երկրի ծոցոյն մէջ՝ բարձրաբերձ աշտարակին գագաթէն վկայ պիտի կանգնի մեր վաստակոյն: Պիտի հնչէ երկայն տարիներ. շատ մարդիկ պիտի լսեն նորա թշնդիւնն, տառապելոց հետ ողբալն և միանալն հաւատացելոց աղօթքին: Ամէն ինչ որ յեղյեղուկ բաղդն կը նեաէ երկրին զաւակաց մէջ՝ պիտի ենչէ գէպ յայս պսակն մետաղեայ և պիտի թրթռացնէ զայն հեռուն:

Սպիտակ պղպջակներ կը ժայթքեն: Լաւ, զանգուածն հալած է: Մոխրոյ աղնեանք որպէս զի լուծականութիւնն երագի: Խառնուրդէն ի բաց առէք փրփուրն, որպէս զի ողորդ մետաղին ձայնն հնչէ լի և ազդու: Զի զանգակն ուրախութեան հանգիստաւոր շեշտով կ'ողջունէ սիրելի նորածին մանուկն, մինչ մանէ ի կեանս: Իւր ճակատագրին զուտրթ և ախուր ժամերն զեռ ևս ժամանակին քօղոց մէջ թաքուն կան. իւր մօր սէրն գորովալից ինամօք կը հոկէ նորա ոսկեգոյն առաւօտուն վերայ. այլ ամք խոյս կուտան արագ իրեւ զնետ: Մանչն աղջիկն կը զատուի խրոխտ. կը նետուի բուռն կենոց հոսանքին մէջ. կը քալէ աշխարհ ուզեւորի ցատով և կը դառնայ օտարական ի տունն հայրենի, և իւր առջեւ կը տեսնէ կոյսն հրաշագեղ՝ ծաղկափթիթ՝ ամօթլեած ...:

Ի՞նչպէս խողովակներն կը սեւնան արդէն: Մը լսեմք սա գաւազանն՝ եթէ տեսնեմք զայն՝ ապակենման, այլ ևս մետաղն հոսեցնելու ժամն հասած պիտի լինի: Հապ օ՛ն, ընկերք, քննեցէք խառնուրդն և տեսէք թէ, կատարեալ խառնուրդ մի յօրինելոյ

համար մեղմ մետաղն միացած է պինդին հետ:

Զի մեղմին ընդ պնդոյն, խստին ընդ փափկին լը-ծորդութենէն կը գոյանայ բարեյարմար ներդաշնա-կութիւնն: Ահա սորա համար նոքա որք կը միանան յաւիտենական կապով պարտին տպահովիլ թէ սիրտ սրտի յարմար է: Կարձատեւ են ցնորք. երկարատեէ զիջ, կուսական պսակն ցնորհալից իմ կը յերիւրի հարավին մազերուն երբ եկեղեցւոյ արծաթաձայն զանգակը հրաւիրեն ի հանդէս հարսանեկան: Բարէ, կենաց գեղեցկագոյն տօնն կենաց գարնան վախճանն կը նշանակէ. Քաղցր ցնորք քօղոյն և գօտոյն հետ կ'երթան ի բաց. տարփանքն կ'անհետի, իցիւ սէրն մնայր. ծաղիկն կը խամրի, իցիւ պտուղն հասուն-նայր: Պէտք է որ մարդն մտնէ փոթորկայոյզ կենաց մէջ. պէտք է որ գործէ, կուսէի, տնկէ, ստեղծէ, և ձարտարութեամբ, ճգամի, դիսուածով և համար-ձակութիւնք կը զեղուն իւր րոլորտիքն. իւր ամբարք կը լնուն թանկագին պարգեւօք, իւր կալուածք կը նեղայինին, իւր տունն կը մեծնայ, և այդ տան մէջ, կը թագաւորէ կինն մրագլուխ, մայրն մանկանց: Զգօնութեամբ կը կառավարէ ընտանեկան-ակումբն, օրիորդաց գասեր կուտայ, մանչերը կը սաստէ: Իւր գործօն ձեռներն միշտ զբաղուած են. տան բարօրութիւնն կը յաւելու իւր կարգապահութեան ոգովով. հոտաւէտ գարաններն կը լնու գանձերով. աղեկատից վերայ կը փարութէ թելն, մաք-րափայլ պահարանաց մէջ կը դիզէ կոտու և ասրն ձիւնայատակ. օգտակարին հետ կը խառնէ վայելուչն և ոչ հանգիստ գիտէ ոչ գաղար:

Իւր բնակարանին բարձրէն, ուստի հայեցուածն կը

ձգի հեռուն, հայրն ուրախ ակամք կը տեսնէ իւր կալուածներն բարգաւաճ, կը տեսնէ իւր ծառերն մեծած, շտեմարանք՝ ակաղջուն, ամբարք՝ իւրեանց ճոխութեանց ծանրութեան տակ ճնշեալ, և իւր հունձք նման հողմածածան ալեաց. և յայնժամ կը գոչէ հպարտութեամբ. իմ տան մեծութիւնն, երկրի հիմանց պէս ամուր, կը քամահէ թշուառութեան զօրութիւնն: Բայց ելուկ, ճակատագրին խսութեանց հետ չիք դաշն յաւիտենական, և կը հասնի թշուառութիւն արագոտն . . . :

Բարերար է զօրութիւն հրոյ, երբ մարդ կը վարէ զնա և կը տիրէ նմա: Այս երկնատուր ուժոյն չնորհիւ կը կերտէ, կ'ստեղծէ: Բայց ահաւոր է նոյն այդ զօրութիւն, երբ չղթայազերծ կը հետեւի իւր անսանձ մղման: Վայ և եղուկ, երբ անարգել ամենեւին, բազմամրոխ փողոցաց մէջ կը ծաւալի և կը լուցանէ զհրդեհն ահարկու, զի տարերք ոխերիմ են մարդոց ձեռակիերտին: Ի ծոցոյ ամպոյ կ'իջնէ անձրեւն որ մի օրհնութիւն է, և ի ծոցոյ ամպոյ կ'իջնէ և շանթն, կը լսէ՞ք ի կատար աշտարակին զզանգակըն գուժարիւ: Կարմիր է երկինք արիւնանման, և այդ ծիրանեգոյն լրյան չէ տունջեան: Որպիսի՛ աղմուկ շփոթի գուենաց մէջ. ի՛նչ գոլորչի յայերս: Հըրեղէն սիւնն կը թաւալի ճարճատիւն հեռուէ հեռու և կ'ստուարանայ հողմոյն երագութեամբ: Մթնոլորտըն հրատոչոր է իրբեւ յերախս մի հնոցի. մարդակի կը գողան, գերանք կ'անկնին, պատուհանք կը ճայթեն, մանկունք կուլան, մարք կ'ընթանան մոլորեալ, և անասունք կը մոնչեն ընդ բեկորօք: Ամէն ոք կը փութայ, կը փախչի, փրկութեան ելք մը կը խնդրէ: Գիշերն պայծառ է ցերեկուան նման, մի երկայն գը-

ծի վերայ դոյլն կը պտտի ձեռն ի ձեռն, և ջրհանք կը ժայթքեն խրձունս ջրոյ, քամին կը հասնի մուրն-չաձայն և կը խարազանէ բոցն ճարճատուն. Հուրն կը ճարակի չոր հնձոց, խոտամբարին պատերուն մէջ, կը հասնի ի տանիս և կը սլանայ յերկինս, իբր այն թէ հզօր և ահեղ, կամէր զերկիր գլխովին քարչել տանիլ իւր մոլեգին սլացից մէջ: Յուսահատ, աեղի կուտայ մարդն դից զօրութեան, ապշեալ կը դիտէ իւր վաստակոց կորուստն: Հրակէզ, ամայացեալ, տեղին զոր կը գրաւէր երբեմն՝ հողմոց կալուածն է այլ ես, սոսկումն կը բնակի պատուհանաց թափուր ճակերուն մէջ, և աւերակաց վերայ հոլաթեւ կը կախն ամպք երկնից:

Մարդն մի հայեցուած եւս կը թողու իւր ընչից գերեզմանին վերայ, յետոյ կառնու զցուպն ուղեւութեան, ի՛նչ որ այլ լինին աղէտք հրդեհին, քաղցըր միխթարութիւն մի միայ նմա: Կը հաշուէ գլուխներն որք սիրելի են նմա, ո՛վ երջանկութիւն, ոչ մին կը պակասի:

Կաւն ընդունեց զմետաղն, յաջողութեամբ լցուեցաւ կաղապարն, զանգակին պիտի ելնէ՞ անտի բաւական կատարեալ վարձատրելոյ համար մեր ճարտարութիւնն ու վաստակին:

Մեր ձեռաց վաստակին կը վատահիմք երկրին ընդերաց: Հողագործն կը վատահի նմա իւր սերմերն, յուսալով որ նոքա պիտի ծին ի շահ իւր՝ ըստ խորհրդոց երկնից: Կը թաղեմք երկրի ծոցոյն մէջ աւելի պատուական սերմունք, յուսալով թէ պիտի յառնեն գագաղէն լաւագոյն կեանքի մը համար . . . :

Եկեղեցւոյ աշտարակին մէջ կը հնչեն թինդք զանգակին, թինդք սգատիսուր որ կը ձայնակցին գերեզ-

մանական երգոց և կը ծանուցանեն անցնիլն մի ճանապարհորդի , զոր իւր վերջին ապաւէնն կը տանին : Ափսո՞ս , մի սիրեցեալ կին է դա , հաւատարիմ մայր մի զոր աղջամղջից դեն կը իւլէ իւր ամուսնոյն բազուկներէն , մատաղօրեայ մանուկներէն զորս յաշխարհ բերաւ ուրախութեամբ , զորս իւր ծոյցյն վերայ դիեցոյց սիրով : Աւա՛զ , անոյշ կապերն խզեցան առ յաւէտ , զի այսուհետեւ կը բնակի նա յերկրին ստուերաց , նա որ մայր եղեւ ընտանեաց : Ոչ ևս է իւր հանապազրդ , իւր արթուն հոգածութիւնն . . . :

Աստուած օրհնեց այխատութիւնս : Տեսէք , պատենին մէջէն դուրս կ'ելնէ մետաղն , ջինջ որպէս ասաղ ոսկի : Ծայրէ ի ծայր կը փալփի զերդ արեգակն , և զինանշանաց գեղեցկութիւնն կաղապարագործին ճարտարութեան առհաւատչեայն է : Եկէք , եկէք , ով ընկերք , պար բոլորեցէք , կնքեմք զանգակն , Միարանուրիւն անունն տամք նմա : Թող միայն խաղաղութեան և սիրոյ գումարմանց համար խմբէ զհասարակութիւն :

Թո՛զ իւր հեղինակէն նույիրուի այս խաղաղասիրական գործոյն : Բարձրացեալ ի վեր քան զերկրային կեանս , կապուտակ երկնից կամարին տակ սաւառնաթեւ պիտի կենայ : Պիտի ճօճի կայծակին և աստեղաց մօտ : Իւր ձայնն մի գերագոյն ձայն պիտի լինի , որպէս մոլորակաց ձայնն , որք իւրեանց գնացից մէջ՝ կը փառարանեն զԱրարիչն և տարւոյն ընթացքն կը կանոնաւորէն . . . : Թող անսիրտ և անկարեկիր , թարգման լինի ճակատագրին և կենաց յեղաւշմունքն ծանուցանէ : Կրկնէ՛ թող մեզ թէ ոչինչ կը մնայ այս աշխարհի մէջ , թէ ամէն երկրային բան

կանհետի որպէս թինդն զոր լսելի կընէ և որ ընդհուպ կ'սպառի :

Այժմ , մաշուխներով զանգակն փոսէն կորզեցէք , ամբառնայ յայերս յիշխանութիւն ձայնի : Քարշեցէք , քարշեցէք , կը շարժի , կը ճօճի , ուրախութիւն կ'աւետէ քաղաքիս : Իւր առաջին բարբառք խաղաղութիւն հռչակեն :

Շնուր

Թարգմ.

Ռ. Յ. Պէրուէրեան

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մարդ հանճարախուրիւն ունենալով կարէ շատ անգամ անմտաբանել , այլ դատողուրեամբ ոչ երբէ :

— ՀՅ —

ՇԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենսագրուրիւն . — Շնուր , գերման մեծ եերքող եւ մատենագիր , ծնեալ 17.9 , եւ մեռեալ 1805 . Իւր բատրեգուրեանց հրաւակերն է Կիյևու քէլ , Բաց այսի յօրինած է Ալազակի , Մառի Սուլարս , Մեսինայի խուցեալն , Գրած է Պատմուրիւն երեսնամեայ պատերազմի եւայլն եւայլն :

Գրագիտուրիւն . — Հունանիշի կը կոչուին այն զանազան բառերն որք կը ներկայացնեն միեւնոյն զաղախարք : Այսու գրողն որ եւ է բառ մի բանի անգամ կրկնելէ ազատ կը լինի : ինչպէս , անսիրտ , անկարեկիր , յոյլ , ծոյլ , պղերգ :

Բառք . — Յեղյեղուկ , փոփոխական . — Ողորկ , փայլուն . — Յերիւրել , յարմարցնել . — Ընդլայնիլ , տարածուիլ . —

Ժրակղուի , աշխատասէր . — Աղեկաս , բն . — Փարուրել , փարբել . — Զիւնախատակ , ծիւնանման , — Ակադուն , լի . — Գուեհ , փողոց . — Երախ , բերան . — Մարդակ , տան գերան . — Խարազանել , հարուածել (փոխ ,) . — Մաղուխ , հաս չուան :

— ՅՈՅՈՅ —

ՊՈՒՏՏԱՅԻ ԾԻՇԱՌՆԸ

Երբ իւր ուսուցմամբն ըսփոփեց զաշխարհ ,
Պուտտա՝ մենացած ի խոր ինչ անտառ՝
Եւ ի Նիրվանա բազմահոդ յառած՝
Նըստաւ մըտախոհ յերկինս ձեռնամբարձ .
Եւ պահելով միշտ զայն դիր նուիրական
Կեայր յամայութեան և ի հիացման ,
Ամփոփելով միտն յերազ մի անվերջ՝
Դեռ եւս չընկըզմած մեծ Ոչընչին մէջ :
Տարիներն լվացիս և անզօր ըրին
Ոսկրացած մարմինն այդ ճըգնաւորին .
Պատէին շիսանի զիւր ընդարամ իրան՝
Չոր չէր տաքցներ աստղը միջօրեայն .
Աչերն անհայեաց մէջ կոպիցն սնկացը
Կարծես զերդ քարինք էին կարծրացեալ .
Պիտի մեռնէր նա՝ ծընգեալ անարւաղ .
Բայց թըռչնիկը՝ որոց սիրելի էր վաշ
Թոստըս երգ եցիկ թըռչնոցն այն երամ
Գային տալ պըտուղ իւր չըրթանց թարշամ .
Ընդ երկար այսպէս ապրեցաւ Պուտտայն ,
Բնաւին կատարեալն , պատկառելին այն :

Բիւր բիւր անգամներ և գեռ աւելի
Լուսինն որ յարծաթ՝ ւ'արեւն որ յոսկի

Ներկեն զանտառներն՝ կծագին յիւր ճակատ ,
Թէպէտ ո'չ պահ մ'իսկ յածեցաւ աստ անդ
Միտն իւր խորասոյզ յերազն այն անվերջ ,
Երբ վերամբարձած իւր աջ ձեռին մէջ՝
Չոր՝ թուլիս ձեռին մէջ կրանիդի մ'հանդոյն
Մի օր ծիծեռնակ մի շինեց զիւր բոյն :

Զոգի Պուտտային չ'խռովեց երբէք
Այդ հաւատարիմ վըտարանդին հէք՝
Որ թեւասլացիկ ընդ լեառն և ընդ ծով
Զըմեռներն հիւսոի ցըրտից դառնալով՝
Կը գըտնէր զիւր բոյն անդորր ու ջերին
Յափին այդ անվիշտ երազատեսին :
Հուսկ ապա այլ եւս չը դարձաւ իսկի :
Երբ շատ իսկ անցաւ ժամանակ դարձի
Թըռչնոցն՝ ոյց աքսորն է միակ պաշտպան .
Երբ չիմալայա ծածկեցաւ ի ձեան ,
Եւ երբ ամէն յոյս կորած էր՝ Պուտտա
Փըլուխն յամբաբար դարձուց , և ահա
Զեռքն ունայն գըտաւ . միայնակեցին
Աչերն՝ որ վաղուց ինչ տեսած չէին
Անհունէն խըտտղած աչերն , և ի վեր
Յերկինս դէս կալի խոնջ իւր չէջ աչեր՝
Կիզ թարթշով աչերն՝ ի կոպ արիւնած՝
Եւ այն՝ ոյր ոգին յայրուեր յանդիման
Յուտոյն Ոչընչի և Ունայնութեան՝
Եւ որ կը խուսէր կեանքէն չարատես՝
Լացաւ զմահ ծիծուանն հէք արզու մը պէս :

Թարգմ.

ՖՐԱՆՍՈՒԱ ԳՈԲՔ

ԵՂԻՇԿ Վ. ԴՈՒՐԵԱՆ

Ա. Ռ. Ա. Ծ

Բարեկամըն ինչ որ լզգայ՝
Լաւ բարեկամն ալ այն կ'զգայ՝
Մի ասեր թէ այդ զարմանք է,
Սըրտէ ի սիրս ճանապարհ կայ։

ԳԱՅԻՐԻԵԼ ԱՐՔԵՊՈՒՄ ԱՅՎԱՅՈՂԱԳԻ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ. — Ֆրանսուս գործ, արդի զարդացի բանասեղճն, ծնած է 1812 ին։ Իւր զիստուր գործերն են Անցորդն, Ըրէ զոր ինչ պարտիս եւայլն եւայլն։

Պուտսա անունն կը դրուի Հնդկաց կրօնի մէջ կատարեալ եւ բացաձակ իմսցականութեան։ Պուտսայք են նորա՝ որ լիակատար զիտուրինն կը բարովեն, կամ այն հոգիք՝ որք երանաւէս վիճակի հասած են եւ զերծ ի կատարեաց նիւթոյ կը բնակին յանձնիւրական աշխարհն՝ որ է նիրվահան։

Պուտսայկանութեան նիմնադիրն է ՍԱԳԻԱ-ՄՈՒՆՔ՝ ոյր կրօնն ընդունած են այսօր իսկ 450 միլիոն մողովուրդն ի Հնդիկս, ի Չինասան, ի Ճարբոն եւայլն եւայլն։

Բառք. — Վշիս, նիմար. — Լիան, բաղեղն. — Ընդարձ, բմրած. — Կուպ, (լավախ) աչիք. — Դէս կալ, դիտել. — Կիզ, այրած. — Յայրուել, ուրախութենէ վեր վեր ցատկել։

ՓԱԿԵԱԼ ՏՆԱԿԵՆ

Զատկի առաւօտն է: Նոր գարունը, պճնուած իւր չքնաղ հրապոյրներով, կը խնդակցի քրիստոնէից և տօնել կուզէ՝ կարծես նոցա հետ Աստուածորդւոյն

յարութիւնն ։ Պօլսոյ ճոխ արուարձաններէն միոյն մէջ, որպէս ամենուրեք, կանուխ հնչած են զանգակը տաճարին։ Մրտաթունդի զուարթագին ելած են բնակիչն ի կը պատրաստուին երթալ յեկեղեցի։ Ուհա իրարու ետեւէ կը բացուին տանց դռներն, ու դուրս կ'ելնեն արք և կանայք և մանկտի. նոր և գեղեցիկ հանգերծներ զգեցած են և ուրախութիւնը ձառագայթալիր կը լուսաւորէ իւրեանց գէմքեր։ Փողոցք լի են հաւատացելոց բազմութեամբ. ապրիլի առաւօտներու քաղցրահոտ զեփիւորին կը խառնուի այն անոյն բուրումն որ կ'արծակի չըեղազարդ տիկնանց և օրիսրդաց հագուստներէն ու մազերէն, մանկունք կը վազեն իրենց ծնողաց առջեւէն ճռուողելով լրերկաձայն։

Բայց մինչ ամին տանց գրունք կը բացուին ու դուրս կ'ելնեն փոյթեռանդն նոցա բնակիչք, հեռուն մի մենաւոր տնակ կը մնայ փակ ու ոչ ոք կելնէ անտի. Է՞ր արդեօք բախուր ամայի է այն, և կամ հաւատոյ տղրիւրը ցամքած է ինմաս բնակող ամբարիչտ սրտերու մէջ. ոչ երբէք, նա օթեվանն է մի բարեպաշտ առաքինի այրի կնոջ, հաւատքն քան զնորահոգին չունի լաւագոյն խորան. ինքն եւս հրաջերմ ըղձիւք կը փափաքի երթալ յոտս սուրբ սեղանոյն և խառնուած հաւատացելոց բազմութեան՝ գոչել ցընծութեամբ «Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»։ Բայց աղքատ է հէքն. կարկատուն են իւր հանգերծներ, որք հազիւ կը բաւեն ծածկելու իւր մերկութիւն. կ'ամաչէ ցնցոտիներով ներկայանալ ճոխազարդ այն ամբոխին մէջ։ Քրիստոնեայներն ի տաճար հրաւիրող զանգակին զուարթ թնդիւնք ախրագին կը հնչեն իւր հոգւոյն մէջ. կը կարծէ ինքզինք հաւատացելոց մարմ-

նէն կտրուած ի բաց նետուած անդամ մը , կ'արտասուէ դառնագին :

Այլ ահա՛ կը խորհի . ո՞չ ապաքէն ամենուստ կը լոէ Աստուած բարեպաշտ հոգւոյն աղաղակն : Մունր կը դնէ մերկ և խարխուլ տախտակամածին վրայ , աչք և բազուկը յերկին վերամբարձիկ , և աղօթք ու մաղթանք ու օրհնութիւնք զիրար կը մլեն և , որպէս խնկոց ամպ բուրմունք ի սրբազն բուրվառէն , խուռն՝ ջերմագին՝ արտասուախառն կը ոլանան իւր սրբատի խորերէն : Մինչ խանդավառ կ'աղօթէ , արեւուն ոսկեփայլ ճառագայթներն՝ խցին պատուհաններէն ներս թափանցելով , կ'ոզողեն զայն լուսով և կը կերպարանափոխն ի տաճար վեհավայր , և կը թուի այրւոյն թէ Աստուծոյ հայեցուածն է որ լուսաժայիտ կը խոնարհի իւր վերայ : Երբ յոտն կ'ելնէ , իւր գիմաց վրայ նկարուած կը տեսնուի հոգեկան հեշտութեան մ'անբացատրելի պատկերն : Երկնային սփոփանաց ճառագայթն իջած է նորա նսեմ ճակտին վրայ :

Այո՛ , միմիթարուէ , կին գու . հոգեբուզիս աղօթքը հրեշտակաց ալելուներուն հետ խառն՝ հնչեց յունկն Անմահին . միմիթարուէ՛ , զի նա՝ որ սիրտ սուրբ և խոնարհ հոգի կը խնդրէ՝ առաւել համեցաւ հիքեդ մաղթանքներէն քան բազմացն ի նոցանէ որք յեկեղեցի գիմեցին , վասն զի բազումք իրենց փայլուն հանդերձից տակ գոռոզ սրտի մ'ու սնափառ հոգւոյ մը տգեղութիւնն ու նսեմութիւնը միայն տարին պարզել սրբազն խորանացն առջեւ :

Ո. Յ. Պէրուբեան

ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ

Որ ինչ հրաման թէ ստիպէ՛ ջանա գործել ընտրանօք Մի՛ խօլական շուտութեամբ վաղվաղելու ընար հոգ , Այսպէս արտա գըրողէն՝ որ յանգ կազմէ սրբավար , Զեմյուսոր մեծ դատաստան և ոչ նաև մեծ հանձար , Ես աւելի կը սիրեմ առուակ՝ կակուղ աւազով , Որ ծաղկալից մարդերու վրայ թափառի մեղմու զով , Քան հեղեղատ լի զեղուն , որ ընթացքով մըրկածին : Խճերով ծանը՝ թաւալի ցեխոստ տեղեր ճահճին : Աճապարէ՛ բայց հանդարտ , և մի՛ բընաւ վըհատէր : Քըսան անդամ սեղանիդ վրայ քու երկերըն նորէն դիր , Զայն ողբէ՛ անդադար , անցուր կրկին սրդըէ՛ , Շատ քիչ անդամ աւելցուր , յաճափագյնը չընչէ :

Թարգմ.

Հ. Գ. Ա.

(Պատմույ)



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գրագիտուրին . — Երեմն նիւր մի բացաւելու յատոկի բաւել կը պակի , եւ նարկ կը լինի ձեւաւոր բացաւրաբին մը զործածէլ : Այս է Պիտականունուրին : Բնշպէս անդամ բաւել կը խոսի իւրի խոսին մէջ ամձի տեղ զործածուած է :

Բառէ . — Թափուր , պարապ . — Նսեմուրին , Մրարին .



ԲԱԺԻՆ ԲԱՆԱՍՏԵՂՄԻՆ

« Ո՞վ մահացուք , ձեզ տամ դաշխարհ ,
Կ'ըսէ մի օր մրրկայ աստուած .
Իշխեցէք հոն աղատաբար ,
Ժառանգութեան իրր ըստացուած .
Օ՛ն բաժնեցէք բաժին արդար
Թող այն ըլլայ ձեզ հաւասար » :

Սմենքն յուզուին յայնժամ և վէճն ըսկըսի
Եւ հնարագէտ մարդըն աիրէ աշխարհի .
Իւր օրինաց թեֆի պարտեալ ըընութիւն ,
Մարդ երկրի տէր լինի , արքայք տէր մարդուն .
Երր ի վաղուց ըրած էին զայս բաժին ,
Ահա քերթող մ'հասնի , կենաց տրտմագին :
Հեռի երկրէ գոյր անազան
Մինչ բաժնուած էր ամէն բան .
Յոսոս արքային երկրի գըլուին ի խոնարհ ,
Ասէ . « Գըթոյդ կ'աղաստանիմ , ո՛ իմ հայր .
Սիրելագոյն յորդիսդ քերթող , քո մտերիմ
Պէտք է միայն ե՞ս մոռցուիմ : »

— Է՞ր կըշտամբանք , ասէ Աստուած , ինձ ուղղես ,
Յարդար բաժնիս միթէ օրէնք գըրի՞ ևս .
Մինչ ըստ հաճոյս բաժնեց մարդըն զայս երկիր
Ահա , այն ատեն ո՞ւր էիր . —

« Զեեզ գիտէի , Տէր , և ըզիառըս քո վերին
Նըլտատէի ներդաշնակ կարգն երերին .
Եւ երկրաւոր բաներէն մինչ խոյս տալով
Հոգիս թռանիք առ քեզ յուղեալ ի գորով ,
Ահա թողուն ոչնչութիւնն ինձ բաժին : »

« Կը գորովիմ յառոցըդ միշտ ,

Կըսէ Աստուած , այլ զո՞ւր քո վիշտ .
Երկիրն գրաւեալ ոչ ևս քուկտ է այլ փոխան
Տամ քեզ ընծայ իմ երկնային օթեւան :
Բաղիսել երկնից ե'կ միշտ և յար ,
Պիտի բացուի այն քեզ համար : »

ՆՄԱՌՈՒԹԻՒՆ ՇԽԼԷՐԻ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ի՞նչ ի՞նչ հաննարներ հիւղին այն բառսային սեմին
վրայ խամրեցան կամ մարեցան : Հասարակաց գերեզ-
մաննոցներուն մէջ հողակոյներ կան , որոնք հրաբուղիս-
ներ պիտի ըլլային , բայց կայծը սրտի քանձր խաւարի
մէջ առանց երբէք հրամրելու բաղրած է . . . հաննա-
րը վիին մէջ զանկ մը եղաւ առանց մարդկուրեան ե-
րերին մէջ գիսաւոր մ'ըլլալու :

Պ . ԴՈՒՇԵԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գրագիտուրիւն . — Բանասեղծական գրուածքներն հինգ
մասերու կը բաժնուին , որք են , 1. Քնարական , 2. Դիցագնական ,
3. Թատրական , 4. Վարդապետական եւ Փիլիսոփայական , 5. Հով-
ուական :

Բառե . Թէիիլ , Կրուիլ . — Ահազան , Ուշ , — Երեր , Եր-
կինն :

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ

Նկատենք այժմ այն գիրքը, որ գանձարան է դաստիարակութեան: Այս գիրքը, կամ, աւելի լու առել, այս մատենադարանն է Աստուածաշունչը: Քը-րիսոնիւթիւնը պարագ կը գնէ ամեն անհատի վը-րայ օգուտ քաղել Աստուածաշունչն: Ժողովուրդ, մանուկ, ամեն հասակի մարդիկ կարող են Ս. Գրքի ուսմամբ կատարեալ քրիստոնեայ լինիլ: Աստուածոյ կամքը կամ ծրագիրը, քրիստոնէութեան նկատմամբ է անհատներէն դիմել դէպի ի ընդհանուրը և ոչ ընդհանուրէն դէպի անհատները, և այս պատճառաւ այսպէս կամեցած է, որպէս զի իւրաքանչիւր ոք իւր աստուածային ձեռքէն կրօնք ընդունի, իւրաքանչիւր ոք իրեն սեպհականէ և իր սիրառ կրթ': Աստուածոյ յայտնած վարդապետաթիւններով, որպէս զի իւրաքանչիւր ոք իր կողմէն ձայնակցի վերին ձայնին և իր սրտով ընդունած կրօնի քաղցրութիւնը ձաշակէ: Աստուածային կամաց և պատուէրին համեմատ Աստուածաշունչն է մատենադարան հանուր մարդկային գերդաստանի իւրաքանչիւր անդամի համար: Աստուածային գրքին ստացած կրթութեան զօրութիւնը քաջ ճանաչելու համար՝ ստունք ստվարական ընդունակութեան տէր մի մանուկ: Աստուածաշունչը նորա համար գրուած է, լեզուն նորա սրտին հետ կը խօսի:

Արդ՝ Սուրբ գրքի լեզուն, որ աղքատիկ մանկան լեզուն է, որ բնութեան բարրառն է, կը յայտնէ մանկանը ամենամեծ ճշմարտութիւններ: Խսկոյն կը զետեղուի նորա սրտին և մտքին մէջ բոլոր փիլիսոփայական և բարոյական ճշմարտութեանց առանցքը:

Բնութեան և խզմի օրէնքները կը միանան իրենց տեւական կեդրոնին մէջ: Մտածութեան և կենաց ընթացքը կ'սկսին միասին: Խսկոյն մանկան նայուածքը աշխարհի լարիրինթոսէն դէպի ի աստուածագիտութեան արեւելքը կը դառնայ, կը ճանաչէ վԱստուած, և կը ճանաչէ խիղճը, կը ճանաչէ պարտուց անփոփոխ օրէնքը:

Ի՞նչ կ'ասէիք գուք, եթէ առաջարկէին Հոմերոսի Ոդիսականը և Եղիսականը կարդացնելու դպրոցի մանուկներուն: Անչուշտ պիտի ասէիք, որ աւելի հասկաւորներուն պատշաճ է կարդալ: Քրիստոնեոց մանուկը օրօրոցէն սկսած կը թոթովիչ ամեն Եղիսականներէն գերագոյնը: Նա այնպիսի կարեւոր ուսումունք և ճոխ ընթերցմունք կը շարունակէ, որ գուցէ գուք հասակաւորներուն միայն պատշաճ դատէիք: Կայ արդեօք Սուրբ գրքի մէջ այնպիսի մի բան որ Հոմերոսի գիւցազներգութենէն գերագոյն և խորագոյն չ'լինի: Աստուածաշունչը ի սկզբան Հոմերոսէն աւելի անմատչելի կերեւի և ստկայն Աստուածաշունչով կը մնանի քրիստոնեայ մանուկը: Այս մի հրաշք է և սքանչելի երեւոյթ: որ աղջաց ունեցուծ ամենամեծ պատմական և կրօնական յիշատակարանը կարող է դպրոցի մանկանց գիրք լինել, յորմէ աւելի քաղցրութիւն կը ճաշակեն, քան թէ ուրիշ գրքերէ: Առանց դժուարութեան կը համակերպինք այն նահապեաներու հետ, որոնք իրեւ առաջին օղեր են այն մեծ չղթային, որ գար առ գար իրարու հետ կը միաւորէ հաւատացեալները: Կարծես թէ Մովսէսի հետ Աւետեաց երկիրը կը մտնենք: Կարծես թէ Դաւթի երկարատեւ տագնապները, զղումն և արտասուքը մեր սեպհականը կը լինին: Խսկ Յիսուսին համար ի՞նչ

ասենք, այն մարդկային ազգի մեծ առաջնորդին և իշխանին համար յորում մարդկութիւնն կենդանացաւ և փառաւորեցաւ :

Աստուածաշունչի սրբազան լջերուն մէջ կարծեսթէ մահուկն իր պատմութիւնը կը կարդայ, իր անցեալն և իր ապագայն : Նորա ուշադրութիւնը կը գըրաւուի . սիրտը կը խանդաղատի և կրթութեան եռանդը կը բորբոքի : Նա իր փափուկ ձեռքերով Աստուածաշունչը բանելով՝ իր մանկական յստակ աչքերով կը տեսնէ նորա մէջ թէ ի՞նչ պարտք ունի մարդն առ ընկերականութիւնն, ի՞նչ վաւերականութիւն ունին օրինքները . և նոյն հետ միասին կ'ուսանի բնական նկարներ, ստոյգ պատմութիւններ և սրատչարժ անցքեր : Ամենէն զարմանալին այս է, որ Աստուածաշունչի լեզուն, իր պարզութեամբ և նախնական յստակութեամբ, ամեն գրքերէ աւելի կը ձեւաւորէ և կը յստակէ մանկան լեզուն : Աստուածաշունչի մէջ գիւրին է գտնել մանկան համար պատմութեան, նկարագրութեան և պերճախօսութեան նախնական գեղեցիկ օրինակներ :

(Սիօն)

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԱՐՔԵԹԻՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

ԳԵՂԵՅԻԿ ԲԱՆՔ

Մտիկ ընելու արժանի մարդն նա է, որ խօսքը միայն մածութեան համար, եւ մածութիւնն միայն նըմառութեան եւ առաքինութեան համար կը գործածէ :

ՖԱՆԵԼՈՒ

ՄԱՆՕԹ ՈՒԹ ԻՒՆ

ԿԵՆԱՎՋՐՈՒԹԻՒՆ. — Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրատեան, ծնած է 1832, ի Տաւուս գեղջ Գուգարաց աշխարհի բազարինու աստուածաբան, վկացեալ Յուրիիի համալսարանն : Աւանսն ընթացքը աւարտած է Թիմիզի Ներսիսեան դպրոցի մէջ : Յոյժ սիրելի եւ աշակերտ Մուրատեանն Երշակայիշտական Ներսէն եւ Աւարակեցի կարուղիկոպին' ընտիր բարողութեանց համար : Մասնաւոր նորածութեամբ մշակած է Ազգ Պատմութիւն, Պատեհագրութիւն, Աստուածաբանութիւն, Եղուներ Հայերէն, Ռուսերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն, իսպաներէն եւալլին : Մուրատեան Մրազանի գրական աշխատութիւնն են Պատմութիւն Հայաստանաց Առաքնական Ս. Եփեղեցոյ, Պատմութիւն Նոր Կամարանի եւալլին : Ենթասասրադութեանն աշխատակից եղած է Մարկոս Արքակեանի Կոռուկ ամսագրին . իսկ երկար ատեն վարած է Երուսաղեմի Սիօն հանդիսի խմբագրութիւնն :

ՔՐԱԳԻՄՈՒԹԻՒՆ. — Արձակ գրուածներն կը բամբուճն ինինց մասերու, որք են, 1. Հուեսուական . — 2. Պատմական . — 3. Վարդապետական եւ Փիլսոփայական . — 4. Վիստական . — 5. Նամակագրական .

—————
ՀՅՈՒՅՑ————

ԱԲ ՇԵ ԱՅ Ծ

Խոր ձմեռ է, հիւսիս փշրած իւր չղթայն՝
Սլանայ աստ անդ, վայրագ որդին ըընութեան,
Եւ կ'արշաւէ արագ յերկիր և յերկին
Զայրագին :
Մածկեն զերկիր համայն, բարդ բարդ ձիւն և սառն,
Անպատսպար հեծէ հիւզին մէջ թըշուառն,
Ե՞րբ արդեօք իւր տառապանքներ առնուն վերջ՝
Շիրմին մէջ :

Ի Նորվեկիա կարի սաստիկ է ճըմեռ ,
Խոր տիրութիւն պատէ զանտառ դաշտ ու լեռ ,
Տարերքն ամէն մըղեն պայքար դէմ միմեանց
Մողեխանձ :

Հոն այս պահուն տեսնենք դաշտի մէջ մի հէք՝
Որ գէալ յառաջ երթայ դողդոջ , ահաբեկ ,
Արտագին անիծէ զօր իւր ծնընդեան :
Յաւիտեան :

Հասնի յիւր վայր , բախէ ըզդուռն հիւղակին ,
Ահա բացուի , մանկունք զիմեն տըխրագին .
Այն հրեշտակներ կը համբուրեն զիւրեանց հայր
Վշտահար :

« Սիրուն հայրիկ , մեզ հաց բերի՞ր , եմք նօթի ,
« Մեր օյս վիճակ երկնից գըթոյն կարօտի .
« Ահա երկուքս սիտի ընկնիմք աստ նըւալ
Անսըւադ :

« Հանդարտ կեցիք , որդեակք , բարի է Աստուած ,
« Նա կը լըսէ անմեղներու ջերմ հայցուած » :
Առա իջնէ լալով հէք հայրն ի մառան ,
Լնդունայն :

Զի անդ յուսայր գանել սնունդ , այլ ի զո՞ւր ,
Ռւստի սենեակ դարձաւ բեկեալ և տըխուր ,
Ուր կը տեսնէ իւր խնջոյից յուշարար
Մի քընար :

Խոյս մի ծագի իւր մտքին մէջ ալեկոծ ,
« Մանկունք , կուզէ՞ք պարել » . — կ'ըսէ սիրտը խոց ,
Հնաղնդեցան հէքքըն ձայնին հայրական .
Պարն ըսկսան :

Մոռցան նոքա անօթութիւնն անողոք
Եւ ոչ ևս այլ բառնան խնդիր կամ բողոք ,
Անմեզ դիմաց վերայ ծագի մի ծիծալ ,
Են ուրախ :

Ապա կ'իյնան նոքա խոնջեալ , սովալուկ
Եւ կը ննջեն՝ ընկճեալ քաղցէն չարաշուք ,
Հայրն անոնց քով ի ծունր իջած , կ'աղօթէ
Ի սրտէ :

« Գըթա՛ , ո՛վ Տէր , բաւ են այսքան տառապանք
« Անմեղներուս , որոց այս ծանր են կապանք » :
Կը համբուրէ զանոնք , բառեր մրմնջէ ,
Եւ ննջէ :

Առաւօտ է , լոյսըն ծագէ յայն հիւղակ ,
Ռւր գիրկընդիսառն ննջեն երկու հըրեշտակք ,
Հայրըն զարթնու , ողբայ որդւոց իւր ի տես ,
Դառնապէս :

Նոցա կեանքեր հընձեց մահուն սուր մանդալ ,
Գրթաց նոցա մահուն հրեշտակն իսկ , աւա՛լ ,
Գոչեց յերկինս ի վեր երբ տայր զիւր հարուած ,
« Ո՛վ Աստուած »

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՄԱՍՏՔ

Կեանքը ուղիւրութիւն մ'է . կը մեկնինք ի ծնանելն ,
Կընրանանք ցորչափ կապրինք , եւ մահուամբն հան-
գրսեան կը ժամանենք :



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գրագիտուրին . — Ցիւած ենի (յերես 5) Ոնոյ ուր ընդ-
համուր յատկութիւնք . Հետեւալի են նոյն կանոնաց բացարու-
թինք . Բնականն (տես 108 երես) :

Յատկութիւնն է բացարել հոգիւ որ եւ է մածութիւն . ոնոյ
այս յատկութիւն շատ փայլ կուտայ գրուածին :

Պատշաճութիւնն է բառից եւ իմաստից իրարու հետ կատարեալ
կերպիւ պատանիլն :

ծշդուրիւնն կը կայանայ մտածման ամենակատարեալ եւ ամենաինչը բացատրութեան մէջ։

Մայրուրիւնն է գործածել այն բառերն զրու երեւիլի հեղինակի ուսած են, եւ որոց համար բարտէ սովորութիւնն կը ներէ։

Ազնուրիւնն է զգուանալ անհերեք բացատրութիւններէ, եւ միայն պարկեցն ու վայելուչը գրել։

Զանազանուրիւնն է գրուածէի մը իմաստից համեմատ ասցուածներ փոփոխել։

Դաշնակուրիւնն բացատրած ենի խղճմանից ներեւ։

Բառք. — Մողեխան, կատաղի . — Անսուաղ, անօրի . — Հայուած, խնդրուած . — Խոնջեալ, յոզնած .



Ն Ո Ւ Թ Հ Ա Կ

Ազնիւ գերդաստանի մ'ազնուագոյն շառաւիզն ի մանկութենէ ցոյց տուաւ նուրհան որ մեծ ապագայի մը սահմանեալ է : Ո՛չ վարժարան, ո՛չ համալսարան, ոչ Եւրոպա ստացած է իր գաստիարակութիւնն, այլ իր գերդաստանին ծոցն, այլ իմաստուն և չնաշխարհիկ հօր մը թեւին ներքեւ, իսկ իր ուսումնքը կարծես թէ աւելի իր մտաց բնիկ ծնունդն են քան դասատուներու արդիւնք : Ի բնէ աշխոյժ և սուր իմացողութեան տէր՝ չ'աեսածը կ'երեւակայէր նուրհան, չ'սորվածը կ'երկնէր, չեղածը կ'հնարէր : Բեղմաւոր միտք՝ իր գաստուներու հրահանգները կը կամիսէր և անսանձ կ'արշաւէր այնպիսի հրատապ խնդիրներու մէջ՝ որոց լուծումը չէ թէ գիրքերու, չէ թէ ուսուցչին խոհական լեզուին, չէ թէ ընկերութեան, այլ իր իմացականութեան մէջ կը գտնէր, կը գանձէր :

Սրդէն վեշտասանամեայ հասակին մէջ ընկերական կարգին բոլոր մոլութիւնները գիտէր, մանաւանդ մերազնէից յոռի կացութեան շարժառիթն ու վախճանը նկատեր էր և ինքնուրոյն կ'արտմէր ու կը փըրփըրէր թէ ի՞նչպէս գարաւոր ստութիւններ իբրեւ ձշմարտութիւններ մարդկային սրտին և մոքին վրայ կ'արբապետեն : Վառօդի շտեմարան մ'էր նուրհանի միտքը, միայլակ ու որոտում սպառունացող երկին մ'էր անհուն հոգին, և միայն կայծ մը, պարագայ մը, խօսք մը, չունչ մը բաւական պիտի լինէր հրդեհ մ'արտադրելու, և եթէ ոչ աշխարհի, հայոց նոր Գայիսու մ'աւետելու : Դիւրահալորդ՝ երբ իր ոգին իմացող լինէր, լուսկաց, մենասէր և տրտում՝ երբ նենդալի երեսներու մէջ գտնուէր : Նուրհանի վառվառուն բնաւորութեան, թագուն վիշտերուն անհուն փափաքներուն միակ սանձ, սպեղանի, ապաւէն, ափոփում էր՝ հօրենական դորովալիր ակնարկը, դգուելի յորդորը, սիրաւէտ սաստը, նեստորեան խրատն որ ըսել կուզէր :

— Որդեա՞լ, կզգում և ես աւիւնդ, տածէր ու սնէր եմ փափաքներդ :

Եւ արդարեւ՝ միւչդեռ նուրհան իւր ալեզարդ հօրը հրամանին հլու՝ իր տենչանքը կը սահմանէր և ընտիր ուսումնական անձերու գումարի մը մէջ առանձնակի կը փայլէր, իւր անունն արդէն հայ ժողովրդեան մէջ հռչակ հանած էր : Եւ ի՞նչ տեսէր էին այս անձէն, այս պատանիէն, որ դեռ այն ինչ ծանօթ էր մոերիմներու, դեռ այն ինչ խօսելու սիրսեր էր ընդերկար խորհելէն ետեւ, և ահա իր տեսքը խնդութիւն և խօսքը զարմանք կը պատճառէին, այնչափ մեծ է ձշմարտութեան և անկեղծութեան

Ներգործութիւնը նոյն իսկ այն մարդկան վրայ որ
ձշմարտութեան և անկեղծութեան չեն հաւտար :

(Վրոյր)
Մ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ի՞նչ է լեզու մի , բայց երէ օդակ մ'այն ռդրային՝
որով բովանդակ մարդկուրիւնն կապուած է :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՉԳՐՈՒՐԻԱՆ. — Մաքրէոս Յովիաննէս Մամուրեան ,
ծնած է ի Զմիւռնա , 1829 ին , մեծանուն տաղանձաւոր գրազէտ ,
իւր նախական ուսումն տեղույն Մեսորուկան վարժուանին մեջ
առնելէ յետո Բարիզու Մուրատեան վարժարանն մտնելով յաջո-
ղոծ է անդ ուսմանց փառաւոր վկայական առնուլ Լոնսոնի
Պարսից դեսպան Վասեմ . Մելքոն խանի , Վասեմ . Սազրզ Յովի-
նաննէս Էմինիքի եւ այլոց յետո : Ընդուրակ հմտութիւն ունի գրա-
կան եւ գիտական ուսմանց : Մշակած է Հայերէն , Թուրքերէն ,
Գաղղիերէն , Անգլիերէն , Գերմաներէն , Արաբերէն եւ Յունա-
տէն լեզուներն : Մամուրեան է անխոնջ հրապարակողիր , բազ-
մարելուն միտք , սահուն գրիչ : Իւր լրացաւոր գաղտիարաց եւ
խորիսան մասմանց ծնունդ է Մելքոնեան Մամուլ Հանդէսն՝ զոր
կը հրատակէ 49 տարիներէ ի վեր . Յօրինած է Հայկական Աս-
մականի , Անգղիական Անմականի , Սեւ շերին մարդը (վէպ) :
Բազմարի են բազմանուրիւնն , ինչպէս կէօրէի Վերքերն ,
Վալսր Սզոսի հվանուն , Ա. Տիւմայի Երեմ Հրացանակիր ,
Քսան Տարի Եսք , Եւայլն Եւայլն :

Բառեմ. — Մամուսիլ , բարկանուլ . — Դիւրահաղորդ , հա-
ղորդելո դիւրին . — Սպեղանի , սպիի դեղ (մեհլէմ) .

ՎԵՐՁԻՆ ԳԵՂԵՑԻԿ ՕՐԵՐ

Այլ չեն ամռուան գեղեցիկ օրեր ,
Այլ չեն այն լուսնոտ զուարթ գիշերներ .
Տիւսւր է արեւ , հազիւ երեւի ,
Եւ գիշեր մութ է , ցուրա սարսուռ ունի :

Երթայք բարեաւ , ա՛խ , ալւոր առասուներ ,
Որ լոյս վաղվաղկոտ սպայծառ կը ծագէր ,
Եւ ուր վաղյարոյց ես ոյլ հետ այգուն
Կենէի առոյգ , և սիրաս էր խնդուն :

Միրէի տեսնել չողերով արփւոյն
Բլոց սարերն համակ սոկեգոյն ,
Եւ երկինն անամպ շղարչ ծիրանի ,
Շլքեղ առագաստ մի անհուն նաւի :

Միրէի ծծել օդն առաւօտուն
Որ հեւալով գայր վերայէն ծովուն ,
Անոյշ ու հեզիկ կուսի չնչոյ պէս
Փայփայել մաղերս , չոյել զիմ երես :

Միրէի լըսել մրմունջ մենաձայն
Աղքերն որ ջրէր ցամքած մրգաստան ,
Եւ սարեկին ձիւն , ու ճարակաւոր
Բնդ զառվայր խաչին բառաջն հեռաւոր :

Բարեա՛ւ , ա՛հ , երթայք , գիշերք աստղութց ,
Ուր չող մեղմանոյշ կը հոսէր յերկնից .
Ուր աստեղք քնքուշ նայէին յեթեր ,
Եւ երկրի ծաղկունք բոյր տայլին ի վեր :

Առւսինն այլ հանդարտ պտտէր յերկին
Մազերը ցանած լեռ , ձոր , ծով , գետին
Իւր խորհրդաւոր լուսայն մէջ նկարուած՝
Տեսիլ մ'իդեալ համայն էր զգեցած .

Եւ լուսափողիող ծովուն այդ յափունք
Լուսնոյն տակ գային ժուռ հոյլ հոյլ աղջկունք
Գիշերոյ աստեղ նշոյլով սմոյն
Ոգիներ թուին վիպական աժգոյն :

Միւզիի մ'էր փափուկ չունչը իւրեանց
Եւ քրքին հեզիկ զերդ ծիծաղ մանկանց
Եւ շրջազգեստից շրջիւնն որ նըման
Է տերեւներու մեզմիկ խարշափման :

Ա՛հ , երբ աշուն դայ , գունատի արեւ ,
Ոտքիս տակ կոխեմ ազազուն տերեւ
Երբ խամրած տեսնեմ վերջին վարդն յիւր ծզոտ
Եւ բնութիւն առնու գոյն մելամազոտ ,

Երբ տեսնեմ ծովուն եղերքն ամայի
Ուր չըգան շրջիլ ամոլք սիրալի ,
Երբ իւր հիւրերէն ու զով ստուերէն
Թափուր է անտառ , թոչունք փախեր են ,

Թախիծ մ'ունի դիս , և միտքս , ա՛հ , անկնին
Նոքա ոյց զլսոյն այս ծառք չուք տուին
Եւ որք քան նոցին ստղարթքն անկան չոյտ
Եւ արդ կը պառկին դամբանին մէջ մութ :

Երէկ այս դաշտեր զուարթ կոխէին ,
Իւրեանց հասակը նկարէր լուսին ,
Կային որ ծազկի պէս էին մատաղ
Ցուսալից , անցա՛ն նոցա հետ աւա՛ղ

Լինե՛լ — չը լինել , այս' , Շէյքսպիլը ,
Սոսկալի է յոյժ խորին այս խնդիր .
Այսօր երկրի՛ վրայ , ասլրիլ , ա՛հ , խնդա՛լ
Վազիւ , հողոյն տակ փոշոյ կոյտ մ'ըլլալ

Ռ. Յ. Պէրտէրեան

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Այնքան աւելի յաջողած է մարդ , որքան աւելի կըրցած է բարոյական ըլլալ :

Ո . Յ . Պէրտէրեան

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գրագիտուրիւն. — Ուսնաւոր կամ արձակ գրուածներն մի խանի մասնաւոր յակուրիւններ ունին , որք են , Հանձար , Երեւակայուրիւն , Տաղանդ եւ ձաշակ .

Հանձարն ստեղծելու բնական կարողուրիւնն է , որով մարդի իւր մասց արտադրուրիւններուն կ'ընծայէ սկզբնական եւ նօր ձեւ մի :

Երեւակայուրիւնն այն կարողուրիւնն է , որով մեզ կը ներկայանան իրերն կենդանի գոյներով : Անհնար է որ եւ է գրուածոյ առանց երեւակայուրեան բեղսնաւորել :

Տաղանդն է բնական կամ սասցեալ հաւատուրիւնն մի , այսու գրողն կը դասաւորէ յաջողապէս զրական հատուածի մը տաւերեն , եւ զանեն կը զարգացնէ հանելի եւ նոխ ձեւով : Տաղանդն հարտար նմանող է .

Ճաշակն այն յակուրիւնն է , որով որ եւ է գրուածի մը բերուրիւններն կամ գեղեցկուրիւնն կ'ընտէ ոք :

Բառե. — Վաղարոյց , Շուտ արքցող . — Համակ , Բոլրովին . — Իշեալ , Բառ զդ . Գալախարական . — Լուսափողիող , Լուսաւող . — Տմոյն , Գունաս . — Ազազուն , Զոր .

ԱՐԾ ԵՒ ՍՈՒՐ

Մի հովտի մէջ խաղաղ այժմ, բայց որ գոռացած էր մերթ բանակաց ընդհարւմամբ և արենարբու զինուց շառաչմամբ, արօր մի հանդարտիկ կ'ափօսէք գերկիր։ Յանկարծ երեւան եկաւ մի սուր ժանգահար, որ երկար դարերէ ի վեր թաղուած էր անդ. « Ո՞վ կը համարձակի խռովել իմ հանգիստ » գոչեց զայրագին, և նշմարելով զարօր յաւելցուց. « Օ՛չ, դո՞ւ ես այդ յանցաւորն, ո՞վ անարդ գործի. բաւական չք քեզ քո ներկայութեամբ պղծել այս վայրերն ուր կը լսուէր երբեմն չոխնդն ճակատամարտից և ուր կը հանգչին բազում քաջերու ոսկորք. և կը յանդնիա հարուած մ'ալ տալ ինձ և ի բաց կորզել զիս այն տեղին ուր կը ննջէի անվրդով։ » — Ի՞նչ իրաւամէ կը խօսիս ոյլպէս, պատասխանեց մեղմօրէն Սրօրն, չե՞ս տեսներ պաշտօնը զօր կը կատարեմ, պէտք է որ բըրեմ հողն, բանամ ակօսն ուր սիստի բուսնի ցորեանն կենսատու—; Սուրն այս խօսքերէն կատաղեցաւ, աղօտ նշյլներ արձակեց և խրոխտ ու արհամարհու ձայնիւ գոռաց. — Յանդգնութիւնդ անկարելի է, ո՞վ թշուառական, կը հասկնամքո միտքն, կը յաւակնիս ինքզինքդ բաղդատութեան դնել ինձ հետ, և արդէն կ'ոկոսի ներբողն ընել քո ծառայութեանց։

Ո՞վ ես դու իմ քով, թէեւ անփայլ և ժանգահար կը տեսնես դու զիս այժմ, բայց գիտցիր որ փառաւոր անցեալ մ'ունեցած եմ. Քանի՛ քանի մարդկային էակաց արեամբն եմ ներկուած, ի՞նչ յաղթութիւններ տարած, ի՞նչ փառքերով պահուած։ Սրօր մը ի՞նչողէս կարող է ի կըսու մտնել սրոյ հետ, արօրն

զհողակոշտ միայն գիտէ պատառել, սուրն յազդեր իշխանաց և զօրավարաց կը մանէ պալատներէն ներս և կը բազմի ի գահոյսն, արօրն՝ ընկեր չուառական գիւղացւոյն՝ արտերէն և ագարակաց բակերէն անդին չէ կարող երթալ։ Ճանչցի՛ր քո չափն և ըստ այնմ խօսէ։ Վեհանձնաբար պատասխանեց արօրն. հանդարտէ ո՞վ սուր, և ունին գիր ինձ, ինչ որ կը փայլի առաջ կը հանէ աւելի աղմուկ՝ նա չէ միշտ իրաւամբ ամենէն մեծն. ի՞նչ է անցեալն որոյ վերայ կը պարծիս. շար մ'սպանութեանց, արեան բոստրագոյն փայլն է եղած քո փառքն, անկենդան գիակներն՝ քո յաղթութեան նշանք, և այրեաց ու որբոց հեծեծանքներն՝ քեզ յաղթական նուագներ, ի՞նչ է սուրը. — մի գործի աւերանաց, մահուան, միայն կեանք գիտէ հնձել. արիւն և արտասուք հոսեցնել, թշուառութիւն և աւեր սփուել, մինչ արօրն է գործի խաղաղութեան, կենաց, առատութեան։ Սրօրը բարիք կ'ընձեռէ մարդկային ազգին առանց ամենափոքր չարիք գործելու, գիւղացւոյն բաժինն է այս, բայց նորա չնորհիւ կ'արտադրի հունձքն սոկեգիսակ որ կը սնուցանէ ճոխն իւր պալատան, իշխանն իւր գահուն վերայ։ Թէ չլինի սուրը, կը վերնայ արիւնուուշտ պատերազմն, որ կը խլէ այրերն իւրեանց ամուսնոց գրիէն, զորդիս կը զրկէ իւրեանց հայրերէն և կ'անզաւակէ մայրերն, թէ չլինի արօրն, կը պակախ հացն. կը մարի ուրախութիւնն ընտանեկան յարկերու և կը տիրէ Սովու ահարկու։ Ես աշխատութեան զօրավիզն եմ, զիս կ'օծէ ու կը նուիրագործէ ճակատուքիրտն արդիւնարար. արիւն կը հոտիս դու, ամենէն մահարոյր սուրն է ամենէն փառաւոր։ Բայց իմ կողմըն է յառաջադիմութիւն, քանի քաղաքակրթու-

թիւնը կը ծաւալի , կ'առաւելու իմ յարգն և կը նսեմանյ քոյդ . ի՞մ է ապագայն , մինչ տակաւ պիտի մոռցուիս դու և անշուշո պիտի գայ այն օր ուր հընութեանց թանգարաններու մէջ միայն ցոյց պիտի դրուիս իբրեւ հետաքրքրութեան առարկայ :

Սուրբ մնաց ամօթահար և չհամարձակեցաւ յաւելուլ ինչ ի պատասխան :

Ռ. Յ. Պէրուբեան

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մարդկան մեծագոյն մասն տնկոց նման քազուն յատկութիւններ ունի , զորս դիպուածը ի յայտ կը բերէ :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Քրագիտուրիւն . — Նկարագրուրիւնն է բնական առարկայի մը զանազան մասանց , մարդկային գործոց կամ բնութեան տեսարանի մը երեւուրից բուարկութիւնն . Նկարագրուրիւնն , կ'ըսէ Մարմններէլ , պէտք է որ ներկայացնէ պատկեր իւր ամենն սրաւութ մանրամասնութեամբք իւր կենդանի զոյներով . Նրկարագրական ձեւերն են . կենդանի նկարագիր , տեղագրուրիւն , դիմագրուրիւն :

Բառեմ . — Ընդհաւում , բաղխում . — Ժանգահար , ժանգոն . — Յաւակնիլ , յանդենիլ . — Ներբոդ , զովես . — Բողորգոյն , արեան գոյնով .

Ի ՄԱՀ

ԱԶՆԻԿԻԿ ԼՈՒԹՈՍԵԱՆ

Ուր ես , Ազնիւ , տեսանք երթալդ
Ուրախ դարձիդ չառինք մենք լուր .
Քեզ գրկելով ճամբայ գրինք՝
Գըրկերնիս բաց կ'սպասենք զուր .
Ո՛հ , ամենուն տըխուր ճայնիւ
Կը հարցընենք . ուր է Ազնիւ :

Ի՞նչ աւանդներ յանձնեցինք քեզ
Մօրդ ու քըրոջդ արտասուագին .
Հարազատիդ և մըտերմաց
Այրած սրտերն ու ողջոյն յետին .
Երբ գաս մեզի ուրախ դարձիւ՝
Ի՞նչ փոխարէն բերես՝ Ազնիւ :

Ու գեռ ինչե՛ր ենք պատրաստեր
Թէ զքեզ նորէն գրկենք սիրով ,
Քեզի նման ծաղկի փունջեր
Ու հանդէսներ ցնծուն պարով .
Բայց սրտերնիս լի է ահիւ .
Ո՛հ , կուշանաս , ինչո՞ւ , Ազնիւ :
Աւա՛լ , տեսէք , սուզ առաւ ծով ,
Զինքը տանող դարձաւ հովիկ ,
Թեւերըն կախ փըչէ արտում ,
Ի՞նչ լուր բերիր մեզի , հովիկ ,
— Այն ձեր սրտի հատորն ազնիւ՝
Թըռաւ գընաց , մեռաւ Ազնիւ :

Վա՛լս , չունեցար , սիրուն Ազնիւ ,
Դոնէ արխուր հովին վրայ ,


Արցունքներով մէկ թաց շիրիմ՝
Այս խօսքերով կանգնէր վըկայ. —
« Հոս իր բարքով դիմօքն աղնիւ
« Ծաղկահասակ նընջէ Ազնիւ »
Ու չը լըսես պիտի ափսո՞ս,
Քու. սիրելեաց չորս դին բոլոր՝
Աղեկիզիկ հասաչանքներն . . .
Ոչ սոխակին երգ սըգաւոր,
Եւ ոչ երկինք ու աստղունք անթիւ
Անոյշ ցողով լան քեզ, Ազնիւ :
Թառամեցաւ ծովընկեցիկ
Փափկասուն վարդ իւր հասակին,
Ազի ալեաց անդունդին մէջ
Շիջաւ արեւ այն կտրիճին . . .
Ցաւերժհարսունք գիսախըռիւ
Ծովուն՝ մինակ լան քեզ, Ազնիւ :

Մ. ԹԷՇԻՔՔԱՇԼԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Կեանիլ հակապատկերաց շարք մ'է: Գեղեցկաբոյք
ծաղկան մօս՝ որ դէպ երկին կը նայի, կը տեսնես ու-
րիշ մ'որ դակահար եւ զիսիկոր զետինը կը ծովի, կը
տեսնես մերձ ժպտին արտասուք, մերձ կենաց՝ մահը :

ՍՐՅՈՒՀԻ ՏԻՎԱՐ



Մ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Կենազրուրիւն. — Մկրտիչ Գէտիկաւան, բազմածա-

նօր զգայուն ներող, Մուրաս-Ռափայէլեան վարժարանի աւա-
կեր, որ հմուտ էր Հայերէնի, Գաղիերէնի, Խալերէնի եւայլի:
Զօրինած է բազմարի զեղեցիկ ներուածներ եւ բարեգութիւն-
ներ, որք աշխարհիկ մատենագրութեան իրական ծառայութիւն
են: Պէտիկաւալեան գրած է նաև մի բանի հառեր, որ իւր միսս
գրուածոց նետ հրատարակուած են Մատենագրութիւնի Պէտիկաւ-
ալեանի գործոյն մէջ: (1827 — 1868)

Գրագիտուրիւն. — Եղերեցուրիւնն է ցաւոց կամ ու-
րախուրեան երգ մի, ընորհայի, գորովական եւ կրտսեած:

Բառք. — Գիսախոյիւ, մազերը ցցուած:



Հ Ա Գ Ի Ա Յ Ա Ն Մ Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Ն

Միմելի ԵՎԻԱ ԷՖԼԵՏԻ ՏԵՄԻՒՐՃԻՊԱՆԵԱՆ

Թէրձէմանի մէջ հիմա կտրդացի Միհրան էֆէնտի
Արծրունի բարեյիշատակ Տողթորին՝ մեր սրտի հա-
տորին՝ կանխահաս մահուան վրայ գրած գեղեցիկ
տողերդ: Վերջին օրերս ցանկացայ տեսնել զինքն ի
մահճի մահուան, կամ գոնէ ընկերակցիլ մինչեւ ցգե-
րեզման, չկրցի կատարել լաղձանքս:

Եւ գիտե՞ս որ շատոնցուընէ ի վեր զքեզ իսկ տես-
նել կուզէի, սիրելի Եղիա՝ և չկրցի տեսնել: Բան
մը յանձնարարեր էք ինձ ձեր իմաստալից տողերուն
մէջ. սակայն այս իմ հիւնդագին վշտալից տառա-
պալից օրերուս մէջ կարո՞ղ եմ միթէ զձեզ գոհացնել:
Այս քո ըրած յանձնարարութիւնդ առ քեզ կը վե-
րադարձնեմ և կը խնդրեմ որ գեղեցիկ ճառ մը գը-
րես հոգւոյ անմահութեան վրայ: Քո սուր մտքովը

և թափանցող հանձարովը խնդրեմ, Եղիա, բացատրէ ինձ՝ թէ ինչո՞ւ Արծրունին մերձ մահու աւելի հանձարեղ, աւելի խորախորհուրդ էր քան անցեալ օրերուն մէջ։ Ի՞նչ կը նշանակէին այն իմաստուն խօսքերը, ինչո՞ւ արտասանեց զանոնք։ ինչո՞ւ ապրապըրեց իւր և մեր սիրելի եկեղեցականաց ծերունագոյն հօր՝ կարդալ այն գիրքը, զոր գիտէր թէ ամենասիրելին էր իւր հօր, այսինքն Աւետարանը, ինչո՞ւ ամենայն ջերմեռանդութեամբ սուրբ խորհուրդը՝ իրեն մարմին զգենլոյ պատճառ եղող հօրը ձեռքէն ընդունեց, երբ հօրմէն առած հոգին գէպի մեր ամենուս ցանկալի յաւիտենից կամարները թռչելու վրայ էր։

Հսէք ինձ, թէ ինչո՞ւ նուիրական է քեզ և ինձ միանգամայն Հասգիւղի մեռելոց բլուրն, ուր մեր եղբայրն Շահնազարեան և մեր սիրելի հայրերն ու մայրերն եայլն կը հանգչին։

Ինչո՞ւ ահաւոր ջերմեռանդութեամբ կը համրուրեմք այն հողերը, ուր մեր հայրերը, մայրերը, եղբայրները կ'ապասեն՝ թէ և անկենդան թէ և ի հող դարձան։

Սիրելի Եղիա, ինչո՞ւ, երբ մարմինը կը տէարանայ, երբ ալ չճաշակեր, ալ չզբօսնուր, յայնժամ միտքն՝ իմացականութիւնը կամ հոգին կ'ազնուանայ, կը բարձրանայ, կը լայննայ, կ'ատուարանայ։ կարծես թէ հասուն պտուղ մը իր կեղեւը պատռելով դուրս ելնել կը նկրտի, հողապատեանը նեղ կը գտնայ, և անսահման ոլորտ կը փնտռէ, զաշխարհ նեղ կը գտնէ։ Ես բազում սիրելեաց սնարից վրայէն լսած եմ զասոնք։

Սիրելի որդեակ, Եղիա, ըսէ և բացատրէ ինձ թէ

ինչո՞ւ մարդ գոհ չէ իր վիճակէն, բաղձալի վիճակն հասնելէն յետոյ ալ բաղձանքները կը բազմապատկէ, և այսպէս յանհունս կը բաղձայ, կը խորհի, կուզէ ունենալ բան մը զոր չ'կրնար ունենալ հոս, ի՞նչ է այս։

Արդեօք ոչնչութեա՞ն համար են այս անդուլ անդադար ջանքերն դէպի կատարելութիւն, դէպի յառաջդիմութիւն, դէպի լաւագոյն կեանք. ի՞նչ . . . կարժէ՞՞ քոան երեսուն, քառասուն կամ հարիւր տարիներու համար այսչափ յոգնիլ։ Եթէ ոչնչութեան համար է, ուրեմն թշուառ է մարդն՝ և թշուառագոյն, զի մարդուն ձեռքովը տնկուած ծառը, շինուած քարէ չէնքը քանի պատիկ աւելի կ'ապրին քան նոյն իսկ զանոնք տնկող, յերիւրող, յօրինող իմացական էակը։ Ուրեմն նիւթը կամ ծառը կամ քարը բարեբաստիկ, է քան զոէր սոցին զմարդ . . .

Զքեզ կը պարտաւորեմ, սիրելի Եղիաս, քու վաեմ լեզուովդ բացատրէ ինձ ասոնք, ես իսկ գերեզմանին մօտեցած՝ պէտք ունիմ այս իմաստից բացատրութեանցը . . .

Հսէ ինձ, ի զո՞ւր՝ անապատները ծիծալախիտ դաշտերու փոխարկելու կը քրտնին ազգք։

Թէ ի զո՞ւր՝ աշխարհաշինութեան, գեղերու կանգման, քաղաքակիրթ լինելու, իմաստուն լինելու ջանի դործ կը դնեն ազգք և ազինք։

Արդեօք ուրիշ աշխարհի համար պահուած չէ՝ մարդկային ազգին ամեն դարերու մէջ այս ընդհանուր բաղձանքը, որով կուզէ լաւագոյն վիճակի տիրանալ։

Արդեօք ասո՞ր համար հիները գերեզմաններու մէջ մեռելներու քով վառուած կանթեղ մը կը դնէին։

Արդեօք և մե՞նք այս յուսոյն համար ճրագօք և
լսպտերօք և այլն կառաջնորդենք ի գերեզման այս
լըսը վնտուելու համար՝ զոր չենք դտներ ի կենիս՝ և
անդր քան զգերեզման կը վնտուենք :

Սիրելի որդեակ, Եղիս,

Եթէ երբէք կը սիրես զիս,

Եթէ կը յիշես որ մտաւոր և բարոյական զարգաց-
մանդ համար քիչ մ'աշխատելու պատիւն ունեցած
եմ,

Եթէ կը յիշես որ զքեզ ի՞նչպէս կը սիրէի և կը սի-
րեմ ցարդ՝

Քու անբասիր կենացդ՝

Քու անձանձիր աշխատասիրութեանդ՝

Եւ քու՝ այլոց օրինակ հանդիսանալու չափ ցցու-
ցած ուսումնասիրութեանդ համար,

Կը խնդրեմ որ՝

Ինձ մեծ ծառայութիւն մ'ընելու համար՝ իմ այս
յանձնարարութիւնս կատարես :

Ես ալ զանոնք Միհրանին վշտաբեկ հօրը՝ Տէր
Գէորգին պիտի զրկեմ:

Նա պէտք ունի այս միսիթարութեանց :

Եւ ինձի համար՝ ես ալ յոյժ պէտք ունիմ, զի ոչ
չատ հեռի կը նկատեմ այն հանդիսաւոր օրը, յորում
կը յուսամ թէ պիտի միանամ իմ փրկչիս, որ գերեզ-
մաններու բախտը փոխեց,

Եւ իր երկրպագելի գերեզմանը՝

Ինչպէս բոլոր իրեն հետեւողաց գերեզմանները
անմահութեան դուռ չինեց,

Յուսոյ որբան ըրաւ :

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ի՞նչ է մարդը, այն որ իր ապրելուն զիտակցու-
թեամբն ապրեցաւ, այն որ իր իղձերուն չափ ու սահ-
ման չը ճանչցաւ :

Գ. Ս. ՕՏԵԱՆ

— ՀՅԱ —

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՎԱՐՈՒՔԻՄ — Ներսէս Վարժապէտեան Պատրիա րէ Կ
Պոլսոյ ծնեալ ի Խասպիւլ 1837 ին, եւ վախճանեալ 1884 Հոկտեմբերի 25
ին, զեղեցիասու գրակէ, հմուտ աստվածաբնուրեան եւ զա-
նազան լեզուաց, Ներսէ Պատրիարքի կենաց պարագայք ժամա-
նակակից ազգային պատմութեան բազում նիւր կը մատակարա-
րեն: Հրատարակուծ է ընդդեմ սենաւատուրեան սերտակ մը, Քը-
րիստոսի եկեղեցին եւ անոր հակառակորդեերն, եւ Ռուսուն հա-
մարարան Անետարակի գրուածն :

Կարապէտ Վարդապէտ Շահնազարեան, ծնած է ի Պարսկա-
սան Համատան Խաղաֆ, 1814 Մայիս 14 ին, աղքատ թեսանիմէտ
եւ մեռած է ի Խասպիւլ Կ. Պոլսոյ 1863 Օգոստոս 31 ին: Երե-
ւելի պատմագրէս եւ աստվածաբն, Միարան Ս. Էջմիածնի,
հմուտ զանազան ուսմանց եւ լեզուաց, ինչպէս Հայերենի, Գա-
ղիւրենի, Ռուսերենի եւայլն եւայլն: Նորա զիսաւոր եւկան-
դրութիւնն են Հերքութեան Դաշնաց բղոյն, Կրօնագիտուրիւն, եւ
Ռուսերենի բարգմաննեալ Խանի մը զործեր :

1855 ին ի Փարագի կերպայ, եւ նոն բարեւարաց օժանդակու-
թեամբ կը բանայ հայ սպարանն եւ կրսկի հրատարակել Շար հայ
պատմագրաց, որք եօքն հատուներ էին, ինչպէս Ստեփանոս Օրբել-
իանի, Ղեւոնի Երիցու, Մովսէս Կաղանիայտուացոյ, Մեծո-
փեցոյ, Սիբատայ եւ Վահրամ Վարդապէտի պատմագրութիւնն,
1863 ին իմանց Երկրագուն հանդէսն զոր իր մահուանէ վեց շա-
րունակեցին Նուպար. Շահնազարեան Վարժապէտեան աւակերտ:

րինած է նաև գաղիերէն լեզուաւ ծրագիր Պատմութեան Հայոց, քարզմանած է Ղեւոնդ Երիցու պամութիւնն. Շահնազարեան կարեւոր գումար մի Ազգին կտակեց, որով յես վախնանին հասառուեցաւ Ն. Շահնազարեան Վարժարանն, յորմէ բազում ուսեալ աշակերտներ ելած են.

Գրազիտուրիւն. — Հարցումն ոչ թէ հարցական ձեւ մի եւ նետեւաբար պատմական մի ընդունելու համար, այլ խօսմին ազդուուրեան համար կը գործածուի.

Նրամտուրիւնն այն կարողութիւնն է, որով իմացականութեան իրեն կը տեսնուին հասարակ մարդոց տեսածէն աւելի. Վերոգրեալ Օտեանի մասն նրամտուրեան օրինակ է:

ՀՅ

Խ Դ Մ Տ Ա Ն Ք

Երբ իւր որդւոց հետ՝ ոյց հանդերձն էր մաշկեակ՝
Մրջրկաց մէջէն կապարագոյն հերարձակ
Խուսէր կային Եհովային յերեսաց
Մութըն կոխեց, ու մըրոայլ մարդն էր հասած
Առ ստորոտով լերին մ'ի դաշտ լայնատարը՝
Ուր իւր խոնջեալ կինն ու որդիք ոգեսպառ
Ըսին իրեն. « Գետնախոջտի նընջենք հոդ »:
Կային անքուն խոկար լերանցն ի ստորոտ.
Եւ երբ վերցուց գըլուին յերկինս տըխրամած
Խաւարին մէջ տեսաւ աչք մի մէծաբաց՝
Որ անքըթիթ յինքըն նայէր ի մըթան,
Յահ և ի դոլ ըսաւ. « Շատ մօտ եմ իւրեան »:
Զարթոյց որդիքն ու կինն իւր խոնջ և վաստակ
Միջոցին մէջ ըսկսու փախչել գըֆընդակ,
Երեսուն օր քալեց՝ գիշեր երեսուն,
Դեղնած ու մունջ՝ քըստմնեալ յամէն շըշնջիւն

Գաղուագողի՝ չէր նայեր յետս՝ անհանգիստ
Սնդուլ՝ անքուն, մինչեւ հասաւ անդր ի նիստ
Ծովուցն երկրի զոր կոչեցին ապ' Ասուր :
« Կանգ առնունք հոս, ըսաւ, այս վայրն է ամուր,
Արդէն մօտած իսկ եմք ի ծագս աշխարհի »:
Եւ մինչ նըստէր՝ տեսաւ երկնից մէջ յալրընի
Աչքն ի նոյն տեղ՝ հորիզոնին անդ ի խորս,
Սասանեցաւ սեւ սարսափման ինկած որս .
« Ծածկեցէք զիս »: գոչեց, և մատն ի րերան
Դէա կան որդիք վայրագ հաւում գողդովման .
Կային ըսաւ առ Յարէլ հայրն այն ազգաց,
Որք յանապատըս թափառին վրանայած,
« Դու այս կողմէն պարզէ վրանիդ ըզկըտաւ »:
Եւ ծածանուտ պարիսպն անդէն բարձրացաւ:
Երբ պընդեցին զայն կըշողոցով կապարեայ՝
« Ալ չե՞ս տեսներ » հարցուց խարտեաշըն Աէլլա՝
Դուստրն իւր որդւոց քաղցրիկն իրրև զառաւօտ:
Բոսաւ կային « Աչքըն գարձեալ տեսնեմ հոդ »:
Յովբաղ անոնց հայրն՝ որք ընդ շէնուըն կ'անցնին
Փլշելով փող կամ դայիելով՝ ի թըմբկին՝
Գոչեց. « Կըրնամ կանգնել պարիսպ մ'ահագին »:
Շինեց պղընձի պատ մ'ու զկային դրաւ ետին :
Կային ըսաւ. « Այդ աչքըն մի՛շտ յիս նայի »:
Բնաւ Ենովս. « Աշտարակօք սոսկալի
Պէտք է կազմել մի շըրջապատ անմատոյց .
Շինեմք քաղաք միջնաբերդովն ի կառոյց .
Շինեմք քաղաք մի և ցանկենք զայն յետոյ »:
Յայնժամ թովքէլ հայրըն գարբնաց երկաթոյ
Կերտեց քաղաք գերմարդկային՝ վիթխարի,
Երբ կաշխատէր ինքն, իւր եղբարքն ի վայրի
Հալսածէին զորդիս Սեթայ ւ'Ենովքայ,

Եւ անցորդաց կը բլրի ին զաջս նոքա :
Երեկոյին ձըգելով նետ աստեղց դին .
Կըտաւ որմովք վրանին փոխան՝ կրանիդին
Մէն մի արձանը զօդեն պինդ հանգուցիւք ,
Քաղաքն այն թուէր քաղաք դժոխոց չարաշուք :
Բըրգանցն ի ստուեր մութըն պատէ զդաշտաց ծոց ,
Լեռնակուտակ է թանձրութիւնըն որմոց .
Դրոշմեն ի դրան . « Աստուծոյ՝ մուտքն է արգել » :
Երբ յանգ հանեն որմով պատելն ու ցանկել ,
Դրին զկային աշտարակի մ'ի կեդրոն .
Իսկ նա թաղծեալ կայր և գըմնեայ . « Հայր իմ , օն
Անհետացա՞ւ աշքն » . հարցուց հէքըն Սէլլա ,
Պատասխանեց կային « ո՛չ , միշտ հոն է նա » :
Յետոյ ըստաւ . կուզեմ բնակիլ ընդ հողով ,
Զերդ մենակեաց ոք՝ որ կապրի շիրմին քով ,
Ո՛չ տեսնեմ ինչ , ո՛չ տեսնըւիմ յումեքէ .
Փոս մը բացին . կային ըստաւ « Բարւոք է » :
Յետոյ իջաւ մենիկ ընդ մութ կամարաւ ,
Եւ երբ յըստուերս անդ ի յաթոռ իւր նըստաւ
Ու ծածկեցին նըկուզն վերայ իւր ճակտին ,
Դամբանին մէջ էր աչքըն , դէ՛ս ի կային

Թարգմ.

Վ. ՀԻԿՈ

ԵՒՐԵԿ ՎԱՐԴ. ԴՈՒՐԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Գրութեան բաղր ակնարկ առ թշուառս՝ սրբազն
նուազ մի է անբարբառ :



ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Գրագիտուրիւն . — Ոսանաւոր գրելու արուեստն կը կոչուի Տաղապահուրիւն :

Ոսանաւորն երկու տեսակ է . 1. Թուական . 2. Չափական . Առաջինն վանկերու բուով կը կազմուի , իսկ եւրեղորդն վանկերու եւկարութեամբ կամ սպորեամբ :

Հայերէն ոսանաւորներն չորսն մինչեւ տասն եւ վեց վանկավ կը շինուին :

Յանց կ'րուի ոսանաւորի այլ եւ այլ տողերու նմանաձայն վերջաւորութիւնն :

Հին եւ նոր ազգաց մեծ եւրեղորդ անյանգ կամ մեծավեց տաղաչափուրիւնն զործածած են , ինչպէս նաև մեր նախնիք ի կիր արկած են զայն Շարականց մէջ :

Ճողի յանգ կ'րուի այն յանցն , որ եւկու կամ աւելի ամբողջ վանկերով է , ինչպէս ի վեր անդր սացել , ցանկել , ենովայա , նոյն եւալին :

Դաշնակուրիւնն է ձայներու հանելի եւ դիւրին յաջորդութիւնն որոյ յարմարութիւնն ականչի ախորդ կուզալ . Եւ երեք են . 1. Դաշնակուրիւն բանից . 2. Դաշնակուրիւն բանից . 3. Դաշնակուրիւն նմանաձայն . Ներդաշնական բաներու բներութիւնն է դաշնակուրիւն բանից . նմասին պանանչելուն համեմատ իւրամէ զայն խօսերն պէտք է իւրաու յաջորդեն , եւ մէկ մէկու նիս կապուած ըլլան . Այս է դաշնակուրիւն բանից . Բանից դաշնակուրիւնն իր պահանջէ նախադասութեանց եւ պարերութեանց լաւագոյն շարականց թիւնն :

Պարերութիւնն է իմասներն փոխանակ զայն զայն խօսերով բացատելու , միայն մէկի վերածել , եւ այսու ներդաշնականու ամբողջութիւնն մի ձեւացնել :

Պարերութիւնն երկու մասերէ կը բազկանայ , որք են Անդամ եւ հատաւ :

Անդամը նախադասութիւնն մ'է , հատածն անդամին մէկ մասըն է .

Նմանաձայն դաշնակուրիւնն է ձայնից այնպիսի դասաւորութիւն՝ որ նիւգ կը բացատեն խօսեն . Զորօդիմակ , վերի եւրեղուածին մէջ Սասանեցաւ սեւ սարսափիւն ինկած որւ :

Բառք. — Մաշկեակ , (փէօսէքի) կապարագոյն , կապարի գոյնով . — Հերարձակ , մազեր ձգած . — Մուալ , մուր . — Խրբնի , մթին . — Հաւ , մեծ հայր . — Վրանայած , վրանով պրտինով . — Կողոց , ծանրացնելու հիւր . — Փշել , փող զարնել . — Դափել , բմբուկ զարնել . — Կերտել , դինել . — Բրել , փորել . — Կրանիս , քար . — Ցանգ հանել , աւարտել :



ԹՈՓՀՅՆԵԼԻ ՍՊԱՆԴԱՐՆՈՑՆ

Կէս օր է , շարժումն ըստ սովորութեան կը սկսի յետ միջօրէի աղօթից : Սպանդանոցին շրջակայ վանդակափակ գումոց մէջ բազմաթիւ եզինք փակուած կ'սպասեն փողոտուելու . մարմարեայ սալայատակն հազիւ մաքրուած է նախընթաց աւուր կոտորածոց արիւնէն . անպայիի կը նշմարուին դեռ ևս որմոց վըրայ կամ յատակի նրատաշ քարանց ծերպերուն մէջ , և արիւն կը հոտք ամէն կողմ : Մսավաճառք , ոմն երեք , ոմն չորս և ոմն աւելի եզն բերած , կը սպասեն իրենց կարգին : Սպանդանոցին պետն , այր անձնեայ և թիկնաւէս , կը մտնէ ներս իւր հետեւորդներով . ամենեքին արիւնուշտք , իւրաքանչիւր ոք կը սփածանի իւր համազգեստով , ցնցոտի տառատոկ մը կ'առնու զուսով և մաշկեայ կրծկալ մը կածէ զլանջաց համակ արիւնողող . նրան մը կը կապէ իւր կողն , կը մերկացընէ իւր ծղիներն , և ահա ամենեքին պատրաստ են ի գործ :

Ժամն է , շուներն ալ . — բայց միայն որք մենաշընորհն ունին այդ յարկին , — կուգան կը հաւաքուին տակաւ , զի կ'իմանան արիւն խմելու ժամն :

Վանդակափակի մը դուռն կը բացուի , ահա երեք եղինք , սպիտակամորթ , յաղթանդամ կենդանիք , գուրս կը հանուին անտի : Սպանդանոցին դրան մօտ հաստ չուան մը կը կապեն իւրաքանչիւրին եղջերաց . երեք հոգի կը քաշեն չուանն առաջ , երեք հոգի ալ կը մղեն կենդանին դէպի ներս : Դրան առջեւ անասունն արեան հոտ առնելով կ'ընդդիմանայ , կ'զգայ ամէն ինչ , կը ցնցէ գլուխն , բայց հնար չկայ , վերջապէս կը մտնէ : Եղջիւրներէն կապուած չուանն կ'անցունեն փողուման տեղին գետնին վրայ հաստատուած երկաթէ օղակէ մը . վեց հոգի , եթէ ոչ աւելի , կը քաշեն չուանն , եզին գլուխն կը մտենայ օղակին մինչեւ թիզ մը . կը սրկեն չուանն և յետոյ մին ոտքէն՝ միւսն՝ ձետէն բուռն հարկանելով կը լզգետնեն անասունն . այսպէս հետզհետէ միւսներն , գոմէշ մ'ալ կը բերեն , ծերունի կենդանի մը գոնէ տասըն և հինգ տարի լծոյ ներքեւ ծառայած , ստեւարափ , լերկամորք գարճած . զայն ալ կը զգետնեն չարաչար : Զորս անասունք տապաստ ինկած են գետնի վրայ անչարժ . լեզու միայն կը շարժեն , կը պաղատին : կը մօտենայ պետն անզողոք կերպարանօք , յեւանեաւոր շողզողուն գանակն ի ձեռին , խսկոյն օդնականաց մին կը գարձունէ՝ յողն կ'ածէ եզին ուլն , խըռչափողն գալարուելով կը ձգտի , միւս օդնականք բուռը մարմնով կը ծանրանան անասնոյն վրայ . պետն իւր ձախ ձեռամբ կը բռնէ դունչին և աջողի՝ Աստուծոյ անունն տալով , ուժգինս կը քսէ դանակն ուլին վրայ՝ այնպէս անտարբեր որպէս թէ կաղամբ մը կը տրէր իւր բունէն . սոսկալի պատառուածք մը կը բացուի ի յրբել ական , և արիւնն կարմիր ու թուխ դուրս կը ձայթքէ գունդագունդ , պետն ու օդնա-

կանք կը հեռանան անմիջապէս՝ տեղի տալով շանց որ
կը սկսին լափլփել արիւնն անյագաբար. կենդանին,
մարմինն համակ ի դու, կը չարչարուի չարատանջ. կը
ձգտի գլուխին վեր առնուլ, բայց ջլատուած է. կը
ցնցէ իւր ոռներն, աքացի հարուած մը կուտայ շան
որ արիւն ի գունչս ոռնալով պոռչտալով կը հեռանայ,
ու բոլրակ մը դառնալով կուգայ վերստին խոչափո-
ղին մօտ. Կացին ի ձեռին կը մօտենայ օգնականաց
մին, և կենդանուոյն՝ չև անշնչացեալ՝ կը խղրատէ պա-
րանոցն մինչեւ ցոլնայարն, քանի մը անզօր ցնցում-
ներ ես, և կ'անշնչանայ բոլրովին. Անդէն կը սկսի
յօշատաման գործողութիւնն.

Այսպէս մինչեւ երեկոյ, քառասուն, յիսուն և
աւելի կենդանիք կը փողոտուին. այսպէս ամէն օր,
միայն մէկ սպա՞գանոցի մէջ, Բայց ո՞վ կը խորհի ա-
ւելի արագ ահաս գործել մահն, դիւրագոյն ընել այս
բատ ինքեան անագորոյն փաղոտումն անասնոց:

Երեկոյ եղած է, սպանդանոցին մէջն ու դուրսն
կախուած է տասն հազար քաշէն աւելի միս, յիսու-
նէն աւելի գլուխ և նոյնչափ թռք ու փորոտիք։ Աղ-
քատ պառաւ մը միս կը մուրայ դրան առջեւ, ոչ ոք
կը նայի երեսն, կը կողկողի հէք կինն. ոչ ոք կ'ողոր-
մի նմա. գոնէ պատառ մը թռք՝ կթռտ ծնդացն ի
դարման. փորոտեաց կտոր մը գոնէ — Բայց ոչ ա-
պաքէն մերժուած է այդ յարկէն մարդկային ամէն
գոգագումն :

3. ԳՈՒՐԳԵՆ

ԸՆՏԻՐ ՄՏԱԾՄՈՒՆՔ

Բաւ չէ մարդոց բայ. պէսք է կրկնել, լիսոյ երեք-

կնել, մանկութիւնն զփտեր լսել, երիտասարդութիւնը չուզեր ունկնդիր լինել, ծերութիւնը չկրնար յուզի կապել:

Digitized by srujanika@gmail.com

Գրագիտուրիւն — Անուանափոխուրիւնն է անուան մը տեղ ուրիշ անուան մը դիմել. եւ զանազան ձեւերով կը լինի: — 1. Պատմառը արդեաց տեղ. ցորենի տեղ՝ Գելես: 2. Արդիւնքը պատմառին տեղ. Վրեմյանուրիւն ի ձեռին: 3. Պարունակողը պարունակելոց տեղ. Ժիշտանակ զինուոյ: 4. Հեղինակն նորագործին տեղ. Եղիշե՛ նորա զրին տեղ: 5. Վերացեալը բանձացեալն տեղ. ինչպէս վերոգրեալ Ընթիր մասմանց մէջ մանկութիւն, Երիտասարդուրիւն, ծերուրիւն փոխան բայլու մասուկ, Երիտասարդ, ծեր: 6. Թանձացեալը վերացեոյնց տեղ. Աւստիոյ դահնիանակ փոխանակ բայլու մասուկ, Երշաբեր Եշանակեալ իրին տեղ. Աւրկազայ ծիրանին, առի պունիք:

Βαυκf. — **διαψηηήβ**, εως αρχιεβ ρωφονικού. — **δικηγ**, δικηγ. — **Անձնեայ**, մեծ ու խոշոր. — **Թիկնաւես**, լայն կրթակով. — **Սփածանիկ**, ղենջակ կապել. — **Տառատոկ**, վերակու. — **Երան**, բռու. — **Ծղի**, բազուկ. — **Փողոսում**, Մորեել. — **Բուռն հարկանել**, բռնել. — **Զգեսնել**, զեխեր զարնել. — **Ստեւարափ**, բուրդը բափած. — **Լերկանոր**, մերկ, բուրդը բափած. — **Յեսանաոր**, յեսանով. — **Յողի ածկ**, դէպ ի ետեւ տանիկ. — **Դուեց**, ծնօս. — **Ի բրեկ ական**, ակրն-բարք մէջ. — **Խցատել**, խցել. — **Երիքացած**, հալսծ մաւած. — **Կողկողիկ**, ողբայ:

У. У. З. Г. У.

Մայրա ո՞վ Մայրա , որ երկնից լուսոյն
էիր ցոլացումն , օրե՛րով ի բուն ,

Անդունդք կալան քեզ, աղաղակեցին
Դժժողովք գուրս ոստեան, ըստեսաւ երկին
Եւ աստղունք զոր գու միրէիր այնքան,
Քու բարեկամներդ, այցելել չեկան:
Քեզ անհուն թակարդ ովկիանն ահեղ
Բոլորեց չորս դիեզ, կատղած ի քո գեղ,
Յաղածրի քո դէմք, գըլիսիդ այն վըսեմ,
Վերացած ճակտիդ, ովկիան դըմիսեմ,
Ծալ ծալ մազերուդ ու կուրծքիդ ի թինդ,
Ծաւի աչքերուդ, այն խոր նայուած քիդ
Որ այնքան փուշով ու այնքան սիրով
Խոնարհեցան յիս՝ ժըպիտս ածելով:
Մի՞ անոր համար ոտք ելան տարերք
Ու պատլուտեցան ծովուն այն ընդերք,
Փուքերն ու պարխուրց ոռնացին համայն
Ու ջուրին ներքեւ զլրդանին արթընցան:
Խորերն ելան վեր, վերէն ալ ամսլուպ
Պատեցան ըզքեւ ի մեծ մի ապշուպ,
Որ աղապատելով փարէին միայն
Զեփիւռին թեւերն ու այերց գուսան:
Եւ որ ծաղկըներ միշտ գու քաղէիր
Թեթեւ մատներով յայս փըզու երկիր:
Քու աչացդ առջեւ, Մայրա ո՛վ Մայրա,
Անէ՛ծք այն ծովուն, անէ՛ծք ջուրերուն
Անէ՛ծք այն ամսուն . . . այլ քեզի ողջոյն
Ողջոյն քեզ ամիս դու հոկտեմբերի,
Պատծառ ծագեցար գու ինձ այս տարի:

Պահէ՛ իւր արեւն , պահէ՛ մեղ Աստուած ,
Արժանի ըրէ՛ զայն քոյին շնորհաց . Յուրաքանչյան
Այն աղջիկ Քոյ է , Քոյ է իւր հոգւով ,
Ու կըրնայ Քեզի հայիլ անխռուով :
Ե՛ն Ե՛ն յաշխարհի աւօսի անապակ ,
Գարունք միշտ պայծառ , ու մըշտանըւագ
Մըրմունջք ու աղրիւրք ջուրց ականակիտ ,
Երկնապիշ ակնարկք համայն անքըթիթ ,
Ու լո՛յս երեսներ ու սիրոյ սդիք
Որոնց հըրձուանօք լի եղան երդիք
Սուրբ ծուխք ծլխանաց և կեանք անմըրուր ,
ի՛ առաքինութիւն՝ կըներո՞ւկ մըշտաբոյ :

Գ. Ա. ՕՏԵԱՆ

ԵՆՏԻՐ ՄՏԱԾՄՈՒՆՔ

Գրեթէ միւս զուրցուած բաներէն աւելի, զանոնք զուրցելու կերպը կ'ազդէ մարդուս. վասն զի ամէն մարդիկ իիչ շատ նոյն գաղափարներն ունին նոյն բանին վրայ՝ որ ամենուն սովորական է, բոլոր Տարբերութիւններ՝ բացառութեան կամ նոյն մէջն է:

Գրագիտուրին. — Եզրուաց մեջ երկու տեսակ ին խօսքություն կամ գրելու եղանակներն ։ Յատուկ եւ Զեւսացը ։

Յատուկ եղանակաւ որ եւ է բառ կամ մտածում կը յայտնենք առանց զայն զարդարելու:

Զեւսուր ուն խօսիմ կամ գրուածիմ վերայ նոր գաղափար-
եր կ'աւելցնէ եւ աւելի զարդարուն կ'ընէ զայն . Այս ձեւն ընդ-
հանուր եւ բնական է , ուստի երբ քսեմք դաշտն գեղածիծաղ է ,
տունն տիւր է ձեւաւոր ոնոյ օրինակներ են .

Չեւերն երկու տեսակ են . Մշածնամց ձեւեր , թառից ձեւեր :
Աղերսամբն այն ձեւն է , յորում բացատրութիւնը կը գործած-
ուի օրինութեան կամ աղաչանաց համար :

Անեծին է ատելի առարկայի մի վերայ չարի մարքել .
Բառք . — Ռւնել , տիրել . — Աղածրի , մատյառ . — Դրժ-
յիւմ , անզգամ . — Ծալ ծալ , ոլրած . — Ծալի , կապոյն . —
Պարխուրց , աւեան նիւսիսային ծով . — Դրդամի , յորձանի (կիր-
սապ) . — Ապշոս , տիոր . — Աղապատի , գուրգուրալ . — Ա-
ւոսի , առաւօսի սկիզբը . — Կներուկ , ազինի խունկ (իրւնենիւկ) :



ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՍԿՂԲՈՒՆՔԻ

Ամեն կին որ աշխատութեան առաւելութիւնն ու
յարգը կը ճանչէ , որ կուզէ աշխատիւ անկեղծօրէն ,
կը գտնայ անտարակոյս գործելու եղանակ մի իւր
ընկերական վիճակին , բնակած երկրին սովորութեանց ,
բարուց և մանաւանդ յառաջդիմութեան աստիճա-
նին համաձայն : Որչափ ժողովուրդ մը յառաջացած-
ինի , աշխատելու ասպարէզը նոյնչափ կընդարձակի
կանանց համար , և այնչափ գործելու յօժարութիւ-
նը , բարձրանալու և ազատ լինելու կամքը կը զօրա-
նայ : Բայց հայ կանայք ունի՞ն արդեօք յօժարու-
թիւն գործելու :

Այս հարցման ըստ կարելոյն պատասխանելու հա-
մար գուցէ հարկ կը լինի ակնարկ մը նետել հայ ի-
գուկան սեռին վրայ :

Քանի որ մանրամասնութեանց մէջ չպիտի մտնամ ,
վերածենք զկանայս երեք գասու միայն , և սկսինք
յետնագոյնէն :

Ահա՝ զրկանքէ մաշած , կեանքէն յուսահատած
աղքատ կին մը որ նպատակ մի ունի միայն , այն է
անօթութենէ չմեռնիլ . Անրան էակի փոխուած գը-
րեթէ , պատուասիրութեան գաղափարէ զուրկ , կը
փնտուէ որ և է աշխատութիւն որ իրեն հաց կը մատա-
կարարէ : Օրերն օրերու կը յաջորդեն , տարիները
տարիներու , և սակայն նորա թշուառ վիճակը նոյնը
կը մնայ , գերեզմանին մէջ միայն կը գտնայ սփոփանք :
Այդ խեղմ գասը մարդկութեան ողորմելի անասուն-
ներն են . սոքա կ'աշխատին ուրեմն բնազդմամբ՝ կե-
նաց պահապանութեան համար , ոչ թէ աշխատութեան
սկզբան ծառայելու մտօք :

Անցնինք երկրորդ գասուն , ոչ նուազ աղքատ ,
սակայն մեծամտութեան ախտէն ըմբռնեալ , որ ըսեւէ
է թշուառագոյն քան զվերոյիշեան գաս : Կը հիւծի
թագուն միջոցաւ քօղարկելու ինչ որ յայտնի է այլոց :
Եթէ մէկը նոյն իսկ ընտանեկան յարկին ներքեւ գոր-
ծելու եղանակ մի առաջարկէ , յանդուգն մի է նա
որ ընտանեկան պատիւը ոտնակոխ կ'ընէ : Կոփւ գը-
ժընեայ ընդ մէջ աղքատութեան և գոռողութեան .
բացարձակ թշնամանք ընդդէմ աշխատութեան :

Քննենք արդ երրորդ գաս մի կանանց մեծափար-
քամ : Ահա կին մի որուն օրերը հարստութեանց և
ձոխութեանց մէջ կը սահին հեղաբար : Նորածեւու-
թեանց ախտէն ըմբռնեալ փառք կը համարի ուրիշ-
ները գերազանցել իւր չքեղ զգեստներովն ու այլ և
այլ պահուճանքներով : Իւր նստարանին վրայ բազ-
մած կ'արհամարհէ ինչ որ իւր տնտեսական և մայ-

րական պաշտօնին կը վերաբերի , և կը յանձնէ զայդ օտար ձեռաց , մայր մի որ զանց կ'առնէ ուղղել իւր որդւոյն զգացումները կը հարցնեմ արդ թէ ի՞նչ է այդ սիգապանծ կնոջ նպատակն աշխարհիս վերայ : Չի՞ հանդիսանար նա արդեօք իբրեւ աւելորդ և վնասակար զարդ ընկերութեան : Բանաւոր էակ մի , կին մի որ միայն աչաց հաճոյքը գոհացնելով հաճութիւն զգալու չափ կը նուաստանայ

Ուստի յետնագոյն կարգի կինը կ'աշխատի նիւթական պէտք մի գոհացնելու մտօք , առանց աշխատութեան սկզբունքն ըմբռնելու , իսկ միւս երկու կարգի կանայք աշխատութիւնը կ'արհամարհեն իւր ամենայն ձեւերով , կ'անգոսնեն կնոջ պաշտօնը , պաշտօն սիրոյ , անձնուիրութեան , մեծագործութեանց և զոհից : Արդարեւ ո՞վ առաւել քան զմայր գիտէ սիրել . ո՞վ առաւել քան զիին գիտէ տոկալ և լուել : Մայր մի իւր որդեկին կեանքն աղատելու համար մահուան կը դիմագրաւէ . կին մի իւր ընտանեաց թշուառ կացութիւնն սփոխելու համար չուրջը յուսոյ նշոյներ կը սփոէ , յուսահատութիւնը . իւր անձին համար պահելով միայն : կինը նախախնամութիւնն է ընտանեկան յարկին , կինը մայր է : Ուր որ սէր կայ , հոն զոհ կայ , ուր որ զոհ կայ , հոն անձնուիրութիւն կայ , ուր որ անձնուիրութիւն , հոն աշխատութիւն , հոն խաղաղութիւն , հոն անդորր :

Ի՞շո՞ւ այսօր ուրեմն կինն իբրեւ անձնասէր և պահումասէր էակ մի կը համարուի

Նախնի ժամանակները երբ կինը իւր բնական պարզութեան մէջ էր և ընտանեկան երջանկութեան գաղափարաւ լի , երբ գիտէր սիրել և գործել , նա բարյապէս մեծ էր , զի կին էր և մայր ճշմարտապէս :

Ի՞նչ յաջորդեց այն վիճակին : Ընկերութիւնը յառաջ քայլելով , ընկերական յարաբերութիւններն և մօլորդութեան պատճառներն աւելնալով , կինը հրաժարեցաւ իւր նախնի , համեստ և առաքինի կեանքէն , նոր ձկտումներ ունեցաւ , նոր վառքեր որոնեց , ուգեց ընկերութեան թագուհին լինել , գահակալել , իշխել : Պահանակէր եղաւ գրաւելու համար , ունայնամէր՝ իշխելու համար : Կինը այն վայրկեանէն ոչ եւս ընտանեկան յարկին նախախնամութիւնն էր . իւր վիճակը փոխուեցաւ . փոթորկալից աշխարհ մի բացուեցաւ իւր առջեւ , և երբ կրթեալ սիրտ մի , զարգացեալ միտք մի միայն կրնային փրկել զնա , թողուցին որ նորա զգացումները խանգարին :

Կինը խարդախ , խորամանգ , նենդաւոր , կեղծաւոր է , կ'ըսեն : Կը կրկնեմ , կինը ընկերութեան զոհն է , և իւր ամենափոքրիկ յանցանքը ամենայն խստութեամբ կը դատուի միտ : Նա գիտէ որ արք զօրաւոր են գիտութեամբ , օրինօք և նիւթական ոյժով , կ'զգայ որ սոյն առաւելութիւնները կը պակսին իրմէ , և յայնժամ տարբեր զօրութեամբ կը ջանայ մրցիլ այսինքն անձնական շնորհիւք , արուեստիւ , խարդախութեամբ և ստութեամբ : Ուր չ'կայ ներդաշնակութիւն զանազան բարյական ոյժերուն մէջ որոնք մարդկային ամբողջութիւնը կը կազմեն , հոն այլայլութիւն կը պատճառի : Թող կինը հաւասար լոյս վայելէ արանց հետ , թող բարձրագոյն ուսմանց գուռները բացուին իւր առջեւ , թող ուսմամբ զօրանայ , իւր իրաւունքը ճանչնայ , ստանայ , իւր հաւասարակշութիւնը գտնայ ընկերական ծանրութեան մէջ , ի՞նչ պէտք յայնժամ սուտի և արուեստի . երբ չար պատճառ մի կը վերնայ , անոր տիսուր հետեւանքները չեն գոյանար :

Զոհերը գատապարտեալները կանայք են . մենք ,
կանայքս , ուրեմն աշխատինք մեր գրկութեան հա-
մար . փրկարար միջոցներն են լոյս և աշխատութիւն :
Չանանք ուրեմն հաստատուն և վճիտ լոյսով մեր մըտ-
քերը պայծառացնելու . ջանանք մեր սրտերը կրթե-
լու և սէրն ազգելու բարոյն և մեծին : Երբ կնոջ
սիրտն ու միտքն զարգանան , կինը սէր է , լոյս և զօ-
րութիւն : Յայնժամ կ'զգայ թէ ինքն է իւր ամբող-
ջութեամբը , կը խորհի վատահութեամբ , կ'ընտրէ իւր
աշխատութեան եղանակը . կ'ընդարձակէ իւր գոր-
ծողութեան ասպարէզը , նոր աշխարհ մի կը բացուի
իրեն համար ուր՝ հետզհետէ յառաջանալով կը հասնի
մինչեւ ցկէտ հաւասարութեան , և կը լինի մարդկու-
թեան թագուհին , ինչպէս այրը թագաւորն է :

(Արեւելեան Մամուկ)

ՍՐԲՈՒՆԻ ՏԻՒՍԱԲ

ՔԵՐԹՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏ

Թէ մեր մլուաց խորհուրդներ են լրսաւոր կամ մըրին ,
Բացատրութիւնք մեր կ'ըլլան կամ շատ յատակ կամ խոր-
քին ,
Քաջ լրսաւոր յայտնուի , երբ ըմբռնենք բան մը լաւ ,
Չայն պատմելու կը գտնենք յարմար բառեր շատ դիւրաւ :
Թագրմ .

Հ. Գ. Մ.

(Պուալոյ)

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենազգութիւն . — Սրբուհի Տիւսաբ , ծնեալ Վահան-
եան , Դուստ Տիկին նազլը Վահանեանի , որ Օրբագիւղի Հը-

ռիփսիմեանց Օրիորդաց վարժարանն հաստատած է , առակերտած
է ծանօթ բանասեղծ Մկրտիչ Պէտիկրաւեանի . Նշանաւոր գրա-
գիտուհի մ'է Տիկին Տիւսաբ իւր վիպասանական գործերով ,
Մայտան է իւր առաջին գործն , որ այնքան աղմուկ յարոյց , եւ
հնարինց բանակուուի ու ընկերաբանական տեսութեանց առիր
բնայեց . միւս գործերն են , Միւանոյց , Արախիա :

Գրագիտութիւն . — Աստիճանեալ կարգն կամ յառաջառու-
ութիւնն այն է , յորում բառերն դրուած են բա առաւել կամ
նուազ օրութեան . Խնչակն , ուր որ սէր կայ , հոն զոհ կայ ,
ուր որ զոհ կայ , հոն անձնութրութիւն կայ :

Բառք . — Մեծափարբամ , շատ հարուս :

ԱՐՏՕՍՐ ԵՒ ՍՓՈՓԱՆՔ

Երկին , ծիծալ չունին բընաւ իշըրթունա .

Նոցա համար աղոտացաւ արխւոյն լոյս .

Գլուխ ի խոնարհ գնան ըզկենաց ճանապարհ ,

Անոք և չըւառ :

Յաւիտենից մուրացիկներն են , աւա՛ղ ,

Եւ նայեացներ ունին խորին և նըւաղ .

Փուշերու մէջ գաժան կոխեն արիւնոտ

Այդ քայլեր կըթու :

Մըթին երեսն և եթ տեսան աշխարհի ,

Եւ որպէս բուն միայն գիշերըն ունի ,

Եւ տրտութիւն բացաւ իւր գիրկն անհամբոյր

Աղքատին աըխուր :

Եւ սակայն Տէր չը մոռացաւ բընաւին

Իւր արարածն , և են մարդեր որ ցաւին

Անվերջ ողբոց և հեծութեանց մատնըւած

Եղուկ էակաց :

Ողորմութիւն տըւաւ իրրեւ սպեղանի Յ Յմամելովից
Հիքին վլրաց, և թեւերով հուանի,
Սպիտակագեղ թռանի պայծառ երկնից տակ

Գըթութեան հրեշտակ:

Մըրքիէն յետոյ ժպտուն եթերն է գթութիւն
Եւ Աստուծոյ անձառ ակն է յար արթուն
Եղիկեաց վրայ որք, թէպէա և կարեվէր,
Հային մերթ ի վեր:

Թշուառութիւն մեծ հիւանդն է մահճին մէջ,
Ուր ցաւք դժնեայ տանջեն լզնա անջնդմէջ.
Եւ գութ քայլէ յուշիկ քայլով նըմա մօտ,
Քզդոյշ, պատկառոտ:

Եւ մինչ անցնին ամենեքին շառաչմամբ
Մըրայլ կենաց ընդ փոթորիկս և ընդ ամպ,
Անդընդոց եզր թեւաբաց և կանգուն
Խորհի գըթութիւն:

(Յուզման ժամեր)

Յ. Աւթեան

Գեղեցիկ ԲԱՆՔ

Ամենէն երջանիկն նա է, որ պատհառ կը լինի այ-
լոց բազմաց երջանկութեան:

————— Ճ Շ Յ Ճ —————

Մ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ

Բառք. — Կրոս, սահող, տկար. — Անհամբոյր, անտ-
մելի: — Ամընդմէշ, անդադար:

————— Հ Ա Յ Հ Հ Ա Յ —————

Զ Ի Ւ Ծ Ծ Ա Ղ Ի Կ

Գիտէ՞ք էնքլըպէրկի հովիտն, հեռի չէ Ալթոր-
ֆէ անդ կառուցուած է Նօտր-Տամ Տըզէռմիթի մա-
տուռն:

Եթէ գիտէք դուք էնքլըպէրկի հովիտն, անշուշտ
գիտէք նաև այն խրճիթ՝ ուր մեռաւ խարտիշագեղն
կրէչն:

Այն խրճիթ՝ ուր մեռաւ խարտիշագեղն կրէչն՝
շնուռած է զմիջոցաւ դարեւանդի նուրբ դալարեաց
վերայ, անտառի մը հովանույն տակ, ապառաժնե-
րէ մի քանի մատնաշափ հեռի:

Էնդարձակ է անտառն և խորհրդաւոր, ժայռք
կը ձեւացնեն անդ քարայրներ և խութեր, ոյց վե-
րայ կը տեսնուի ջղուտ ոտիւք քարայրն անցքն իր-
բեւ թռչնոյ:

Այս ժայռից մէջ կայ գահաւանդ վիճ մի, ուր կը
խորասուզի հեղեղ մի ահագին շառաչմամբ,

Դուք լսած էք այդ շառաչիւնն, և զգացած էք ձեր
դալուկն, դուք որ գիտէք էնքլըպէրկի հովիտն:

Այսպէս ուրեմն մի կողմանէ ամէն ինչ որ բնու-
թիւնն ունի ահեղաշուք և վեհագոյն, միւս կողմանէ
ամէն ինչ որ մարդկութիւնն յառաջ կը բերէ յոյժ
պարզ և յոյժ անդորր, հովիտն էնքլըպէրկի և խրճի-
թլն կրէչնի: Չորեքտասանամեայ որբ խարտիշագեղն
կրէչն, իւր հանւոյն հետ կը բնակէր այս խրճիթն,
հնգետասանամեայ մեռաւ անդ:

Կրէչն միշտ եղած էր բարի, հեղահամբոյր և
պարկեշտ. բայց ո՞լ պիտի յիշէր իւր առաքինու-
թիւնները, նոյն իսկ հանին ոչ ինչ կը յիշէր այլ ես:

Հանին այնքան պառաւ էր, կը նմանէր ուրուականի մը որ կը շարժի կենաց մէջ :

Ահա այդ պատճառաւ աշխարհի վերայ ոչ ոք ողբաց զիարտիշագեղն կրէչէն :

Բայց ի ժամու յորում հէք աղջիկն հոգին կառանդէր, հրեշտակ մը ներկայացաւ անոր :

Գոգես հրեշտակաց գեղեցկագոյնն էր, նա լեռանց ձեան նման սպիտակ էր, ունէր սոկեռող լուսապըսակ մի և երփնագոյն շոգետեսակ թեւեր :

Արթնցուց զմատաղ օրիորդ՝ որ խորին հառաչ մի արձակելով բացաւ աչերն և ժամեցաւ :

Արգեօք վա՞րձք մ'էր, արգեօք վերջին փո՞րձ մ'էր :

Ահա ինչ որ ըսաւ գեղեցիկ հրեշտակն առ կրէչէն .

Քենէ բան մը պիտի ապրի, Մարմնոյդ մաքրագոյն մի մասը պիտի փոխուի ի ծաղիկ, Անցեալ առաքինութեանց ի վարձ Աստուած քեզ կը թողու ընտրութիւնն : Ո՞րն է այն ծաղիկ որ մտացդ ճշգրտագոյն պատկերն քեզ կը թուի լինել :

— Կուզե՞ս, աւելցուց հրեշտակն, որ մարմինդ չքնաղ կակաչ մը լինի :

— Աչ, պատասխանեց գեռահասակ աղջիկն, կակաչն չունի բոյր, գեղեցիկ է բայց չէ օգտակար :

— Հասկա շուշա՞ն

— Այն յոյժ գերիվեր կը բարձրանայ ուրիշ ծաղիկներէ, գեղեցիկ է, այլ չէ համեստ :

— Վա՞րդ մի :

— Փուշեր ունի այն, կը խոցէ այն ձեռքն՝ որ կը մատչի զայն քաղելու, գեղեցիկ է, բայց չէ բարի :

— Եղիր ուրեմն մանիշակ մի, աւելցուց քաղցրութեամբ հրեշտակն, եղիր ուրեմն : Այդ ծաղիկ ունի

քաղցր բոյր, չբարձրանար իւր ընկերներէն վեր, չունի զէնք խոցելու այն ձեռքն՝ որ կը մատչի զայն քաղելու, օգտակար է, համեստ և բարի :

— Ո՛վ բարերար հրեշտակ, կրկնեց կրէչէն, չըսի՞ր ինձ թէ քեզ թողուած է ընտրութիւնն :

— Անցուշտ :

— Օ՛ն ուրեմն, կ'ուզեմ որ իմ մահկանացու մասս լինի ձիւնածաղիկ :

— Զիւնածաղիկ, կրկնեց հրեշտակն զարմացեալ, կ'ուզե՞ս ապրիլ մինչ ամէն ինչ թառամեալ է, կ'ուզե՞ս ծաղկիլ մինչ համայն բնութիւն մեռեալ է :

— Պիտի ծանուցանեմ գարունն : Այնմ՝ որ իւր աչերն յիս խոնարհեցնէ, պիտի ժպակմ իբրեւ զյոյս :

Թարգմ.

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Առաքինութիւնը հոգույ առողջութիւնն է. առաքինութիւնի միւս երշանիկ կընեն զմարդիկ՝ որ ունին զայնս. իսկ ի լաւութիւն կը դարձնեն զանոնք, որ զայնս կը տեսնեն, թէպէս եւ չունին :

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Գրագիտութիւն. — Նշան կը կոչուին մեր զգացմանց կամ զաղափարաց արտաքին ցոյցերն :

Լեզուն մասնաւոր նեանեներու ամբողջութիւնն է, եւ երկու տեսակ է. 1. Բնական. 2. Արտեսական :

Բնական լեզուն է դիմաց շարժումք, բացագանչութիւններ, անյօդաւոր աղաղակներ :

Արուեստական լեզուն մարդկային համեմարոյ գործն է, եւ
կը պարունակէ մենենական պատկերներ կամ ձեւեր, խորհրդա-
նաւններ, եւ խօսքեր: Ինչպէս վերի գրուածքին մէջ՝ վարդը զե-
ղոցկութեան, շոշանը անմեղութեան, մամիշակը պարկեսու-
թեան խորհրդաւնաններ են:

մարդկային գործն է համարութ բաց ձեւ նմա

ուղարկութ առաջնական մաս է:

Վ Ե Ր Զ Ի Ն Վ Ա Ր Դ

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին վարդ,
Նա քեզ հանեց իւր կրծից,
ինձ պարգեւեց, վերջին վարդ:
Մանկութեան ոսկի ժամերն,
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ
Դու ես միայն, վերջին վարդ:
Գարնան օրերն անցել են
Տօթ ամառն է ինձ էրում, վասթիւթ
Միշտ սպասում եմ քու տեսքին նույնութ
Դուն ամառուան վերջին վարդ: ուն ունութ
երջանիկ կետնքիս օրերը
Յաւ են դարձել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք
Միտքս բերիր, վերջին վարդ:
Շատ չի տեել կը բացուի
Առաջիս սև գերեզման, վավագրադ
էս աշխարհից միայն քեզ առափայոր
Հետքս կ'առնում վերջին վարդ: նորմ
ք. թ.

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ Առաջականաց յ
Պէտք է պարագալից յարմարիլ գիտնալ:

ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՆ

Ամէն գիւղ՝ կայ մի անձն՝ որ չունի ընտանիք,
այլ որ բոլոր աշխարհի ընտանեաց կը վերաբերի, զոր
մարդիկ կը կոչեն իրեւ վկայ, իրեւ խորհրդական,
կամ իրեւ գործիչ քաղաքային կենաց ամենէն հան-
դիսաւոր գործառնութեանց մէջ: առանց որոյ չիք
ծնունդ և մահ, որ զմարդ կ'առնու ի գրկաց մօր և
կ'ամփոփէ լըլրմի, որ կօրհնէ կամ կը նուիրագործէ
որբանն, ամուսնական անկողինն, մահիճքն մահու և
դագաղն: մարդ մի՝ զոր փոքրիկ մանկունք սովոր են
յարգել, սիրել, երկիւղիւ հանդերձ, զոր անծա-
նօթք իսկ հայր իմ կը կոչեն, որոյ առջեւ քրիստոն-
եայք կը յայտնեն իրենց ներքին խոստովանութիւնքն
և ամենաթաքուն արցունքները: մարդ մի որ սիր-
փիչ է իւր պաշտամամբ հոգւոյ և մարմնոյ ամէն տա-
ռապանաց, հարսութեան և աղքատութեան անհրա-
ժեշտ միջնորդ է, որոյ դուռն կը բազիսեն մի զմիոյ
կնի հարուստն և աղքատն: հարուստն որպէս զի կոն
թափէ իւր ողորմութիւնն, և աղքատն՝ որպէս զի
ընդունի զայն առանց կարմրելու: Մարդ մի որ չու-
նենալով երբէք որ և է ընկերական աստիճան, հաւա-
սարապէս կը պատկանի ամէն դասուց: ստորին դա-
սերուն կը պատկանի աղքատիկ կեանքով և յաճախ
խոնարհ ծննդեամբ, և բարձրագոյն դասերուն՝ իւր

Դաստիարակութեամբ, գիտութեամբ և զգացմանց բարձրութեամբ զորս մարդասիրական կրօնք մի կը ներշնչէ և կը հրամայէ . վերջապէս մարդ մի որ ամէն բան ըսելու իրաւունք ունի և որոյ խօսքն բարձրէն կուգայ սրտերու վրայ աստուածային պաշտաման մի հեղինակութեամբ : Քրիստոնէութիւնն երկու եղանակաւ գրուած աստուածային փիլիսոփայութիւն մ'է , իրրեւ պատմութիւն՝ Յիսուսի մահուան և կենաց մէջ , իրրեւ պատուիրանք՝ նորա աշխարհ բերած վեմ ուսմանց մէջ . քրիստոնէութեան այս երկու բառերն պատուիրան և օրինակ միացեալ են Նոր Կտակարանին կամ Աւետարանին մէջ : Գեղջերէցն պարտաւոր է զայն ի ճեռին ունենալ , միշտ աչացը տակ , սրտին մէջ յաւէտ : Բարի քահանայ մի այս աստուածային գրոց կենդանի մեկնութիւն է :

Այս գրքին ամէն մի խորհրդաւոր բանն կը պատասխանէ ճշդիւ նորա յուզած գաղափարին . և կը բովանդակէ գործնական և ընկերական իմաստ մի , որ կը լրսաւորէ և կը կենդանացնէ մարդուն ընթացքը : Չիք բարոյական և քաղաքական ճշմարտութիւն որ չը գտնուի Աւետարանի մէկ տան մէջ իրրեւ ի սերման . արդի բոլոր իմաստասիրութիւնք մեկնած են անոնցմէ մին և յետոյ մոռցած զայն . մարդասիրութիւնն ծնած է իւր առաջին և միակ պատուիրանքէն , այն է գթութենէ , նա ստիպած է զմեզ ճանաչել մեր հաւասարութիւն ու եղբայրութիւն Աստուծոյ առջեւ , և աստի՛ ծնած է քաղաքական հաւասարութիւնն : Օրէնքներն մեղմացած են , վայրի սովորոյթք ջնջուած են , չլթայք խորտակուած են , կինն վերստին ստացած է այր մարդուն սրտին մէջ յարգանք : Ցորչափ իւր բանն հնչեց դարուց մէջ , նա տապալեց մոլորու-

թիւն և բռնութիւն , և կրնամք ըսել թէ ամբողջ այժմու աշխարհն իւր օրէնքներով , բարքերով , հաստատութեամբք , ակնկալեօք է աւետարանական բանըն առաւել կամ նուազ մարմնաւորեալ արդի քաղաքակրթութեան մէջ

Երիցուն մնացեալ կեանքն պէտք է անցնի սեղանին առջեւ , տղայոց մէջ , որոց կը սորվեցնէ քրիստոնէականն թոթովել , բարձրագոյն իմաստասիրութեան այդ ժողովրդական օրինագիրքն , աստուածային իմաստութեան այդ այրբենարանն , մինչ միւնոյն ժամանակ լուրջ ուսումնասիրութիւններ կ'ընէ դրոց մէջ , որք առանձնակեցին մեսեալ ընկերութիւն են , երեկոյին երբ ժամակոչն կ'առնու եկեղեցւոյ բանիքն , երբ հրեշտակի տեառն զանգակը կը հնչէ գիւղին զանգակատան մէջ , այնուհետեւ կը տեսնեմք ժողովրդապետն ժամագիրք ի ճեռին , մերթ իւր մրգաստանին խնձորենեաց ներքեւ , մերթ լերան բարձր ուղիներուն մէջ կը ծծէ դաշտերու քաղցր և սուրբ օդն , մերթ կանգ կ'առնու կարգալու համար նուիրական բանաստեղծութեանց մի տունն , մերթ կը դիտէ երկինքն և հովտին հորիզոնն , և վերստին կ'իջնէ յամրընթաց առ բնութիւն և առ նորա հեղինակն նուիրեալ սըրբազան և հոգեզուարձ հայեցողութեամբ :

Ահա այս է նորա կեանք և հաճոյք . իւր հերք կ'սպիտականան , իւր ձեռք կը դողման սկիհը վերցունելով . իւր նուազեալ ձայնն կը կորնչի սրբարանին մէջ , այլ դեռ ևս կը հնչէ իւր ժողովրդեան մէջ . կը մեռնի , անանուն քար մի կը ցուցնէ իւր տեղն գերեզմանատան մէջ իւր եկեղեցւոյ դրան մօտ . ահա կեանք մի սահեցեալ , ահա մարդ մի յաւէտ մոռացեալ . Այլ այս մարդն գնաց հանգչլ ի յաւիտենականութիւն ,

ուր հոգի մի կ'ապրէր յառաջագոյն և նա աստի կենաց մէջ գործեց լաւագոյնն . նա շարունակեց յաւիտենական հրամանն , օղակ եղաւ հաւատոյ և առաքինութեան անհուն չվթային և թողուց ապագայ սերնդոյ՝ հաւատք մի , օրէնք մի , Աստուած մի :

ԱՄԱՐԴԻՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Նոցա՛ որ ի շահ կրօնից կը բուխն Երկնիլ նոր զաղափարներէ՝ կրնայ տրուիլ Ակօրէի պատախանը . « Ով որ ունի զիտուքիւն եւ արուես՝ ունի կրօնի . ով որ չունի այս Երկուքը՝ անպիսւոյն կը մարքիմ կրօնի : »

Ա . Մ . ԳԱՐԵԳԻՆՅԱՆ



ԾԱՆՈՑՈՒԹԻՒՆ

Բառք . — Մի զմիոյ կեի , յաշորդարար :



ԵՐԿՈՒԻ ԲԱՆԱՍՏԵՎ

Քաղցրախօս՝ Պլուկ՝ քու անուշ լեզուն
Քնարըդ ներդաշնակ , հոգիդ ըզդայուն —

Աշխարհ գրաւեցին , գափինեղարդ գլխով
Դու ժուռ ես զայի մարդկանց մէջ չքով :
Քեզ սիրեց աշխարհ — սիրեց սերտ սիրով ,
Արահետ ուղիւր փռուց վարդերով .
Համբաւըդ հեռու աշխարհներ հասցուց ,
Քեզ արձանացուց գիւցազանց գասուց ,
Ու գեռ քո հոգին չէր ելեր մարմնից՝
Նա քեզ արձաններ կանգնեց մետաղից .
Քեզ սիրեց աշխարհ և սիրեց — իրօք
Զի անոյշ լեզուէդ չի լսեց վատ խօսք .
Լարերիդ երբէք չի տուիր գագար ,
Երբոր գովելու ունէիր պատճառ .
Բայց երբոր Բասրել պէտք լինէր չարին՝
Քընարըդ իսկոյն կախվում էր պատին .
Քու ասպարէզն էր գինառատ խնջոյք ,
Քեզ պատում էին կանանց , կուսից հոյլք .
Վարդ էր տեսածըդ՝ վարդ էիր երգում , —
Փըշից , տառասկից միշտ հեռի փախչում . . .

* *

Այլ էր վիճակը մի այլ պըւետին ,
Անհաշտ թընամի կարծած ամենին ,
Որին ըսկըսած փոքրից մինչի մեծ
Մարդկութեան ցեղի անուանեցին ցեց :
Դա՛ռն էր վիճակը , դա՛ռն էր կոչումը
Այդ տարաբաղդին . դրաւմ՝ ո՛չ տունը
Ունէր նա հանդիստ . ծընընդեան օրից
Սիրոյ մի նըշան չի տեսաւ մինից :
Լեզուն — մահաթոյն ասացին մարդիկ ,
Ճարտար խօսուածքը — չարութեան գործիք

Եւ այն հանձարը , որ նորա բաժին
Տուաւ ի վերուսա — մարդիկ ջանք արին
Թաղել ցեխի մէջ իրանց վատ կենաց ,
Որի միջ ինքեանք էին թաթախուած :
Բայց նա միշտ հըսպարտ՝ մընաց հաստատուն ,
Հանձարն էր նորա միակ ձեռնածուն ,
Անդողդոջ ոտքով անցաւ այս աշխարհ ,
Հոգին անվրդով , ճակատը պայծառ .
Եւ մինչև վերջին բոպէն իր կենաց
Սըրտից չի հանեց հառաջանք , ո՛չ լաց :
Բայց երբոր նորա անշնչացած մարմին
Զազրելի սողնոց ելաւ լոկ բաժին ,
Եւ երբ շատ դարեր գընացին , անցան , —
Լո՛կ այն ժամանակ մարդիկ իմացան
Այն տղնիւ սէրը սըրտի մէջ փակած ,
Որ կոյր ոչքերուն երբէ՛ք չերեւաց :
Իմացան , որ կար նաև այնպէ՛ս սէր
Որ հաստ փարարով ծաղրի պատած էր ,
Եւ քարկոծ արին այն խեղճ բըժիշկը ,
Որ ցաւով՝ նոցա բըժբշկեց վերքը :

Ո. Գ. Պ.

ԸՆՏԻՐ ՄՏԱԾՄՈՒՆՔ

Իմաստունն անձին կը վերադրէ իւր թերութեանց
պատճառն , անմիտն՝ այլոց :



ՇԱՆՕԹՈՒԹԻՒՆ . — Պուէս , բանասեղծ . — Ժուռ զալ , պտտիլ . — Արակէս , ուղիղ նանապարհ . — Բաւրել , մեղադել , վար զարել . — Զագրելի , գէւ . — Փարար , կապոց :

— ՀՅՈՒՅՈՒ —

ՀԱՅԻ ԵՒ ԴԱՒՍՏԻ

Միջերկրականի կղզեաց միոյն մէջ հայր և աղջիկ
մէտագալար նարնջենրներէ և կիտրոնիներէ շրջապատ-
եալ և չափաւոր ու գոհ սակաւապէտ դրից մէջ
դրեթէ անապատի մը մէջ կ'ասլրէին : Ընտանեկան
մահք , սիրելեաց անբուժելի հիւանդութիւնք , ազ-
գականաց և բարեկամաց ստացուածոց ի հրդեհից՝
ի սնանկութեանց վերահաս կորուստք , բաժանմունք՝
վէճք՝ բանակութք և թշնամական արարք ազգայնոց
մէջ , այնպիսի ձանձրութիւն և սրտնեղութիւն պատ-
ճառած էին այս հօր՝ որ առ ժամանակ մի իրենց հայ-
րենի քաղաքէն և տունէն հեռանալու պէտքն զգաց ,
նաև իւր առողջութեան համար . բայց տեսաւ զաւա-
կը որ չէր ուղեր և չէր կրնար բաժնուիլ իրմէ , ուս-
տի միասին ձանապարհորդութիւն մը՝ առժամանակ-
եաց մի քանի ամսուան համար որոշուած՝ բաղդին
բերմամբ մի քանի տարիներու յանգեցաւ :

Թէպէտ միջերկրականի մէջ՝ բայց իրենց կղզին աշ-
խարհիս ամենէն հեռաւորն էր . Սուրբ Հեղինէին նաև
աւելի , տասն և հինգ օրն անդամ մը միայն հաղոր-
դակցութիւն ունէին ցամաքի և քաղաքականացեալ

աշխարհին հետ . միւնոյն օրը կը հասնէին գրեթէ երկու շոգենաւոք հիւսիսէ և հարաւէ , ի՞նչ ուրախութիւն էր երբ հեռաւոր սիրելեաց նամակաց և օրագրոց ծրարք այդ համաւոր աքսորելոց տունը կը մտնէին և կը բացուէին , և ի՞նչպէս անհամբեր սպասողն կը քանդէր այդ ծրարները , և հոն իւր երեսին վրայ ուրախ ծիծաղ , զուարթութիւն և երբեմն նաև տխուր արտասուք կը հոսէին և հարսանիքն սուգի կը փոխուէր : Հայրը զաւկին ուրախութեամբն կ'ուրախանար եւ տիրութեամբն կը տիրէր : Որովհետեւ միշտ իւր մատասնջութեանց գլխաւոր միասարկայն նաև այն էր որ այդ թարմ ծաղկի մի գուցէ օտար հոգի և երկնքի տակ խամրի . երբ տան շուրջը պատող պատշգամի վերայ մութըն ինկնելէն վերջը՝ իւր զաւակը կը տեսնէր պատառհաններէն որ կը շրջադայէր դուրսը՝ առանձին , ծանրաքայլ , մերթ աստեղազարդ երկինքը նայելով , մերթ ի հեռաւոր հորիզոնն աչքերն յառելով , յեցեալ վանդակապատին վրայ . միշտ մտածութիւն մը կուգար թէ երիտասարդութիւնն բնական էր որ երիտասարդութիւն վնտուէր . մաերմական բարեկամութեան համար ոչ միայն տարիքներու , դաստիարակութեանց յարմարութիւնն , այլ նաեւ բնաւորութեանց՝ գաղափարաց գիրկընդիմում մը պէտք էր : Եւ այդպիսի ոք չ'կար և գոյութեան յոյս չ'կար Օր մը Մայտայի Հեղինակը հարցուց իրեն թէ ի՞նչ կը կարդար . «Տիկին աը Սթալի Քորինը» պատասխանեց : «Նկարագրեալ կանանց ո՞րն է քեզ հաճելի , ո՞ւմ կուգէիր նմանիլ » . հարցուց : «Իիւսին է ինձ հաճելի » . Եղաւ պատասխանը : «Այդ բնութիւնը կը սիրեմ ես : » — Ոհ , ես Քօրին կուգէիր լինել . — ըստ

տիկինը : Այդ պէս են ահա մարդկային բնաւորութիւնք , ոմանք վարդի պէս վառ ի վառ կը փայլին կերպարանօք և կը հրապուրեն բուրմամբ , ոմանք մանուշակի պէս զիրենք կը ծածկեն և իրենց հոտին քաղցրութիւնը միայն կրնայ զիրենք յայտնել :

Մանուշակ ըսկնք , ծերութիւնը և վերջին տարիքը անցելոյն յիշատակօք և սիրելի յիշատակօք կապրի : Ծեր հայրը զաւկին մահուանէ վերջը կ'երթար այն հին տունը ուր աղջկան հետ տարիներով ապրեր էր , կ'իջնէր այն պարտէզը ուր նէ ուրախ զուարթ երբեմն վազվատեր էր , կը նայէր այն անկիւնը ուստի նէ մանուշակ քաղէր և փունջիկ մը շինելով կուտար հօրը գարունն աւետելով և հիմայ մանուշակ չ'կար . տխուր՝ կը յիշէր Շէքսրիրի այն տողերը յորում Օֆէլիա կըսէ . «Կուգէի քեզի մի քանի մանուշակ նաեւ տալ , բայց իմ հօրս մահուընին յետոյ նոքա բոլորն ալ թառամեալ էին » : Ծեր հայրը կը տեսնէր որ իւր աղջկան մահուանէն յետոյ մանուշակները ոչ միայն թառամեալ՝ այլ բոլորովին անհետացեալ էին . ո՛րչափի գոհ պիտի լինէր եթէ հատ մը միայն գտնէր այն մանուշակներէն որ իւր զաւկին քաղածներուն թոռներէն լինէին : Այսպէս խեղճ է մարդկային սրտին տկարութիւնը :

(Բարոյախօսուրիւն զԿանանց)

ՏԵՐԵՆՑ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆԵՔ

Հիւղակ , յորում կը փայլէր բոց բուխերկի , Յա՛րկ զոյր նըմդեն սիրէր լզծուխ տեսանել .

ԱՌ անունից իրք, ունի մասնակի հոգիս ու Ս պատրիարք
Հաղորդ մերուս հոգւոյ եւ ոյժ ի սիրել: ինչ զանո
աւ անու զանու, բանական մաս արագու ով և զանո
արագու մասու սահման և մաքան ով զանու ու զանու ով
1. ԱՄՈՐԴԻՆ

ԿԱՅՈՒԹՅՈՒՆ. — Յովսէկի Հեմանհան (Ծերենց) 1822 թուականին ծնած է ի կ. Պոլիս . իւր կրութիւն Վենետիկոյ Մըլիքարեանց բոլ առած է : Տաղանդաւոր վիպասան՝ որ գրած է Թորոս Լեռնի, Թեկողորոս Խշոնի, Երկունիք Թ. Դարու : Մեռաւ ի Թիմիզ 1888 մարտի 17 ին եւ բաղրեցաւ Խօջվանի գերեզմանատունը իւր ոսեր Թագուհիւոյ Շիրմին կից :

Եիւմանեանի դուստր Տիկին Թագուհի Մելիք — Ազարեանց,
իւր հօր գրական զործութեութեան անհաղորդ չգտնուեցաւ , յօրի-
նած է Դաւինան մի ասուս , զողորիկ նորավեպն ի լոյս ընծայեալ
Արեւելեան Մամլյ մէջ , նոյնապէս բարգմանած է Լքութի Բա-
րոյախօսութիւն զկանաց ընթիր գործն , որ հրատակուեցաւ
Բնուանդեան գրաւան կորուն :

ԱՐ ԱՆԻԿ

Ով Աննիկ , ոյր տեսքն անոյշ
Սիրտ ի գրախտ կը փոխարկէ՛
Դստրիկտ իմ , աչաց իմ լրյու ,
Հըեւտակ որ գաս երկինքէ՛ ,
Ծիծաղդ անմեղ՝ գիտնայիր
ի՞նչ ալարգեւ է քո մօրկան ,

Ու աչկունքըդ լուսալիր
ի՞նչ կեանք, ի՞նչ խանդ նըմա տան :
Աննիկ ,
Օրհնեա՛լ ըլլայ կրկին
Որ ինձ տուաւ գանձդ անգին ,
Աննիկ ,
Սիրալոյս գու իմն արեւ ,
Փայլէ՛ յար հոգւայս վերեւ :

Ով Աննիկ , սիրուն թռչնիկ ,
Երբ զուարթ կը ճռուողես ,
Ու թեւօք քոյին փափկիկ
Մօրբդ դէմբը փայփայես .

Գիտե՞՞ս , մոռնամ այն ցաւեր
Զոր կըրեցի քեզ համար ,
Իբր արշալոյս անսուեր
Տայ մոռանալ մէգ խաւար .
Աննիկ , ևայլն :

Մինչ ծոցիս մ'ջ կաս ի քուն ,
իրը ի ծղօտ կը հանդչի զարդ ,
ի գէտ կամ քո լցոս ճակտուն
Որ ոսկի հեր ունի զարդ .

Սիրեմ երկա՛ր յայդ եթեր
Յափշտակուիլ սիրացիկ ,
Եւ զերդ գրքի մ'ի թերթեր
Կարդալ քեզ բախտ անանցիկ .

ԱՆԴԻԿ, ԽՆ.

Ով հրեշտակ , եթէ աշխարհ
Զէ նըման երկնից ուստ դաս ,
Եթէ կան փռւշք անհամար
Ու դառինք են անպակաս ,
Ա՛հ , մի' հոգար , ո՛վ հոգիս ,
Մայրիկ ունիս ձեռնտու ,
Թող տատամիք խոցէ զիս ,
Վարդից վըրայ քալես դու .
Աննիկ են :

Ով Աննիկ , ծաղիկ սիրոյս ,
Մարմացումն երկնից ժպտին ,
Իրացեա՛լ երազ հոգւոյս ,
Կայծ՝ հընոցէն իմ սրտին ,
Թո՛ղ համբուրեմ կաթոգի
Կուրծքիս վըրայ սեղմեմ քեզ ,
Բոյրովդ ապրի իմ հոգի ,
Թո՛ղ՝ հոտոտեմ սիրակէզ .
Աննիկ ,

Օրհնեա՛լ ըլայ կրկին
Որ ինձ տուաւ դանձդ անդին ,
Աննիկ ,

Սիրալոյս դու իմս արեւ ,
Փայլէ՛ յար հոգւոյս վերեւ :

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մրշիւ աւելի հանելի կը լինի մարդ բան մօօֆ :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Դիտողոքիւն . — Ո. Պէտրոսյանի Մարդիկ եւ իր ընտիր մատեանն , նուիրեալ նորա վաղաւեռ դասեր գեղանոյց — Աննիկի յիշատակին՝ մոռցուած է անուշադրութեամբ յիշատակուիլ յիշես 47:

Բառ . — Անսուեր , Պայծառ :

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Հայ եկեղեցոյ քաղաք բարձր է իւր ամէն իրաւունքներով : Նորա հիմն Յիշուսն է հաստատեր սանդարամետին գլխուն վրայ . Նորա պարիսպները անդամանդեայ են . Նորա դուռ բաց և ազատ է . ո՛վ որ մտնէ՝ կընդունի . ո՛վ որ ելանէ՝ չարգելու . Նորա շինուածոց քարերը սուրբ նահատակներն են : Այս քաղաքն անալահապան չէ . անքուն կը հսկեն նորա պարսպաց վրայ երկու առաքեալ և մէկ հայրապետ , Թադէոսին ձեռք՝ Աւետարան , Բարթուղիմէսոսին՝ Տիրամօր կենդանագիր պատկեր , իսկ Գրիգորի ձեռք՝ Նիկիոյ սուրբ Ժողովոյն Հանգանակ . Թո՛ղ չը

հայի ուրեմն այս քաղաքին ուրիշ ու իցէ ձեռք տիրապետել կամ գրաւել:

Ի՞նչ կը կարծեն Արեւմտեան եկեղեցիք. այս ազատ քաղաքին բանալին ո՞ւմ ձեռք յանձնուած է. Աւետարանի ճշմարտութիւն, և նախնի սուրբ Հարց անստերիւր աւանդութիւնը ցոյց կուտան թէ՛ Թադէոս Առաքեալին ձեռք յանձնուած է: Արդ մետասաներորդ դարէն մինչեւ ցայսօր աշխարհալուր վէճ մի յուզուած է, Աւետարանի գործակից երկու եղբարց, այն է սուրբ Պետրոսի և Թադէոսի մէջ. մին կը փաստաբանէ Աւետարանի խօսք յեղաշրջելով, թէ Յիսուս մի միայն ինձ տուաւ այն մեծ բանալին, որպէս զի ընդհանուր ազգաց և ազանց դէմ ես միայն կարողանամ բանալ երկնից արքայութեան դուռը. իսկ միւսը հազար և մէկ ճշմարիտ վկայները ի մէջ բերելով կը հաստատէ, թէ նոյն մեր վարդապետ Յիսուս ինձի ալ բանալի մը տուաւ որ յար և նման քո բանալիին պէս է մեծութեամբ, զօրութեամբ և իրաւասութեամբ. Ես այս բանալին երուսաղէմէն առնելով եկի և երկնից արքայութեան դուռն բացի խաւարին մէջ նստող Անահիտ պաշտող ժողովրդոց դէմը:

ՀԱՅՐԻԿ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Երբ զբով կը ժայի Աստուած առ մեղաւորն սորցացեալ, անա դժխտոց անդունդին վրայ՝ իբր կափարիչ գլխիվայր կախեալ հրեղէն լերին, եւ ի յատակին

բոցավառ ծծմբոյ վիհին՝ դալարազուարն զովասիւք նովաց կը փոխարկին:

ՀՅՈՒՅ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. Յեղաշրջել, Փոփոխել. — Անահիտ, աստուածութի որոց, դուստր Արամազդայ եւ Լատոնայ, եւ Էնոր Ապողոնի: Հայոց կուապաւտական դաւերու դիցուին եր Անահիտ:

ՀՅՈՒՅ

ՍՏԵՂԾՈՒՄՆ ԵՐԿՆԻՑ

Անջրպետին մէջ դատարկ և անծայրածիր. Գլորելով այս կոչտ և անձեւ զանգուածն — երկիր, Որ էն շինեց՝ ո՛չ կապոյտ այլ ոսկեայ երկին Համակ արեւ և լոյս, անամպ և անըստուեր. Ապա ստեղծեց մարդն ու կինն որ անդ բընակին Անմեղ կենօք, յԱդին դրախտին տիրանըւէր:

Անսաստելով սակայն կամացն իւր Արարչին, երբ մեղանչեց ջինջ և արդար մարդն առաջին, եւ՝ անհունին մէջ թնդարով որոտագոչ՝ « Կորի՛ր աստի » հըրամանն ահեղ հասաւ նըմա, երբ դուրս ելաւ ամօթապարտ ընդ իւր կընող, Քրտնել, տքնիլ ու տառապի՛լ մինչեւ ցըմահ:

Յայնժամ Աստուած ըսաւ. « Այս պերճ, շողուն կամար Անարժա՛ն է անհընազանդ մարդուն համար . . . »

Եւ՝ անտարբեր ու խուլ նորա լաց ու կոծին,
Տարածելով իւր հրաշագործ ձեռներն երկու,
Ծայրէ ի ծայր՝ երկրիս վերայ խաւարածին՝
Պարզեց կապոյտ մի քօղ, մըթին մի վերարկու

Իսկ նոյն հետայն՝ ժպտուն, վարդայտն և ըսպիտակ,
Խարտիչագեղ — որպէս են միշտ — մի հըրեշտակ
Ի գութ շարժեալ երբ լուսազիրկ տեսաւ զմարդ,
Թիթռան նըման թեթեւ, արագ և համարձակ,
Դրախտէն յերկիր սըլացաւ և՝ ուրախ զըւարթ՝
Իւր նուրբ մատանց ծայրով այն քօղն ըրաւ ծակ ծակ . . .

* * *

Այն ատենէն ի վեր՝ աստեղք կապուտակին
Ծակեր են լոկ՝ որոց մէջէն տեսնեմք զերկին :

(Արեւելեան Մամուլ)

ԱՐԵՔՍԱՆԴՐ Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՔԵՐԹՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏ

Տաղիդ համար կը վախնա՞ս նրապարակի դատումէն,
Անձամբ անձին եղիր խիս եւ քննադաս անաշառ.
Տղիտուրիւնն է պատրաստ, միւս զարմանալ ինքնիրեն
Քեզի զբուր քննադաս բարեկամաց մեծ կանառ :

ՊՈԽԱԼՈՅ

Թարգ.

Հ. Գ. Մ.



ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Անձայրածիր, լնդարձակ:

ՄԵՔԵՆԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

Մեքենականութիւն, այս է մեր գարուն նշանաբանը. կը գրէ անոււանի հեղինակ մը, որու ըրած տպաւորութիւնն իմ վրայ պիտի հազորդեմքեզ. Աչքերդ ո՞ր կողմ գարձնես ուրիշ բան չես տեսներ հիմակ՝ այլ միայն մեքենայ. Հեռուները պլոքտելու տեղ մեր չորս դին նայինք, մեր ժամանակին պիտոյքն ու ձկոտուններն քննենք. թերեւս դաս մի քաղենք: Ինչպէս երբեմն ոսկիէ դար, արծաթէ դար, երկաթէ գար եկեր անցեր են, հիմակ ալ մեքենական է գարս: Զափ, կարկին, քանակ, հաշիւ ասոնք են ամէն գործողութեան տարերքն. թէ՛ ընկերական, թէ՛ գրական, թէ մտաւոր գործողութեան: Խ'նչ անկում ըընազանցական աշխարհէն նիւթական աշխարհն: Տես ամենէ պարզ գործի համար հնարք մը, գործիք մը, կարճ միջոց մը պատրաստ կայ: Մարդը կը վերնայ, գործիքը կ'աշխատի, ասուն բանւորին անասուն բանւորը կը յաջորդէ: Կկոցը չուղնակին ձեռքէն կը սահի, և արագաշարժ երկաթէ թաթի մը մէջ կ'իշնայ: Նաւաստին առագաստը կը ծալէ, թիակը մէկ դի կը դնէ և զողելից թեւեր ունեցող ուժեղ ու անձանձիր սպասուորի մը կը հրամայէ որ զինք տանի ծովերն ու անդունդներն պարացունէ. Պիրմինկէ մի հրեղէն թագաւորը տոսապելական արեւելք կը թւոփ: Նորէն կ'վրդալի հարեյուսոյ-Գլմուն ոգին, եւ եթէ Քամօէնս մը գտնուէր, չէ թէ Վասքօ կամայի այլ տարօրինակ շանթեր պիտի երդէր: Սահման չունի մեքենագիտութիւնն. և ո՞ դիտէ ա-

պագային մէջ ի՞նչ նոր նոր հորիզոններ պիտի բանայ մարդուս առջեւ : Ջին անգամ կ'թօթուէ իր թամբն և կ'նայի որ իր տեղ հրային սրընթաց կենդանի մը լծեր են : Ոչ միայն երկրային այլ երկնային գործերու համար ալ մեքենայներ ունինք, լեռները կ'չարժենք, ծովերը բանուկ արահետներ կ'ընենք, և շատ հաւանական է որ քիչ ատենէն միջոց մը գտնենք իրարու հետ խօսակցելու, թէեւ մղոններով հետուէն ։ Արքայութիւն, լոյս, քաւարան, սուրբեր, մեքենաներու միջոցաւ կ'ընդնշմարենք : Ո՞վ կարող է գիմադրել այս մեր զօրութեան . Կոչտ բնութիւնն մեր ըստրուկն է, և մեր աննկուն մեքենաներով միշտ յաղթական կ'ելնենք և միշտ կողոպուտներով բեռնաւորուած կ'դառնանք :

Մարդ այս Փիզիքական զօրութեամբ ի՞նչ հրաշալի ասպարէզներ բացաւ ու դեռ պիտի բանայ պայմանեալ աշխատութեամբ մը՝ որչափ աւելի լաւ սնունդ, հագուստ, ընակարան ունի և կրնայ ունենալ քան թէ առաջ, մտածութեան արժանի կէտէ . ընկերական դրութեան մէջ ի՞նչ փոփոխութիւն կ'բերէ այս նոր զօրութիւնն, ի՞նչպէս օրէ օրէ կ'աւելնայ հարստութիւնն և հետզհետէ այլ եւ այլ խումբերու մէջ կ'գիզուի, հին յարաբերութիւններ կ'խանգարէ, հարուստին ու աղքատին մէջ ի՞նչ մեծ վիճ կ'բանայ, տնտեսագէտին ուշադրութեան արժանի խնդիր մ'է : Մտաւորական գործիքներն ալ հին մեթուներն անհետ ըրին . ամէն ինչ իր գործին ունի, ձեռքն անօգուտ է, մեքենայ կայ :

Ս. ՄԱՍԻՒԹԵԱՆ

ԸՆՏԻՐ ՄՏԱԾՄՈՒՆՔ

Աշխատութիւնն միակ նւմարիս ազնուականութիւնն է այժմ :

Ն Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Գրտզիսուքիւն . — Սահմանն է որ եւ է նիւրոյ մի խուրիւնն սրուել, այսինքն նոդիւ յառաջ բերել անոր ամէն հանգամաններն .

Բառք . — Զուշիակ, ոսայնանկ . — բարօնս, երեւիլի ֆորբուզայի բանասեղծ, նեղինակ կուսիսականց : (1524—1579) . — Վասո Տէ Կասս, Փորբուզայի հաւապէս, սորա յանդուզն արշաւանք երգած է Քամօնս : (1460—1525)

Վ. Ա Յ Թ Բ Ն Կ Ա Դ Ա Ս Գ Ե Բ

« Հայրի'կ, ասաց գուստը հօրը ,
Կապոյտ երկնքի վերայ
Ո'րքան աստղեր փայլում են վառ
Ասես համար, թիւ չը կայ .
Ասում են որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում .
Ճշմարի՞տ է, ասա՛, հայրիկ ,
Իմը, ո՞ր տեղ է փայլում » :

— Այս՝ գստրիկ, այդ ասալերը
Ունին հաջիւու համար
Եւ մեղանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար :
« Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թռղեց .
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անդամ այլ չերեւեց » :

— Ով իմ գստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծասան մի աստղ էր,
Որ իւր օրում, կեանքումը
Խիզն ասածը չը գիտեր .
Աղքատները նորա դանից
Գիշեր ցերեկ հալածված .
Մի մարդ չը կար նորան ծանօթ,
Որ չը լինէր վշտացած :
« Հայրիկ, տես տես, աստղը թռաւ
Յետքից պայծառ գիծ թռղեց ,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անդամ այլ չերեւեց » :

— Ով իմ զաւակ, մի՛ վրդովիր,
Դա աղջկայ մի աստղ էր,
Որ իւր հօր ու մօր խօսքը
Իւր կեանքումը յարգած չէր .
Նո փախել էր իւրեան տնից . . .
Մուր էր քսել տան վերայ . . .
Իւր ծնողը լացուցել էր,
Ինչքը վատնել անխնայ :
« Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից .
Հայրիկ, ո՞վի աստղն էր արդեօք,

Որ զրկվեցաւ իւր տեղից » :
— Ո՛հ, գստրիկո, հանգիստ կացիր,
Կեղծաւորի դա ասաղ էր,
Որ իւր օրում ուղիւլ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր .
Փարիսական իւր ձեւ երով,
Աշխարհք խարեց, զարմացուց,
Այդ պատճառով Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարցուց :
« Ապա այն ի՞նչ ասաղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվում է,
Նորա մաքուր պայծառ լոյսը
Չորս կողմը բակ բռնել է » :
— Ո՛հ իմ գստրիկ, աղօ՛թք արա
Դա ծերունւյ մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչինչ մարդու
Ոչինչ վնաս տուած չէ,
Այն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործքերը .
Աղօ՛թք արա՛ որ երկարվին
Նորա կեանքի թեւերը .

—
Ճատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ ասաղ պակասեց .
Ովի՞ աստղիկն էր որ ընկաւ .
Բան հարցնող չերեւեց :
Մինչդեռ լուսինը արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին,
Խորհրդաւոր մինչ աիրել էր

Անվրդով խոր լռութիւն,
Մի սրտաթափ, մազերն արձակ
Վազեց աղջիկ սպաւոր
Դէպ ի գեղի գերեզմանքը
Ծունկ չափեց մի շիրմի մօտ:
« Հայրիկ, աստղիկդ չէ փայլում,
Դու յաւիտեան քնեցիր.
Առ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր:
Իմ աստղիկն ասա նոյնալէս
Որ չը փայլի, հերի՛ք է,
Այս աշխարհը ինձ առանց քեզ,
Մութն ու խաւար մի բանտ է : »

Մի մարդ չը կար, որ նկատէր,
Որ հետեւեալ գիշերին
Պակասեցաւ երկնքիցը
Մի պայծառ աստղ ինդադին:
Երկրորդ օրը չատ սպաւորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղվեցաւ իւր հօր մօտին
Մարմինը խեղճ աղջկան :

Թարգմ.

ՍԻԲԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ



ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենսագրուրիւն. — Միհայէլ Նալբանդէանց, հանրածանօթ Ծուսամայ բանասեղծ եւ հրապարակագիր, ծնած է 1830 եւ մեռած 1866 ին. Աւակերսած է Տէր Գարդիէլ Պատկանեանի, եւ յետյ ուսուցչական վկայական ստանալով Ա. Փեղրսպուրկի կայսերական համալսարանէն, երկար ատեն դասախոսութեան պատօն վարած է Մոսկովյաի Լազարեան Ճեմարանին մէջ. Նալբանդէան բողստ է անման երգեր. իւր ընտիր յօդուածներով փայլած է Հիւսիսայիշ ամսագրին մէջ. Ունի նոյնպէս երկրագործութիւն անուն ընկերաբանական գործն : Աստիճմէ զամ նախնաց մի ժամկ գործերն յաշխարհիկ լեզու հրապարակած է :

Լեզուի դիտարկուրիւն — Մեր աշխարհաբարն ունի չորս գաւառական բաժանումներ, կամ գաւառաբարբառներ, ըստ Հ. Արտէն Այսրենեանի :

Ա. Միջին գաւառական, Վան, Միջագետք եւայլն.

Բ. » » » Կ. Պոլիս Փոքր Ասիս :

Գ. Արեւելեան, Լինասան Առտէալ :

Դ. Արեւելեան, Ամսերիսան — Պարսկասան, որ կը ձգուի Ռուսասանէն մինչեւ Հնդկասան :

Վերոգրեալ տանին բարբառն լուսիոյ Հայերէնի կամ Արեւելեան լեզուի մի օրինակն կը ներկայացնէ :

ՊԱՆԴՈՒԽՏ

Եղանակաց մէջ միմիայն աշունն է, յորում դարիպի կենացն ու տանը մէջ տրտմութեան հետ ուրախութիւն կը խառնուի ըստ մասին. Աշունն անոր ըղձիցն ու ակնկալութեանց եղանակն է : Հազիւ թէտերեները գեղնած կը թափին. չոգենաւը կը բառ-

նայ մեր եղբայրներն և կը թափէ ասիական եղերք , Սամսոն , Կիրասոն և Տրասլիզոն : Ո՞րչափ բերկութեամբ այդ եղանակի վերջին օրերն ատք կը դնէ զարիպն այն ցամաքին վրայ , որուն հրաժեշտ տուածէր , չգիտեմ , քանի արիներ տուած , ծաղկանց ամսուն մէջ՝ գուցէ անյոյս և վշտարեկ . Ո՞վ կարող է սահմանել այն հոգեկան նորոգութիւնը՝ զոր կը կրէ յանձին այն մարդն , մինչ աչքերը վերտարած՝ կը դառնայ ասիական ցամաքէն դէսլ ի արեւմուտք , եւ կը տեսնէ որ արեգական յետին բոցերը կը մարմրին բիւզանդիոնի վրայ : Այն օրը յիրաւի , նոր մարդ է նա :

Մէկ օր միայն հերիք է Սեւ ծովէն կրած տառապանքները մեղմելու : Շւստի երկրորդ օրը , տակուին աղօրաւանը չը բացուած կարաւանը ճամբայ կ'ելնէ : Հոս ունի զարիրը մեր Պետրոս Կաթուղիկոսի գետակն՝ ընդ որ վերջին անգամ անցած էր . հոն ունի բլրակ մը՝ ուսկից առաջին անգամ ի մանկութեան նշմարած էր Սև ծովը , այդ կապոյտ երկինքը կապոյտ երկնից տակ : Սակայն ի՞նչ լնեմ ասոնք . մէկն ունի երեսնօրեայ և միւսը՝ կիսամսեայ ճամբորդութիւն : Դու տեսե՞ր ես , Տէրսիմի խորերն ու սարերը . բարձունք որ ամսերու կը կցուին , անգունդներ՝ որ դժոխոց կը մօտին , մէկ օրուայ զառ ի վայր : Եւ սակայն կ'անցնի ընդ քար և ընդ փուշն : Արեւելքն ունի իր ըղձիցն ու ճամբորդութեան կողմնացոյց : Եւ գէթ երկինը նսպաստաւոր ըլլար : Օդը ցրտին է , գետինը տղմոտ , ձիւնն ու անձրւ անընդհատ կը տեղան երբեմն . անպատապար կը քալէ նա՝ ախղմերէ ու անձեւէն թաթղուած , ինչպէս կը տեսնենք սովորաբար մեր պանդուխտները հոս անձրւոտ օրեր : Ծերեր ալ կան անոնց մէջ . մեր

Պօղոս ազբարը 65 տարեկան էր երր վերջին անգամ , գաւազանին վրայ կրթնած Տէրսիմի լեռներն անցաւ քալելով : Հրէից Մովսէսէն աւելի հաւատք ունէր . և հասաւ իր պապերու երկիրը , պապենական տունն . Գիշերներն ստիպեալ է ժայռերու քուաց տակ կծկըւիլ , դու ըսէ պատսպարուիլ , և դուն ուրեք գոմերու մէջ , որոց կոշտ ու կոպիտ տէրը , իւր եղան կամ գոմշուն քով , յանձն չառնուր շատ անգամ անկիւն մը տալ մեր զարիպին՝ հոն գիշերօթելու : Առառու քալէ , իրիկուն քալէ . քալէ ու քալէ' : Եւ ահա օր մըն ալ տաժանելի ճամբան կ'սպառի . վերջին քայլն , եւ ահա զարիպին կարաւանը կը գտնուի երկու լերանց մէջ բարձունքներու վրայ , ուրիէ վար է ամէն բան : Օրուան վերջին վայրկեանները կը մեռնին ժամացուցին սուր սլաքին տակ . գիւղն է՝ կ'երեկ , ծուխն է՝ կը բարձրանայ : Երկա՛ր չնչառութիւն մը մաշած թոփերէ « Օրհնեալ է Աստաւած » : Այդիները ու ծառաստանը կ'երեկն , եկեղեցւոյ կամարն և կամ վանքի կաթուղիկէն , որ մեր գիւղերը կը պահպանէն : Հոս ընկուղենին իր մերկ ոստերը օդին մէջ կ'երկարէ , հոն կաղամախին կ'երերայ հիւսիսին առջեւ . անդին սպիտակ ճեան վրայ իր սեւ թեւերը կը պարզէ խաչը գերեզմաննոցին մէջ , աստին Ս . կիրակոսի , Վառվառ տիկնոջ , Սուրբ Յակոբայ և Ս . Սարգսի քարաշէն մատուռները գիւղը կը շրջապատեն :

Եւ սակայն նոր գող մը կ'սկսի : Գիտե՞ս թէ ի՞նչ է այն . — մին կը խորհի ակամայ թէ պիտի գտնէ ողջ այն ամեն անուններն՝ զորս իրեն զրկուած թըզթերուն մէջ կը կարդար , և որք շատ անգամ կը նըշանակուին զարիպին սիրտը խարելու . պիտի գտնէ իր սրտին հատորիկը մեծցած զարդացած , զոր , իր

մեկնած ատեն , թողած էր որրանի մէջ . պիտի գըտ-նէ՞ իր մանկամարդ կինը՝ ընդ որում հազիւ չորս ա-միս կենակից եղած էր , պիտի գտնէ՞ . . . : « Մի՛ վախնա՞ք , տղերք , Աստուծով ամենքն ալ ողջ են » : Հազիւ թէ այս խօսքերը կը մարին օդին մէջ , հրա-ցաններու պայթիւնը կ'որոտայ խորերուն մէջ . նոր բոց մը արեւմուտքէն դէպի արեւելք՝ գիւղին հորի-զոնը կը պատռէ : Խաղաղ գիւղն է կը խոռովի , կը խայտայ . « Ահա տղերք եկան » : Ալ վազող վազողի . ծերուկն ու պառաւն ալ կ'ոգեւորին . խուռն բազ-մութիւնն ընդ առաջ կը վազէ , մէկուն քոյրը , միւսին եղայրը , ասոր մանկին ու անոր մայրը , բայց ոչ մէկուն կինը՝ որուն գիւղական պատշաճութիւնը թոյլտուութիւն չըներ : Կարելի չէ բացատրել այն գրկախառնութեանց խորութիւնն ու քաղցրութիւնն երբ իրար կը խառնուին ճամբորդներն ու գիւղացիք :

(Արեւելք-Մասիս)

Մ. ԿԻՒՐՃԵԱՆ

(ՀՐԱՆԴ)

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՄԱՍՏՔ

Մի աշխարհիս վախեր ի սեմ ,
Պիսի ընդհուպ , ա՞ն , դո՞ւն ալ
Խմանաս զի՞ քանի՞ վրսեմ
Է վետաց մէջ արխանալ :

(ԱՌԱՋԻՆ ՄՐՄՈՒՆՃՔ)

— Ճ Ճ Ճ

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Կենսագրութիւն. — Մելին կիւրնեան , նախկին աշա-կեր ձեմարան վարժարանի , նորանաս գրագէս , նրատարակած է զանազան յօդուածներ Արեւելք եւ Մասիս լրագրաց մէջ այլ եւ այլ ծածկանուամբ :

Բառք. — Աղօրարան , արշալոյս :

◆◆◆

Ա Շ Ո Ւ Պ

Ողջոյն ձեզ , ո՛ կանանչազուրկ անբոյր անտառ
եւ գետնաքարը գեղին տերեւք վազսթարշամ ,
Ողջոյն , վերջին փայլուն օրեր , ձեր տարաժամ
Սուգն յարմարի վշտացս , և ինձ քաղցր է խապառ :

Անշուք ուղին կը հետեւիմ մոլորաքայլ ,
Քանզի սիրեմ տեսնել իւր նայուածքներն յառեալ յերկիր ,
Տժգոյն արեւն որ՝ իւր լուսով մշտանըւաղ՝
Հազիւ վանէ ծառոց ըստուերն յաղթ ու մըռոայլ :

Աշնան աւուրց մէջ , ուր գիմէ բնութիւնն ի մահ ,
Սիրեմ տեսնել իւր նայուածքներն յառեալ յերկիր ,
Մի մոերմի ողջոյնն է նա , կամ վշտակիր
Ոգեվարի մյետին ծիծաղն հոգեհըմայ

— Եւ չըթողած ես իսկ կենացս անլոյս ուղին ,
Անցեալ օրերն յուշ ածելով արտասուագին ,

Վերջին անգամ մ' ալ՝ սրտաբեկ՝ դիտեմ կրկին
Այն բարիքներ որք՝ այնքան շոյա՝ ա՛հ, զիս թողին :

Թարգմ.

Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԸՆՏԻԲ ՄՏԱԾՄՈՒՆՔ

Մեր ելքարք եւ քորք են այն բարեկամներն՝ զրա
կունենամք յօրէ ծննդեան :

ՀՅԱՅՈՅ

ԽՈՒՆԿՆ

Ֆէրնէյի նահապետը կըսէր . Ափիոնի հատիկ մը
ստէպ աւելի երանութիւն կը բերէ մարդու քան փի-
լիսովայական ամեն մատեանները . և Ֆէրնէյի նահա-
պետն, ինչպէս զրեթէ դար մ' առաջ, նոյնպէս և այ-
սօր իրաւունք ունի : Խակ ես կըսեմ խունկի հատիկ մը
բուրվառի մէջ՝ երբ ժողովրդեան քթին տակ վառի,
շատ աւելի ներդործութիւն ունի իր հոտոտելեաց և
մտային կարողութեանց վրայ քան թէ երկար յօդ-
ուածներ որ լոյս ու ճշմարտութիւն կը յայտնեն : Ա-
փիոնը կ'ազատէ մարդս խորհելու ծանրութենէ : Եւ

Զինացին բան մը գիտէ, որ ստէպ այդ գեղով կը
մոռնայ աշխարհս, կը մոռնայ ցաւերն, կը մոռնայ ա-
նիրաւութիւններ և աշխարհս իր անթափանցելի
գաղտնեաց ու չարեաց հետ : Խունկն ալ ունի իր զօ-
րութիւնը : Կը գգուէ մեր անձնասիրութիւնը, կ'ամ-
պոտէ իմացականութիւնն և ժողովրդեան կարծել
կուտայ տեսնել և վայելել ինչ որ մուխ է, շուք է,
ստուեր է :

Պիտի փոխեմ, բարեկամ, իմ ուղղութիւնս : Բուր-
վառ պիտի գործածեմ երկաթէ զրչի տեղ: . . . Եւ
խունկը չերեւիր միայն թզթի մէջ, այլ խունկ կայ ե-
կեզեցին, խունկ վանօրէից մէջ, խունկ հանդիսարա-
նըն, խունկ մինչեւ իսկ պաշտօնատունը, խունկ հը-
րապարակն և ամենուրեք : Թ՛ող մեր գործն լինի այ-
սուհետեւ բուրվառ շարժել, որով կշլանան մեր աչ-
կունք, կը վերանան մեր հոգիներն, կ'մթանան մեր
գլուխներ, կշփանան մեր հոգիներն, կ'ուսին ու կը
տկուին մեր թեթեւամիտներ, որպէս թէ ամէն ինչ
վարդագոյն է և ժողովուրդը վարդերու մէջ կ'հանգ-
չի : Եթէ գործ չունիս, պոռայ որ այդ վարդերն ու-
նին իր փուշերն, թէ ամպանան մուխին մէջ կրակն՝
որ մեր տուն կ'ըսնէի, չերեւիր, ի՞նչ փոյթ . մուխն
խունկելի, հոտուէտ և թմբրեցուցիչէ, մեր քթին ջի-
զերը կ'կծէ, կը գգուէ մեր փառասիրութիւնն, կա-
ւելցնէ մեր շուքն, այս բաւ է : Գովեստ, ցոյց, շո-
ղոմ, պատրանք, այս է բանուկ դրամն, և ժողովուր-
դըն ուրիշ բանի կարօտ չէ : Միթէ կայ պաշտօն քան
այս գիւրագոյն :

Արդ՝ ի՞նչ կայ լաւագոյն քան խունկն, խունկն
պիտի լինի իմ յուրաս : Ուստի, երբ փոսն նետեն
զիս, առ հողաման մը, գիր անոր մէջ մի քանի հա-

տիկ խունկ, վառէ ու ըսէ . — խունկի պէս անցա՛ր,
թող հողէ ամանը լինի տապանաքարդ . . .

Մ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

(ՇԱՀՆՈՒԹ)

(ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԱՄՈՒ)

ԸՆՏԻԲ ՄՏԱԾՄՈՒՆՔ

Առանձնութիւնն թշուառ. կընէ զիարդ : Ամենէն մեծ
չարին է չունենալ բարեկամներ :

ՇԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գրագիտութիւն . — Դերանունութիւնն է յատուկ անուն
մի նասարակ անուան տեղ գործածել եւ նասարակ անուն մի
յատուկ անուան տեղ : Չորոյինակ ի վեր յիշուած Ֆերնէյի նա-
հապես, փոխանակ բաելու Վոլեռ :

Բառ . — Յուոր, կախարքական նիւր .



Լ Ս Խ Ն Կ Ա Յ Ն Գ Ե Բ Ե Զ Մ Ա Ն Ա Յ

Այ ի՞մ լուսնակ գեղեցիկ, աստուածավառ դու լապ-
տեր
Զոր առաջնորդ գիշերոյ գըրաւ յերկինս ինքըն տէր .

Կոյր մըթութեան աչք անփակ, սըրտիս այլ դու աչք
կուտաս, երբ չողողուն չըղթայով կախուած չարժիս յիմ վըրաս .
Քո թելն երկնից արծաթէն հիւսուած, պատրոյգդ
ալ ոսկի ,
Ադամմանդէ կայծակներ սփուես զաստղերըդ չորս դի .
Եղի մեղրի նման կաթ մի յամանէն յիս թափած :
Կու խաղաղէ կըրքերս զինչ ալիք լըճիս հանդարտած :
Ո՛հ, ո՞նց պայծառ էիր կենացդ երկրորդ գիշերին՝
երբ նոր քաշուած Աստուծոյ ճախարակէն ընդ երկին .
Ո՛հ, ո՞նց փայլուն էր քո լցոն, երբ առաջին այն
անդամ

Գիշերազուարձ պըլապուլիկըն ձրգեց ձայն երկնահամ.
Շունչըն պայծառ քեզ նըման հովտէ հովիտ կու խա-

ղյոր ,
Հեզիկ հովով թունդ ելած մաքուր առուակըն հեւայր,
Զըկայր ականջ հողեղէն, որ զայն լըսէր ու փառք
տայր ,

Միայն հրեշտակը լըսէին և չարժէին ըզքեզ վայր .
Եւ դուն լըսիկ չափեցիր զանամակ երկնից կէս բոլոր,
Ծով'ու ցամքի վարագոյր բացիր, ներքեւ մըտար խոր,
երբ արեգակն կուգայր հրեզէն ոտօքն յօդս ի վաղ
Զարշալուսոյ ցող սփոէր և զառաւօտն հըրամաղ : . . .
Կացի՛ր, արե՛ւ, յետ կացիր, մելներ յերկինքըդ
կապոյտ ,

Թողլուսնեկիդ ի ման գալդեռ ի մէջ թուխ ամպերոյդ,
կա՛ց, կա՛ց, լուսնակ դու յառաջ, լեռնէ ի լեռ սա-
րէ սար ,

Մէջ ձորերուս, խորերուս անցի՛ր յուշիկ հաւասար .
Հետ քեզ ունիմ ես գանդատ, քեզ նահապետն ունի
բան ,

Սիրտն յերկուս է ճղքած և ցաւերն , ո՞հ , զանազան ,
Պայծառ լուսնակ , մի' փախչիր թէ տրտմութեան լը-
սես ձայն .
Ցաւած սրտի միմիթարանք ես դու կանգնել յերկին-
քըն այն ,
Ման գաս յերկիրն եղեմայ , բայց ոչ ի հինն այն գի-
շեր ,
Երբ երջանիկ էր դեռ մարդ , լոկ սէր ու կեանք կու
յիշէր .
Ճերմակ ճաճանչդ յայնժամ տաք էր ջըրերուն ու
ծաղկանց ;
Ուր որ կաթէր քո շաղիկ՝ կենդանութիւն էր անանց :
Դարձի՛ր նայէ հիմ՚ի վայր , նայէ՛ ի փէշ սա՛րերուս
Նայէ ի տափ տաճարիս , և ի հողբանք գեղերուս ,
Ո՞հ , գերեզմանքն են անոնց՝ որ ոչ ևս են յաշխարհի ,
Մաշած նըշխարք մեր հարանց թաղուած ի խոր խա-
ւարի :

Հ. 2. ԱԼԻՇԱՆ

ԳԵՂԵՅԻԿ ԲԱՆՔ

Մեր կրօնին կը միացնէ , ինչ որ մահն կանչատէ ,

ԾԱՆՈԹՈՒԹԵՒՆ

Բառք . — Ո՞նց (բն . գւոլին) , բանի . — Տափ , տափա-
րակ տեղ .



Ա. ԲԱՐԵՎԵԼ ԵՒ Ս. ԳՐԻԳՈՐ

Ա. Բարազի և Գրիգորի բարեկամութեան կապը
օր աւուր աւելի ամրացաւ , մանաւանդ երբ այս եր-
կու չնաշխարհիկ բարեկամերը , որ իրարմէ ծածուկ
բան չունէին , սկսան փոխադարձաբար յայտնել որ
երկուքն ես մի և նոյն գանձը կ'որոնեն , այսինքն ի-
մաստութիւն և ասաքինութիւն : Նոքա կ'ապրէին մի
և նոյն յարկի տակ , կուտէին մի և նոյն սեղանէն ,
ունէին մի և նոյն կրթութիւնը և զրոսանքը և պար-
զապէս ասելով , երկուքը մի հոգի կը կազմէին : Ո՞վ
սքանչելի միութիւն , կասէ , Ս Գրիգոր , Ճշմարիտ
արդասիք քրիստոնէական սուրբ բարեկամութեան :
Իւրաքանչիւրս կը փափաքէինք իրարու փառքին և կը
ջանայինք ոչ թէ իրարմէ գերազանցիլ , այլ իրարու
նմանիլ :

Մեր գլխաւոր ուսումը և միակ նպատակն էր ա-
ռաքինութիւնը : Մենք կը մատէինք մեր բարեկա-
մութիւնը յաւիտենական ընել , պատրաստելով զմեզ
երջանիկ անմահութեան համար և կորզելով մեր ան-
ձը աշխարհային սիրոյ կապերէն և երկրաւոր յօժարու-
թենէն : Մենք մեզ համար առաջնորդ և ուղեցոյց
բռնած էինք Աստուծոյ խօսքը : Մենք էինք մեր տէ-
րը և վերատեսուչը , որ և մէկ զմէկ բարեպաշտու-
թեան կը յորդորէինք : Եւ եթէ տածս սնապարձու-
թիւն կը համարուի , կարող եմ բացարձակ տոել , որ
մենք իրարու համար կանոն էինք՝ սուտը ճշմարտէն
և բարին չարէն որոշելու համար :

Այս երկու սուրբերը փայլեցան միշտ իրենց ընկե-
րաց մէջ իրենց հոգւոյն գեղեցկութեամբ և աշխու-

Ժութեամբ, իրենց յարատե աշխատութեամբ, իրենց գերբնական յառաջադիմութեամբ ամեն ուսմանց մէջ, իրենց կորովամտութեամբ և արագութեամբ, որով ըմբռնեցին և ուսան Աթէնքի մէջ մատակարարուած բոլոր գիտութիւնները, գեղեցիկ դպրութիւնք, բանաստեղծութիւն, գեղեցկախօսութիւն, իմաստութիւն, բայց աւելի գերազանց եղան իրենց վարուց անարատութեամբ, որով կը սարսափէին ամենափոքրիկ վըտանգէ և կ'երկնչէին չարութեան ստուերէն անգամ։ Ս. Գրիգոր իր դեսափթիթ մանկութեան մէջ մի երազ կը տեսնէ, որոյ վայելու նկարագիրը թողած է մեղ տաղաչափութեամբ։ Նա գնացած ժամանակ կը տեսնէ երկու կոյս համանման հասակաւ և գեղեցկութեամբ, հագուած պարկեշտ և վայելու։ Նոքա իրենց աչքերը խոնարհած էին դէպի երկիր և իրենց երեսը քօղով ծածկուած, որոյ թափանցիկ նրբութենէն կերեւէր մի վարդագոյն կարմրութիւն, զոր կուսական ամօթխածութիւնը կը սփռէր իրենց այտերուն վրայ։ Նոցա տեսքը, կ'ասէ Ս. Գրիգոր, ուրախութեամբ լցոց սիրտս, վասն զի նոցա երեսյթը մարդկային բնութենէ բարձր կ'երեւէր ինձ։ Նոքա զիս գրկեցին և փայփայեցին իրեւ մանուկ և կը սիրէին գորովանօք, եւ երբ հարցուցի թէ ո՞վ են նոքա պատասխանեցին ինձ, որ մէկը մաքրութիւնն է և միւսը՝ ժուժկալութիւնը։ Նոքա յորդորեցին զիս իմ սիրտս և միտքս իրենց սրտի և մտքի հետ միացընել, որպէս զի իմ անձս կուսական գգաստութեամբ և փառօք լցուցանելով, կարողանան ներկայացնել զիս յաւիտենական երրորդութեան անաղօտ լուսոյն առջեւ։ Այս խօսքերէն յետոյ նոքա երկինքը ոլացան, և իմ աչերս երկար նայեցան նոցա ետեւէն, որչափ

զօրեցին։ Այս ամենը երազ էր, բայց մեծ ազդեցութիւն ըրաւ. Ս. Գրիգորի սրտին վրայ, նա երրէք չը մոռացաւ ողջախոհութեան այս չքնաղ պատկերը։

Ի՞նչպէս Ս. Գրիգոր, նոյնպէս և Ս. Բարսեղ մեծ կարօտութիւն ունին սոյնօրինակ առաջինութեան, իրենց անձը Աթէնքի մէջ պահպանելու համար, որ աշխարհիս վտանգաւոր քաղաքն էր վարուց և բարուց նկատմամբ։ Բայց Ս. Գրիգոր կ'ասէ թէ մենք այս պականեալ քաղաքի մէջ երջանիկ եղանք, դառնութեան տեղ քաղցրութիւն վայելելով բանաստեղծներու պատմած գետին նման, որ ծովի դառնութեան մէջ իւր քաղցրութիւնը կը պահպանէ և կամ այն կենդանւոյն նման որ կրակի մէջ ևս կ'ապրի,

Թուի թէ այսպիսի վարուց և բնաւորութեան տէր պատանեակները, որոնք հասարակաց կեանքէն կը խորշէին և ամենեւին անմասն էին իրենց հասակի զուարձութիւններէն և զրոսանքներէն, որոց անմեղ և անարատ կեանքը մի շարունակ դատախազութիւն և յանդիմանութիւն էր այլոց անկարգութեանց, թուի թէ այսպիսի անձերը պիտի նշաւակ լինէին իրենց ընկերակիցներէն, պիտի անարգուէին և միշտ նոցա ատելութեան, նախատանաց, քամահրանաց և կատականաց առարկայ պիտի լինէին։ Բայց բոլորովին սորա ներհակն էր։ Այս երկու բարեկամաց չքնաղ յիշատակը ամեն ժամանակաց մէջ փառաւորուած էր, ամենքը կը պատկառէին նոցա օրինակելի վարմունքէն։

Ի՞նչ պանչելի պատկեր բարեկամութեան, ի՞նչ չքնաղ օրինակ ընկերութեան, և ի՞նչ բարոյական կենդանի դաս ուսումնատենչ պատանեկաց համար։

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԱՐՔԵՄԻՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

(Սիօն)

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՄՊԱՏՐ

Կրօնի եւ բարոյական են երկու մեծ միջոցներ, մին ատուածային, եւ միւսը մարդկային, ոյց միջոցաւ ներկի է մարդոյ լինել լաւագոյն եւ հետևաբար յոյժ երշանիկ :



ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՅԱՎԳՐՈՒՐԻԱՅ. — Ս. ԲԱՐՍԵՂ, մին ի հարց յունական եկեղեցւոյ, ծնած է 329 ին եւ մեռած է 379 ին։ Նշանաւոր ատենախոս, եւ հեղինակ զանազան մատենից։ Գլխաւոր գործի է ձառ վ վեցօրէից։

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՁԱՅԻՆ, ԱԿՏՈՒԱՆՁԱԲԱՆ, մին ի հարց յունական եկեղեցւոյ, ծնած է 328 ին, եւ մեռած է 389 ին։ Ունի համակներ եւ մերուածմեր յորս կը փայլին նոխուրիւն, ըթիղուրիւն, ընորին։

ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ

ԾԱՂ

Ո՛ ՀՌՈՍԵԿՑՆ դու զուարթուն
Զքնաղագեղդ Անմեղութիւն,
Որ ի բարձանց աստեղց երկնից
ԶԱՍՏՈՒԱՃՆ օրհնես դու ամենից։
Արդեօք անձն իմ վշտաւոր
Պիտի կարէ գէթ մի օր

Արտասուալից աչքերով
Դիմել առ քեզ գոչելով։

Անմեղութիւն

Սուրբ զուարթուն

Ի խօր սրտէս

Պաշտեմ զքեզ։

Ոչ սոխակին երգ քաղցրալուր,

Ոչ զեփիւռին հեղիկ համբոյր

Եւ ոչ բուրմունք ծաղկանց քնքոյշ

Չեն ինձ երբէք քեզ չափ անոյշ։

Քանզի զեփիւռն և ծաղիկ

Ովկիանոս և թռչնիկ,

Երկիր արեգ և լուսին

Գործք են միայն Արարչին։

Գործք ահարկու

Կամ վեհ ալու,

Որոց ի տես

ԶԱՍՏՈՒԱՃ յիշես։

Բայց դու օրհնեալ Անմեղութիւն

Դու երկնային վեհ զուարթուն,

Որ արտասուաց ձորին մէջէն

Զմարդ յերկինս հանես մէկէն։

Քանիցս անգամ սրտակէզ

Պարտի սիրել մարդ զքեզ,

Դու որ այն հէքն արժանի

Կընես սիրոյն Արարչի։

Անմեղութիւն

Ի քո անուն

ԶԱՍՏՈՒԱՃ սիրեմ,

Զնա օրհնեմ։

ԱՏԵՓԱՆ ՍՈՒՐԷՆԵԱՆ

ԸՆՏԻՐ ՄՏԱԾՄՈՒՆՔ

Մարմնոյն համար քան զանունդ եւ զգգեսն յոյժ կարեւոր է բարոյական կրթութիւնն :



Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ն

Մեծ գործաւոր մ'է ա'ն , վարժապետը . կը կռէ կը դարբնէ անդուլ , ի՞նչ է կուածը , ի՞նչ է դարբնածը . — միտք և սիրտ կը կռէ , գաղափարներ և զգացումներ կը դարբնէ : Կոշտ , տձեւ , մթին է հոգին՝ երբ կ'երթայ նորա ձեռքին մէջ . աստուածային է գեղափայլ երբ դուրս կ'ելնէ անտի . թեւ չունէր , հիմա իրենն է միջոցը . ազատաթեւ կը սաւառնի դարուց և աշխարհաց վերեւ , կը թեւածէ անհունին մէջ : Աշխարհ աղջամղջին քառս մ'էր այդ մտքի առջեւ . այդ գործաւորը զամպար մը վառեց նորա մէջ , և ահա գործաւորը զամպար մը վառեցաւ , և ի յայտ եկան քառսն լուսաւորեցաւ , պարզեցաւ , և ի յայտ եկան արարչագործութեան հրաշալիք իւրեանց ներդաշնակ և անյեղլի օրէնքներով : Վայրագ ակնարկներ կը նետէր այդ հոգին իւր նմանեաց վրայ , որք թշնամիներ կ'երեւէին իրեն . ո՞վ յեղաշրջում , ի՞նչպէս գոռովագին կը չողան հիմայ իւր աշխունք , ժպիտ մ'ունի ամենուն համար սիրոյ և ներողութեան . մարգարիտներ թանկագին , — այսինքն արցունքներ զորս գութը կը հանէ սրտէն , եղայլըներ կը տեսնէ անդ ուր մերթոսովներ կը նշամարէր , ինչ որ ոճիր պիտի լինէր գու-

ցէ՝ կը լինի արդ ի նմա գիւցազնական առաքինութիւն : Ո՞վ կը գործէ այդ յեղաշրջում . — ա'ն , վարժապետը . ամէն օր ծուած այդ հոգիին վրայ , կ'աշխատի նա տաժանագին , այդ հոգւոյ ադամանդը պէտք է զտել այն աղտերէն , այն կոչտ կեղեւներէն որք կը պատեն զինքն , և յետոյ , պէտք է բանիլ անոր վրայ , յզկել , ողորկել , երեսակներ յօրինել , որպէս զի իւր ամէն կողմերով փալիլի ճշմարտութեան և առաքինութեան արեւուն դիմաց , որպէս զի ճաճանչն որ կիյնայ նորա վրայ՝ բեկրեկելով արձակի իւր չորս դին : Ո՛հ , խոնարհ է այդ էակ . իւր կեանք գրեթէ խեղձ է միշտ . իրեն համար չեն փայլիր ոսկին ու արծաթն , և կառքերն չեն թաւալիր իրեն համար . չորաբեկ հաց մ'է յաճախ իւր տրիտուրն , բայց իւր խոնարհութեան մէջ մե՛ծ է այդ էակ , նա մարտիրոս մ'է յառաջադիմութեան , անոր արեան գնով կը քայլէ մարդկութիւնը . ածուխն է որ կ'այրի քաղաքակրթութեան մեքենայն դարձնող շոգին արտադրելու համար : — Օրհնեա՛լ ըլլայ վարժապետը :

Դ. Յ. ԹԷՐԹԷՐԵԱՆ

(Մարդիկ եւ իրք)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Ազգի մը արժանիքն՝ նորա ուսուցչին ընծայուած արժանիքն կը չափուի :

ԱՌ ՅՈՅՍՆ

ՅՈՅՍԴ ԻՄ

Զքո ձեռն ի բուռն կալայց ցորչափ
Ես յաշխարհի կամ յաքսոր ,
Եւ մինչ աւուրցո իմ լըցեալ չափ
Ցանդէտս հակի մէտն ի կոր .

Մինչ հուպ կենաց բարձր ի կատար
Զիւն ինձ ի գլուխ ի ջանէ ,
Եւ ընդ լերինն սեպ դար ու սար
Գելու զանգուածս և գլորէ .

Մինչ կուրծքս յուզին խոնջ վեր ի վայր
Եւ բոց կենաց լափլիզէ
Սըրտի կանթեղն իմ իւղասպառ ,
Եւ աստղն ի մուտս իջանէ ,

Ես մեռելոց երթամ ի դաշտ
Մի՛ թողուր զիս , յոյս քաղցրիկ ,
Երբ ըզյետինն հարից քեզ գիրկ
Մատամբ զերկինս ցոյց ինձ հաշտ .

ԸՆՏԻՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆ

Ով որ միայն յուսով կապրի , անօրի կը մնայ :

ՖԻԱՆՔԻՆ



ՄԱՆՈԹ ՈՒԹԻՒՆ

Գրագիտուրիւն . — Վսեմն պարզ ոճով վսեմ իմաստից բացառութիւնն է . Լոնգինոս կրսէ թէ զսեմ են այն իմաստերի՝ որք զնոգին գրաւելով , ուրախուրեամբ եւ զարմանենվ կը համակեն զայն . Վսեմն երեւ տեսակ է . 1. Մտածման վսեմ , 2. Զգացման վսեմ , 3. Պատկերի վսեմ .

1. Օրինակ Մտածման վսեմի . Ասաց Անտուած , Եղիցի լրս եւ եղեւ լրս : (Վերոզրեալն մտածման վսեմի օրինակն է .)

2. Օրինակ Զգացման վսեմի . Ծերունին Ուրախոս լսելով թէ իւր որդին փախած է պատերազմէն՝ կանիծէ զանի , յանձնամ կ'ըսեն .

Երից դէմ ի՞նչ կուզէիր որ ընէր . — Թող ՄԵՌՆԵՐ .

3. Օրինակ Պատկերի վսեմի , Օրինեա անձն իմ զտէր , ՏԵՐ Անտուած իմ մեծ եղեւ յոյժ : Խոստվանուրիւն եւ մեծավայել-չուրիւն զգեցար . արկա զլոյս որպէս զօրոց , ձգեցեր զերկինս որպէս խորան , եւ յարկար ի վերայ չուրց զլերնայարկս նորս . Ո՛ դնէ յամպս զգնացս իւր , եւ շշի նա ի վերայ թւրց հողմոց : Ո՛ արար զերեւսակս իւր հողիս , եւ զպատօնեայս իւր ի հուր կիզելոյ :



Ն Ա Մ Ա Կ

Բարիզ 4 Սեպտեմբեր 1882

Պատիկ Լեւոնիկ

Ո՞վ ես դուն նայիմ որ քեզի նամակ գրեմ, ո՞րչափ
ատեն եղաւ որ կաթ չես ուտեր կոր : Դու հօրդ մօ-
րըդ գիրկէն վար իջած չունիս . հօրդ գիրկը քու ա-
թողդ է : Երբ կը քայլես աներեւոյթ ոգիներ կը թե-
ւապարեն ու կը պահեն քեզ որ վար չ'իշնաս : Դուն
չ'ես խօսիր այլ կը ճլութաս, դուն չ'ես մտածեր
այլ կ'երազես, դուն երբ բաներ կ'ըսես՝ երկինքի հը-
րեշտակները կը հասկրնան զանոնք, թռչուն ես թէ
հրեշտակ : Կուլա՞ թէ կը խնդա՞ս, այն ալ յայտնի
չէ, լալով կը սկսիս երգելով կը վերջացնես : Երբ աչ-
քերդ մեծ մեծ կը բանաս՝ երկինքի՞ն կը նայիս թէ
մարդո՞ց, ո՞վ կրնայ ըսել : Երբ թաթիկներդ կ'եր-
կընցնես՝ հայրիկդ կը կարծէ որ իրեն համար է, այլ
ես գիտեմ որ գլխուդ վերեւը կապոյտ կը տեսնես,
անո՞ր կ'երկննաս : Երբ պարտիզ իջնաս՝ ոչ փշոտ վարդ
կ'ուզես որ քաղես, ոչ թեթեւ թիթեռնիկ կ'ուզես
որ բոնես, լուսինը կ'ուզես որ տան քեզի ու չ'ես մը-
տածեր թէ ո՞րչափ բարձր է անի : Քեզի համար ա-
մեն բան կարելի է ու կը զարմանաս իրաւամբ թէ
ի՞նչ ուրիշ լաւագոյն բան կրնան ընել մարդիկ քան
թէ միայն քեզ սիրել ու քու ամեն կամքդ կատարել :

Իրա՞ւ է արդեօք : Իմ ճանչցած Լեւոնս այսպէս
էր : Բայց անկէ ի վեր Երկու տարիներ ու չորս ալ ա-
միսներ անցան : Կարծեմ հիմա այն տարիքն ես, կամ

ոչ շատ հեռի, ուր Երուանդ իմ տունս եկաւ : Մեծ-
ցար ուրեմն : Բայց դուն ո՞ւր ես, ես ո՞ւր : Դուն
տակաւին մարդուն ու հրեշտակին մէջ անորոշ բան
մըն ես : Դու վարդէ շրթունքներ ունիս վրայէն հը-
պելու համար կենաց բաժակին որ վրա՞ն միայն անոյց
է : Դու զմայլմանց մէջ կ'ապրիս, քու երկինքիդ վը-
րայ աստղունք կը փայլին անհամար, դու խնծիղն
ես ու կայտիռ, քու՝

Ի ճակատդ ազնիւ
Եւ ոչ մի կնձիռ
եղքնդամբ ժըպիրհ
Ոչ գըրեց վաղիւ :

Հապա՛ Երուա՞նդը, պիտի ըսես հիմա :
Ա՛հ, Երուանդիս խօսքը մի՛ ըներ.... անի վէրքե՞ր ունի...
Աստուած ձեզ պահէ՛, պղտիկ Օտեաննե՛ր :

Բարիզի Հօրարդ

Գ. Ս. ՕՏԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մարդու կիանքն է ծով մը խոր,
իր ալեաց մէջ ամէն օր
կ'ընեն նամբայ մ անսովոր
Տղայ, կտրին ւ'ալեւոր :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Լեռնիկ, որում ուղղուած է վերոգեալ նամակն, է Օտեան Խաչիկ էմէնտիի մէկ որդին, որ լսելով թէ Բարիզի մէջ հօրեղ-քայր մը ունի, ստէյ կ'ըսէ եղեր թէ «ինչո՞ւ Բարիզի Հօբարս ին-ձի նամակ չցրե՞» :

Ազնուափայլ Օր. Եւփիմէ Պ. Օտեան, ուսումնապէս ար- ուեստագիտական ուսումնարանի Օրիորդաց ի թերա, համեզա- մեզ տալ իւր Հարազախն անտիպ գրութիւններէն մի բանին, ոյց վասն կը փուրամֆ մեր զերմ շնորհակալութիւններն յայտնել առ Ազն. բարգմանիշն Արբայ Քուսահերէնի:

Հ Յ Գ Ա Յ Ր Ի Ն

Արդէն երկու զաւակներ՝
Շաղիկ որսեր էր տուեր
Անգութ մահուան մանգաղին,
Եւ իւր այրը դագաղին
Շոցն ամիոփիած քիչ առաջ՝
Սիրտը մաշէր ի հառաչ:
Գիշերն մոռցաւ այս մօր հէգ
Աչաց բաշխել քուն մ'երբէք,
Եւ ցերեկը, ո՞հ աւա՛լ
Չունէր բընաւ ժամ խաղալ,
Զի այս վերջինն իւր զաւկաց՝
Ցաւոց գիրկը էր պառկած:
Քաջուհի մ'էր այս տիկին,
Որ սիրտն յենած հաւատքին՝

Մահուան ընդդէմ անվեհեր
Խիզախ սրտով ոգորէր,
Գիշեր ցորեկ անդադար
Հրեշտակ մ'ունէր միսիթար,
Որ քաղցր ի շունչ սրտին իւր
Բուժէր խորին վերքը բիւր.
Հնդդէմ երկնից անողոք
Չունէր տրտունջ կամ բողոք,
Թէպէտ վերջինն իւր զաւկաց՝
Ցաւոց գիրկը էր պառկած :

Զայնիւ նըւաղ հէգ Վրէն
Վերջին անգամ ի խորէն
Որդին՝ կոչեց « Ա՛հ, մայրիկ,
Գընամ տեսնել զիմ հայրիկ . . . »
— Գընայր երկնից մէջ ինքն ալ
Վառ աստղերու պէս շողալ —
Տաք տաք ձեռքով ձեռն իւր մօր
Սեղմեց մէղմիւ և անդորր.
Մնա բարեաւն իւր վերջին
Խառնեց վերջին իւր շունչին .
Ծաղի՛կ մ'էր որ խամրեցաւ,
Ցողի՛կ մ'էր որ ցնդեցաւ :

Քաջ այրին, հէգ այրին՝
Որոյ աղիքն ու սիրտ կ'այրին —
Լալու սովոր էր արդէն
Սրիւն լացաւ իւր սրտէն :
Որդին տարին թաղեցին
Մայրը թողին առանձին .
Բայց նա զեղուն հաւատքով՝

անդրդուելի մուալ և չընկճիլ երբէք գոցա բեռան
ներքեւ . ոչ ապաքէն վիշտն անբաժան ընկեր է կե-
նաց , ընդէ՞ր ուրեմն սրտմտիլ , ընդէ՞ր վհատիլ . Մե-
ծագոյն հաճոյքս է , ի Տարտանէլ , նստիլ ծովուն
եզերքն և նայիլ անյագ ակնապիշ մշտածուփ կոհա-
կաց , որ մերթ վհիտ , մեղմիկ հեղասահ հազար ու
բիւր պչրանօք կորորին , կը գլորին ոսկեզօծ ներկե-
լով իւրեանց գլուխներ երեկոյեան արեւուն ճառա-
գայթներէ , մերթ սաստկաշունչ քամիէն գրգռուե-
լով զարհուրագին կը մոնչեն և բարդ ի բարդ կու-
տակուելով ահագին շառաշմար կուգան խորտակ-
ուիլ ծովեզերքի բարերուն դէմ՝ սպիտակ փրփուր-
ներով մկրտելով զիս իրը նորահաւատ ոք ծովային
աստուածութեան . ո՛հ , հիանալի է ծովն յայնժամ .
որքան փոքր , որքան աննշտն է մարդն հանդէպ
նորին զայրացման անդնդոց խորերէն լսուած
խուլ աղաղակներն ինձ թուին լինել բարձրաքրքիջ
ծիծաղներ դիւաց լէգէոններու որք կը բերկրին յան-
հունս տեսնելով մարդուն զօրութիւնը սարսեալ եւ
պարտեալ առաջի ահեղ զօրութեան ջրոյն : Եւ սա-
կայն մարդն ալ զօրութիւն մ'է , ոչ միշտ սարսեալ
և ոչ յար պարտեալ , կը ճգնի , կը մաքառի , կը կըռ-
ուի և է զի կը յաղթանակէ . այլ իր յաղթութիւնքն
ի՞նչ փոքր թիւ մը կը կազմեն համեմատելով պար-
տութեանց թուոյն հետ , ջրոյն տակ խորասուզուած
անհամար նաւերու բեկորներն և մարդկային ոսկե-
րոտեաց ոչ նուազ անհամար դէզերն հրաշխւք իմն
ի տես գալով կրնային միայն ապացուցանել թէ քա-
նիօն խղճալի է մարդուն զօրութիւնն , հանդէպ ջը-
րոյն զօրութեան : կը սիրեմ ծովն , անսահման , գո-
րովալից սիրով կը սիրեմ զայն . եթէ աշխարհիս բո-

գնալու համար զաւկաց քով
Աղօթելով սրտագին
Մխիթարէր զիւր հոգին ,
Թէպէտ վերջինն իւր զաւկաց
Հողին ծոցը էր պառկած :

(Առաջին Մրւունք)

3. թ. ԳԱՅԱՆԵԱՆ

ԸՆՅԻՐ ՄՏԾԱՌՈՒԹԻՒՆ

Հանճարը միայն զիտէ ընդերկար համբերել :

ՅՈՅՈՅ

ՄՏԾԵՐՄԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Տարսմել 17 Օգոստոս 1887

Սիրելի բարեկամ,

Երբ հասայ այսր՝ առաջին բարի գալուստ մաղ-
թողն ինձ՝ ձեր գիրն եղաւ որ ինէ առաջ հասած էր ,
այլ պէտք է ներել ինձ որ մինչեւ ցարդ անպատաս-
խանի թողուցի զայն , քանզի՝ ոչ նախատեսեալ պա-
րագայ մը արգիլեց զիս այդ պարտականութիւնը
վաղ ընդ փոյթ կատարելէ . հիւանդ գաայ անդ քոյրս
բժշկի ինամոց կարօտ : Սրտի անձկութիւնք գոգ-
ես կը հալածեն զիս ամենուրեք . այլ ես որոշած եմ

Ըր հաճոյքներն ինձ տան և զուրկ պահեն զիս իմ սիրեցեալ ծովուս գեղատեսիլ կապուտակ երեսէն, ահ, թշուառ կըլլամ ես յայնժամ.

Կը յիշէք անշուշտ Ալէմ-Տաղիի կանանչագեղ բըլ-
րոց հօվանաւոր անտառաց, ծաղկասփիւռ դալարա-
ւէտ դաշտերու գեղեցկութիւնը. կանաչի այդ երփ-
ներանգ շքեղութիւնն հիանալի էր ստուգիւ. այլ
շլացումն մը միայն կազդէր ինձ և ոչ այլ ինչ. այդ
գեղանկար պատկերին շրջանակ մը կը պակսէր հոգ-
ւոյս խօսելու համար, ծովը, ծովն անձայրածիր՝ ծովն
յաւիտենակա՞ն (կը մեղանչե՞մ արդեօք). անհունին և
յաւիտենականին գաղափարը՝ չստանա՞ր մարդ ի տես
անեզր ովկիանու որ արարածոց ստեղծագործութե-
նէն ալ առաջ ի գոյ էր: Եւ հոգի Աստուծոյ շուրջ
գայր ի վերայ ջուրց:

Զգացած էք երբէք ծովուն այն հմայիչ թովիչ
ազդեցութիւնն որ կը հրապօրէ , Կ'զգլմէ զքեզ , որ
բաղձանք կուտայ մարդուն նետուիլ իր կոհակաց մէջ
և ծփալ , տատանիլ , թաւալիլ անդ յաւիտեան . . .
ահ . Եթէ չէք զգացած այն հրապոյրն արբուցիչ ,
չչք կարող հասկնալ այն հեշտութիւնը՝ զոր ես կը¹
վայելեմ աստ ի տես հրաշգեղ ծովուն կապուտակ
զոր անմահացուցած է բանաստեղծից անդրանիկն իր
հրաշգան քերթուածովը , զոր նուիրագործած է
Պայրընի կիսաստուածային մարմինն՝ ի լիւղ անդր
մտանելով :

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Որպիսի՞ ինչ է այն լար սրբի որ եւ յետ բազմամեայ լոռութեանց ոչ նուազէ յառաջնոյ պինդութենին, այլ եւ առաւելյու բաղրութեամբ :

ՄԱՆԵՐԵՐ Ի ՔՈՒՆ

Գարնան մի օր գեղազը արթ ,
Երբ մանուշակ չուշան և վարդ
Կը սրբուէին իւրեանց ըզբոյր ,
Հօգիս վառէր նոցա ի թոյր :

Վըշափի, սրգոյ, յիշատակաց
Եւ խորհըրդոց ինչ տըխրազգած
Սիրտ իմ յերեր և տարուեբեր՝
Դառըն յուղամիջ մը կ'որորուէր . . .

Բայց անդէն իսկ յանկարծ տեսայ
Մի տեսաբան հոգեհրմայ ,
Հանգիստ նընջէր մանուկ մ'անքիծ ,
Թեւատարած , շրնորհալից :

Նա մարմնեղէն չէր արարած ,
Զաշացն ըզբիթ յերկինս յառած
Յար իւր աչկունք որոնէին
Հըրեցտակաց հոյլն բնդ երկին :

Եւ ինքն արդէն էր հըրեւտակ,

Ո ոք ըզգայր բոյր անուշակ

Այդ մանկիկին սիրանըւէր,

Սըրտին խորէն կը հըմայուէր:

Նա կը նընջէր անփոյթ, հանդարտ,

Եւ իւր ի դէմ ժըպիտ զըւարթ

Եւ լցո պայծառ և անմըռայլ

Կը փողփողէր յար սիրափայլ:

Կացի հանդէս այդ պատկերին

Որ ընծայէր տեսիլ հէշտին,

Կացի արբշիո լի հիացմամբ

Դիտել զայդ գեղ սուրբ և անամպ:

ՎԱՀԱՆ Ֆ. ՄԱԼԻԶԻԱՆ

(Մըմունչ)

(ԶԵԳՑԻՒԹ)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Հողմոյն ի շունչ՝ ընդ զուրս ծովուն՝

Ամպոյն ի հին՝ լրտսովն արփոյն

Ո՞ւր կալանայ միտքն մարդոյն.

— Յանհունուրին:

(Մաղկաբաղ)

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

Գիշեր է ։ լուսինը կը փայլի ։ աստղերը կը չողչողան չարզ րայց ախուր երկնքի մը մէջ : Հիւսիսային չոր պաղ և չարագոյժ հովի մը գաւնահոս շշումներն իւրար կը գիմաւորեն, գալարաստոյտ կը սովորին, բուռն մրբիկներով կը պայթին, և իրենց սուր ու կծու շունչով Մոնմարթրի բարձունքը կ'աւեն : Բլրին ասենէն բարձր գագաթը մարդ մը կանդնած է : Իւր հոկայտիսկ ստուերը լուսնին ազօտ ճառագոյթներով լւսաւորեալ քարոզին վրայ կը նայի ։ Այս ճանապարհորդն իւր ստքին ներքեւ տպած ընդարձակածաւալ քաղաքին վրայ կը նայի ։ որոց բարձր աշտարակներուն գմբեթներուն և զանդակներուն թխատեսնիւ ստուերներն հորիզոնին կապուտակ յստակութեան վրայ նկարուած կը տեսնուին, և այն քարակերտ Ովկիանին մէջ տեղին լուսաւոր ծուխ մը վեր ելնելով գէնիթին աստեղագարդ կապուտակութեան կարմիր երեւոյթ մը կուտայ : Այս ծուխն այն հազարաւոր լցուերուն ճառագոյթն է, որք իրիկուան զրօսանաց ժամերուն մէջ զուարձապէս կը լուսաւորեն բաղմամբով մայրաքաղաքը :

Ոչ, կըսէր ճանապարհորդն, այս բանը պիտի չլինի : Տէրը չկամիր, երկու անդամը բաւական է : Ասկէց հինգ դար առաջ Ամենակալին վրէժխնդիր ձեռքը զիս Ասիոյ խորերէն մինչեւ աստ քշած էր :

Ես՝ միայնակաց ճանապարհորդ մ'անցած տեղերս ա՛յնչափ սուդ, ա՛յնչափ յուսահատութիւն, ա՛յնչափ աղէտ, ա՛յնչափ մահ թողուցած էի, որ հարիւր աշխարհաւեր տիեզերակալաց անթիւ բանակները չէին

կրնար ընել . . . : Այս քաղաքն ալ մտայ և աստ ալ
նոյնպէս ահագին կոտորած եղաւ : Ասկէց երկու տարի
առաջ ալ նոյն անողոք ձեռքը՝ որ զիս աշխարհի մէկ
ծայրէն միւսը կը տանի , նորէն աստ բերաւ , և դար-
ձեալ այն սոսկալի հարուածը՝ զոր Ամենակալը հե-
ռուէն իմ քայլերուս կը կապէ , այս քաղաքն աւերեց
նախ իմ եղբայրներս զարնելով , որք արդէն աշխա-
տութենէ ու թշուառութենէ ընկճեալ էին : . . . Եւ
ահա հինգ դարէ ի վեր այս երրորդ անգամ է որ այս
քաղաքին վրայ նայող բլուրներէն միոյն գագաթը կը
հասնիմ , և թերեւս դարձեալ սարսափ աւերած և
մահ կը բերեմ հետո : Եւ այս քաղաքն՝ իւր զրօսանաց
և գիշերային զուարձութեանց չոփնդէն արբած՝ չգի-
տեր . . . ո՛հ , չգիտեր որ ես իւր գուռն եկած եմ . . .
Բայց ոչ , ոչ , իմ ներկայութիւնս նոր աղէտ մը չպի-
տի բերէ . . . : Ամենակալն իւր անհասանելի խորհրդով
զիս մինչև աստ բերաւ Ֆրանսայի մէջէն , և ճամբուս
վրայ դտնուած ամենէն արուադ գիւղակին խակ զիս
չմօտեցուց , ուստի և բնաւ մահագոյժ զանգակ մ'իմ
անցնելս չձանոյց : Ասկէ զատ՝ ուրուականը մեկնեցաւ
ինձմէ . . . այն կապոյտ . . . կանանչ . . . խորունկ և
արիւնալից աչերով ուրուականն . Երրոր ես Ֆրանսա-
յի հոգին վրայ ոտքս գրի , իւր խոնաւ և պաղ ձեռ-
քըն իմ ձեռքս թողուց և աներեւոյթ եղաւ : Եւ սա-
կայն , կ'զգամ որ մահուան մթնոլորտը տակաւին զիս
կը պատէ : Կը լսեմ այն չարագուշակ հովին սուր
շչիւնը՝ որ զիս իւր յորձանքովը պաշարելով՝ կը
թուէր թէ մահ կը տարածէր իւր թունաւոր շունչո-
վը : Կը յուսամ որ Տիրոջը բարկութիւնը կ'իջնէ . թե-
րեւս իմ աստ դալս սպառնակիք մ'է միայն , որպէս
զի իւր խրատել ուզած մարդիկը վախցնէ : Այս՝ ա-

պա թէ ոչ , ընդհակառակին՝ ահեղասաստ հարուած մը
զարնել կ'ուզէ՝ յանկարծ սարսափ և մահ ձգելով երկ-
րին սիրտն , այս անհուն քաղաքին ծոցը : Ո՛հ , ոչ ,
ոչ , Տէրը կ'ողորմի , ոչ , զիս այս նոր երաշխէսին
շդատապարտեր . . .

— ՔԱԼԷՇ :

— Քանի մ'օր միայն , Տէ՛ր ; գթա՛ , քանի մ'օր
միայն :

— ՔԱԼԷՇ :

— Պաշտպանած անձինքս անդունդին եղրը կը
թողում :

— ՔԱԼԷՇ . . . ՔԱԼԷՇ . . .

Եւ թափառող աստղը նորէն իւր յաւիտենական
ճամբան շարունակել սկսաւ . . . և իւր ձայնն՝ անհուն
միջոցն անցնելով՝ զիս իմլններուս օգնութեան կո-
չեց . . . երրոր իւր ձայնը մինչեւ ինձ հասաւ , զգա-
ցի . . . : Թրոջս սերունդները զարհուրելի վտանգնե-
րու ենթարկուած էին : Այն վտանգներն աւելի կը
մեծնան : Ո՛հ , ըսէ՛ , ըսէ՛ , Տէ՛ր Աստուած , քրոջս սե-
րունդները պիտի ազատի՞ն այն դառն ճակատագրէն ,
նոցա ներելով ինձ պիտի ներե՞ս , զանոնք պատժե-
լով զի՞ս պիտի պատժես . . . : Ո՛հ , այնպէս ըրէ որ
իրենց հաւուն վերջին կամաց հնազանդին , այնպէս
ըրէ որ կարող լինին միացնել իրենց գթած սիրտն ,
ազնիւ հանճարը , մեծ հարստութիւնն : . . . Եւ թե-
րեւս անոնց ձիգն , անձնութիւնն , առաքինու-
թիւնն և վիշտերն իմ մեղքս կը քաւեն . . . իմ՝ զոր ,
ո՛հ , տարաբախտութիւնը միայն անիրաւ և չար ըրած
էր : Տէ՛ր , որովհետեւ քու ամենակալ ձեռքդ . . . ինձ
անծանօթ նպատակաւ մը զիս աստ բերաւ , իֆեցուր
վերջապէս քու բարկութիւնդ , և այսուհետեւ քու

զրէժխնդրութեանցդ գործիք չլինիմ . . . : Հերիք
սուգ տարածեցաւ աշխարհի վրայ : Երկու տարիէ ի
վեր արարածներդ հաղարներով կ'ընկնին . . . / քայլե-
րուս վրայ . . . : Սշխարհ կը տասանորդի , սգոյ քօղմը
պարզեցաւ երկրագնտիս վրայ :

Ասիոյ խորերէն մինչև հիւսիսային բեւեռին սառ-
նամանիքն . . . քալեցի . . . և մեռան . . . : Զե՞ս լսեր
այս երկար հեծութիւնն՝ որ երկրէս վեր դէպ ի քեզ
այս երկար հեծութիւնն՝ որ երկրէս վեր դէպ ի քեզ
կը բարձրանայ , Տէ՛ր . . . : ՈՂՄՐՄէ՛ ամենուն և ինձ ,

Այս խօսքերն ըսելով ձանապարհորդն ծունկի վը-
րայ ինկաւ . . . և իւր աղաչաւոր ձեռութները դէպ
երկինք վերցուց : Յանիարծ հովու առաւել ուժգին
մոնչեց , իւր սուր չչիւնները մրրկի փոխուեցան . . .
ձանապարհորդը դողաց և ահաբեկ ձայնիւ մը գոչեց :

— Տէ՛ր , մահուան հովը կատաղութեամբ կը գո-
չէ . . . կը թուի ինձ թէ իւր մրրիկը զիս կ'ամբառ-
չէ . . . : Տէ՛ր , աղաչանքս չե՞ս լսեր : Ուրուականն ,
ո՞հ , ուրուական . . . ահա նորէն կը տեսնեմ . . . իւր
կանաչորակ դէմքը ջղային ցնցմամբ կը յուզի , կար-
միր աչերն իրենց կոպիհին մէջ կը դառնան . . . : Գը-
թա՞ . . . գթա՞ . . . : իւր ձեռքը . . . ո՞հ , իւր պաղ
ձեռքն իմ ձեռքս բռնեց . . . : Տէ՛ր , գթա՞ . . . :

— ՔԱԼԷ՛ :

— Ո՞հ , Տէ՛ր . . . այս հարուածն , այս ահեղ հար-
ուածը նորէն այս քաղաքիս վրայ բերե՛լ . . . : Շնո՞րհ :
— ՔԱԼԷ՛ , ՔԱԼԷ՛ , ՔԱԼԷ՛ :

Թարգմ.

Կօմէն ՍԻՒ

ԿԱՐԱՊԵՏ ԻՒԹԻՒՑԵԱՆ

(Թափառական հրեայ)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մարդոց երեւակայութիւնը ուստ անգամ իրենց վր-
հասուց ապահովն է :

————— ՀՅ —————

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱԿՋՐՈՒԹԻՒՅ. — Կարապէս Ա. Խրիւնեան , ծնեալ ի
Պալյան կ. Պոլյոյ , նախնական ուսումն առած է իւրկիւսարու
ձեմարանն , եւ ապա ի Բարիզ աշակերտած է վանառականական
դպրոցի , եր խմբագրապէս հանրածանօթ Մասիս օրաբերքի , զոր
հրատակի սկսաւ 1852 ֆետ . 2ին եւ անտի մինչեւ 1884 Յու-
նիսի վերջն շարունակեց , ի սկզբան շաբարաբեր , եւ ապա օ-
րաբերք . 1884 ին Մասիսի յաջորդեց Արեւելի օրաբերքն : Մասիս
այժմ կիսամեսայ հրատակութիւն է , ոյր յօդուածագրերն են
Ա. Արիիհարեան , Լեւոն Բաւալեան եւլն : Մասիս իւր այս եր-
կար թիբացին մէջ յոյժ օգտակար եղաւ , ի մէջ այլոց պահանջիկ
լեզուի կանոնադրութեան նախատեց : 1870 էն մինչեւ 1885 պա-
գային գրագիտաց կարեւոր յօդուածնեւն հրատակուեցան անդ :
Յիշենք մի բանին միայն . Վահրամի բղբակցութիւններ , Գրա-
սէր Ալոմի գրութիւններն , մանաւանդ Բիւզանի Քէշեանի բազ-
մարին հասարակական յօդուածնեւն եւ խմբագրանկան տեսութիւն-
ներն : Կ. Ա. Խրիւնեան այժմ է կրական տեսուչ , ունի բա-
զում վիպասական զործոց բարգմանութիւններ , Թափառական
հրեայ (Հօժեն Սիւ) , Գայտնիկ հաւատամենուրիւն , Ժ. Կառնիկի
խաղական սնէւեռորիւնն եւայլն եւայլն :

ՀԱՅ ԱՂ ԶԻ ԿՆ

Հայ աղջիկ մ'եմ ես ծաղկատի ,
Թագ՝ ում ճակատ իմ կարօտի ,
Պսակն է , զոր ձօնէ հանձար
իմաստութեանն անդ ի տաճար :
Նովաւ՝ հպարտ քան թագուհի ,
Ու ճաճանչուն՝ քան զաստղն երկնի ,
Ճոխամ , շողամ նորանչոյլ
Գարնանակցացս ի վարդահոյլ :

Հայ աղջիկ մ'եմ , ծնունդս ընտրեց ,
Աստուած զիս զատ հեղինակեց ,
Զգաստութիւնն եղեւ ինձ մայր
Զգօնութիւնն ալ՝ ինձ ի հայր :
Գահեկեց ինք Աստուածածին ,
Երկնուհի մ'ետ մեղրն իւր կրծին ,
Զտեց հոգիս հաւատոյն հուր
Կրօնքն արկ գիրկն ինձ խանձարուր :

Իմաստութիւնս է Տեառն երկիւղ ,
Կոյս , ոյր լաստերն ունի միշտ իւղ
Թէ մոլեգնին խախտել զիմ ուխտ
Գիտնան թէ ես եմ նոր Սանդուխտ :

....Հայ աղջիկ մ'եմ չնաշխարհիկ ,
Չեւեց ճակատս արծաթ մահիկ ,
Արփիլ ետուն բիբ իրենց շող ,
Ետ Արուսեակն յա՛րցունք իւր ցօլ :

Մշկոտ սիւքն է շնչէ կրծէս ,
Տատրակն է մնչէ շրթնէս .
Վարդէն առաւ այտս իւր բոսոր
Եւ յԱսիոյ՝ թուշս իւր խնձոր :

Շուշանն իւր ձիւն տեղաց յի՛մ ծոց ,
Որիոնէն առի ես բոց ,
Լուսնթագէն՝ զզիս մանեակ ,
Վարսամէ մ'ալ ոսկի գիսակ :
Ծիածանէն գօտի կտրեր ,
Վերջալըւսէն ճաճանչ քաղեր ,
Հիր ու նարօտ ասղնեգործեր ,
Ամոլէն դէմքիս լաջակ ձեւեր :

Մանիշակէն ուսայ չիկնել
Թռչնէն՝ երգել , հողմէն՝ պարել ,
Ծաղիկներէն քաջ նկարել
Մրջնէն , մեղուէն ժիր աշխատել ,
Աստղն ինձ ուսոյց տքնիլ ցայգուն ,
Արտոյտն՝ արթնուլ կանուխ այգուն ,
Զերջանկութիւն տանս համօրէն :

Հայ աղջիկ մ'եմ ես ծաղկատի ,
Յինէն ի բաց իղձ սնոտի ,
Օժիսս են իմ տաղանդս ու ձիրք
Շնորհքն՝ իմ գեղ , ամրիծն՝ իմ կիրք :
Ուժոյ ջի՛ղ մ'եմ իմ ծեր մօրկան ,
Ցուպն՝ հայրիկիս կթոտ ծնկան ,

Ու ջերմեռանդ երկրագուն
վառարանիս թերափներու :

ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Չափազանց գլայնութիւնը յառաջ կը բերէ ապեր-
շանկութիւն, չափազանց անզգայութիւնն յառաջ կը
բերէ ննիր :

一

ՎԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք. — Զօնել , նուիրել . — Ճնշաւ , ճիսալ . — Արդիկի ,
արել . — Վարասի , զիսաւոր ասոյ — Հիր , ծիրանազոյն
յար . — Թերափի , բնանի դիմ :

P. U. F. P. F.

Ամրան օր մի եօթանասուն և հինգ տարեկան երկ-
րագործ մի նստած էր իւր որդւոց և թռւանց հետ
երկու թմբեաց հովանոյն ներքեւ, զորս տնկած էր
ինքն իսկ իւր հարսանեաց օրն։ Ծառերն բարձր և
թաւախիտ էին։ Իրենց միացեալ հովանին ընտանեաց
զուարթ խմբակն կը զովացնէր։ «Որդեակե իմ, կը-

սէ շուրջն յածելով իւր աչերն . այս ծառերն ինձ
յոյժ սիրելի են քան իմ ձեռատունկ բոլոր ծառերն :
Պատկառանօք կը դիտեմ բարձրուղէց կազնին , ար-
քայն անտառին , և երախտագիտութեամբ կընդու-
նիմ որթենւոյն , տանձենւոյն և խնճորենւոյն պտուղ-
ներն : Այլ միշտ նախամեծար կը համարիմերկու թըր-
բիներն :

— Որովհետեւ դուք զանոնք տնկած էք ձեր եր-
ջանկութեան օրն, աղաղակեց կրտսերագոյնն յորդւոց :

— Այո՛, որդեսակ իմ, աւելցուց ծերն, հաճութեամբ տեսնելով իւր կինն առընդէր իւր բազմած, ինձ համար սա ընծայեց անոնց առաւել արժէք։ Անոնք ինձ կը յիշեցնեն ուրախութեան յիսուն տարիներ։

— Բայց , սիրելի հայր իմ , ո՞քան խնձոր և ո՞քան տանձ պիտի առնուինք յիսուն տարիներէ ի վեր , եթէ այդ ծառերն խնձորենիներ և տանձենիներ լինէին , ըստու կէս մը ծիծաղիտա և կէս մը լուրջ գիմօք այն աղջիկն՝ որ տան տնաենութիւնն կը յանձանձէր :

— Կը զուարձաբանես , փոքրիկ տնտեսուհիդ իմ ,
պատասխանեց ծերն , որովհետեւ դու գիտես ինձ
նման թէ մարդ սոսկ իւր բերանն մտած ուտելեօք
չապրիր , նա դեռ ևս պէտք ունի աւելի բարձրագոյն
կենաց , և սրտի այդ կենաց հարկաւոր են խորհրդա-
նշանք և պատկերք : Օ՞ն ուրեմն , որդեակք իմ , այս
թմրիք են ընտանեկան միութեան իրեւ օրինակք :
Զե՞ն նմանիր երկու սիւներու՝ որոց վերայ կը բարձ-
րանայ ընտանեաց տաճարն :

«Ո՞վ պիտի կրնայ , շարունակեց ծերն , շահու կամ
օդակի փոյթ ընել հոս : Սառւգիւ իմ սիրելի ծառոյն
դալար փայտն չէ բարւոք այրման , նոյն իսկ խրձիթ-

ներ կամ պալստներ կառուցանելու , բայց քան զայն աւելին կ'ընէ . իրմով վայելուչ բնակարանն կը կազմուի , և մեզ կուտայ հովանի և ապաստան մի տօթակէ զամրան դէմ , Կ'ամոքէ արփւոյն կիզիչ ճառագայթներն , և լոյսն աւելի հաճելի կը թուի մեզ եթէ հասնի այն՝ զով հովանին անցնելով : Տեսէ՞ք , որդեսակը իմ , մեր երկու թմբիներն միթէ չե՞ն երկնի և երկնի մէջ իր միջնորդներ :

«Այսպէս ընտանեաց անդորր և քաղցր կեանքն ըզմեզ կը բարձրացնէ դէպի մշտնչենական լուսոյ աղբւրն : Այն մեզ կուսուցանէ թէ ի՞նչ է հայր մը , և մենք կուսանինք այս քաղցր անուամբ զնա՝ որ կը լնու զերկիր և զերկինս » : Այս խօսքերն արտասանելով ծերն վեր առաւ զլուին , նայեցաւ ի կատար թմբեաց , և լուսոյ ճառագայթ մի ցոլացաւ իւր ճակատն վերայ , և իրրեւ պայծառակերպեալ ոք երեւցաւ :

Վայրիկ մի լոելէն վերջ սկսաւ իւր խօսքն : «Երբ արդիւնարար անձրեւ մի կը զովացնէ մեր պատքեալ դաշտերն , իւր նախընծայ օգուտներէն և թօնընկէց ամպին անցնելէն յետոյ շահեկան ջուրն կը կաթէկթէ երկար ատեն իմ ծառոյս տերեւներէն , և մէն մի չեթըն յերկնից իջած օրհնութիւն մ'է :

«Այսպէս է ընտանեաց կեանքն : Յառաջ կը բերէ տեւական խնդութիւն , որ կը բաշխուի և կը տարածուի . կը փոխէ իրից թափն քաղցր երախտագիտութեան , և երիտասարդական տիոց մրրկայոց զգացումներուն կը յաջորդէ սրտի անդորրութիւն :

«Երբ փոթորիկն կը յառնէ , կարելի է իմ ծառոյս խաղաղ յարկին ներքեւէն անվտանգ ականատես լինալու յարկին ներքեւէն անվտանգ , որովհետեւ շանթը յինքն չձգեր , նել անոր արդեանց , որովհետեւ շանթը յինքն չձգեր :

իրեւ զկաղնին բարձրաբերձ և կը պաշտպանէ տունն մրդին բռնութեան դէմ :

«Եւ զուարթ կեանքն կ'ապաստանի անոր տերեւոց ներքեւ կբրւ սիրոյ և անմեղութեան սրբարանի մը մէջ : Տատրակն և ձագն , ծիծառն և ձագերն հոն ապաստան մի կը գտնեն հարաւոյ խորշակին դէմ : Հոն շիկահաւը և կարմրալանջը ամէն տարի կը շինեն իւրենց բոյն . հոն սսխակն գիշերոյ և այգուն լութեան մէջ կ'երգէ իւր աննման մեղեդին , և անոր ստորոտը կը ննջեն հաւատարիմ շունը և բակին բոլոր բնակիչները : Խոնջեալ նժդեհը կը հանգչի անոր լուտուերին տակ , բազում թշուառք անդանօր գտած են սփոփանք և զովութիւն :

«Ո՛հ , որդեակը իմ , ընտանեաց սուրբ կետնքն այսպէս կը բովանդակէ բաշմատեսակ բարիք և բազում չքնաղ ինչ : Այն է ապաստան քաղցրութեան , հիւրընկալութեան և բարերարութեան :

«Ի՞նչ խնկահոս բուրումն կը ծաւալէ այժմ մեր ծառոյն համեստ ծաղիկն : Անոր պսակին շուրջ կը թուչտին ամրան որդիք : կը լոէ՞ք , ի՞նչպէս կեանքն այն տերեւոց մէջ կը բզզայ . ամէն ծաղկէ մեղու մի կը կախուի , որ կուգայ քաղել անկէ մեղրն և մեղրաման : Այսպէս կը բարգաւաճին ընտանեաց ծոցին մէջ զուարթ գործունէութիւնն և խաղաղիկ վայելք , ոչ երբէք խղճի խայթէ դառնացեալ » :

— Այն թմբիներուն տակ , կ'ըսէ անդրանիկ որդին , մեր մանկութեան բարերաստիկ օրերն սահեցան : Այն եղաւ մեր երիտասարդութեան խաղուց տեղին : կեղեւներուն վրայ գրուած էն մեր բոլոր անուններն :

— Այո՞ , որդեակը իմ , աւելցուց ծերն , այս հո-

վանեաց տակ զարգացաք դուք աւելի լուրջ և աւելի բարձր՝ կենաց համար : Մանկութիւնը պէտք ունի զարգանաւու համար հեշտ ստուերի և աղօտ լուսոյ : Հոս ձեր կեանքն կրթուած է դիւրաթեքութեան և զորութեան, ձեր հոգին պահպանուած է մաքուր անբժութեան մէջ : Հոս քայլած էք անվեհեր ձեր ծընողաց աչքին տակ, և այն ծառոյն կելեւին վերայ գրուած ձեր անուններուն վրայ աւելցած են ձեր որդւոց անուններն :

«Պատկեր սիրոյ, հաւատոյ և յուսոյ՝ որք ընտանեաց կապն կամրապնդեն գարերէ ի վեր։

Սյու լսոսքերուն վերայ որդիքն տմբրութեամբ ԳԵ-
տեցին իրենց ծնողքը , և արտօսր մի փայլեցաւ շա-
տերուն աչաց մէջ :

«Սիրելի որդեակք, այսպէս չենական կարգն՝
կըսէ ծերն քաղցրութեամբ զանոնք գիտելով, այ-

պէս կ'ուղէ բարի բնութիւնն : Կը մերկացնէ զծառն ,
երբ պէտք չունիմք անոր հովանեսյն , մեր բնակարա-
նաց մէջ արեգական ճառագայթներուն և լուսոյ ա-
ռաւելագոյն մուտք տալու համար : Ծառը կը կրու-
սանէ իւր զարդն վերստին առաւել դաշլրագոյնս
զարդարուելու և ուռճանալու համար ուրիշ գարնան
մէջ : Մեր երկու թմրիներն՝ որք զուգաւորած են ի-
րենց հովանին , պիտի խառնեն իրենց չոր տերեւ-
ներ , ի միասին պիտի չորնան :

« Սիրելի ամուսինդ իմ, հաւատարիմ ընկեր կենացըս, այնպէս չէ՝, երկուքէն ոչ մին յետամնաց պիտի լինի : Հանդարատ և քաղցր քնով մարդ մը կը ննջէ լաւ միացեալ ընտանեաց ծոցն » : Այս խօսքերն արտասանելով ծերունին ձեռք կարկառեց իւր կնոջ և կինն ժպտով մը պատասխանեց :

իրենց ուստերք և գոտերը ծածկեցին իրենց արցունքները և ահա ծերունոյն թռուանց աղաղակները և խաղերն լսելի եղան հինաւուրց թմբեաց հովանոյն ներքեւ :

ՔՐՈՒՄՄԱԽԵՐ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

ՄԵՌԵԱԼՆԵՐՆ

Ննջեցէք, ո՞հ, ննջեցէք զբ վերջին օր դատաստանի

Եւ գիտէի ըզմայլած նոցա տիպար գեղալըս ,
Որ նազէին պարէին մեր կենցաղոյն ի խնջոյս .
Կերպարաններ հրեշտակի , սիրազրահիկ մարմիններ ,
Որ զերդ մազնիս ձբգէին յինքեանս ամեն հուր սրտեր .
Եւ փայլէին քան զգարնան պայծառագեղ արշալըս .
Արեգնատիպ աչերէն ցոլանային Սէր և Յոյս .
Վարդակարմիր շրթանց մէջ մարգրտաշար ատամունք
Կը ժմուէին մերթ ընդ մերթ , ինչպէս մարգաց մէջ
ծաղկունք .

Բերաններէն բուրումներ ծաւալէին ի սիրտ մեր
Եւ հրակարմիր վառ սյտերն առնուին հեշտ համբոյր-
ներ ,

Բոլոր սրտեր տրոփէին ի տես նոցա պատկերաց
Զի ողջոյն գեղն երկնային ի նոսա բոյն էր դըրած :
Ո՞վ էին այն հրաշագեղ գիրդ էակները սիրոյ
Որ երր գնային գետնի վրայ , թռչիլ թուէին մէջ
օդոյ .

Կարծես վերերն ընկերներ ունէին որք ի բարձուստ
Խօսակցէին իրենց հետ , ւանդրէն տային անդ փա-
խուստ :

Նոքա չէին այս կենաց , փոյթ թռան հողէս իրենց
բոյն — Խորհրդաւոր մի կայան ի մահացուաց հեռագոյն —
Լըքին զերկիր ու զմարդիկ , և զայս կենցաղ վաղան-
ցիկ ,
Անհետացան առժամայն այդ էակներ գեղեցիկ .

Նոքա չէին երեխլ , այլ ևս չէին չըջել աստ .
Զի թունաթափ իբրւ օձ , մահու զայրոյթ և սկ սաստ ,
Կը յարձակէր ի նոսա , և նոքա ոչ ևս էին .
Կենաց խրախունք և ձրագունք տակաւ տակաւ մա-
րէին . . .

Աւա՛լ , փոխան ինչոյից սեղան չիրմի պատրաստէր .
Եւ սեղանի վրայ դրած էին սոցա մարմիններ .

Աներեսոյթ պարողներն եղած էին , ըսին թէ՝
Մեռած էին մշտագիրկ , հեռի յայս մեր աշխարհէ ,
Կը դիտէի և յայնժամ որ թառամած էր մարմին .
Մեռան , շիջան յաւիտեան . գեղ , սէր , եռանդն ուր

տարին . . .

Դադաղի մէջ տարածուած տեսայ մարմին մի մարմար ,
Աչեր մարած , դեղնած դէմք և մի ճակատ գալկահար ,
Սառոյց ձեռներ անխորիտ , համայն՝ դիակ անկեն-
դան ,

Եւ կոծէին , « Ո՞հ , նոքա կանուխ աստի մեկնեցան ,
« Ուր իբր ոսկի և գոհար երկնահանգոյն փայլէին , »

Եւ լսէի հծծիւններ , հագագներէ փրթէին .
Հեծեծելով հառաշանք , ամբոխն յառաջ կընթանայր .

Եւ ի՞նչ տեսնեմ ես յանկարծ , մի քարալիր դաշտա-
վայր ,

Երկայնութեամբ մարգաչափ՝ բացին մի փոս մթագին .
Եւ հծծէի ես . « Այս է բանտն աննման էակին » . . .

Քարեր բոլոր գոչէին . « Այս հուսկ մահին է մար-

դուն .

« Ահա՝ վըսեմ և սիրուն արարածին բնակութիւն .
« Թո՛լ աստ ննջէ խաղաղիկ , ամեր , դարեր թո՛լ

զըլին ,

« Ննջեցէք , ո՞հ , ննջեցէք , դատաստանի ցօլն յե-
տին » : . . .

Պատանի մ'է զոր տանին , պատանապատ անշունչ դեմ ,
Դեռ նոր կեանքը վայելէր , և չէր յիշել հող շիրմի .
Շիրմաց զինուորք փորեցէ՝ք նորէն մի փոս խոր ,
Տամուլի ,
Թաղէմք ի հող զայդ իրան գեռածաղիկ և փափուկ .
Դորա համար կենցալն էր երազ գարնան դիշերայն .
Երանութիւն վայելած ժամուն խմեց մահու թոյն .
Այսպէս ահա երկիրս է մահու տխուր բնակավայր ,
Թաղին մարդիկ ի դամբան զերդ ի ծառէ իրթած
լայր ,
Տրտում տերեւք ծառերու թափին դալկան մէջ հով-
տաց ,
Սակայն գարնան՝ դալարին անդրէն ի լոյս արփեսլաց ,
Ո՞հ , ը՞դէ՞ր մորդ յետ մահու չը վայելէր մի դարուն .
Եւ հիմնը նըման տերեւոյ , ծաղիկ , կրկին չէ՛ փթթուն
Ա՛լու է՞ր մահու փոսին մէջ ննջողքն անդրէն չեն յառ-
ներ ,
Աւա՛լ , դամբան իւր առածն երրէք ի կեանս չըն-
ծայեր ...
Բայց ո՞ւր վազեմք այսպէս մեք , արագ արագ ըշտա-
պով .
Զիրար հրելով ընկնիմք գետն Ամանակին ի հոլով ,
Եւ կոհակներ կատաղի փութով ըզմեզ կը մղեն ,
Իբրեւ շուշան ի ծովու յատակին խոր ընկլուն : ...
Մահու ծովն է որ ըզմեր ընդունի դի ծըփավայր ,
Եւ այն շիրմն է կենաց մերոց նուաղեալ դալկահար .
Բայց խուսէին ափերէն , մին ծիծաղէր դիտելով
Եզերածին ծաղիկներ , զորս համբուրէր չ առ զով .
Նկատէին դողդոջուն գեղեցկավարս ուռիներ ,
Մշտադալար նոճիներ , որ իրենց գեղն ու պատկեր ,
Յերկինս ի վեր ուղղէին , մին ևս ունէր մի խոկում

Գընայր գետոյն ի հոսանս , մերթ յետս հայէր նա
արտում .
Ո՞հ , ո՞ւր է ծայրն այն գետոյն , համայն դէս յայն
արշալին ,
Հայէն յիրար , և խկոյն անհետանան բընաւին : ...
Ով մեռեալներ սիրելի , գերեզմանի բնակիչնե՛ր
Գամ ձեր նիրհը վրդովել . . . ա՛խ ձեր վրայ գամ մը
չիջներ
Ըսկովիանաց գէթ մի ցօղ , կամ լուսնակին երր նսեմ
Հոսի նշոյլ , անզգայ մնայ շիրմացդ այդ ցուրտ վիմ ,
Պիտի տեսնե՞մ օր մ'արդեօք որ երկնափայլն արշա-
լոյն ,
Ըզձեզ սիւուն ընկերներ , յարուցանէ ի հովոյս ,
Պիտի լսէ՞ք դուք երբէք շեփորին ձայնն ահարկու .
Որ աւետել պիտի գայ ձեզ մի նոր կեանք յետ մահու .
Մօ՞տ է արդեօք գարնային օրն այն յորում վերկեն-
դան ,
Ճեղքելով ձեր կափարիչ մթօթուէք փոշին մահական
Եւ կայծականց երկնընթաց ի փայլ աշեր ձեր բացած
Դատաստանին արհաւելիքը դիտելով սարսափած
Աղաղակէ՛ք երկրի դէմ , գոչէք առ մահն սիսերիմ .
« Հերի՛ք , երկիր , հերիք , մահ , բանտէք ըզմեզ ի
շիրիմ » .
Բայց դեռ զարթնուլ չիք ձեզ , ո՞հ , իմ ընկերներ
կաթոգին ,
Ննջեցէ՛ք , դեռ ննջեցէ՛ք , դատաստանի ցօրն յետին :
(Երկր անոն) ԱՄԲԱՑ ԲԻՒՐԱՑ

ԲՆՏԻՐ Ա.ՍԱՅՈՒՊԾՔ

Երէ հօմարիս երջանկուրիւնը զիսուրեան մէջ կը կայանայ, եւ երէ կատարեալ զիսուրիւնն մահուանէ վերջ միան կրնայ ստացուիլ, բուք թէ երանուրիւնը մահուան համար, կամ մահէն յեսոյ վերապահուած է:

Խ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Բառք. — Մազնիս, մազնիս . — Տամուկ, խնձաւ . — Իրամ, մարմին . — Խայր, պառուղ . — Ամանակ, մամանակ . — Շեփոր, փող .

ՍԵՐՈՎ ԲԵԼՈՎ

Մայր, Հայր, Եղբայր . սոքա հասարակ անուանք են, այլ միանդամայն ամենամեծ անուանք : Կանայք կան, որք ոչ միայն իրենց զաւակաց են մայր, այլ և մայր որբոց և հիգաց . այսպէ՞ս է Սրբուհի Մայրապետն : Երիտասարդք կան, որք ոչ միայն եզրայր են ընտանեկան անձուկ չըջանակին մէջ, այլ և եզրայր են հանուրց, եզրայր կը կոչուին ի հանուրց . այսպէս էր վաղսմեռն այլ անմահն Մկրտիչ Պէտիկթաշլեան : Մարդիկ կան, որք ոչ միայն իրենց որդեկաց կողմէն կ'ողջունուին հայր աղաղակով, այլ և իրենց մերձաւորաց կողմէն, այլ և համօրէն աղգի մը կողմէն, և

երր կը վախճանին, աւա՛ղ, այն ինչ գդուած թոռնի . կի մը գլխիկն, երր կը զրաւին կենաց միջօրէին, ամենեքեան կը գոչեն ողբագին . « Ո՛չ ևս է մեր հայրըն : » Ո՛չ ևս է մեր հայրն Սերովիք կիւլպէնկեան :

Այն ուշիմութեան, որ բաժինն է գրեթէ բոլոր կեսարացի աղգայնոց, Սերովիք կիւլպէնկեան հրեշտակային բարութիւն մը կը միացնէր : Բարիք կը սփոհէր յաւէտ իւր չուրջ . բարութեան ու բարեգործութեան՝ իւր բանիւք և օրինակա՛յարաժամ կը յորդորէր իր մերձաւորներն, և երր աղօթէր, իւր առաջին բառերն իին « Հայր բարի », զի հանդուցելցն համօր տիեզերաց մէջ. ամենէն աստուածային բանն էր բարութիւնն : Յերկնից օրհնեալ, և յերկրի սիրեալ և մեծարեալ էր իրաւամբ : Առեւտրական ասպարէզին մէջ կը թագաւորէր : Կիւլպէնկեանց տունն նման է այն հսկայ, խորարմատ ու բազմաձիւղ ծառոց, որք հիացումն կ'ազդեն յաւէտ ուղեւորաց . Հայաբնակ գրեթէ բոլոր գաւառաց մէջ ճիւղեր ճրգած, այդ բարեհամբաւ տունն համայնից պատկառելի հանդիսացած է, և — կրնոյ ըսուիլ — դասարան մէն նա պարկեշտութեան ու գործունէութեան հայերիտասարդութեան համար : Սերովիք կիւլպէնկեան է Փէնտիին, այն հասարակ առեւտուրէն զատ, առեւտուր մ'ալ կ'ընէր բարձրագոյն, աղնուագոյն, նուիրագոյն . Նա սիրայօժար նպաստ կուտար յաւէտ, և օրհնութիւն կ'առնիր ամենէն : Ինք կը փնտուէր այն անձինքն որ կարօտ են օժանդակութեան, այն հաստատութիւններն՝ որք կարօտ են հովանաւորութեան : Նա կը փնտուէր մանաւանդ մեծ անձերն ու ճշմարիտ աղգասէրներն : Եւ իրեւ մեծ մարդ՝ զո՞վ աւելի պիտի փնտուէր կիւլպէնկեան քան ներսէս պատրիարքն :

Այն անզուգական ժողովրդապետին նկատմամբ հանդուցեալն ունէր միանդամայն՝ կրնայ ըսուիլ՝ հօր մը սէրն, հաւատացեալի մը սէրն. ի մի բան՝ Սերովքէ կիւլպէնկեան անհուն և կատարեալ սիրով կը սիրէր երջանկայիշատակ Ներսէս Վարժապետեանն. Եւ այն մեծ սիրելիներն, այն մեծ անբաժաններն ահա գնացին մէկ մէկու ետեւէ, գնացին ու միացան անմահութեան բնագաւառն Ի՞նչ վեհ անուանք մեր շրթանց վրայ եկան այս դադաղին առջեւ : Զի Սերովքէ կիւլպէնկեան ունէր Սրբուհի Մայրապետի գըթած հոգին, Պէշիկթաշլեանի խորագիած սիրան, և Ներսէս Վարժապետեանի սրբազն հուրն : Այդ հուրըն՝ յիւր սրտին յաւէտ կ'արծարծուէր թագուն : Կիւլպէնկեանին արժանաւոր եղայրն և որդիք կը ժառանգեն իրենց չքնաղ հարազատին և հօր բարեմասնութիւններն : Ասոնցմով կը յուսայ մսիթարուիլ աղգն, որ կորոյս, այո՛, հայր մը, վաղահաս մահուամբ Սերովքէ կիւլպէնկեանի : . . .

Ե. ՏԷՄԻՐՃԻԹԱՇԵԱՆ

—

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մեր եւ երկնի կամ դժոխի մէջ ուրիշ բան չիկայ, բայց երէ կեանին, որ ամենէն դիւրաբեկ բանն է յածխարհի :

→ → → → → ← ← ← ←

ԱԶՅԻՒԻ Ի ԱԶԵՐ

Ի վե՛ր ի վե՛ր անդադար, Փառաց հասցուք ի կատար, Զի պատմութիւնք մեզ ցվերջ Սիրով տացեն համբաւ պերձ, Անհանգունակ յաղթանակ, Նարօտազարդ և պըսակ Են արժանի ա՛յն ճակարին Որ խիզախէ դէմ բաղդին :

Ի խո՛ր ի խո՛ր անվլչատ Ի խորս հանքաց անընդհատ, Ի խորս ուսման իջցուք մերձ Ի ամրանալ ճոխ մըթերց . Ճակարի քրաանց ի փոխան՝ Ոսկի, գոհարք պիտ' տեղան . Եւ բանասէրք ժըրաշան Պիտ' օրհնըւին ցվախճան :

Յառա՛ջ յառա՛ջ օ՛ն ուզիդ Գընալ պարտուց զշուիզ . Սուաքինի գործ և եթ Երջանկարար է յաւէտ . Դու բարութեան լեր ընտիր Եւ գեղեցին ի խնդիր, Յոր անապատք փոխարկին Յաստուած ակերտ ի յերկին :

Օ՛ն մերձ ի մերձ վշտահար Սիրտք յօդեսցին մեր յիրեար, Թող մեր խառնին շունչն ի շունչ

Եւ սէրն ի սէր անտրտունջ :
Իսկ մեր ձեռինք դեռավորձ
Լիցին ընդ փոյթ կիրթ ի գործ :
Ի բաց պատրանք սեւ բաղդին :
Փոռք են բաժին անցաղթին :

Թարգմ.

3. թ. ԳԱՅԱԵԱՆ

(Սռաջին մրմունջ)

—

ԳԵՂԵՑԻԿ ԲՈՒԲ

Ինչ ո՞ւ է խնդակագործութիւնը մարմարինի կոյտի
մը համար , նոյն է դասիարակութիւնը նոգւոյն համար :



Բառք . — Անհանգութակ , աննման . — Յոդիլ , միանալ :

— ՀՅ —

ԲԵՐԻՑԵԸՆ ԵԶԻՑԵՑՈՒԹԻՒՆՆ Ի ԱՐԴԻ

Բազմիցս կը խորհիմ ես թէ մինչեւ իսկ բնութեան
մի աննշան և անզօր ծաղիկն ինչ հզօր է անոնց հա-
մար՝ որք կրթած են լանձինս ուսանելու զրնութիւ-
նըն : Անդ՝ հովտի մը անսես խորչին մէջ իւր փափ-
կասուն ծզօտին վրայ , նա այնքան անզօր է որ մեղ-
միկ զեփիւներն զայն կը սարսեն : Միայնակ և լրին
իւր երփնաղարդ թերթերը կը բացուին և ազատա-
րար կը մզեն արշալոյսին ցոլը և տուընջեան ոսկե-

փայլ ճառագայթները , ինչպէս միայնակ կընդունի
երկրի այս պարգեւներն , նոյնպէս միայնակ կը փայ-
լեցունէ իւր գեղն ու կը սփռէ իւր սիրաբոյր քաղց-
րահոտութիւնն : Եզ մը կամ խոզ մը թերեւս անոր
մօտէն անցնի , ո՛չ , անցնի նաև թերեւս գուեհիկ մը ,
և ի՞նչ է գեղափայլ և քաղցրաբոյր ծաղկանց զօրու-
թիւնն ի վերայ սոցա : Սակայն ի՞նչքան հզօր է այն
զգայուն և բանաստեղծ ոգւոյն վրայ : Մեղմաշունչ
սիւերէն սարսող այս անզօր ծաղիկն զիա՞րդ կը
սարսէ և կը յուզէ ողջոյն անձն : Այս անբարբառ գե-
ղեցկութիւնն զգացմանց ի՞նչ աշխարհներ իսկ և իսկ
կը զարթուցանէ ի նմա : Նորա վերայ փայլող մար-
գարտանման ցողի կաթիլք արտօսրի շիթեր կը փայ-
լեցունեն նաևս բանաստեղծին աչաց վրայ : Եւ ոչ մի-
այն զսիրտն այլ զմիտու ևս կը յուզէ նա : Ուսուցիչ
մէն որ իւր գոյութեան և կենաց օրէնքը կ'ուսուցա-
նէ այնմ որ յօժար է գիտելու , խորհելու և ուսանե-
լու . նա կարող է բռնել իմաստափրին ձեռքէն և ա-
ռաջնորդել զայն ի լայնարձակ և հոյակապ տաճարն
գիտութեան :

Այսպէս է հովտին ծաղիկն : Ի՞նչ են ուրեմն ան-
բաւութեան մէջ թաւալող այն բոյանիւթ գունդերն ,
որք մէն մի աշխարհներ կամ արփիներ են : Ո՞րպիսի
մեծ է այն հիացումը որ նոքա կ'ազդեն մեզ : Ո՞ր-
պիսի հզօր են կրթելու և ուսուցանելու զմիտս մարդ-
կան : Սոքա կընծայեն մեզ հմտութիւն և գաղափարը ,
այնքան բարձր և այնքան լայնարձակ որքան է այն
անբաւ միջոցն յորում սփռեալ են նոքա : Կը զար-
թուցանեն ի մեղ այնքան վեհ և ազնիւ զգացմունք
որոց նմանն թերեւս բնութեան մէջ ոչ այլ ի՞նչ կա-
րող է զարթուցանել : Բեւեռային աստղը որոյ լսու

քառասուն և վեց տարուան մէջ միայն կրնայ համնիլ
մեր աշխարհին . այսպիսի անբաւ և զարհութելի հե-
ռաւորութեան մէջ , ովկիանու մթին և խռովեալ ա-
լեաց վրայ մոլորեալ նաւորդին ճանապարհ ցոյց կու-
տոյ , սակայն նա կ'առաջնորդէ նաևս գիշերուան
պահերուն մէջ իր խուցին մէջ հսկող աստեղաբաշխին ,
խորհրդոց և զգացմանց առաւել խոր , առաւել ան-
բաւ և առաւել խռովայոց ուրիշ ովկիաններու վրայ :

Վեր յերկինս նայեցէք պայծառ գիշերուան մը
մէջ , և դիտեցէք այդ սստեղապարդ կամարը , այն
կապուտակ և լցինարձակ գմբեթը զոր երկին կ'ա-
նուաննենք՝ առհասարակ : Մեծափառ տեսօրան մ'է
այն որ կը պարզուի յաչս մեր , և զմայլելի են րիւ-
րաւոր փալիլուն սստեղք , զմայլելի է արծաթեայ
լուսինն որ թագուհուոյ մը նման անոնց մէջ կը շարժի :
Բայց ի՞նչ է արդեօք այն շքեղ և անեղը կապոյտը
յորմէ կը ցոլանայ այսքան լոյս , որքան հոյակապ և
հրաշագեղ է այն : Կը սիրեմ ես դիտել զաստեղս և
զլուսին , կը սիրեմ տեսնել և վայելել արեգական ճոխ
փառքն , երբ նա իւր ոսկի ճառագայթներով զամե-
նայն ինչ կ'ողովէ : սակայն կը սիրեմ դիտել և վայե-
լել նաև այն փառաշուրք կապոյտը որոյ մէջին կը ն-
թանան այս լուսեղէն գունդերն : Ինձ կը թուի թէ
մեծապանծ տաճարի մը գմբեթն է այն , տիեզերա-
կան տաճարի մը , որոյ սիւներն մահացու աչերն կա-
րող չեն տեսնել , որ ինքն ամբողջովին լոին և ան-
բարբառ օրհներդութիւն մ'է յաւիտենականին , որ
մեր ու ամենից Տէրն է : Ի՞նչ խանդ , ի՞նչ բանաստեղ-
ծական աշխայժ , ի՞նչ ահ , և զգացմանց ի՞նչ ճոխու-
թիւն կ'ընծայէ նա զգայուն ոգւոյն : Անոր վրայ ար-
շալոյուր իր վարդէ մատերով կը նկարէ այն գեղապայ-

ծառ և փառաշուրք գոյներն որոց նմանելու այնքան
կը տենչայ արուեստագէտն , անոր վրայ կը վառուին
աշնանային աւուրց բռորագեղ գոյներն , որք կը
թնդացնեն և կը յափշտակեն մեր ոգին , անոր վրայ
կը վառի արեգական փառահեղ բոցն որ կը սփուէ ա-
մենայն ուրեք խնդութիւն , լոյս և կեանք , անոր
վրայ կը սահին թէթէւլնթաց՝ ամառնային շղարշեայ
ամպերն որոց հազարաւոր նրբատեսիլ ձեւերն կը թա-
ւալին լուսափողիով երկնից վրայ : Կ'ըղձամ գիտեալ
թէ ի՞նչ է այն , և ահա գիտութիւնը կը մօտենայ
պատմել անոր վրայ : Եւ չգար այն անոր գեղը ու
վսեմութիւնը աղարտելու , գիտութիւնն կուգայ և
իւր ձեռքը կը դպցունէ այս շքեղ կապոյտին , բայց
ոչ թէ զայն աւրելու , ինչպէս րիտ ձեռք մը կ'աւ-
րէ փափկասուն և գողարիկ ծաղիկ մը , և ինչպէս
նիւթապաշտից ցրտասառոյց ձեռքը կը թարշամեցու-
նէ ամենայն գեղեցկութիւն և վեհութիւն , այլ երբ
կը դպչի անոր , այն մոգական շօշափումը կը նապաս-
տէ միայն ամենայն ինչ առաւել փառացի , առաւել
սքանչելի և առաւել վեհ ընելու ի նմա : Գիտութիւ-
նը կը պատմէ մեղ թէ այս կապուտակ կամարը բիւ-
րեղեայ գմբեթ մը չէ , ինչպէս հիներն կը կարծէին ,
նա իւր վրայ չ'կրեր այս անթիւ աստղերն , այլ այս
կապոյտը միայն մեր աշխարհին մթնոլորտն է , որով
ամենիմաստ արարիչը զաշխարհ շրջապատած է , և
այս կապուտակ շղարշեայ քօղն այնքան նուրբ է որ
կը գտնուի անդր քան զմթնոլորտն անբաւ միջոցին
մէջ : Լոյսը իր ճարտար վրձինով այսօրինակ գեղա-
զարդ կապուտով մը կը ներկէ մեր մթնոլորտը , այն
հսկայական բոլորչի ձեւն զոր կը տեսնեմք յերկինս ,
միայն մեր մթնոլորտին ձեւն է : Սա լայնածաւալ

վարագոյր մ'է , բայց ոչ այնքան թանձր որ ծածկէ
տիեզերաց փառքը մեր աչերէն : Եւ ի՞նչ կայ վարա-
գուրին ետեւի կողմն : Գիտութիւնը կը պատմէ մեզ
թէ այդ մթնոլորտէն վեր , տարածեալ է դատարկ
անեղու և անհուն միջոց մը , յորում անընդհատ կը
թաւալին անհամար ահեղ գունդեր : Եւ այս տեսու-
թեամբ քանի՛ վեճմ է այս միջոցը , որ գոգցես վարա-
գուրին ետեւէն կը բացուի յաչու մեր :

ԲՐՈՅ. Յ. Հ. ՃԵՇԽԵԱՆ

(Տարժմունի երկնային մարմնոց)

Ա. ՄԱՐԴԻԿԱՆ

Եղի՛ ա՛յն քոչնոյ նման՝ դիւրաբեկ ուսոց վրայ
Դադարած վայրիկ մի ,
Որ կըզզայ՝ քէ կ'հակի իւր նիւղն՝ այլ կ'երգէ նա
Դիմէ՛ քէ քոհչէ ունի :

(Գարուն և Աշուն)

Ա. ՀԻՒԿՈ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՎՈՐՈՒԹԻՒՆ . — Յակոբ Հ. Ճեմիզեան , ծնած է յԱ-
տաբազար , ուսումն առած է թ . Հայուրի Ռոպերեան վարժա-
րան , եւ 1869 ին առաջին եւ միակ հայ լճրացաւարտն եղած է
նոյն հաստատութան . անմիջապէս անդ ուսուցիչ կարգուելով

իիշ ժամանակէն Ուսուցից արուկասից տիտղոսին բարձրացած է , եւ
նոյն վարժարանի ուսուցչական կանոնին անդամ ընտրուելով
ցարդ կը շարունակէ մեծ արդեմքը . հայ լեզուի եւ մատենա-
գրութեան դասերն ուանդել նոյն համազգային հաստատութեան
նայ ուսանողաց : Բազմանմուտ զրաքէս մի կը հանդիսանայ Ճե-
միզեան Բիւրակի համայնքին մէջ հարարակած զանազան յօդուած-
ներով , եւ ուրեմ ուրեմ խօսած զիտական հառերով , որոնցմէ
մին միայն հարարակուած է Շարժմունի երկնային մարմնոց :

Տ Պ Տ Ա Ի Ն Չ Ք Ք

Ո՛չ , մի՛ խարուիք երբոր կ'ըսեն թէ յաշխարհ
Կան այնպիսիք որ երջանիկ ապրին յար .
Թէ հանապազ նոցա գլխայն ի վերայ
Ցող բարութեանց յերկնից առատ կը տեղայ :

Երջանկութիւն . . . ո՞վ քեզ յաւէտ վայելեց ,
Բաժակդ անոյշ մինչ ցըվախճան ո՞վ քամեց .
Սի՛րտ դիւրախար . . . երբ զոյն բռնել կարծէիր՝
Նա կը թըռի , ըգեհեղ թողլով վշտուիր :

Կա՞ս դու արդեօք . . . և կամ չիկա՞ս , ո՞ գիտէ ,
Խորին Սիէնքս , քեզ իմանալ ո՞վ կարէ .
Հազարաւոր դարեր թող գտն և երթան ,
Միշտ մի գաղտնիք պիտի մընաս մարդկութեան :

Եւ ո՞վ կրնայ զայս ուրանալ . . . կա՞ն վարդունք ,
Բայց հազիւ թէ հըպին նոցա քո մատունք ,
Որ մինչ սրտիդ ցըխորն իւրեանց սուր փըշօք
իբըր կարիճ զքեզ խայթէն անողոք :

Երջանկութիւն . . . դու այն շուքն ես զոր դաշտաց
Վերայ ամպերն երկնից ձբգեն հովասլաց .
Զով էր այժմ իսկ . . . նոյն հով փըչեց և ահա
Յերկնից ի վայր նորէն հուր բոց կը տեղայ :

Ծաղին ես դու որ յառաւօտ կը բացուի ,
Անոյշ բուրմամբ , սիրուն տեսլեամբ , գեղանի .
Դեռ չէ՛ գիշեր . . . ինչո՞ւ ծաղիկ դու մէկէն
Ինկար թառամ , զարնուելով խորշակէն :

Քո պատմութեան մէն մի էջին , մարդկութիւն ,
Սրտաճիկ արտասուելով կուլաս դուն .
Այն տողերուն նըշանախեցն իսկ յետին
Լոկ քո արեամբ է դըրոշմուած ցաւագին :

Ծայրէ ի ծոյր ի'նչ անկումներ ահագին ,
Ի'նչ մեծ ազգեր կայծակնահար կորնչին ,
Այն Բարիլոն , Նինուէ , Մերիիս ի'նչ եղան ,
Զերդ շուք եկան , պահ մը մեծցան և անցան :

Որպէս յափունս իւր անսահմանն ովկէան ,
Անվերջ հեծմամբ կը հառաչէ յաւիտեան ,
Այնպէս և դու , վատարախտիկ մարդկութիւն ,
Տանջիս անդուլ ի մէջ վըշտաց քոց անհուն :

Խաչըդ կըրէ , խաչըդ կըրէ , եղիւլի՛ ,
Նա որ ծընաւ՝ անյոյս պէտք է չարչարուի ,
Քոյին ցաւեր լոկ այն ատեն վերջանան
Որ երբ մահուան քունով ննջես ի դամբան :

ՍՏԵՓԱՆ ՍՈՒՐԵՆԵԱՆ

(Երկրագուն)

ԸՆՏԻՐ ՄՏԱԾՄՈՒԽԵՔ

Մարդուս կեանելը ծպիտով մը կ'սկսի , հեծկլտանելով
մը կը շարունակուի եւ անդունդին մէջ արձագանգ
տուող փոշարի սովորակի ձայնով մը կը վերջանայ :



Ս Պ Բ Ո Ւ Հ Ի Ց Ի Տ Ի Կ Ա Ա Բ

Տիկին Սրբուհի Տիւսաբիր բնաձիր յատկութեանց
փայլ կը տայ ընտիր զգացումներով շազուած բնաւո-
րութիւն մ'որուն գլխաւոր հանգամանաց վրայ կըր-
նաս գալափար մ'ունենալ՝ եթէ երեւակայես համես-
տութիւն մ'որ չգեղեւիր տաղանդի և արժանաւո-
թեան տողեւ անկեղծ խոնարհամտութիւն մը պար-
զելու , իր ակմբանոցը (circle) կազմող յարդի կա-
հանց և արանց հետ անընդհատ ժպտուն դէմքով և
գոգցես արաբական հիւրտսիրութեամբ վարուելու
բնական յօժարութիւն մ'որուն մէջ ոչ սիգանք , ոչ
սեթեւեթ և ոչ ալ պահանջոտութիւն կը նշմարուի .
խօսելու , նա մանաւանդ խօսակցելու (causer) ար-
հեստ , կիրթ ճաշակ և ընտրութիւն որոնց չնորհիւ
իր ունկնդիրներուն և բանակիցներուն համակիր ու-
շագրութիւնը կը գրաւէ և ժամերուն սահիկը կը մոռ-
ցընէ . ստոյիկեան անտարբերութիւն մ'որով գիտէ
մարդկային կեանքի սովորական տհաճութեան , գառ-
նութեանց , ինչպէս նաև քաղցր պատրանաց փարատ-
ման վրայ բարոյական արիութեամբ ժպտիլ . ծայրա-
յեղ զգացնութիւն մ'որ ընդունուած փանաքի ծա-

ռայութեան մը փոխարէն շնորհապարտ մնալու , և գործուած անիրաւութեան մը դէմ արտմապէս մըր-մընջելու սովորած է . սրտմառութիւն մ'որով իր հո-գին կը սնի և արդար վրիժառութեան զգացումով մը կը համոկուի ճշմարիտը և գեղեցիկը գիտակցաբար անարդողին դէմ . անչուշա բարեարտութեան զգացու-մէ ներշնչուած ժրութիւն մ'որ անընդհատ կը գործէ երկու հայրենիքի՝ այսինքն իր ընտանիքին և իր աղ-գին բարօրութեան իւրովսանն նպաստելու համար , ներողամոռութեան ոգի՝ մ'որ պակասութիւն կամ յան-ցանք մը քննելու և վճիռ մ'արձակելու ատեն կը գի-մէ օրինակներու լւաւագոյնին՝ որ է կնային սիրութ :

Մեր վեհերոտ գրադէտներէ ոմանց կրնայ փրկա-ւէտ օրինակ մը ըլլալ Տիկին Ս. Տիւսար իր քաջասըր-առութեամբն որ համրօդուա համոզում մը կազմելէն ետք զայն յայտնելու կը համարձակի առանց փոխ-նալու օրինաւոր քննադառութենէ . իր վատահու-թեամբն որով իր մաքին ոյժին կ'ապաւինի և կը յան-գըգնի անարդու նայուածք մը յառել արտանց և կա-նանց բարձրագոյն շահերը վարագուրող նախապա-շարմանց և աւելորդապաշտութեանց վրայ , այժմեայ տեսութեամբ ըմբռնուած բարյականի և բնական ար-դարասիրութեան սկիզբներու համեմատ ընթացքի գիծ մը կազմել իրեն , նուաստ շողաքորթութիւնը և քինաբայր քննաբանութիւնը արհամարհել և հաւա-տարիմ մնալ իր ընդունած դրօշակին : « Մարդու կը պարտաւորի անգոսնել հասարակաց կարծիքը , իսկ կինը կը պարտաւորի հնապանդիւ անոր » կ'ըսէ Տիկին աը Սթաէլ :

Դարտցասէր աիկնանց աղնուամիտ Ատենապետը կրնայ Գորինի հեղինակուհին այս կարծիքը բոլորո-

վին չընդունիլ քանի որ ինքն իր պարտուց գերին և իր իրաւանց տիրուհին է , մին անմոռունչ կատարելու և միւսը անահ պաշտպանելու պատրաստ , և քանի որ այս կրկին նպատակին հասնելու միակ և անվրի-սկելի միջոց կը համարի աշխատիլ , աշխատիլ և շա-րունակ աշխատիլ :

Եւ այս աշխատասիրութեան շնորհիւ յաջողած է կազմելու իր միտքը՝ որ այժմեայ յառաջդիմութեան գաղափարներու բոյն մ'է . իր սիրութը՝ որ միայն ընտիր զգացմանց ազգիւր մ'է , իր ձեռները՝ որք դաշնակի մը ստեղնաշարին վրայ յաջողակօրէն կը թրթրան՝ մերթ հոգեկիր վիշտ մը մելամաղօրէն արտայատե-լու և մերթ սրտաբուղլս ցնծութեանց յայտարար ներ-դաշնակութիւն մ'արտադրելու և ունկնդիրն այս գաղափարներու առջեւ իր միտքը ամփոփելու , այս զգացմանց առջեւ իր սիրութ պարկեշտութեամբ հա-մակելու , և այս նուագոյին գեղգեղանաց առջեւ համրաբոր զմայլելու պէտքը կ'զգայ , յօժարակամ խօստավանելով թէ այս վառվառուն և քեղուն իմացա-կանութեան տիրուհին ինչպէս գրադէտի և լեզուա-գէտի յատկաւթիւններովք , նոյնակս և մայրերու լա-ւագոյնին առաքինութիւններովն իրաւունք ունի պարծելու և աղաղակելու .

« Ես ալ հոգի մ'եմ » :

ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

(Ուղեւորութիւն ի Կ. Պոլիս)

ԳԼՈՒԽԻԿ ԲԱՆՔ

Գրեթե նրանք այս էն , որու մեծ հանճար մը կը
քողու մարդկային ազգին , որք կ'աւանդուին սերունդէ
սերունդ , իբրև լինձաներ առ յետինս եւ առ որս՝ որ
դեռ չեն ծնած :



ԵՐԱՎՈՅԹ. ՍԻԹԻՒՆ

Հին ժամանակ Յունատանի մէջ զանազան լմաստայրական դպրոցներ կալիին , ասոնցմէ մին էր Սոյիկեան դպրոցն , որոյ հիմնայրին եղաւ Զենոն փիլիսոփան . Սոյիկեանի կը սիրէին հականառութիւն եւ նրբախոս էին . Բարյալասնի մասին առափնչութիւնը բարի կը համարէին եւ ափսերը չար :

Կենազրութիւն . — Գրիգոր Զիլինկիրեան , ծնեալ ի Զիմիռնա 1838 ին , ուսումն առած է տեղյան Մեսրոպեան վարժարանն , եւ իւր փոքրացանորեամբ ուսած է Հայերէն , Տաճակիրէն , Ֆրանսիերէն , Յունակէն եւ Խալերէն լեզուներն . Հմատ գրագէ մ'է Զիլինկիրեան . 1861 ին սկսաւ հրատարակի Ծաղիկ տասօնեայ հանդէսն , լի այնքան լսազոյն յօդուածներով : Գրիլաւոր զարձն է Ուղեւորութիւն ի Կ. Պոլիս , որ նամակաձև լորինուած գրական իմաստասխրական խորհրդածորթիւններ կը պարունակէ : Թարգմանած է զանազան վեպներ , ինչպէս Վ. Հիւկօր Թշուառներն , Մատիոն որ լուսի Խոստղանանիլ , Լամադինի Ռափայէլը եւալի եւալի :



ԱՐԵՈՒՅԹԻ ՄԱՐԱՊԵՏ

Անմահ ես , ո՞վ դու կին ,
Քեզ բիւր երանի ,
Դագաղիդ մէջ հանգչէ
Իբրեւ յօրանի .
Մըրա՛փէ , քունդ անուշ ,
Մանկունք խուռաներամ
Թող կապեն վեհ ճակտիդ
Պըսակ անթառամ ,
Եւ թող վարդ թափթըփէն
Հրեշտակներ դոգիդ :
Լուսոյ մէջ ընկզմի
Մաքրափայլ հոգիդ :
Ո՛հ , թէ ինձ ալ տրուեր
Քընարս լարէի
Ներբողեան հիւսելու
Քեզ , ո՞վ Սըրուհի .
Եւ սակայն ես ոչ սիրտ
Եւ ոչ երգ ունիմ .
Եւ մատանցս անհըլու
Լըոէ քընարն իմ .
Բայց ի՞նչ փոյթ թէ գեղջուկ
Քընարս է լըուեր
Կողբայ քեզ կին ուամիկ
Թող լըսեն գարեր :

Ժամուն կոչնակները :
Ինչու կը չալեն ,

ինչո՞ւ Խասպեղ կուգան
 Որբերը լաւէն .
 Փրկիչի տըղաքներ ,
 Ի՞նչ սուգ էք մըտեր ,
 ինչո՞ւ իրար կ'անցնին
 Վարդապետ , տէրտէր :
 Մէկդի կեցէք քիչ մը
 Թողէք ներս մտնեմ ,
 Ի՞նչ կայ . ո՞վ է մեռեր
 Աչքովը տեսնեմ .
 Հիմա խելքիս կուգայ .
 Ի՞նչ Մարապե՞տն է
 Մի' , ո՞վ ժամկոչ , ճաղը
 Վեր մ'առներ գետնէ :
 Զէ' , չեմ թողուր որ զինք
 Տանին մեր թաղէն ,
 Զեմ թողուր որ ամրիծ
 Սրբուհիս թաղեն :
 Ե'լ , Սրբուհի , ա'զիկ
 Ել , աչքելըդ բաց .
 Ա'լ , գուն քուն ես , գիտեմ ,
 Թարթիչներդ խըփած .
 Ե'լ , մի' թողուր որբերդ
 Անտէր անտէրունջ
 Նայէ' ի՞նտոր չորս դիդ
 Կուլան անմըռունչ :
 Ե'յ վախ , որո՞ւ կըսեմ ,
 Թըռեր է հոգին ,
 Զեռքերը խաչաձեւ
 Ծալեր են կուրծքին :

Լացըս ի՞նչ խեր կընէ ,
 Պարապ աշխատանք .
 Նոր հարսի քօղքի պէս ,
 Առեր է պատանք :
 Ես եմ որ ցից զարկի
 Խող կտրած պառաւ ,
 Մահը զիս հոս թողուց
 Եկաւ քեզ տարաւ :
 Խեղճ կընիկ ո՞ւր գացիր
 Պէտք էր որ հիմակ
 Քուկին չորս դիդ ցաթեր
 Արեւ արեգակ :
 Պէտք էր որ աչքըդ բաց
 Փառքըդ տեսնայիր .
 Աշխարքէն կշտացած
 Սեւ խող մըտնայիր .
 Զըսիր , չատ կանուխ է
 Ապլրիլ կուզեմ ես :
 Կեցի՛ր ո՞վ մահ , մեղք է
 Զատուխլ որբերէս :
 Անուշ գառնուկ վիզըդ
 Տուիր խաղաղիկ ,
 Ճըղակոտոր եղար
 Անթառամ ծաղիկ :

(Արեւելք)

Մ. ՅՈՒՂԱՆՆԵՍԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Մահն ազնուագոյնները կը լսիւսակէ , եւ յոնիները կը քողու

ՀՕՄԵՐՈՍ

ԿԵՆԱՎԱՐՄԱՐԻԱՆ. — Օրբունի Մայրապէս Նշան Քալմա-
նան , ծնեալ 1822 ին ի Գարքալ գիւղ , եւ վախնանեալ ի Խաս-
գիւղ 1889 Յունի 5 ին Գեն Տանեկու Տարեկան , ի Խօրէ որք ,
Մայրապէս կը լինի հակառակ իւր մօր կամաց . Ժամանակէ մը
վերջ ի Խասգիւղ Պատարայիւթավ՝ իւր գործօն եւ սրբաւէր կենօն
կը ծաւօքանայ տեղւոյն ժողովրդան նետքնետէ հոչակ կ'սա-
նայ : 1863 ի մեծ ճանախտն ատեն հոգելոյս Շահնազարեան կա-
րապէս Վարդապէսի խորհրդով Աղջկանց որբանցն կը հասաւէ
ի Խասգիւղ , օգակա՞ր հաստատութիւն , որ կը պայծառանայ իւր
ամիսնց չափիւք եւ բարեւարաց հուիրօք :

Օրբանցն կը վարէ այժմ Երանունի Մայրապէս Յովիաննես-
նան :



ՏԱՐԵԴԱՐՁ Վ. ՀԻՒԿՈՒ

Բարիգ 28 Փետր. 1881

Սիրելի Երուանդս ,

Երէկ մեծ տօն էր Բարիզի մէջ . Վիքթոռ-իւկօ իր
իմառաւոր կենաց ութուններորդ տարին կը մտնէր .
Հինգհարիւր հազար հոգի , ամեն կարգէ ու ամեն

տարիքէ գացին ողջունել պատկառելի ծերունին իր
տանը առջեւ . մէկ քանի հարիւր ընկերութիւն ներ-
կայ էին , միայն 404 նուագածուաց ընկերութիւննը
կային . գաւառներէն պատգամաւորութիւններ եկած
էին , Եւրոպայի շատ քաղաքաց ժողովուրդք մասնակ-
ցեցան Գաղղիոյ ազգին չնորհաւորութեանց ու բարե-
մաղթութեանց . հեռագիրներ տեղացեր էին Սնգ-
դիայէն , Գերմանիայէն , Ամերիկայէն , Աւստրալիայէն ,
Շուէտին , Իտալիայէն , Բօլոնիայէն , Բորմուգալէն ,
Ռուսիայէն և լն . և լն : Դամինիներ , պսակներ , ծաղ-
կանց փունջեր , անհատնում հոյակապ կապոց մը
ծաղիկներու զրկեր էր Գաղղիոյ Հանրապետութեան
նախագահը : Օր մը առաջ կառավարութեան կողմէն ,
առաջին պաշտօնեայն , Ժիւլ Ֆէրրի , ի չնորհս Վիք-
թոռ իւկօյի՝ բոլոր ազգային վարժարանաց , գլորցաց
և համալսարանաց մէջ տղայոց արուած բոլոր գպրո-
ցական պատիժներուն ներողութիւն կը չնորհէր : Գի-
տես որ վ . Իւկօն տղաքը շատ կը սիրէ . ուստի ասկէ
մէծ հաճոյք մը չէր կրնար ընել կառավարութիւնն
իրեն : Երէկ գպրոցաց տղաքը խմբովին իր տանը առ-
ջեւն էին . աղջկանց խումբ մը ճերմակներ հագած
ծաղկանց փունջեր ներկայացուցին իրեն ու մէջերնուն
մէկը ոտանաւոր մը կարդաց , որուն վերջին տունը
սա իմաստն ունէր . « Թող նախանձին որչափ կ'ուզեն
Ժանն ու Ժէօրժ , (վ . Իւկօյին թողնիկներն) գու մեջ
գրէ՝ մեզ համբուրէ մեծ հայրիկ » : « Ա՞հ ի՞նչ ազնիւ
էք , ի՞նչ սիրուն էք » . ըստ վ . Իւկօ . ու Ժանն ու
Ժէօրժը գրկեց համբուրեց : Ես ալ իր տեղն ըլլայի
այնպէս կը լինէի և ոչ զոք կը փոխանակէի իմ Երուան-
դիս հետ : Զորս կամ հինգ կամ վեց ժամ տեւեց մին-
չեւ որ այն ահագին բազմութիւնը ժողովրդեան որ

Բլաս տը լա Քօնքօրտէն պկսեալ կը յառաջանար դէպի
յաղթութեան կամարը և անտի յ'Ավընիւ տ'էյլօ,
դրօշիւք ու վառելովք , կեցցէ՛ Վ. Իւկօ գոռալով ,
անցաւ բանաստեղծին համեստ տանը առջեւէն ։ Վ.
Իւկօ բաց պատուհանին առջեւ էր կանդնած բաց
գլխով , որուն վրայ կը կրէր ճերմակ մազերու պսակը
ու ցումունքն աստուածային խանդի և հանձարոյ ,
այլ ինք ետեւօք կանդնած էր ապաստանելով անմե-
ղութեան ու սիրոյ վահանին ներքեւ , իր սիրելի
ժանին ու ժէուժին , որ անոնք ալ գլխարաց շարու-
նակ կ'ողջունէին բազմութիւնը ու Վ. Իւկօ կը ժպտէր :

Ես ալ այն միջոցին պատուհանին հանդէպ կանդ-
նած ժողովրդեան բազմութեան մէջ , կը դիտէի մեծ
ծերունին ու փոքրիկ մանկալին ու անդրադառնալով
— ուրկէ ուր — իմ վրաս ու քու վրադ , սիրելի իմ
երուանդ , կըսէի ինքնիրենս , « Վ. Իւկօ իր փառքին
մէջ մեկուսացեալ պիտի հիւծէր եթէ այն երկու ման-
կիկները չըլլային զորոնք այնքան կը սիրէ , ես ալ
իմ անջուք ու անբերրի կեանքիս մէջ բան մը որ ամեն
բան կ'արժէ , Երուա՞նդս » :

Քոյդ
Գ. Ս. ՕՏԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Պասկ ծերոց , որդիի որդոց :

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բառք . — Մեկուսացեալ , առանձնացեալ ,

Ա Ղ Ք Ա Տ Ի Ն Հ Ա Յ Լ

Գարուն է , ժամ՝ ժըպիտներու ,
Արցո՛նք հոս կը կայլակէ ...
Թո՛ղ , անգո՛ւթ , ծաղկունքոդ մէկդի
Հոս նօթին հա՛ց կը խնդրէ :
Զե՞ս տեսներ , ա՛փ քեզ կարկառած ,
Իրը առ Աստուած աղօթկեր ,
Աղեկըտուր արձակէ ձայն
« Ողորմէ՛ ինձ » ... չե՞ս լսեր ,
Եւ կանցնիս , վա՛հ , խո՛ւլ՝ անըզգայ
Հառաչանացն աղքատին ,
Ինչպէս կ'անցնի արծարծելով
Հըդեհին հուրն՝ հո՛վն ուժգին :
Ո՛վ մեծատուն , ճոխ քըսակէդ
Թէ լումայ մը նետէիր
Այն ափին մէջ , պատու մը հաց
Նօթի շրթանց տի տայիր :
Այլ չես ըզգար ի՞նչ է նօթին ...
Կ'ըզձաս ոսկին կուտակել ,
Ոսկին ոյր փայլ ոչ բնաւ կրնայ
Մահուդ վիհ լուսաւորել :
Ո՛հ , գոզգոջուն ձեռք մը բախեց ,
Բա՛ց , ո՛վ անդութ , ճոխ սեղանէդ
Հա՛ց կը մուրայ աղքատ մը ...
« Աղքատ է » կը գոչես ներսէն ,
Եւ գուռն ամուր կը փակուի ,
« Կտո՛ր մը հաց զաւկրներուս »
Կ'աղաչէ ձայնն աղքատի .

Եւ ծով մ'աղերս ու հեծկըլտանք ,
Արցունքներո՛ւ ալիքներ ,
Ժայռ սրտիդ գէմ զարնըւելով
Կը փշրին , քեզ չեն ցնցեր . . .
Վա՛հ , երբ աղքատն ողողելով
Քո դրան սեամքն իւր արցունքով ,
Անյո՛յս քենէ կը հեռանար ,
Դու հանգչէիր անխըռով ,
Բայց թշուառն այն գուցէ անսուալ
Հըսկէ գիշերն այն ի բուն ,
Գուցէ չունէր հա՛ց չորաբեկ
Տալու իւր զաւկըներուն :

Մուրալ մարդոյն աղօթելէ ,
Աղօթք երկնից են արժան ,
Եւ մարդ ըզմարդ եթէ պաշտէ
Երկինք կը նըսեմանան :
Հա՛ց տըւէք երբ տեսնէք նօթին
Այս է մարդոյն ապացոյց
Թէ ըզգայուն էակն է ինք
Ի մէջ այլ արարածոց :
Եւ երբ աղքատն ա՛լ չը մուրայ ,
Երբ գութն ինքնին ողորմի ,
Վըսեմացաւ մարդն այն ատեն ,
Զի գութ հոգին է երկնի

ՏԻԳՐԱՆ Ս. ՍԵԹԵԱՆ

(Գարուն եւ Աշուն)

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ
Ողորմուքիւնն աղօթից եոյրն է :

ՀԻՒԽՈ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱԳՐՈՒՔԻԱ. — Տիգրան Ս. Սեթեան , երեց եղբայր Յովհաննես Սեթեանի , զգայուն բանահիւս , յօրինած է զանազան տաղեր , որքնաւարակուած էն Գարուն և Աշուն գրենյիկով . նոյնական գրած է ներշնչելունիք :

ՏԵՍԱՐԱՆ ՀԱՅՎ. ՄԱՅ ԴԱՆ ՏԻԳՐԱՆ

Մեր թուականէն եօթն կամ ութ հարիւր տարի
առաջ կանգնեցաւ Հռովմ . իտալական մեծ քաղաքն ,
որ իւր ծոցն բանալով զանազան շրջակայ ցեղերու ,
հնազանդեցուց իտալիան Լատինի միջոցաւ , և իտալիայ միջոցաւ՝ զալմարհ :

Այսօր բովանդակ այն երկրին ժողովուրդն նուազած է . երեսուն և հինգ ցեղերուն շատին բնակութեան տեղեաց վրայ ուրիշ բան մնացած չէ . բայց կիսաւեր ամարանց մի : Թէպէտև Հռովմ մեծ քաղաք մը եղաւ , այլ անապատն կը սկսի իւր շրջապատին մէջ իսկ : Աղուէսք՝ որ կը պահուըտին Պալատինի աւերակաց մէջ , կ'երթան գիշերայն ջուր խճել վելապոշի ծործորէն : Այծերամակներ , հուժկու եզներ , կիսավայրի ձիեր՝ որոց կը պատահիք , այժմեան մայ-

րաքաղաքի մը շքեղութեան և ժխորին մէջ ձեզ կը յիշեցնեն ամայութիւնն՝ որ կը տիրէ քաղաքին մէջ։ Եթէ անցնիք դռներէն, եթէ վերելակէք կապուտերանդ գագաթներէն մին, որ կը պսակեն այն մելամաղճիկ գիւղական տեսարանն, եթէ երթաք Ալտեանց անեղծանելի ճամբէն ի մէջ Պոնտեանց ճախճախուտներուն, պիտի գտնէք չիրիմներ, ջրմուղներ, թերեւսնաւ ամայցեալ ագարակ մի, հոյաշէն կամարներով, բայց չէ մնացած մշակութիւն, չիք շարժում, չիք կեանք։ Ուրեք ուրեք կը նշմարուի հօտ մի կատաղի շան մը պահպանութեան տակ՝ որ գայլանման կը յարձակի անցորդին վրայ, և կամ գոմէշ մի՝ որ գուրս կը հանէ իւր սեւաթոյր գլուխն, մինչ արեւելքի մէջ որիներու երամներ լեռներէն վար կ'իջնեն կերկերեալ ճշմամբ։ Եթէ մարդ դառնայ դէպի յօսախա, յԱրտէա, պիտի տեսնուին գրգլեկաւոր մի քանի թըշուառներ, նիշարութենէ քստմաստեսիլ ու տէնդէ դողդոջուն։

Սյս աղետից և ամայութեան մէջ երկիրն կը պահէ շքեղաշուք և յոյժ պատկառոտ հանգամանք մի։ Լեռանց վրայ այն լիճերն, գեղեցիկ կնձնիներէ, սիգապանծ կաղնիներէ շրջապատեալ, այն նէմին, Դաւրիական Սնահտայ հայելին, (speculum Dianaæ), այն Ալպանոսն կատիոնի կրօնից վաղնջական օթեանն, այն բարձրաւանդակք, որովք դաշտն յամենուստ շրջապատեալ է, Հռովմայ արժանի պսակ մը կը յօրինեն։ Մուզինո լեռնէն, անոր նսեմաստուեր անտառէն պէտք է նկատել Բուսէնի պատկերն։ Մրգկայոյզ օրեր մանաւանդ, մինչ տաժանելի խորշակն դաշտագետնին վերայ կը ծանրանայ, և երբ փոշին կը սկսի մըրկիլ, այն տաեն կ'երեւեի իւր նսեմ վեհութեան մէջ անսալատի ոստանն։

Երբ անցած էք հասարակաց հրապարակէն և անդ կանգնեալ եգիպտական կոթողէն, կը մոնէք Գոռսոյի տիսուր և երկայն փողոցն, որ Հռովմայ ամենէն աղմըկալի փողոցն է, գնացէք մինչ ի կապիտու, ելէք ծերակուտի պալատն, Մարկոս Աւրելիոսի և Մարկոսի յիշատակարաններուն մէջտեղ Հռոմուլոսի բնակարանին մէջ կը լինիք, (intermontium)։

Այն բարձրաբերձ վայրն կը բաժնէ կենդանեաց և մեռելոց քաղաքն։ Առաջնոյն մէջ որ է ի նախնի արիսեան դաշտի, պիտի տեսնէք Տրայիանոսի և Սնտոնինոսի սիւներն, Պանթէոնի բոլորչի տաճարը և արդի աշխարհի յանդգնական շինուածքն, այն է Ս. Պետրոսի գմբէթն։

Դարձէք, ձեր ոտից ներքեւ կը տեսնէք հրապարակ (Forum), յաղթական ճամբան, և միիթարութեան արգի գարմանոցն Տարպեան ժայռին քով։ Հոսխառն ի խոտուն թաղուած են հնութեան ամէն դարերն, ամէն բեկորներն, Սէպտիմ Սեւերոսի և Տիտոսի յաղթական կամարները, Որոտագոչ Արամաղդայ սիւներն։ Անկէ անդին Պալատին լերան վրայ տիրատեսիլ աւերակներ, կայսերական ապարանից նսեմ հիմունքն։ Աւելի հեռուն, և ձախակողմն կոլոսէոնի անհեթեթ շեղակլոյտն։ Միմիայն տեսնելով զայն՝ զարմացման և սարսափի աղաղակ մի արձակեց Մոնթանեը փիլիսոփայն։

Կոլոսէոնի ամբիթատրը, ուր այնքան քրիստոնեաներ մարտիրոսութեամբ տառապեցան, իւր շքեղութեամբ կը գերազանցէ մարդկային ուրիշ ամէն գործ։ Հազար վեց հարիւր ոտք շրջագծով և հարիւր յիսուն եօթն ոտք բարձրութեամբ քարանց ահագին լեռ մի է, այս լեռն, կէս մի աւերակ, այլ ի բնուստ շքեղա-

զարդ, ունի իւր տունկերն, ծառերն ու ծաղիկներն։ Արդի բարբարոսութիւնն անտի հանած է իր քարահանքէ մի ամբողջ պալատներ։ Թէ ի՞նչ բանի նախասահմանեալ էր այն յիշատակարանն՝ ուր Տրայիանոս խողխողեց 10000 գերիներ հարիւր օրուան մէջ, ամենուրեք կը տեսնուի իւր աւերակաց մէջ։

Յայնկոյս կոլոսէոնի և Պալատին լերան, յայնկոյս Աւանտին լերան Հռովմ կը տարածուի իւր շիրիմներով։ Անդանօր կը պատահիք Սկիպոնեանց ստորերկրեաց դամբարանին, կէստիոսի բրգան, կէկէլիս Մէտէլայի աշտարակին, և գետնադամբաններու, պաւէն և շիրիմ մարտիրոսաց, որ կ'ըսեն թէ կը տարածուին Հռովմայ ներքեւ և մինչեւ Տիբերիոսի յատակին ներքեւ։

Այսպէս Կապիտոլէն գիտեալ այն եղերական քաղաքն գիւրըբունելի կ'ընէ իւր պատմութեան միութիւնն և ընթացքն իւր գլխաւոր յիշատակարանաց մէջ։ Հասարաւակը մեզ կը ներկայացնէ Հասարակագետութիւնն. Օքսոտոսի և Ազրիպալասի Պանթէոնը հնոյն աշխարհի բոլոր դից և ժողովրդոց միութիւնը ցոյց կուտայ ի նոյն և մի կայսրութիւն և ի միակ տաճարն։

Հռովմէական պատմութեան միջին ժամանակաց այդ յիշատակարանն կը գրաւէ Հռովմայ միջնակէտն, մինչ յերկոսին ծայրս կը տեսնէք, Քրիստոնէութեան առաջին պայքարներն՝ Կոլոսէոնի մէջ, յաղթանակն ու տիրապետութիւնն՝ Սրբոյն Պետրոսի եկեղեցւոյն մէջ։

ՄԻՇԼԵ

Դեղեջիկ ԲԱՆՔ
ու ծառի ավագանութեան ու արքայի կը պատրա

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Այն մարդէն որ իւր փառաւոր նախնեաց վերայ կը պարծի, կը նմանի գետնախնձորի մը՝ ուոյ ամենէն պատուական մասն հողին մէջն է։

— ՀՅ —

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Կենսագրութիւն։ — Ճ. Միւլէ, Գաղիացի նշանուոր պատմաբան, ծննդէ ի Բարիլ 1798 եւ մեռած 1874 ին։ Խր զիսաւոր զործերն են Պատմութիւն Գաղիոյ, Պատմութիւն Հռովմայ, Կինն, Թուունն, Միջաման եւայլն եւայլն։

ԲՈՒԽԵՆ Գաղիացի նկարիչ, որ իշալմական աշխարհներու տեսարաններ նկարած է (1593—1665). Մրեւ Մութանեզ, նեղինակ Փորձ անուն գրին (1533—1592)։

— ՀՅ ՀՅ ՀՅ —

ԼՈՒՍԻՆ

Ողջոյն տամ քեզ անհուն սիրով, ո՛ լուսնակդ իմ,
Առանձնակեաց արխուոր հոգւոյս գու մտերիմ,
Թէ ըլլայիր գու, և փափուկ քո այդ շողեր
Զը գըգուէին արժգոյն ճակատն իմ սրգաստուեր
Շատ իսկ կանուխ դառն արտասուաց մէջ ես, աւա՛զ
կը փըչէի կեանքս, որ կանդեղ մի է նուազ.

Նուազ՝ այո՛, և գոգ երազ վաղասլացիկ
Սեւ աշխարհիս հորիզոնէն կանցնիմ մենիկ։

Բընաւք զիս ցուրտ կարծեն զուարթ կամ անտար-
բեր,

Այլ դու միայն , դու կը տեսնես սըրտիս կայծեր ,
Մինչդեռ երկնից անդունդներէն ինձ կը նայիս ,
կարծես սըրտիս տխուր պատկերն ի քեզ ունիս ,
Եւ անհամար բոյլերն աստեղց թողած հեռուն՝
Ամոյութեանց մէջ կը շրջիս գիշերն ի բուն :

Ո՛վ դու լուսնակ , քանի՛ չոքնաղ ես և փափուկ ,
Քո նշոյներ սրտիս խորէն քաղեն արցունք :

Տիեզերաց ոգի՞ն ես դու արդեօք , թէ Տէր
Քո հայէլոյդ մէջ կը դիտէ զիւր վեհ պատկեր ,
Հոգւոյս համար մի խունկ ես դու աստուածավառ ,
Խոկ աշերուս նոյն ինք էին թուիս տիպար :

Այլ անուշ գեղ քո և շընորհ մելամաղճիկ
Ծածկեն յինքեանս ողի խոկուն երկնազգեցիկ ,
Զի գըթացեալ ընդ խոր աղէտս հէք մահացուաց՝
Խորհրդաւոր գամբաններու ելնես ի յայց :

Եւ ըզնոնեաց գըգուել կատարս տերեւախիտ
Փիլոմելեայ տըրտում երգոց յար գընես միտ :
Զէ քեզ հաճոյ ոսկեծեղուն ճոխին պալատ ,
Քո սիրելի վայրք են , դաշտերն , անտառքն ապատ ,
Յոր հոգիք մեծ յածին թաւուտ թըփոց ներքեւ ,
Յոր մի մըրմունջ թողու վտակ , ծաղիկ , տերեւ .
Վիշտ քեզ համար մի հրապոյր է , և աւերք սեաւ
Ոգեւորեալ փայլին ի շող լուսոյդ անբաւ :

Մի սիրտ ես դու , ըզգամ ես զայդ , սիրտ քերթողի
երազներով , հըրով , տենչով ու խանդով լի ,
կամ հայրենեաց գաւառներէն նըմքեհ մի կոյս ,
Որ քօղի տակ ծածկես արցունքդ , հառաչդ ու յոյզ :
Չունիս բարբառ , լուսնակ , այլ ես գիտեմ քանի՛
Հուր և աշխոյժ քերթողական ի քեզ վառի ,

Այդ տիսուր դէմք քո պերճախօս է բաւական
ինձ յայտ առնել թէ չես ուրիշ աստեղց նման :

Ես ալ քեզ պէս տըրտում եմ , ա՛հ , և տարագի՛ր
ինձ համար ալ չունին հրապոյր վայելք պատիր .
Քեզ տամ ի ձօն հոգիս անբաւ սիրոյս նըշան ,
Պատմէ նըմա խորհրդաւոր վըշտերդ համայն .
Նա զերթ քնար թըրթըռալով յաստեղց յաստեղս՝
Քո հառաչներ պիտի սփոէ ի տիեզերս ,
Եւ յաւիտեան կեցած անհուն դարուց վերայ
Միշտ սուրբ սիրոյդ քու երգաբան պիտի ըլլայ :

Տիկին Կ . Տանելեան

(ԶԱՊԷԼ Յ . ԽԱՆՃԵԱՆ)

ԼԱՑԻՆԱԿԱՆ ԱՌԱԾ

Ամենայն ինչ Աստուծմով :



ԿԵՍԱՐ ԵՒ ԿԱՏՈՆ

Կ . Յուլիոս Կեսար կը սերէր Պատրիկներու ըն-
տանիքէ մը , որ կը յաւակնէր սերեալ լինել մէկ կող-
մէ Աստղիկէն , միւս կողմանէ Սնկոս Մարտիսոէ , Հը-
ռովմայ արքայէն : « Այսպէս , կ'ըսէր նա իւր մօրա-
քրոջ Յուլիայի դամբանական ճառին մէջ , կը գտնուի
իմ ընտանեացս մէջ արքայից սրբութիւնը , որ տեարք

են աշխարհի, և աստուածոց վեհութիւնը, որ տեսարք են արքայից ։ Կեսարի մօրաքոյրն ամուսնացած էր Մարիսոսի հետ։ Այն զանազան տարերք՝ յորոց կը բաղկանար Հռովմ, վաղեմի քրմական պատրկութիւնը, ասպետաց կուսակցութիւնը, իտալացոց կուսակցութիւնը կը թուէին ամփոփեալ լինել յանձին կեսարու։ Այն ժամանակ՝ ուր հասանք, եղական ճարտարախօսի, ստահակ և ձեռներեց մարդու համբաւ կը վայելէր, որ ամէն ինչ կուտար համայնից, որ բոլորանուէր էր անոնց՝ որոց բարեկամութենէն շահ ունէր, իւր բարքերն իւր ժամանակի բոլոր երիտասարդաց բարքերն էին, ինչ որ յատուկ էր միայն կեսարու, այն սոսկալի շռայլութիւնն էր, որ փոխ կառնուր և կուտար առանց հաշուելու, և որ ուրիշ հաշույց չէր սպասեր, բայց միայն քաղաքական պատերազմի։ Այն յանդգնութիւնն էր որ միայն աշխարհի վրայ զանի պատրաստեց դեռ տասնեեօթն տարեկան դիմակալել Սիլլայի կամաց։

Այն դիկտատորն անոր արձակել տալ կ'ուզէր իւր կինն։ Մեծն Պոմպէոս որ յայնժամ այնքան հզօր էր, նմանօրինակ հրամանի մը հպատակած էր, կեսար մերժեց հնազանդիլ, և չկորսուեցաւ երբէք, իւր բախտն Սիլլայի բախտէն հզօր եղաւ։ Բոլոր ազնուականութիւնը, վեստեան կուսանք իսկ դիկտատորին քով միջնորդեցին, և խնդրեցին այն անհնազանդ տղուն կեանքը շնորհել։ «Զայդ կուզէք, կը շնորհեմ, ըստու. բայց այդ տղուն մէջ բազում Մարիսոներ կը տեսնեմ»։

Կեսար չընդունեց երբէք այս ներումը, և չհնապանդեցաւ բնաւին, յԱսիա ապաստանեցաւ։ Ծովահէններու ձեռք իյնալով զարմացուց զանոնք իւր իսի-

զաի վարմամբ, քսան տաղանդ խնդրած էին նոքա իբրև փրկանք։ Շատ քիչ է, ըստ անոնց, յիսուն պիտի առնուք, բայց անգամ մը որ ազատիմ, զձեզ ի խաչ պիտի հանեմ։ Եւ խօսքը կատարեց։ Հռովմ վերադարձին համարձակեցաւ Մարիսոսի յաղթական նշաններն բարձրացնել աւելի վերջը, սպանիչներու դէմ դատական քննութեան պաշտօն առած ըլլալով, պատժեց այս անուամբ Սիլլայի տւազակներն, դիկտատորին օրինաց տռանց նայելու։ Այսպէս ինքզինք բարձրաբարբառ հաշակեց պաշտպան մարդկութեան, ընդդէմ այն կուսակցութեան՝ որ քաղաքին միութիւնը պաշտպանած էր այնքան արիւնհեղութեամբ։ Ամէն խոշտանգեալ կարող եղաւ դիմել առ կեսար։ Իւր քննիչ ըլլալէն ի վեր զարդացուց լտտինսկան դաղթականութիւններ, որք կ'ուզէին վերստին ձեռք բերել այն իրաւունքներ, զորս Սիլլա իրենցմէ յափրշտակած էր։ Այն առաջին երկու անգամ, յորում խօսնակաց յատուկ տեղն երեցաւ, խօսեցաւ ի նըպաստ յունաց ընդդէմ երկու հռովմայեցի տտենակալաց։ Աւելի վերջն Գալլիոյ անտառաց և ճախճախուաններուն մէջ գտնուած տտեն, երբ ահեղ պատերազմ մը կը մըռէր, զարդարեց իւր ծախքով։ Յունաստանի և Սիխոյ քաղաքներն հասարակաց յիշտակարաններով։ Բարբարոսներն և գերիններն իսկ ուշադրութեան կ'առնուր, կը ոնուցանէր բազմաթիւ սուսերամարտներ ըմբշակազերու մէջ կուել տալու համար, բայց երբ կը թուէր թէ հանդիսատեսք անոնց մահուան կ'ըզճային, զանոնք կրկէսէն կը հեռացնէր, նա երբէք չունեցաւ լաւագոյն զինուորներ քաղաքական պատերազմի մէջ։ Հին աշխարհը զկանայուարտուքն էր քաղաքացիութենէ։ Կեսար նախընծայ

օրինակն տուաւ մինչեւ մանկամարդ կանանց հրապարակային մեծարանք մատուցանել : Հանդիսապէս արտասանեց իւր Յուլիա մօրաքրոջ և կոռնելիա կնո՞ղ դամբանական ներբողն : Այսպէս կեսար իւր ազատամշտութեամբ, մեծանձնութեամբ, նոյն իսկ մոլութեամբք էր ներկայացուցիչ մարդկութեան ընդդէմ խիստ ոգւոյ հասարակապետութեան, արժանի էր նա կայսրութեան հիմնադիր լինել . որ սիրտի բանար աշխարհի առջև զուզմայ դրունքն : Թէ ի բարիս, թէ ի չարիս մարդկութեան մարդը կեսար եղաւ, օրինաց մարդը կատոն . Սա կը սերէր խօսասէր կատոնէն, այն խստակեաց իտալացիէն, որ ուրիշ կեսարու մը դէմ այնքան ուժգին կռուած էր : Վերջին կատոնին վրայ Պորկեանց մոլեգին խստութիւնը յունական ստոյիկութեամբ մաքրուած էր, զուզմայ մէջ աւելի յարգանք ստացած էր քան Ատենակալքն և Ծերակոյտն : Փլորայի խաղուց մէջ ժողովուրդն լիտի պար մը խնդրելու համար կ'սպասէր որ կատոնը թարրոնէն դուրս էլնէր :

Իւր թշնամիք պարսաւելի ինչ չգտնելով այդպիսի մարդու վրայ ունայն խծրծանքներ կ'ընէին : Կամբաստանէին զանի թէ յետ ընթրեաց կը խմէ, բայց զինք արբշիո չտեսան երբէք, կ'ամբաստանէին թէ յամառ կը թուի, բայց նա փոքր ինչ խուլ էր, թէ զայրացկոտ էր, բայց ամենայն ինչ զինք գրդռել պարտէր, վերջապէս թէ ոիշդ էր :

Կեսար իւր հակա-կատոնին մէջ չարամութեամբ կ'ըսէր թէ իւր եզրօր մարմինն այրած ըլլալով՝ աճիւնն մաղէ անցուցած էր զոելու համար հրով հալեալ սակին : Ստոյգ կշտամբանք՝ ում արժանի էր կատոն՝ էր այն զայրացու խստութիւն, այն յամառ յարումն ան-

ցելոյն, որ զինք անկարող կ'ընէր հասկնալ իւր ժամանակն : Այն լրբենի ցուցամոլութիւնն էր որով կը սիրէր անտարբեր իրաց մէջ արհամարհել ժողովուրդն՝ յորում կապրէր : Պրետոր եղած ժամանակ իսկ կը տեսնուէր որ հրապարակէն կ'անցնէր առանց ամենանի, պարզ պարեգօտով, բոկոտն իբրև գերի ոմն, և այսպէս կ'երթար բազմիւ յատենի :

ՄԻՇԼ

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Պատմութիւնն է վկայ ժամանակաց, լոյս հւմանութեան, վկայ ներկային, դպրոց կենաց, յայտնող անցելոյն :

ԿԱԿԱՐՈՒ

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գրտգիտութիւն. — Զուգակշիռն է բաղդատութիւնն երկու հաւատոր անձանց, երկու առաջնութեանց եւայլին : Կեսար եւ կատոն օրինակ են զրկակուի :

Պատմութիւնն կը բացատրէ իրողութիւններ եւ պատմաներ : Պատմութիւնն պարտի ըլլալ յսակ, զգուշաւոր մանրամասնութեանց մէջ եւ կարելի եղածին չափ սկսիլ բարոյական եւ բնական նկանագրով մը այն առարկայեցեր որ կարեւոր դեր կը խաղան :

Բառե. — Զեններկց, համարձակ . — Խիզակ, յանդուզն . — Արշին, արքեցող . — Ոիշս, կծծի . — Զաշացու, կոյր . — Ամղան, վերարկու .

—————
—————

ՄԱՀ Վ. ՀԻՒԿՈՒ

Վ. Հիւկոն մեռաւ :

Ուղեկորոյս մարդկութեան աղէտքը կատարեալ եղաւ, վերջին նաւահանգստին լապտերն ալ մարեցաւ, Ո՞վ Աստուծոյ վրայ պիտի խօսի մեզի այսուհետեւ, ո՞վ մեր հոգիները պիտի արթնցնէ : Ո՞ւր առիւծոր դիսակախ անտառաց մէջ պտտցնէ իր բաշն ահադին ու երբ երկինքը գոռայ՝ ինք ալ վարէն որսուայ երկրի բոլոր արձագանգներն արթնցնելով : Էին, էին ի մարդկութեան՝ մեծ երու մէջ մեծ բանաստեղծներ Հոմերոս, Տանթէ, Շէքսբիր . այլ մարդարէ բանաստեղծներ եղան մանաւանդ Լամառթին ու Հիւկօ :

Շատեր հիւցան իր հանձարին վրայ . . . ի խոր թափանցելով այն մեծ հոգին, Թշուառներու սքանչելի վէպը կարդալով, ուսումնասիրելով և մտաց ու հոգւոյ մէջ ընդունելով այն բոլոր Աստուածաբանութիւնը, այն բոլոր ընկերաբանութիւնը, այն ձայնն հոգենուագ, այն բոլոր սարսուռը, այն բոլոր յոյզին ու խայտանք, բանն ու ճշմարտութիւն, յոյս և սէր, հուրն ու խանդ, սուրբ սրամտութիւն ու սուրբ գըթութիւն, ու սուրբ ևս ներողամտութիւնն, որով միայն մարդկային արդարութիւնը Աստուածային արդարութեան կը մօտենայ և որ Հիւկօյի հանձարին մասն է սիրալի :

Այս վէպը իր նմանը չունի ազգաց լեզուներուն մէջ և Հիւկօյի հանձարը հագիւ կը բաւէր զայն գըրելու : Այսպէս են մէն մի հրաշակերտ որ ելած են իւր գրչէն :

Բանաստեղծութեան ամեն ձիւղերուն մէջ արտա-

քոյ կարգի փայլով փայլեցաւ : Ամեն մեծ քերթողի հետ, Հոմերոսին ի Տանթը ու Շէքսբիր՝ մինչև ի Պայրըն ու Շիլիո, իւր մասնաւոր ճիւղին մէջ պայքարեցաւ և հաւասար եկաւ : Լուսոյ ցոլմունքներով գրեց, ամեն բառէ ճառագայթ մը հանեց, շատանգամ ալ ըստ կամաց՝ շանթը լուեցուց կամ շանթ արձակեց . միչեց ու մոնչեց, աստ ցօղն երկնքին, անդտարափք ու սահանք . տողեր կան որ երբ կը կարդաս, կը զգաս զեփիւսին թեւերն ու մէյ մ'ալ յանկարծ կը լսես արծիւներու թուիչներուն բախիւնը որ զայերս կը խօսեցնեն : Անձողոպելի կիջնաս իրեն հետ ի մթին յատակս անդնդոց, մէյ մ'ալ կ'ելլաս յանմատչելի կատարս լուսոյ մաքրութեան :

Եւ այս բոլոր այլակերպ բանաստեղծութիւնը ի՞նչպէս կը գիւթէ, կը վայլեցնէ, կը խուզէ, կալեկոծէ, կը հանդարտեցնէ, կ'ամոռէ, կը հրդեհէ միտքք ու հոգիդ : Իր հանձարը անհեթեթ բան մը ունի որ կը հրագուրէ ու . կ'ընկրկէ միանգամայն :

Զի ինք մեծ էր, մեծ կը աեսնէր ամեն բան : Ահա ընդհանուր կնիքը իր բանաստեղծութեան :

Եւ զի հեռուն կը տեսնէր, ներկայէն դուրս մըզուած էր : Ահա ընդհանուր կնիքը իր քաղաքականութեան :

Եւ զի մարդարէ էր, Աստուծոյ և հանդերձեալ կենաց կը հաւատար : Ահա ընդհանուր կնիքը իր իմաստասիրութեան :

Իր աստուածապաշտութիւնը քրիստոնէութեան գողար ու հրաշալի ձեւն ունէր : Վերջին տարիներուն՝ զայն ձեւը մերկացած էր : Այլ եթէ քահանային չէր հաւատար, առաւել եւս կը հաւատար Աստուծոյ : Հանդերձեալ կեանքը կրօնական վարդապետու-

թիւն մը չէր իրեն համար , այլ ստուգութիւն : Աչօք
բացօք կը տեսնէր զայն : Միայն թէ Աստուծոյ և իր
մէջ միջնորդ չէր ընդուներ . և ո՞վ կրնար միջնորդ
ըլլալ Աստուծոյ և մարդուն մէջ , բայց եթէ նա ին-
քըն բանաստեղծն : Անոր համար չ'ուզեց որ քահանայն
գտնուի ոչ իր սնարին գլուխը և ոչ դադաղին առջև :
Այլ սա տողերը գրեց իրրեւ կտակ .

« Ովոր հոգի մը ունի , թող աղօթէ ինձի համար » :
Եւ ես աղօթեցի ու իր յիշատակն ալ օրհնեցի :
Առ ի՞նչ պէտք էր որ ծնած ըլլայինք այսպիսի ժա-
մանակի մէջ , եթէ Լամառթինն ու Վ . Հիւկօն ալ
չըլլային :

Գ. Ս. ՕՏԵԱՆ

Ա.Բ ԲԱՆԱՍՏԵՂԾՈ

Ո՞վ երկնազդեցիկ ոգիներ , դուք վիշտ նեմարտութեան
եւ արդարութեան բահանայներն էք , զեղեցկին կրօնն ու-
նիք , մարդկութեան մարգարեներն էք :

Ո . Յ . ՊԵՐՊԵՐԵԱՆ



Ա.Դ Ա.Ց Ե.Դ Ա.Ց Յ.Ց

Խեղճ ծերունի մը կար երբեմն այնչափ հէք .
Այնչափ թշուառ , այնչափ ողօրմ վշտարեկ ,
Որ զինքն ամենքն աղքատ եղբայր կոչէին ,
Տանձենւոյ մը պըտուղներով կերակրէր ,

Բայց երբ գողեր գողնային՝ իւր պըտուղներ :
Աղքատ եղբայր նօթի մըանէր յանկողին :

Ցուրտ գիշեր մը աղքատ եղբօր դուռ զարկին ,
Անծանօթ մ'էր մըթութեան մէջ լալագին .
Բսաւ , « Նօթի եմ , կը մսիմ , յոգնած եմ » :
Աղքատ եղբայրն ըսաւ . « Ահա քեզ իմ տուն ,
Կեր և տաքցիր , պառկէ , քանզի խեղճերուն
Բայց է իմ դուռ և ես զանոնք կը խնամեմ » :

Առաւօտուն ըսաւ այն հիւրն անծանօթ .
« Աղքատ եղբայր , ըսէ՛ , ինչի՞ն ես կարօտ ,
Կրնամ քեզ տալ » : Եւ նա ըսաւ « կ'ուզեմ որ
Որ և է գող որ իմ ծառէս գողանայ ,
Այլ ևս ծառէն վար չիջնելով հոն մընայ » :
« Ուզածդ ըլլայ » , ըսաւ այն հիւրըն հըզօր :

Զարմա՛նք , երկրորդ օրը տեսաւ մեր ծերուկ
Մարդ մը կախուած տանձենիէն անշարժուկ ,
Որ կ'աղաչէր , « Ո՞հ , գըթա ինձ , զիս փրկէ ,
Ուրիշ անդամ ալ քու ծառէդ չեմ գողնար » :
« Լաւ կը ներեմ , առ այդ միրգեր , հետըդ տար .
Բայց թէ կրկին գողնաս , պատիմըդ մեծ է » :

Աւա՛զ , գիշեր մ'աղքատ եղբայր երբ ննջէր ,
Դուռը զարկին , « Ո՞վ է » : — Ես , Մահս եմ եկեր ,
Էզքեզ տանիլ » : « Լաւ , ես ալ քեզ սպասէի ,
Բայց կ'աղաչէմ . թող վերջին տանձ մ'ալ ուտեմ » :
« Բայց շուտ ըրէ , ըսաւ մահըն դակադէմ .
Թէ շուտ ընես , թող փափաքըդ կատարուի » :

Մահն այն ատեն ծառը կ'ելնէ մագլցի ,
Կը քաղէ տանձ մ'իւր մանգաղով սոսկալի .

Յետոյ իջնել կ'ուզէ ծառէն , բայց ի զո՞ւր .
Ի զուր ճգնի և աշխատի , չի՞ք օգուտ .
Աղքատ եղբայր կ'ըսէ նըմա . « ԵՇ անգութ ,
Ի՞նչ կ'ուզէիր ինձմէ , գնայիր թող այլուր » :

« Աղքատ եղբայր , աղքատէ զիս , գործ ունիմ ,
Թող զիս , կ'երդնում , որ քեզ ըընաւ չըդըպչիմ ,
Մինչեւ , մինչեւ ցըկատարած աշխարհի » :

Աղքատն ըստւ . « Կորի՞ր ասկէ , անպիտան » :

Յայնժամ թըուտւ գնաց մահ ի տունս այլ մարդկան :
Ոյս է որ ցվերջ աղքատ մարդիկ մնան պիտի :

Թարգմ. Ա.

ԳԵՂԵՑԻԿ ԲԱՆՔ

Խե՞ղն առափինուրիւն , ուամիկը զայն կը ծարրէ ,
կինսագէտը զայն կ'ուրանայ , զործի մարդը անօգուտ կը
համարի , հանոյից նուիրեալն ձանձրալի կը գտնի :

Բարիզ , 42 Սեպտ. 1886

Սիրելի Երուանդս ,

Մեզ կը զրկես քու սիրուն սպազուն նամակնետ-
քէդ . ո՛րչափ հաճոյքով կը կարդայի զանոնք . և զի
չէդ կարծեր , չը գիտէի թէ միտքդ այնքան զարգա-
ցընել կարողացած ես , չը գիտէի թէ այնքան աղուոր
հայերէն կը գրես , փայլակէ բառերով ու լի հրախա-
զութեամբք ոմիդ ու իմաստներուգ մէջ . ո՞ւստի ու-
ղութեամբք ոմիդ ու իմաստներուգ մէջ . ո՞ւստի ու-
ղութեամբք ոմիդ ու իմաստներուգ մէջ :

արդեօք ունի՞ն նաև զուարձութիւնն ի սրտիդ
Ինչ որ ունայնութիւնն , խաբէութիւն կայ ամեն
բանի խորը , այն ոմանց մտածութիւնը սեռվ կը ներ-
կէ , ոմանց ալ հեգնութիւնը կը գրգոէ . ծիծաղ կայ
որ աւելի դառնութիւն կը պարունակէ քան արտառու-
քը : Կ'ըսեն թէ Մօլիէո իր ժամանակին ամենէն տը-
խուր մարդն էր : Մի՞ գուցէ այս տեսակէն ըլլան
քու ծիծաղներդ ալ - ի . . . ին ըստծին նայելով՝ տխուր
ես ընդ հանրապէս , առանձնութիւն կը պիրես , լուու-
թիւնը քեզի հաճոյ է սիրտդ ի վար կը խօսիս : Այն
զի՞ հէ՞ք մանկիկ՝ աշխարհային իրաց անկայուն վիճա-
կը կանուխէն զգացիր : Դժակի խաղերու հանդիսա-
տես եղար , կեանքին խաղերուն , քու շուրջդ ու ի
քեզ : Ով որ այսպիսի տեսարաններու առջև գեռ գի-
տէ ծիծաղիլ . թող դառնութեամբ ալ խառն ըլլայ ,
ըսել է որ չընկճիր նա . չարին յաղթելու թերես լա-
ւագոյն միջոցն այդ է և քու մտացդ սեպհական հան-
գամանացն ալ յարմարագոյն : Ծէնչող բնաւորութիւնը
կ'օգնէ դիմանալու , համբերելու , ապաքէն ծիծաղը
ասպար մը ըլլայ քեզի համար , այն լաւ է . այլ սպա-
ռազէնք մը ըրլայ ուրիշներուն դէմ , այն գէ՛շ է :

Ինչ աւլ ըլլայ , սիրելի երուանդս , որ և է ձեւի մէջ
ամեն ձեւի մէջ , սիրէ՝ գրականութիւնը . այն միայն
կը մնայ : Օր կուգայ , ամեն բանէ կը դադրի մարդ ,
վայելեներէ կը հրաժարի , իր պատրանքներէն , իր
յոյսերէն , կիրքերէն , իղձերէն , ամեն ունեցածէն ,
ամեն զգացածէն . բան մը չը մնար , գեռ կը մնայ գը-
րականութիւնը՝ որ հոգեզուարձ բերկրութեանց աղ-
բեւր մը կ'ըլլայ բացառիկ վայրկեաններու մէջ :

Սիրելի Երուանդս , այս մօտ ժամանակներս մօ-
տաւորագոյն հարուած մը ունեցար սրտի , զինի այլ

Նմանօրինակ հարուածներու : Ի՞նչու , ի՞նչու կը գո-
չէ հայրդ կսկիծովը յիմարեալ . « ի՞նչու » գրեթ էր
եղայրդ ալ Հրանտ , ա՛հ , ո՞գ փիտէ ի՞նչուն և ուրիշ
ո՞րչափ բաներու համար , մեզի միայն խոնարհիլ և
երկրպագել անկ է յաւիտենական համացն Աստուծոյ :
Եւ ես կը կրկնեմ բանաստեղծին հռչակաւոր խօսքը
յեռնին համար ալ :

« Վարդէ էր, ապրեցաւ վարդերուն նման առտու
մբ միայն » :

Բոյլ
ՕՏԵԱՆ

ԳԵՂ ԵՑԻԿ ԲԱՆՔ

Զանձակ մի՛ կարծեր իմաստուն, եթէ այլ զեեզ ի-
մաստուն համարին, յանձնապատճան մի լինիր:

ՎԵՐՋԻՆ ՀԱՐԱԳԱՆՔ

<p>Առնաւն առւօտին Եւ ցողն երկընքին Կը ցօղէ իմ վրայ , Անտառաց վրայ Խորհուրդ է պատեր Զանտառը համբուն .</p> <p>Սեաւ խորհուրդ պատեր, Զիմ միտս օրն ի բուն Ա՞հ , ի՞նչ ընեմ որ Իմ սիրտս է թափուր Երբ բնութիւն համայն</p>	<p>Կը պէնի հարսի նման . . . • • • • Քան զտարիքս աւելի Բախտին ձեռքն երկաթի Ծանրացաւ , ո՞հ , իմ վրաս Ի վերայ սիրելեացս . Դուք վայրե'ր սրբազն Դու խորա'ն բնութեան , Յամէն քայլ իմ կեանքիս , Վկայ եղաք գուք բախտիս : Զի ձեր ծոց ես հեղի</p>
---	---

Այս տաս ամ ւ'աւելի ,
Կոկիծներս ու արտօռուք
Որ խառնէք ի ձեր սուգ
Այլ ձեր սուգ վաղ կ'անց-
նի ,
Ապա սիւգ՝ գարնայնի
Կը բերէ ձեզ նորէն
Ձեր խինդն ու գուարթ-
դէմ:
Իսկ մարդուն յոր խե-
թիւ
Նայեցաւ երկինք տիւ
Չ'աշորդեր գիշերին
Եւ գարուն աշունին :
Իրը ի վայր անջըրդի
Կը գնայ նա յաշխարհի ,
Որտէս մարդ մոլորած
Ի բաւիդդ անտառաց
Մտայոյդ թափառի ,
Յամեն դի զարնըփի ,
Առ խարխա՛փ մինչեւոր
Զարնէ իր վերջին օր . . .

Եւ , ափսո՞ս ո՞վ գիտէ
Յետ մահուն ալ գուցէ
Բարեկամ և ոչ մի
Թացցէ զվայրն ուր հանգ-
չի . . .

Ա՛հ շիթն որ տերեւէդ
Երկընքի ցողին հետ
Կը կաթէ ի գետին
Սըփուել գօս տերեւին՝
Ես զայն շիթ կը խնդրեմ
Բարեկամ աչքերէն
Երբ փակվի գերեզման
Անբերլի՛ կեանքիս վրան .
Եւ ընդհատ հառաջանք
Զոր մայրիկն հերարձակ
Կարձակէ ի լոռութեան
Խոր և մութ գիշերուան .
Եւ տանեացն հայրենի
Արձագանք սիրելի
Որ դեռ շա՛տ տարիներ
Զիմ անունն զհետ կըրկ-
նեռ . . .

9. OSTILL

ԳԵՂԵՑԻԿ ԲԱԴՐ

Մանկունք յօսար Երկիր հասած ուղեւորներ են, առ
այս պարտինք գուրք ունենալ չմոլորեցնելու զանոնք :



ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

ՈՏԱՆԱԿԱՊՐ

1. Ազիմիլ իղձեր (Թարգմ.) 244
2. Ալբաս եղբայր (Թարգմ.) 278
3. Աղբատին հայը (Տ. Սերեան) 263
4. Աղօրք (Ա. Գ. Փանոսան) 6
5. Աղօրքին (Տ. Տէմիրնիալաշեան) 410
6. Անգեղին երգ (») 96
7. Անմերուրին (Ս. Սուրենան) 210
8. Անմասեղծն (Հ. Ամսորեայ) 145
9. Առնեն (Լամարդին) Ա. Գ. Փ. 201
10. Առնենիկ (Ա. Յ. Պերպերեան) 184
11. Առնեն (Յ. Օսկան) 214
12. Արմինէ (Տ. Սերեան) 80
13. Արտօւր եւ սփոփան (») 169
14. Բաժին բանասեղծին (Թարգմ.) 130
15. Գեղեցիկ, բարի, նեմարիս (Յ. Օսկան) 91
16. Գետակ (Հ. Ամսորեայ) 23
17. Երկինք (Մ. Անդրեան) 102
18. Երկու բանասեղծ (Ա. Գ. Փ.) 178
19. Զարքօն (Թ. Թէրզեան) 71
20. Ի ման Ազնուի (Մ. Պէջիլիալեան) 447
21. Լճակ (Պ. Պուրեան) 49
22. Լուսին (Զ. Տօնելեան) 269
23. Լուսնիկայն գերեզմանաց (Ա. Ալիշան) 204
24. Խղճման (Հիւկօ) Ե. Վ. Գ. 154

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

ԱՐՁԱԿ

1. Ահմէտ եւ Բաշիս (Թարգմ.) 403
2. Ասուածառւնչ (Մելքիսեդեկ Սրբազն) 432
3. Արուես գրելոյ (Գ. Ս. Օսեան) 51
4. Արօր եւ Սուր (Ո. Յ. Պերպերեան) 144
5. Աւետարան (Խրիստոն Հայրիկ) 4
6. Բանն (Ա. Մ. Գարագաշեան) 412
7. Բանասեղծն (Զ. Տօնելեան) 82
8. Բնութիւնն (Յ. Սերեան) 60
9. Բնութեան ազդեցուրիւնն (Յ. Ճենիկեան) 246
10. Դրական դաւանան (Ե. Տէմիրնիալաշեան) 93
11. Դպրոց (Բազմավիպ) 21
12. Դպրոցի առաջին օրն (») 99
13. Զանգակ (Շիլդո) Ա. Յ. Պ.
14. Թանգարանի հնութեանց (Յ. Գուրգելն) 41
15. Թմբիք (Քրումմախորք) 232
16. Թօփինելի Սպանդանցն (Յ. Գուրգելն) 158
17. Ժանոյ եւ Գոլդն (Վ. Արմեն) 7
18. Ժողովրդապետն (Լամարդին) 175
19. Խպուտու (Յ. Պարոնեան) 88
20. Խունկ (Մ. Մամուրեան) 202
21. Կանանց աշխատուրին (Ս. Տիւսար) 164
22. Կեսար եւ Կատոն (Միշել) 271
23. Կոհսակ եւ Սուներ (Հիւկօ) 66
24. Հայ եկեղեցի (Խրիստոն) 487

Ա Բ Ձ Ա Կ

25.	Հայր եւ Դուստր (Ե Երենց)	181
26.	Հելուենիոյ լիւատակ (Տ Տվյալնց)	74
27.	Հոգւոյ անմահուրդիւն (Ն Խրսէս Պատրիարք)	121
28.	Զիւնածաղիկ (Թ Թարգմ.)	171
29.	Ճանապարհորդ (Է օժէն Սիւ)	225
30.	Մահ Հիւկօի (Գ. Ս. Օտեան)	276
31.	Մեթենականուրդիւն (Մ . Մամուրեան)	191
32.	Մերմական նամակ (Պ . Դուրեան)	108
33.	" (Օր . Ս . Մեղրոսեան)	220
34.	Նամակ (Գ . Ս . Օտեան)	241
35.	" (")	2
36.	Նեղսիւրն (Յ . Պարոնեան)	2
37.	Նոյի սապանն (Ա . Ա լիշան)	138
38.	Նուրիան (Մ . Մամուրեան)	33
39.	Շնորհաւոյ լիւատակն (Ա . Ա լիշան)	197
40.	Պանդուխ (Մ . Կուրենեան)	15
41.	Ռոպէւրը Ֆիւլքըն (Ո . Յ . Պէրպէրեան)	207
42.	Ս . Բարսել (Մելիխսենիկ Սրբազնն)	242
43.	Ս . Կիւլպէնիկեան (Ե . Տէմիրնիլիպոշեան)	253
44.	Ս . Տիւսար (Գ . Զիլինիլիքեան)	213
45.	Վարժապետն (Ո . Յ . Պէրպէրեան)	260
46.	Տարեդարձ Հիւկօի (Գ . Օտեան)	265
47.	Տեսարան Հռովմայ (Միշէ)	126
48.	Փակեալ տնակը (Ո . Յ . Պէրպէրեան)	

Ո Տ Ա Ն Ե Կ Ա Ր

25.	Կարիլ մի ջուր (Պ . Աղամեսան)	30
26.	Կարմիր խնձորը (Ք . Քուշներեան)	63
27.	Հայ արջիկն (Ա . Լուսինեան)	230
28.	Հայ մայր մը (Խ . Խպիս . Նարպէյ)	55
29.	Հէկ այրին (Յ . Գայաեան)	218
30.	Մայրա (Գ . Ս . Օտեան)	461
31.	Մանկիկն ի բուն (Վ . Մալէզեան)	223
32.	Մեռեալները (Ս . Բիւրտա)	238
33.	Յարասուրիւնի Սալմոսաց (Ք . Քուշներեան)	17
34.	Նայինի կատանին (Ե . Վ . Դուրեան)	37
35.	Նինջ մանկան (Ռաբուլ)	106
36.	Պուտսայի ծիծառնը (Ֆուանուտ Գորէ) Ե . Վ . Պ .	124
37.	Սեղծումն երկնից (Ա . Գ . Փանոսեան)	489
38.	Մըրուհի Մարապէս (Մ . Ցովհաննէսեան)	257
39.	Վայր բնիկող ասդեր (Մ . Նալպանսեան)	193
40.	Վերջին վարդ	174
41.	Վերջին զելեցիկ օրեր (Ո . Յ . Պէրպէրեան)	141
42.	Վերջին հառաջանի (Գ . Ս . Օտեան)	282
43.	Վոսթոր (Մ . Անէմեան)	12
44.	Տըսունջ (Պ . Դուրեան)	86
45.	" (Ս . Սուրէնեան)	251
46.	Փառատէնջ անուրշ (Ն . Ռուսինեան)	44
47.	Քնար (...)	4



Եջ	Տող	Վարիպակիք	Ուղղելիք
40	28	որդւոյն	ոզւոյն
32	2	զինչ շինչ	զինչ չինչ
33	28	կրկնութեսմք	կրկնութեան
51	49	բացարձակութիւն	բացարձառնութիւն
64	7	աղեխարշ	աղեխարշ
85	15	ճաէ	ճաւ
9	17	կը յայտ-	կը յայտնի
94	40	բանզի	բանզի
151	25	ի գործ	ի գործ
183	22	իր	իր

20628

2013

